


ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ
2006



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Դ Ե Կ Կ Կ Կ Կ Կ Կ

2006

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՍՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ
ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐԶՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼ
ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Միաձնի Իջման Սուրբ Մեղանի առջև զոհություն ենք յայտնում Բարձրեալն Աստ-
ծուն, որ Իր ամենախնամ օրհնության ներքոյ Հայաստանեայց Առաքելական մեր
Սուրբ Եկեղեցին Տերունապատուեր առաքելութեամբ դարեր շարունակ հովուում է
համայն մեր ժողովրդին՝ բաշխելով Տիրոջ երկնատուր օրհնությունն ու հաւատոյ
անսպառ լոյսը:

Առաքելաշաւիղ եւ ազգանուէր ընթացքը մեր Սուրբ Եկեղեցու Հայրենիքում եւ աշխարհի տարբեր կողմերում, ի խնդիր ազգային-եկեղեցական կեանքի կազմակերպման, մշտապէս արդիւնաւորուել է թեմերի ու համայնքների հիմնումով, հոգեւորականների եւ եկեղեցական-վարչական կառոյցների նուիրեալ գործունէութեամբ:

Երջանկայիշատակ Մեր նախորդ Հայրապետները՝ յատկապէս Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ, երբ Մեծ Եղեռնը վերապրած հայորդիք ապաստան գտան Եւրոպական տարբեր երկրներում, մեծապէս հոգացին Եւրոպայում հայոց հոգեւոր խնամքի համար եւ ձեռնարկեցին եկեղեցական-վարչական կառոյցների ձեւաւորումը՝ ազգային-եկեղեցական կեանքի կանոնաւորմանն ու արդիւնաւորմանն ի խնդիր: Գեորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց Եւրոպայի հայոց թեմը՝ հրահանգելով թեմի հովանու ներքոյ կազմակերպել հայոց հոգեւոր կեանքը: Այնուհետ Խորէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հիմնեց Հարաւային Ֆրանսիայի թեմը՝ Մարսել կենտրոնով, իսկ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը, հաստատելով Արեւմտեան Եւրոպայի եւ Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակութիւնները, Ֆրանսիոյ տարածքը ներառեց Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակութեան կազմում՝ Ֆրանսիան թեմ հռչակելու մտադրութեամբ:

Աղօթք եւ խոնարհում երանաշնորհի Հայրապետներին եւ Եւրոպայում մեր ժողովրդի հոգեւոր կեանքը առաքելաշաւիղ անվարան ընթացքով առաջնորդած նուիրեալ բոլոր սպասաւորներին մեր Սուրբ Եկեղեցու:

Քաջակրորով Առաջնորդների եւ Հայրապետական Պատուիրակների առաջնորդութեամբ ֆրանսաբնակ Մեր բարեպաշտ զաւակները կարողացան կազմակերպել իրենց հոգեւոր կեանքը եւ եկեղեցաշէն ձեռնարկումներով ու հայրենանուէր ոգով մշտաբերուն պահել հայրերից ժառանգած հաւատն առ Աստուած եւ սերը հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Ֆրանսիոյ օրինեալ երկրի իշխանութիւնների եւ Աստուածասէր ժողովրդի բարեացակամ վերաբերմունքը վայելելով՝ մեր ժողովրդի զաւակներն առ այսօր շարունակում են ապահով ու խաղաղ կերտել իրենց հոգեւոր եւ ազգային կեանքը:

Ֆրանսիայում թեմ հաստատելու ուղղութեամբ տարուող ջանքերը ներկայիս հասել են հանգրուանի, երբ Ֆրանսիայի հայութեան հոգեւոր կեանքն առաւել կազմակերպելու եւ բարեգարդ դարձնելու համար այլեւս անհրաժեշտութիւն է մէկ թեմական միաւորի ներքոյ համախմբումը: Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ֆրանսիայի Մեր հաւատաւոր զաւակներին, Ֆրանսիայում պաշտօնավարող հոգեւոր դասին եւ եկեղեցական ու համայնքային վարչութեանց պատուարժան անդամներին, ովքեր նախանձախնդրօրէն հետամուտ եղան թեմական կանոնադրութեան որդեգրման եւ թեմի կազմաւորման աշխատանքների կարեւոր գործընթացներին:

Արդ, Հայրապետական այսու Կոնդակով Փարիզի Առաջնորդութիւնը եւ Ֆրանսիայի հայոց եկեղեցական համայնքները առանձնացնում ենք Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակութիւնից եւ հռչակում կազմաւորումը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ֆրանսիայի հայոց թեմի: Թեմի հոգւոր իրաւասութեան սահմանը հաստատում ենք Ֆրանսիայի Հանրապետութեան տարածքը եւ առաջնորդանիստ կենտրոնը՝ Փարիզ քաղաքը:

Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազգաշեանին համատեղութեան կարգով նշանակում ենք Ֆրանսիայի Հայոց նորակազմ թեմի առաջնորդական տեղապահ՝ յանձնարարելով վեցամսեայ ժամանակաընթացքում կազմակերպել Թեմական Խորհրդի եւ թեմակալ առաջնորդի ընտրութիւնները:

Ֆրանսիայի հայոց թեմի հաւատաւոր զաւակներ Մեր, հայրաքար յորդորում ենք, որ որդիական սիրով հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ աջակից լինէք Սրբազան Հօրը իր առաջիկայ աշխատանքներում եւ հաւատարիմ մնաք Ֆրանսիայում մեր Սուրբ Եկեղեցու եկեղեցական վարչութիւնների կողմից որդեգրուած եւ Մեր կողմից վաւերացուած Ֆրանսիայի հայոց թեմի թեմական կանոնադրութեանը՝ վերջինիս յօդուածներին համապատասխանեցնելով ծխական կանոնադրութիւնները՝ ի զօրութիւն թեմի եւ ի բարօրութիւն բարեպաշտ ֆրանսահայութեան:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք, որ Բարին Աստուած խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահի բարեկամ երկիրը Ֆրանսիայի, անսասան ու անխռով՝ Ֆրանսիայի հայոց թեմը եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Իր օրհնութեան ներքոյ պահպանի Մայր Հայրենիքը եւ մեր ժողովրդի զաւակներին ի սփիւռս աշխարհի:

«Թագաւոր Երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութեան». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Հոկտեմբերի
Յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 373

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՇԻՐՎԱՆՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱ-
ՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐՎԱՆԵԱՆ,
ՈՐ ՅԵՐՈՒՍԱԴԷՍ, ԻՍՐԱՅԷԼ**

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բազմավաստակ սպասաւորիդ:

Միրելի Սրբազան, Տիրոջ օրհնութեամբ հոգեւոր կրթութիւնը ամբողջացնելով Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց ընծայարանում, բարեյիշատակ Տիրան արքեպս. Ներսոյեանի ձեռամբ արժանացաք կուսակրօն քահանայութեան աստիճանի՝ կարգուելով իբրեւ սպասաւոր աստուածասէր մեր ժողովրդի: Այսօր, Ձեր ձեռնադրութիւնից աւելի քան կէս դար անց, Մեզ համար գոհունակութիւն է հաստատել, որ մեր Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութիւնը արդիւնաշատ է եկեղեցաշէն հարուստ վաստակով:

Դուք բարի աւանդ ունէք հոգեւորականաց նոր սերնդի պատրաստութեան գործում: Պաշտօնավարելով որպէս ուսուցիչ եւ ապա փոխտեսուչ Ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի, ինչպէս նաեւ որպէս տեսուչ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի, հոգեւոր կրթօջախների սաներին փոխանցել էք ընծայարանում եւ Անգլիայի ու Ֆրանսիայի Աստուածաբանական բարձրագոյն համալսարաններում ամբարած Ձեր գիտելիքները՝ Ձեր սաների հոգիներում զօրացնելով հայ հոգեւորականի կոչման գիտակցութիւնը, ծառայասիրութեան պատրաստակամութիւնը:

Գնահատարժան է նաեւ Ձեր հովուական գործունէութիւնը Ամմանում, Գերմանիայում, Շվեդիայում եւ Միացեալ Նահանգներում: Նախանձախնդիր ու մշտաբար սպասաւորութեամբ Դուք բարի աւանդ բերեցիք այդ երկրներում բնակութիւն հաստատած հայորդեաց ազգային-եկեղեցական կեանքի պայծառութեանը՝ զօրացնելով Ձեր հօտի անդամների հաւատքը, եկեղեցասէր ու ազգասէր ոգին: Արգասաւոր ծառայութեան շնորհիւ Դուք արժանացաք Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի գնահատանքին, ով եպիսկոպոսութեան բարձր աստիճանին կոչեց Ձեզ՝ նշանակելով իբրեւ առաջնորդական փոխանորդ Կանադայի հայոց թեմի:

Ուրախ ենք, որ ներկայիս, որպես Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Միջեկեղեցական եւ Արտաքին հարաբերութեանց վարիչ, Ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի ուսուցիչ, ամենայն նուիրումով եւ ջանասիրութեամբ ու ջանասիրութեամբ շարունակում եք ներդնել Ձեր ջանքերը եւ աջակից լինել Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, որպէսզի շէն ու պայծառ լինի Պատրիարքութիւնը եւ միշտ ապահով՝ Հայ Եկեղեցու սրբազան ժառանգութիւնը Տէրունակոյն Երկրում:

Սիրելի Սրբազան, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն բերած տասնեակ տարիների Ձեր անսակարկ ծառայութեան ու վաստակի բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Պատրիարք Սրբազանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ

Մեր մաղթանքն է, որ Տէրն օգնական լինի եւ զօրացնի Ձեզ հոգեւորականի բարձր կոչման մէջ եւ պարգևի քաջառողջ կեանքի երկար տարիներ՝ շարունակելու նուիրեալ ու նախանձախնդիր ծառայութիւնը ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու եւ Երուսաղեմի հայոց Պատրիարքութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2006 եւ ի թուին Հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 400

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՈՐ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԵՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻՔՅԱՆԻՆ ԱՐ-
ՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԽՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԵՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻՊԵԱՆ,
ՈՐ ՅԵՐՈՒՍԱԴԷՄ, ԻՍՐԱՅԷԼ**

Սիրելի Սրբազան,

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը եւ գոհունակութեամբ անդրադառնում վաստակաշատ հոգեւորականիդ երկարամեայ բեղուն գործունէութեանը:

Աւելի քան չորս տասնամեակ Դուք քահանայագործում էք մեր Եկեղեցու լուսաւոր անդաստանում, եւ Մենք ուրախ ենք հաստատելու, որ ծառայութեան նկատմամբ դրսևորած Ձեր նախանձախնդրութեան եւ ուխտապահ ոգու շնորհիւ Աստուծոյ խօսքը մեր ժողովրդի զաւակներին մատուցելու նուիրական առաքելութիւնը պսակել էք եկեղեցաշէն ու ազգօգուտ բազում յաջողութիւններով:

Երկար տարիներ Դուք օրինակելի եռանդով ծառայեցիք որպէս տեսուչ Գեթսեմանիի Ս. Աստուածածին եւ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցիների, Ժառանգաւորաց վարժարանի, դասաւանդեցիք Սրբոց Թարգմանչաց վարժարանում, վարեցիք բազում այլ պաշտօններ՝ աննուազ նախանձախնդրութեամբ յետամուտ լինելով, որպէսզի Տէրունակոյն երկրում միշտ պայծառ լինի Հայ Եկեղեցին նուիրական իր սրբութիւններով: Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը, գնահատելով Ձեր վաստակը, արժանացրեց Ձեզ եպիսկոպոսութեան Սուրբ Օծման՝ առաւել մեծ պատասխանատւութեան կոչելով Ձեզ մեր Սուրբ Եկեղեցու կեանքում:

Ուրախութիւն է Հայրապետիս համար, որ ի շինութիւն Երուսաղէմի հայոց Պատրիարքութեան Ձեր ծառայութիւնները նոյն նուիրումով շարունակում էք նաեւ այսօր՝ արժանանալով Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի գնահատանքին:

Մեր Եկեղեցուն բերած տասնեակ տարիների Ձեր բոլորանուէր ծառայութեան եւ վաստակի բարձր գնահատանքով, ընդառաջ Պատրիարք Սրբազանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը օգնական լինի եւ

գորացնի Ձեզ, պարզեւի եկեղեցաշէն ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի տարիներ՝ ի պայծառութիւն Երուսաղէմի հայոց Պատրիարքութեան եւ Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2006 եւ ի թուին Հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 401

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով ղեկտեմբեր ամսին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.

Սարգիս Աղաջան (Իրաքի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Ալիս Եղաջյան (Լիբանան)

Սիրարփի Զումուսյան (Լիբանան)

Շաքե Շաքիլյան (Լիբանան)

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ՖՐԱՆՍԻԱ
(ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՈՎ ՀՈԶԱԿՎԵՑ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԸ)**

Դեկտեմբերի 9-18-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Ֆրանսիա: Նորին Սրբության այցը նշանավորվեց Ֆրանսիայի հայոց թեմի հռչակմամբ:

Նորին Սրբությունը Փարիզ ժամանեց դեկտեմբերի 9-ին: Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Ս. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանը, Լիոնում հայրապետական պատվիրակի փոխանորդ Ս. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը, Ֆրանսիայի հայոց եկեղեցիներում սպասավորող հոգևորականներ, համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Էդուարդ Նալբանդյանը:

Նույն օրը Նորին Սրբությունը Փարիզում մասնակցեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 100-ամյա տարեդարձին նվիրված հանդիսությանը և իր օրհնությունը բերեց ՀԲԸՄ-ի անդամներին:

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ**

*«... Եվ հիմքը դրեց ժայռի վրա. և երբ հեղեղ
բարձրացավ, գետը զարկեց տանը և չկարողա-
ցավ շարժել այն, որովհետև նրա հիմքը ժայռի
վրա էր հաստատված»:*

(Ղուկ. Զ 48)

*Գերաշնորհ Սրբազան Հայրեր ու հոգևոր եղբայրներ Մեր,
Մեծարգո հյուրեր և*

Միբլի պատվարժան անդամներ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու.

Ավետարանի այս խոսքն է, որ հիշում ենք այս պահին, երբ տեսնում ենք ձեզ Սփյուռքի բոլոր կողմերից, Հայաստանից ու Արցախից համախմբված՝ միասնաբար նշանավորելու համայն մեր ժողովրդի կյանքում պատմական մեծ իրադարձությունը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 100-ամյա տարեդարձը: Հավատի, հույսի, սիրո և բարեգործության անսասան հիմքերի վրա հաստատվեց ազգաշահ առաքելությունը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության:

Աշխարհով մեկ սփռված, նաև իր հայրենի հողի վրա կարիքավոր ապրող հայությանը օգնելու և նեցուկ լինելու համար մեկ դար առաջ ստեղծվեց Բարեգործականը՝ մեր ժողովրդի մեծագնիվ զավակ Պողոս Նուբար Փաշայի կողմից: 20-րդ դարասկզբին, երբ գիտությունն ու տեխնիկան արագ քայլերով առաջանում էին, մեծ ազգասերի ու հայրենասերի ձգտումն էր, որ ամենուր հայությունը առաջադիմող ու ապահով կյանք ունենա, համաքայլ ընթանա ժամանակին, ունենա ուժն ու գորությունը՝ մարմնավորելու ազգային հույսերն ու իդձերը՝ մնալով հավատարիմ նախնյաց հիշատակներին, մայրենի լեզվին և մեր հայրերի սրբազան հավատքին: Այս մեծ ու նվիրական տեսիլքը առաջնորդեց ուղին Բարեգործականի:

Հեշտընթաց չեղավ Միության ճանապարհը: Միության հաստատումից կարճ ժամանակ անց մեր ժողովուրդն ապրեց Մեծ եղեռնի ողբերգությունը: Տարագիր հայությանը տեղավորելու, աջակցելու, ազգային կյանքը կազմակերպելու բազմապատկված հոգսերը Բարեգործականը հանձն առավ՝ դժվարությունների առջև չընկրկելով և հավատարիմ իր կոչմանը: Միությունն իր մեծ ներդրումն ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայրենադարձության կազմակերպման գործում, երբ տարբեր երկրներից հազարավոր հայորդիք հաստատվեցին Հայաստանում: Ժամանակի առաջադրած հրամայականների պահանջով ավելի ու ավելի ընդարձակվեց Միության գործունեությունը ու գծվեց բազմարդյուն ու արդար վաստակով հարուստ նրա ճանապարհը: Պողոս Նուբար Փաշային հաջորդած երախտավորները՝ Գալուստ Կյուլպենկյանը, Ջարեհ Բեյ Նուպարը, Պողոս Քոլոյանը, Արշակ Կարապետյանը, Ալեքս Մանուկյանը շարունակեցին և զորացրեցին Միության առաքելությունը՝ հիմնելով նոր մասնաճյուղեր, կրթական, մշակութային, խնամատար հաստատություններ՝ իրականացնելով բարեգործական ազգանվեր բազմապիսի ծրագրեր: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը դարձավ հայ իրականության անբաժան մասը՝ ներկա մեր ժողովրդի կյանքի բազում ասպարեզներում:

Ուշագրավ է, որ Միության գործունեության մեջ 50 տարիների ծառայության վաստակ ունի Մանուկյան ընտանիքը: Ազգային հերոս և Միության ցմահ նախագահ երջանկահիշատակ Ալեքս Մանուկյանը ապրեց ու գործեց Մեր ժողովրդի ապագայի հանդեպ պատասխանատվությամբ, մեր ժողովրդի միասնականության նախանձախնդրությամբ: Նրա երկարամյա նախագահության շրջանում Միությունը ծաղկումն ապրեց իր գործունեության՝ ի խնդիր հայապահպանության կարևորելով ուսյալ սերնդի պատրաստությունը, եկեղեցական կյանքում միության վերականգնումը և Հայրենիք-Միություն կապերի ամրապնդումը: Երբ երկաթյա վարագույրով անջրպետված էր մեր ժողովրդի կյանքը, աջակցությունը Հայաստանին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մեծ քաջալերություն էր՝ որպես միասնականության արտահայտություն և խրախույս՝ ավելի լավ օրերի հավատի ու հույսի: Ալեքս Մանուկյանի ոգու և գործի շարունակողը եղավ նրա դուստրը՝ մեզ բոլորիս սիրելի տիկին Լուիզը: Տիկին Լուիզ Մանուկյան-Միմոնի նախանձախնդրությամբ ու նվիրումով մեր Հայրենիքի անկախությունից ի վեր Միության ծրագրերը բազմապատկվեցին Հայաստանում և Արցախում: Միությունը նոր ավանդ բերեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառությանը՝ նոր բարերարություններով ու համագործակցական ծրագրերով: Այսօր բարեջան նախագահությամբ տիար Պերճ Սեդրակյանի և ազնիվ հանձնառությամբ

Բարեգործականի նվիրյալ բարերարների՝ Միությունը շարունակում է իր արժանի ծառայությունն ու ներդրումը բերել Հայրենիքի ազատ, վերածնվող կյանքին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու մեր ժողովրդի նոր հույսերին:

Արդարև, հաստատուն են հիմքերը, որ դրված են բարի գործերի ամուր ապաստանի վրա, և 100-ամյա պատմությամբ բարեգործ կանգնած է շենքը՝ բարձրացած հավատավոր հոգով նրա հիմնադրի ու բոլոր հավատարիմ կառուցողների, ովքեր տքնեցին ազգի համար: Աղոթք ու խորին խոնարհում մատուցենք նրանց արդար հիշատակին և փառաբանություն՝ նրանց բազմերախտ ջանքերին: Նրանց հավատի, ազգասիրության ու հայրենասիրության կրողն ու շարունակողներն եք դուք, սիրելիներ, Միության պատվարժան նախագահ, մեծարգո բարերար անդամներ, Միության հաստատություններում ու մասնաճյուղերում նվիրումով ձեր ծառայությունը մատուցող ազնվահոգի զավակներ մեր ժողովրդի: Ձեր ավանդով ու վաստակով Դուք շարունակում եք առաքելությունն ու ճանապարհը և պարծանքով լի պատմությունը Միության:

Հորեյյանական, 100-ամյակի տոնական այս առիթով բերկրաշատ սրտով Մեր բարձր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում Ձեզ՝ Միության մեծարգո նախագահ տիար Սեդրակյան, Կենտրոնական Վարչության անդամներիդ, Միության պատվարժան բարերարներիդ, տարբեր երկրներում Միության մասնաճյուղերի ու հաստատությունների գործունեությունը իրականացնող նվիրյալներիդ: Մեր բարձր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք հղում նաև այսօր հանդիսությունից բացակայող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության առաքելությանը իրենց ծառայությունը, սերն ու նվիրումը բերած մեր ժողովրդի բոլոր զավակներին և Միության ատենապետուհի մեծագնիվ տիկին Մանուկյան-Միմոնին:

Հորեյյանական այս հանդիսությունը պատմական է դառնալու մեր ժողովրդի կյանքում: Խորհրդանշական է նաև, որ այն տեղի է ունենում Փարիզում, երբ, ի վկայություն մեր երկու երկրների և ժողովուրդների անխախտ բարեկամության, Ֆրանսիայում հռչակված է Հայաստանի Հանրապետության տարին՝ «Հայաստան, իմ բարեկամ» խոստում նշանաբանով:

Մեր սրտի գոհաբանական աղոթքն ենք բարձրացնում երկինք և հայցում, որ Բարձրյալ Տերը միշտ խաղաղության ու բարօրության մեջ պահպանի Ֆրանսիան ու նրա աստվածասեր ժողովրդին: Խաղաղ ու բարօր պահի մեր Հայրենիքը և աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին և առաջնորդի դեպի միացյալ ու հավատաշեն կյանքի լուսավոր հորիզոններ:

Թող Ամենախնամ Աստված Իր շնորհառատ օրհնության ներքո առաջնորդի առաքելությունը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, պահպանի ձեզ հավատավոր, քաջատոջ ու շնորհազարդ և արդյունավորի ձեր բոլոր ջանքերը՝ ի սեր մեր ժողովրդի, ձեր բարի գործերը, հույսերը, կյանքն ու ճանապարհը:

Թող շնորհն ու սերը մեր Տեր Հիսուս Քրիստոսի լինեն միշտ ձեզ հետ և բոլորի: Ամեն:

Դեկտեմբերի 10-ին Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ: Հընթացս Սուրբ Պատարագի Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանն ընթերցեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որով այսուհետ

Փարիզի Առաջնորդությունը և Ֆրանսիայի հայոց եկեղեցական համայնքները առանձնացվում են Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակությունից և հռչակվում որպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ֆրանսիայի մեկ միասնական հայոց թեմ՝ Փարիզ առաջնորդանիստ կենտրոնով: Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնության իր խոսքը ուղղեց ֆրանսահայ համայնքին.

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՔԱՐՈՁԸ ՓԱՐԻԶԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՈՑ
ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
(10 դեկտեմբերի 2006 թ.)**

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Եթէ սիրեցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ
բնակէ»:*

(Ա. Հովհ. Դ 12)

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, հավատավոր զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու.

Փառք և գոհություն ենք մատուցում Երկնավորին, որ վերստին առիթը ընծայեց Մեզ հայրապետական այցելությամբ գտնվելու Ֆրանսիայի հայոց թեմում և բերելու ձեզ Աստվածակերտ Սուրբ Աթոռիս օրհնությունները, սերը Մայր Հայրենիքի ու հայաստանաբնակ մեր ժողովրդի: Փառք և գոհություն Երկնավորին, որ Սրբազան Պատարագի խորհրդով այս Սուրբ Տաճարում մեր միասնական աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ հանուն մեր ժողովրդի սիրով զորացյալ կյանքի, քանզի ինչպես Քրիստոսի սիրեցյալ առաքյալ Հովհաննեսն է վկայում՝ «Եթէ սիրեցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակէ»:

Առաքյալի պատգամին հավատարիմ՝ առ Աստված սիրով Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո մեր նախնիք ապրել են ու արարել, կերտել դարավոր մեր պատմությունը՝ զրո և հիշատակի արժանի գործերով: Այսօր, սիրելիներ, ամենից առավել այդ նույն սիրո պտուղն ենք փնտրում ձեր մեջ, ազգիս զորեղ հավատը առ Աստված ու աստվածաբարձն սիրո նվիրումը հանդեպ Հայրենիքը և Մայր Եկեղեցին: Մերն է շաղախը քրիստոնեական մեր էության և համազգային միասնության, սիրով է, որ պիտի շարունակենք Տիրոջ համար մնալ «ազգ սուրբ. ժողովուրդ սեպհական» (Ա Պետր. Բ 9): Սիրով մարմնավորված մեր գործերն են, որ արժանի պիտի լինեն Աստծո օրհնությանը, քանզի «Եթէ սիրեցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակէ»:

Այսօր, հուրախություն ամենքիս, իրականություն է դարձել Մեր նախորդ երջանկահիշատակ Հայրապետների երազն ու իղձը՝ մեկ թեմական միավորի ներքո համախմբումը հավատավոր Մեր զավակների, որով առավել զորացյալ, կուռ և միաս-

նական պիտի լինի մեր Սուրբ Եկեղեցին, և նորովի զարթոնք պիտի ապրի հոգևոր-ազգային կյանքը: Ֆրանսիայի հայոց թեմի հռչակման պատմական առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում ֆրանսահայ հավատավոր բոլոր Մեր զավակներին և Մեր գնահատանքը՝ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանին, հայրապետական պատվիրակի փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանին, ուխտապահ հոգևոր դասին և եկեղեցական վարչական պատվարժան անդամներին՝ իրենց ջանքերի և նվիրյալ ծառայության համար: Գիտենք, որ առաջին քայլերը միշտ էլ հեշտ չեն լինում, սակայն սիրո առջև նահանջում են ամենամեծ արգելքներն ու խոչընդոտները, և բազմապատիկ պտուղներ են տալիս մարդկային ջանքերը, քանզի այդ սիրո ուժով նաև Աստված է մեր մեջ բնակվում և գործակից լինում հավատացելոց Իր ամենակալ գործությամբ:

Փառք Տիրոջը, Ֆրանսիայի հայ համայնքը առավել պիտի ծաղկի և զորանա՝ վաշելելով Ֆրանսիայի կառավարության բարյացակամ վերաբերմունքը և շարունակելով այն ավանդները, որոնցով այստեղ՝ Հայրենիքից հեռու դրվեցին ազգային կյանքի հիմքերը: Արդարև, այս օրհնյալ հողի վրա հայությունը ազատորեն կառուցեց իր հայրենական կյանքը, ազատորեն գործեց ու ստեղծագործեց և արժանի ներդրում ունեցավ մեր մշակույթի, գիտության, լուսավորության ու կրթության զարգացման գործում, նաև՝ Ֆրանսիայի առաջընթաց կյանքին: Այսօր ֆրանսահայությունը զգալի նպաստ է բերում Ֆրանսիայի և Հայաստանի Հանրապետությունների փոխհարաբերությունների զարգացմանը ու հավաստակից հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամության առավել ամրապնդմանը: Հայաստանի և Ֆրանսիայի մեծ բարեկամության վկայությունն էր Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակի այցը Հայաստան և Ֆրանսիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության տարվա հռչակումը, որոնք մեծ խանդավառության առիթներ դարձան երկու ժողովուրդների կյանքում:

Միևեկի բարեպաշտ հայորդիներ, այսօր ուրախության զգացումներով են լեցուն մեր սրտերը նաև մեկ այլ բերկրալի առիթով: Այս օրերին Փարիզում տոնախմբում ենք 100-ամյակը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, որի առաքելությունը համազգային մեր կյանքում պսակված է սիրով գործված բազմարդյուն ծառայություններով: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության երախտավորները իրենց գործերով ազգասիրության և հայրենասիրության օրինակ եղան՝ հասնելով մեր ժողովրդի կարիքներին Միյությունի բոլոր կողմերում, աջակցություն բերելով ազգային կյանքի բոլոր ասպարեզներում, նաև՝ մեր Հայրենիքի զորացմանը և մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը: Այսօր Միության նվիրյալները, որոնցից շատերը ներկա են այստեղ, նվիրական այս Սուրբ Պատարագին, ջանադիր նախագահությամբ տիար Պերճ Սեդրակյանի, նույն ազնիվ ոգով ու ծառայասիրությամբ շարունակում են Բարեգործականի առաքելությունը: Հավատարիմ իր կոչմանը և 100-ամյա հարուստ ավանդներին, Միությունը շարունակում է անխոնջ ջանքերը՝ ի սեր ամենուր մեր ժողովրդի բարօրության, մեր Հայրենիքի բարգավաճման ու հզորության,

մեր մշակույթի ու գիտության առաջընթացի և մեր ժողովրդի միացյալ ու պայծառ կյանքի, որի տեսիլքով հաստատվեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, որի տեսիլքով մեր ժողովուրդը ապրեց ու շարունակում է ապրել Ֆրանսիայում, համայն Սփյուռքում ու Հայրենիքում:

Միրելի բարեպաշտ հայորդիներ, Պատարագի սրբազան արարողության այս նվիրական պահին ի խորոց սրտի աղոթում ենք, որ Տերը խաղաղ ու բարօր պահպանի Ֆրանսիան և Հայաստան հայրենի երկիրը մեր և ամուր ու հարասն՝ մեր ժողովուրդների բարեկամությունը: Հայցում ենք, որ Բարին Աստված Իր օրհնության ու շնորհի ներքո հաստատուն ու ծաղկուն պահի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, հաստատուն ու ծաղկուն պահի նորահաստատ հայոց թեմը Ֆրանսիայի և պահպանի ազգս հայոց հավատով ու սիրով զորացյալ, միաշունչ ու միախորհուրդ՝ շնորհելով եկեղեցաշահ ու հայրենաշեն նորանոր ձեռքբերումներ:

«Շնորհք, սեր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. Ամէն»:

Հայրապետական կոնդակով Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանը համատեղության կարգով նշանակվել է Ֆրանսիայի հայոց նորակազմ թեմի առաջնորդական տեղապահ: Վեցամյա ժամանակում տեղապահը Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ կկազմակերպի Թեմական խորհրդի և թեմակալ առաջնորդի ընտրությունները:

Հայրապետական Ս. Պատարագից հետո տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ՀԲԸՄ-ի հանգուցյալ նախագահների և երախտավորների հոգիների խաղաղության համար:

Դեկտեմբերի 11-ին Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ նորակազմ թեմի պատգամավորների հետ, որի ընթացքում քննարկվեց թեմի կանոնադրությունը:

Դեկտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը Փարիզից մեկնեց Մարսել՝ Ս. Թարգմանչաց եկեղեցու օծման 75-ամյակի հոբելյանի առիթով:

Հայրապետական այս այցելության առաջին հանգրվանը Համազգայինի Մարսելի դպրոցն էր, որի մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին դպրոցի տեսչության անդամները և ծնողները, իսկ աշակերտները հնչեցրեցին Հայաստանի և Ֆրանսիայի Հանրապետությունների օրհներգները և դպրոցի քայլերգը:

Վեհափառ Հայրապետին այնուհետև բարիգալստյան խոսքով դիմեցին դպրոցի ուսուցչական և տեսչական անձնակազմի անդամներ Գևորգ Գասպարյանը, Լուսին Մալիքյանը և Կլեմաքս Թյութեյանը՝ շեշտելով, որ Նորին Սրբության օրհնաբեր այցելությամբ «առաւել հայկականութիւն կը բուրի այսօր Համազգայինի յարկէն ներս, որ միայն քար ու շէնք չէ. հայկականութիւն կը բերէք ընծայ մեր ամէն մէկ աշակերտին»:

Այնուհետև աշակերտները խմբովին արտասանեցին Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունը:

Շրջելով դպրոցի հարկաբաժիններով՝ Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց հավաքվածներին, շնորհավորեց դպրոցի ընդարձակ և հարմարավետ նո-

րաբաց շենքի համար, որի շինության սկսման աշխատանքներին Վեհափառ ծանոթացել էր 2001 թ. դեկտեմբերին՝ Ֆրանսիա հայրապետական անդրանիկ այցելության ժամանակ: Ողջունելով դպրոցի անձնակազմին և աշակերտությանը դպրոցի հիմնադրման 25-ամյակի առիթով, Հայոց Հայրապետը հատկապես շեշտեց այն կենսական կարևորությունը, որ ունի հայ դպրոցը մեր ազգային կյանքում և հատկապես Մփյուռքի պայմաններում՝ աշակերտությանը հորդորելով ապրել Մեսրոպաշունչ ոգով և Վարդանանց արիությամբ:

Ի հիշատակ այս հանդիպման Նորին Սրբությունը դպրոցին նվիրեց Սևանի Ս. Առաքելոց վանքը պատկերող մի յուղաներկ կտավ և աշակերտներին բաժանեց Ս. Էջմիածնից բերված խաչեր, իսկ դպրոցի տեսչությունը Հայոց Հայրապետին նվիրեց մի Աստվածաշունչ՝ տպագրված Նյու Յորքում 1870 թ.:

Վեհափառ Հայրապետը Համազգայինի դպրոցից մեկնեց Պրովանս Ալփ-Գոթ դ'Ագյուրի շրջան, ուր հանդիպում ունեցավ այս շրջանի խորհրդի նախագահ Միշել Վոգելի հետ: Վերջինս հիշեց իր այցելությունը Հայաստան, իսկ Հայոց Հայրապետը իր գնահատանքը հայտնեց տեղի իշխանություններին հայ համայնքի հանդեպ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի համար:

Նորին Սրբությունը ասաց, որ Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակում մի խաչքար պետք է նվիրի տեղի դպրոցի խորհրդին և այդ խաչը գետեղվելու է խորհրդի շենքի կենտրոնական մուտքի մոտ՝ մի պատվանդանի վրա:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի երեկոյան կազմակերպվեց համայնքային ընդունելություն, որին մասնակցում էին նաև քույր Եկեղեցիների, հայկական հարավանությունների, ինչպես նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչները:

Հավաքույթի ընթացքում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեցին Մարսելի հայոց հոգևոր հովիվ Ս. Զատիկ վրդ. Ավետիքյանը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Էդուարդ Նալբանդյանը և Սրբոց Թարգմանչաց եկեղեցու խորհրդի ատենապետ Ռուպեր Ազիլագյանը:

Ողջույնի խոսք ասացին նաև Բուշ Դյու-Ռիոնի նահանգի նահանգապետի և Մարսելի քաղաքապետի ներկայացուցիչները, ինչպես նաև Պրովանս Ալփ Գոթ դ'Ագյուրի շրջանային խորհրդի նախագահ Միշել Վոգելին:

Հավաքվածներին այնուհետև գնահատանքի և օրհնության իր խոսքն ուղղեց Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ասելով, որ ինքը այս անգամ Ֆրանսիա է եկել ՀԲԸՄ-ի 100-ամյակի հանդիսությանը մասնակցելու, Ֆրանսիայի հայոց թեմի հռչակման, ինչպես նաև Մարսելի Սրբոց Թարգմանչաց հայոց եկեղեցու 75-ամյակի առիթով:

Դեկտեմբերի 16-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը հաջորդաբար այցելեց Բուշ-Դյու-Ռոն նահանգի նահանգապետ Ժան Նոել Գերինիին, ապա՝ Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գոդենին:

Այնուհետև Նորին Սրբությունը այցելեց Ֆրանսահայ երիտասարդական միության (ԺԱՖ) մշակութային կենտրոն, ապա՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տեղի ակումբ:

Ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Սրբոց Թարգմանչաց եկեղեցի, ուր կատարվեց կիրակնամուտի ժամերգություն, որի ավար-

տին ձեռամբ Վեհափառ Հայրապետի Հայոց Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան շնորհվեց համայնքային կյանքին իրենց նշանակալից ծառայությունը բերած Ադրինե Գաբրիելյանին, Թագուհի Սիուլաչյանին, Պիեռ Ղազարյանին, Ալբեր Խազինեճյանին, Արթաքին Հակոբյանին, Մարի Մինասյանին, Ռոբեր Տեր-Մերկերյանին և Կարպիս Սայապալյանին: Հանձնվեցին նաև շքանշանների շնորհման հայրապետական կոնդակները, որոնք ընթերցեց Ս. Նորվան եպս. Զաքարյանը:

Այնուհետև ընդունելություն տեղի ունեցավ եկեղեցու Ս. Սահակ-Ս. Մեսրոպ մշակութային կենտրոնում:

Դեկտեմբերի 17-ին Վեհափառ Հայրապետը մատուցեց հայրապետական Ս. Պատարագ, որի երգեցողությունը կատարեց Ս. Սահակ-Ս. Մեսրոպ երգչախումբը՝ Խաչիկ Երվանդյանի գլխավորությամբ:

Լեփ-լեցուն եկեղեցում Ս. Պատարագին ներկա էին նաև հայ հարանվանությունների և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, ՀՀ դեսպան Է. Նալբանդյանը, նահանգապետ Ժան Նոել Գերինին և տեղական իշխանությունների մի շարք ներկայացուցիչներ:

Հընթացս Ս. Պատարագի Նորվան եպիսկոպոս Զաքարյանը ընթերցեց Ֆրանսիայի հայոց թեմի հաստատման հայրապետական Սրբատառ Կոնդակը, այնուհետև Նորին Սրբությունը հայրապետական իր օրհնությունն ու պատգամը ուղղեց մարսելահայ համայնքին:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՔԱՐՈԶԸ ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

(17 դեկտեմբերի 2006 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Ամենայն ծառ բարի՝ պտո՛ւղ բարի առնէ»:
(Մատթ. Է 17)

Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Գոհություն և փառք ենք մատուցում Բարձրալին, որ Սրբոց Թարգմանչաց եկեղեցու նվիրական այս հարկի ներքո ձեզ հետ ենք վերստին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ու մեր Հայրենիքի սրբավայրերից օրհնություն ենք բերել ձեզ, ողջունները՝ հայաստանաբնակ մեր ժողովրդի:

Այսօր հոգևոր ուրախություն ենք ապրում ամենքս: Մեր միասնական աղոթքով ու աստվածաշնորհությամբ վկայում ենք կենդանի գործությունը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, որ դարեր շարունակ հովվում է մեր ժողովրդին բարերար և հոգեխնամ առաքելությամբ:

Սուրբ Հոգու գործությամբ Հայոց առաջին Հայրապետ Սուրբ Գիրգոր Լուսավորիչը Հայաստանյայց աշխարհի և հայրը քրիստոնեական մեր հավատքի, բարեպաշտո

կազմակերպեց ու զարդարեց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ հաստատուն ու շեն դարձնելով Ամենայն Հայոց Հայրապետությունն ի Սուրբ Էջմիածին, որտեղից ճառագող աստվածատես լույսի ներքո բարեպաշտ ազգս հայոց աճեց իր առաքինի գործերով՝ որպես Քրիստոսի հոգեղեն Եկեղեցի:

«Ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ», - ասում է Տերը՝ Հիսուս Քրիստոս: Աստվածատուր շնորհներից բխյալ այդ բարի պտուղներից է քրիստոնեական մեր մշակույթը, որի փառավոր անդաստանում բազում գանձուց մեջ անգին գոհար է հայոց գիրն ու դպրությունը՝ սկիզբ առած երանելի Թարգմանիչ Վարդապետների տքնությամբ ու աղոթալի ջանքերով: Միրելիներ, Մարսելի հոյակերտ այս եկեղեցին կրում է անունը մեր Սուրբ Թարգմանիչների: Նրանց անմահ գործը թարգմանությունն է Սուրբ Աստվածաշնչի, որ մեզ համար եղավ աղբյուր կենաց՝ ոռոգելով մեր Եկեղեցին, հավատքով կենսունակ և միաբան պահելով համայն հավատացյալ ժողովուրդս հայոց: Անբաժանելի է հայ ժողովուրդը մեր Սուրբ Եկեղեցուց, իր ստեղծած հոգևոր ու մշակութային արժեքներից, որոնք շարունակում են հավելվել երկնահաճո նորանոր արարումներով՝ վկայելով հայոց ազգիս քրիստոսասիրությունն ու աստվածպաշտությունը ըստ Տերունական խոսքի. «Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա» (Մատթ. է 16):

Միրելի գավակներ Մեր, անհուն ուրախություն է ամենքիս համար այս տարի տոնախմբումը Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու 75-ամյակի: Այս առիթով կրկնակի է մեր բերկրանքը. այս հոբելյանի հետ մեկտեղ նաև արժեվորում ենք հաստատումն ու ծնունդը Ֆրանսիո հայոց թեմի, որի կառույցից ներս Սրբոց Թարգմանչաց եկեղեցին դեռ բազում ամյակների տոնակատարություններ պիտի տեսնի Տիրախնամ թեմի գալիք նոր սերունդների հետ: Եկեղեցու շուրջ համախմբված՝ դուք նույն նվիրումով պիտի շարունակեք բարեգարդումը ձեր ազգային-եկեղեցական կյանքի և առավել արդյունավորեք հանուն Մայր Եկեղեցու պայծառության, Հայրենիքի գորացման և համայն հայության բարօրության ձեր ջանքերը, որ հանապազ «պտուղ բարի առնէ»: Արդարև, հավատացյալ մեր ողջ ժողովրդի որդիական սիրով, հավատարմությամբ ու նվիրումով է շեն ու ծաղկուն Եկեղեցին մեր Սուրբ, մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այսօր գոհություն ենք մատուցում Բարերար Աստծուն, որ Ֆրանսիայի Հանրապետությունում հայ համայնքը բարգավաճում է և զորանում՝ իր բարի նպաստն ու ներդրումը բերելով օրինյալ այս երկրի պայծառությանն ու առաջընթացին և Հայաստանի ու Ֆրանսիայի ու մեր երկու ժողովուրդների բարեկամության առավել սերտացմանը, առկա փոխհարաբերությունների նորոգ արդյունավորմանը:

Ի խորոց սրտի մեր աղոթքն է, որ Երկնային Տերը խաղաղության Իր շնորհի ներքո շեն ու բարգավաճ պահի Ֆրանսիան և օրհնի բոլոր ջանքերը՝ ի խնդիր մեր երկրների ու ժողովուրդների բարեկամության անսասանության: Այլև հայցում ենք, որ Ամենակալը պայծառ պահի Եկեղեցիս Հայաստանյայց, բարեգարդյալ՝ 75-ամյակը բոլորած և հավատավոր մեր գավակներին դեռ բազում դարեր կենարար հոգևոր սնունդ բաշխելու և իր հարկից ներս մխիթարություն պարգևելու համար հաստատուն

կանգնած Սրբոց Թարգմանչաց եկեղեցին:

Թող Տիրոջ Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո բարօր ու խաղաղ հարատևի ազգս հայոց ի Հայաստան և ի Սփյուռն աշխարհի:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ և ընդ ամենեսեանդ. Ամեն»:

Սրբազան արարողությունից հետո տեղի ունեցավ Ս. Թարգմանչաց եկեղեցուն կից գործող Ս. Սահակ-Ս. Մեսրոպ մշակույթի կենտրոնի նոր մասնաշենքի հիմնարկեքի արարողությունը:

**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(Մարսել, 17 դեկտեմբերի 2006 թ.)

Միրելի Սրբազան,

Միրելի Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,

Միրելի բարեպաշտ ժողովուրդ.

Այսօր մենք առանձնակի ուրախությամբ ենք հավաքվել: Բոլորիս հոգուն նվիրական է այս պահը, երբ կատարեցինք օրհնությունը հիմնաքարի, որը դրվում է՝ վկայելով Սուրբ Սահակ-Մեսրոպ մշակութային կենտրոնի ընդարձակման սկիզբը:

Սկիզբ լինելով՝ այս բարի գործը իրականում շարունակությունն է այն մեծ եկեղեցանվիրումի ու ազգասիրության, որը մարմնավորվել է շուրջ երեսուն տարի առաջ, երբ Տ.Հակոբ եպիսկոպոս Վարդանյանի ու եկեղեցական Վարչական Խորհրդի նախանձախնդրությամբ և Մայր Աթոռի բարերար Արծրուն Ջրբաշյանի նվիրատվությամբ կառուցվեց կենտրոնը:

Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցուն կից հարազատ է ներկայությունը մշակութային կենտրոնի, որը կոչված եղավ և ծառայեց մեր ազգային մշակույթի պահպանմանն ու զորացմանը, ինչպես նաև՝ ներկայացմանը Մարսելի ու նրա շրջակայից մշակութասեր հանրությանը: Այստեղ հայ մանուկները վարժարան հաճախեցին, կազմակերպված դասախոսություններով, թատերական ներկայացումներով, ցուցահանդեսներով, հանդիպումներով ու համայնքային միջոցառումներով մեր ժողովրդի զավակների հոգիներին խոսեց հայոց պատմությունը, գրականությունը, երաժշտությունն ու գեղարվեստը: Այստեղ ապրեց Սահակ և Մեսրոպ մեր մեծ Ուսուցչապետերի և նրանց շնորհագարդ աշակերտների՝ Թարգմանիչների՝ Ոսկեդար կերտող ոգին հոգեղեն: Այդ ոգով ձեր հայրերը ապրեցին, և դուք պիտի շարունակեք ապրել, քանզի ձեռնամուխ եք ընդարձակելու և առավել բարեզարդելու մշակութային կենտրոնը: Այս հարկի ներքո ձեր զավակները իրենց եկեղեցական ու ազգային կյանքը պիտի կազմակերպեն առ Աստված հավատով, անբաժան Սրբոց Թարգմանչաց արարող ոգուց, Հայրենիքի սիրուց ու մեր մշակութային ժառանգությունից, լուսավո-

րության և կյանքի առաջընթացի ձգտումից:

Այս հավատով, սիրելիներ, մենք բոլորս ներկա ենք հիմնաքարի օրհնության արարողությանը: Խորհրդանշական է, որ երեկ այս հանդիսարահում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարձր պարզև շնորհեցինք անձանց, ում դուք ճանաչում էք իրենց նվիրումով, իրենց հավատավոր, ազնիվ ու բարի գործերով, եկեղեցական և ազգային մեր կյանքին, նաև մեր Հայրենիքին իրենց ծառայություններով:

Մեր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում Ձեզ, սիրելի Սրբազան, ձեզ՝ Մարսելի հովվության ուխտապահ հոգևոր դասիդ, բարերար ու բարեգործ հայորդիներիդ, մեր մշակույթի նվիրյալներիդ, ձեզ բոլորիդ՝ սիրեցյալ բարեպաշտ զավակներ մեր Սուրբ Եկեղեցու:

Հայցելով բարեխոսությունը Սրբոց Թարգմանչաց՝ աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր շնորհառատ օրհնության ներքո պահպանի ձեզ և պարզև քաջառողջ կյանքի երկար օրեր ու նորանոր հաջողություններ ձեր աստվածահաճո բարի գործերին ու ծրագրերին:

Թող լույսը ձեր հավատի ճշմարտության այնպես լուսավորի, որ մարդիկ տեսնեն ու փառք տան Աստծուն, որ երկնքում է:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը հոգեհանգստյան կարգ կատարեց Նահատակաց հուշարձանի առջև:

Նորին Սրբությունը հոգվոց ասաց նաև Գրիգորիս եպս. Պալաքյանի և Վահան Խորասանճյանի հուշարձանների առջև՝ այնուհետև կատարեց Ս. Սահակ – Ս. Մեսրոպ մշակութային կենտրոնի ընդարձակման հիմնարկեքի արարողությունը:

Նույն օրը, երեկոյան, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մարսելից մեկնեց Փարիզ և հաջորդ օրը, դեկտեմբերի 18-ին, վերադարձավ Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսություն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած իրենց ծառայությունների համար «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր տիար Հակոբ Ավետիքյանը պարգևատրվեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ», իսկ տիար Լևոն Սարգսյանը՝ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններով:

Հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի ողջույնի խոսքով: Ապա «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո դահլիճ բերվեցին Հայրապետական Սրբատառ Կոնդակները, որոնք ընթերցեցին Մայր Աթոռի միաբաններ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը և Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պրն Հակոբ Ավետիքյանին տրված կոնդակում ի մասնավորի ասվում է. «...Հայրենի մեր Երկրի գորացմանն ու առաջընթացին Ձեր կարողությունները ներդնելու պատրաստակամությունը առաջնորդեց Ձեզ Հայրենիք, որտեղ Տիրոջ օրհնության ներքո շարունակում եք հարստացնել ազգօգուտ և եկեղեցաշեն Ձեր վաստակը: Ահավասիկ, շուրջ տասնհինգ տարիներ են անցել ծանր ու դժվարին այն օրերից, երբ Դուք Ձեր գաղափարակից ընկերների հետ հիմնադրեցիք «ԱԶԳ» օրաթերթը: Այսօր ուրախ ենք նշելու, որ «ԱԶԳ»-ը իր ուրույն տեղն ունի մեր երկրի լրատվամիջոցների մեջ և գնահատված է բոլոր ընթերցողների կողմից: Թերթը և նրա աշխատակիցներից շատերն արդարորեն արժանացել են միջազգային և հայրենական տարբեր մրցանակների, իսկ Դուք, որպես գլխավոր խմբագիր՝ «Մովսես Խորենացի» պետական բարձր պարգևի: Առանձնակի գոհունակություն է Մեզ համար, որ «ԱԶԳ»-ը հոգևոր կյանքին նվիրված հետաքրքիր հրապարակումներով մշտապես խրախուսում ու քաջալերում է բարեպաշտ հայորդյաց հավատարմությունը առ Հայոց Եկեղեցին ու հավատի մեր սուրբ օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»:

Պրն Լևոն Սարգսյանին տրված Հայրապետական կոնդակում ասվում է. «...Տարիներ շարունակ Դուք ի սպաս եք դնում Ձեր կարողությունները՝ հանուն Հայրենի մեր Երկրի գորացմանն ու առաջընթացի և հավատավոր մեր ժողովրդի բարօրության: Երկար տարիներ դիվանագիտական աշխատանք իրականացնելով Սիրիայում, Դուք մեծ ավանդ եք բերել բարեկամ այդ երկրի հետ Հայաստանի հարաբերությունների առավել գորացմանը և Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

Սիրիայում պաշտոնավարելու ընթացքին Դուք մեծ արդյունավորությամբ աջակցել եք նաև Դամասկոսի հայոց թեմի առջև ծառացած խնդիրների հաղթահարմանը և Հայրենիքից հեռու բնակություն հաստատած հայորդիների ազգային և եկեղեցական

կյանքի շինությանն ու պայծառությանը, նրանց հոգիներում մեր սրբազան ժառանգության ու մայրենի լեզվի պահպանության հանդեպ նախանձախնդրությունը զորացնելու սրբազան առաքելությանը: Միրիահայ գաղութից ներս ծավալած Ձեր ազգոգուտ և եկեղեցաշեն գործունեությունը, որ արգասավորությամբ շարունակում էք նաև այսօր, արժանիորեն բերել է Ձեզ հարգանքը Դամասկոսի հայոց թեմի հոգևոր դասի և բարեպաշտ հավատացյալներին:

Գոհունակությամբ ենք անդրադառնում Միաձնաէջ Սուրբ Աթոռի շինությանն ու պայծառությանը մասնակցություն բերելու Ձեր ազնիվ պատրաստակամությանը: Ձեր մատուցած բազմաթիվ ծառայությունները, ի շարս որոնց՝ ձեռագիր Աստվածաշնչի ընծայաբերումը Մայր Աթոռիս ձեռագրատանը և երաժշտական գործիքների ապահովումը Հայորդյաց Տներին, որոնք արտահայտությունն են Ձեր հավատավոր և ազգասեր հոգու, անկեղծ ուրախություն են պարգևում Մեզ, որ էջմիածնասեր ոգին զորեղ է Ձեզ պես հայորդյաց սրտերում և ծնունդ է տալիս բարի իրագործումներին»:

Կոնդակների ընթերցումից հետո Նորին Սրբությունը Հակոբ Ավետիքյանին և Լևոն Սարգսյանին հանձնեց Հայ Եկեղեցու պատվո բարձր շքանշանները:

Երախտագիտության խոսք ասացին նաև օրվա մեծարյալները: Լ. Սարգսյանն իր խոսքում մասնավորաբար կարևորեց Եկեղեցու և պետության միասնությունը. «Յուրաքանչյուր հայի համար Հայոց պետությունը չի կարող անջատված լինել Հայ Եկեղեցուց, որովհետև հայ լինել՝ նշանակում է քրիստոնյա լինել, նշանակում է պարտադիր կերպով ծառայել Եկեղեցուն, որովհետև մեր Եկեղեցին է, որ պետականության բացակայության երկար տարիների ընթացքում իր վրա էր վերցրել հայ ժողովրդի և՛ հոգևոր դաստիարակությունը, և՛ հոգևոր ու աշխարհիկ կառավարումը»:

Իր հերթին Հ. Ավետիքյանը նշեց, որ Երուսաղեմի հայոց վանքում իր ուսումնառության տարիների ընթացքում է խորապես ըմբռնել Եկեղեցու «զինվորյալ մանկունք» արտահայտությունը. «Զենքերը տարբեր են: Զենք կա, որ ձայն է հանում միայն, զենք կա, որ սպանում է, զենք կա, որ դաստիարակում է: Ես ընտրել եմ վերջինը և ինձ համարում եմ զինվորյալ մի մանուկ մեր Հայ Առաքելական Եկեղեցում՝ ծառայող նրան, հավատացող նրան: Հավատացող այն պատմական, կենսական գործունեությանը, որը մեր Եկեղեցին կատարում է մեր ազգի և մեր պետության համար»:

Հանդիսությունը եզրափակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: «...Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ուրախության օր է, որովհետև այսօր Մենք մեր Եկեղեցու երկու հավատավոր զավակներին արժանին մատուցեցինք՝ գնահատելով իրենց ծառայությունը և տարիների վաստակը: Նրանք իրենց կարողությունները ծառայեցրել են ազգին և Եկեղեցուն՝ զիտակցելով, որ մեկի ուժը մյուսի առավել զորացումն է, զիտակցել են, որ իրենք, որպես ազգի զավակներ, պարտավորություն ունեն իրենց ծառայությունը բերելու նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, որը կատարել են արժանի ձևով: Այսօր Մեզ համար մեծ գոհունակություն է նրանց կուրծքը զարդարել մեր Եկեղեցու բարձր պարգևներով և Մեր գնահատանքը բերել նրանց», - ասաց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը մաղթեց մեծարյալներին, որպեսզի Տիրոջ հո-

վանավոր Աջը աջակից լինի նրանց, որ նույն նախանձախնդրությամբ ու եռանդով շարունակեն իրենց ծառայությունը բերել Հայրենիքին ու Մայր Եկեղեցուն:

Հանդիսության ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդես եկավ «Նավասարդ» երգչախումբը՝ խմբավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՔԱՐՈՁԽՈՍԱԿԱՆ

Տ. ԻՍԱՀԱԿ ԱՔԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԹԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 դեկտեմբերի 2006 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Եվ երբ գնաք, քարոզեցէ՛ք և ասացէ՛ք.
«Երկնքի արքայութիւնը մոտեցել է»»:*

(Մատթ. Ժ 7)

Սիրելի՛ հավատացյալներ,

Քիչ առաջ ավետարանական ընթերցվածից կարդացվեցին այս խոսքերը:

Քրիստոս տասներկուսին ընտրելուց հետո, նախապատրաստում է նրանց թեև երկու-երկու, սակայն առանձին շրջելու, որպէսզի փոխարինաբար միմյանց օգնական և պաշտպան լինեն: Առաքյալներին տրված պաշտոնը երկու կարևոր դերակատարություն ունէր՝ քարոզություն և բժշկություն: Սակայն Քրիստոս բավարար չհամարեց առաքյալներին միայն պաշտոն տալ, այլ նրանց համար ընդարձակ հրամաններ սահմանեց, ծառայելու պայմաններ, ինչպէս նաև խրատական հորդորներ տվեց, այդ թվում. *«Եվ երբ գնաք, քարոզեցէ՛ք և ասացէ՛ք. «Երկնքի արքայութիւնը մոտեցել է»»:* Հետաքրքրական է, որ նույն այս խոսքերով Հովհաննէս Մկրտիչն է սկսում իր քարոզությունը. *«Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայութիւնը մոտեցել է»* (Մատթ. Գ 2):

Նույն այս խոսքերով մեր Տէր Հիսուս Քրիստոս է սկսում իր քարոզությունը: Այս խոսքերը կարող են ողջ Ավետարանի համար որպէս բնաբան ծառայել: Քրիստոսի աշակերտներն ամենից ավելի հաճախ էին լսել այս պատգամը և, հետևապէս, ըստ ամենայնի էին հասկանում այս խոսքերի խորքն ու բովանդակությունը. *«Քրիստոս վերջնականապէս հաստատելով իր արքայությունը, նրա տարածումը ևս հանձնեց Իր առաքյալներին, ... Տերը ոչ թէ աշխարհի միայն մեկ մասի համար եկավ, այլ՝ աշխարհի բոլոր մասերի համար: Մի մասին բժշկեց, որպէսզի մեկ մասի միջոցով բոլոր մասերը սովորեն գնալ նույն բժշկի մոտ»* (տե՛ս Ա Կորնթ. ԺԴ 23), ասում է Եղիշե պատմիչը (հմմտ. Ա Տէր-Միքելյան, էջ 227, 235): Եվ սա, ի թիվս այլ առաքյալների, գիտակցում էին նաև Ս. Թադէոս և Ս. Բարդուղիմէոս առաքյալները, ովքեր *«հաստատուն վեմի»* վրա հիմնվելով՝ *«ճշմարիտ»* հաստատեցին Աստծո և մարդու հարաբերությունը՝ ձեռնադրելով եպիսկոպոսներ, քահանաներ ու սարկավագներ՝ նրանց հանձնելով հայ հավատացյալի հովվությունը:

Հայոց Եկեղեցին այնուհետև սկսեց գործնալ, ընդլայնվել, և մարդիկ փրկություն և քրիստոնեական դաստիարակություն գտան Քրիստոսի սպասավորների հոգատարությամբ: Ամենքը ճանաչում էին իրենց իշխանության սահմանը, և այս ամենը կարգավորում էին իրենք՝ առաքյալները, գործով ու քարոզությամբ: Այսօր, սակայն, սիրելի՛ հավատացյալներ, ինչպէս և առաքյալների ժամանակ, Եկեղեցուն շարունակում են սպառնալ զանազան բացասական ուղղություններ, մոլորություններ և ամեն տեսակ աշխարհային ազդեցություններ, որոնք քարոզողները ո՛չ միայն չեն ուզում

խրատվել, այլև իրենք են փորձում ավետարանական խոսքը ծառայեցնել իրենց սեփական շահին: «Եթե նույնիսկ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելին, քան այն, որ մենք ավետարանեցինք, նգովյալ լինի» (հմմտ. Գաղտ. Ա 8-9):

Սա՛ է եղել առաքյալների քարոզության անխախտ նշանաբանն ու սկզբունքը: Մարդկության պատմության ընթացքին միշտ էլ անհատներ, չար ուժեր ու պետություններ «փափագ» են ունեցել արձակելու և ջլատելու Քրիստոսի Եկեղեցին, բայց Քրիստոսի Եկեղեցին միշտ էլ հաղթանակած է դուրս եկել՝ հաստատ մնալով հավատի մեջ և պատվիրելով. «Զգու՛յշ եղեք, չլինի թե մեկը ձեզ գրավի ճարտարամտությամբ և սնոտի խաբեբայությամբ. դրանք մարդկային ավանդության և բնության տարերային ուժերի վրա են հիմնված և ոչ թե Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետության» (տե՛ս Կող. Բ 6-10, Գաղտ. Ե 10):

Սիրելի՛ հավատացյալներ, մեր սրբազան նախնիք՝ Սուրբ Հայրերն ու նահատակներն իրենց կյանքն են տվել հանուն մեր Եկեղեցու և գոհացել են Աստծուց՝ հուզավառվելով բարի նախանձի մեջ, ինչպես որ առաքյալները Սուրբ Հոգու էջքի ժամանակ և ինչպես որ աստվածային վեմի վրա դրված հիմքն ու կառուցված եկեղեցին է տաճար, այդպես էլ ամենքդ, քանզի մեր հավատքի զորագլուխը մեկն է՝ Քրիստոս, որով ամենքս մի ենք: Եվ ինչպես որ Աստծո տաճարն է ծառայում մեկ հիմնական նպատակի, այն է՝ աղոթքի, հաղորդակցության, շնորհագործության, այնպես էլ մենք՝ ի շինություն Քրիստոսի մարմնի:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների՝ մեր Եկեղեցու քահանայապետությունը հիմնադրած առաջին լուսավորիչների հիշատակության օրն է: «Ահավասիկ, ես կուղարկեմ բազում ձկնորսների,- ասում է Տերը,- և նրանք կորսան բոլոր լեռների, ժայռերի ու բլուրների վրա» (հմմտ. Երեմ. ԺԶ 16):

Այսօրինակ ձկնորսներից Հայաստան աշխարհին ու հայ ժողովրդին Տիրոջ կամքով բաժին են ընկել Ս. Թադեոսն ու Ս. Բարդուղիմեոսը: Հետևապես, այսօր աղոթքի օր է և ուխտի օր, Եկեղեցու Հայրապետների և վարդապետների հիշատակության օր, սրբերի, մարտիրոսների ու նահատակների, ովքեր իրենց կյանքով ու արյունով քավեցին իրենց մեղքերը և այժմ էլ երկնքից բարեխոս են մեզ համար՝ վավեր ու բովանդակ մտքով: Եվ մեր պատգամն է, որ յուրաքանչյուր զորացնի իր հավատքը հանդեպ մարդիկ և հանդեպ Աստված: Ինչպես որ մի մարմնի մեջ բազում անդամներ ունենք, և յուրաքանչյուրն իր գործն է կատարում, այնպես էլ մենք՝ շատերս մեկ մարմին ենք Քրիստոսով և ունենք տարբեր շնորհներ, և եթե որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները, և եթե փառավորվում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները (հմմտ Ա Կոռնթ. ԺԲ 26):

Սիրելիներ, Աստված թող մշտապես խաղաղության մեջ պահի Առաքելական մեր Մայր Եկեղեցին և թող Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ և մեր Հայրերի նահատակությամբ նվիրականացած մեր երկիրը պտղաբեր լինի յուր քաջարի զավակներով՝ ի շինություն Եկեղեցվույս, ի բարօրություն ազգիս հայոց և ի փառս Աստծո, Որին փառք հավիտյանս. Ամեն:

**Տ. ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԺԱՄԿՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**
(3 դեկտեմբերի 2006 թ.)

*«Լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յո-
րում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է»:*

(Ելք Գ 5)

Միրելի հոգևոր եղբայրներ, սիրելի նորած եղբայրներ և հավատացյալներ.

Աստուծո ռոգորմությամբ այսօր եկեղեցականության շարքերը համալրվեցին ևս չորս մշակներով, ովքեր տարիներ առաջ ոտք դնելով եկեղեցու շեմից ներս՝ ուխտ ա-
րեցին դառնալ աստվածային խոսքի մշակներ և սպասավորները մեր Սուրբ Եկեղե-
ցու և Ժողովրդի: Ահավասիկ ևս չորս նորած քահանա Հայրեր, ովքեր արձագանքե-
ցին Տիրոջ Խոսքին, կրթվեցին ճեմարանում, գորացրին իրենց հոգին այս խնկաբույր
կամարների ներքո և Հայոց Հայրապետի և ողջ հոգևորականության հայացքի ներքո
աճելով՝ հանձն առան քաղցրությամբ իրենց ուսերի վրա կրել Տիրոջ Սուրբ Խաչը և
ընթանալ Տիրոջ պատվիրաններով:

Այսօր փառք և գոհություն ենք տալիս Աստծուն, որ տեսլաշեն Միածնաէջ հրեշ-
տակներով լեցուն մեր Սուրբ Եկեղեցին շարունակում է ծնել լույսի որդիներ: Փառք
ենք տալիս Աստծուն, որ Սուրբ Հոգու շնորհագործ գործության բերկրանքը այսօր
պատել է և՛ երկնայիններին, և՛ երկրայիններին: Փառք և գոհություն Աստծուն, որ մեր
Ժողովրդին տալիս է ևս չորս մշակ: Փառք ենք տալիս Աստծուն, որ շնորհիվ հունձքի
առատության՝ շատ ու շատ մշակներ են պատրաստվում և տարեցտարի ավելի շա-
տանում:

Կոշիկներդ հանի՛ր քո ոտքերից, որովհետև այն վայրը, ուր կանգնած ես, սուրբ է:

Այս խոսքերը վստահաբար ծանոթ են մեզ բոլորիս: Աստվածային այս կանչն է, որ
մեզ բոլորիս իրարից տարբեր ժամանակներում բերել է այս սուրբ վայրը: Դարեր ա-
ռաջ աստվածային այս բառերը լսեց Մովսես մարգարեն, որը փորձում էր մոտենալ
Անկեզ մորենուն: Այս խոսքերն այսօր այս Սուրբ Սեղանից և նրա վրա ճառագող Լու-
սավորչի կանթեղից մեզ են ուղղված: Նայեցեք այնտեղ հովվի աչքերով, ինչպես Մով-
սեսն է նայում Անկեզ մորենուն, և այնտեղից կլսեք այս ձայնը. «Հանեցեք ձեր կոշիկ-
ները ձեր ոտքերից, որ մինչև այսօր քայլել են այս աշխարհի փոշիների մեջ, մաքրվեք
այս աշխարհի տիղմից, որովհետև այնտեղ, որտեղ որ դուք կանգնած եք, սուրբ եր-
կիր է, սուրբ հող է»:

Այսօր դուք բարձրացրիք ձեր ձեռքերը, հրաժարվեցիք այս աշխարհի լայն բաց-
ված ճանապարհներից և հավատարմությամբ ուխտ կնքեցիք քայլելու սրբության և
ազնվության, նվիրումի և ծառայության նեղ և փշոտ ճանապարհներով:

Միրելի նորած Հայրեր, աստվածային Խոսքի մշակներ լինելը լոկ խոսքով չի
սահմանափակվում, այն իր մեջ որքան ուրախություն ու քաղցրություն ունի, այնքան
էլ դառնություն ու դժվարություններ: Քրիստոսի առաքյալը դառնալը միայն այս պա-
հի կատարվածով չի սահմանափակվում և միայն օծում ստանալով չի որոշվում:

Դուք ձեր ողջ կյանքի և ծառայության ընթացքում և արդյունքում ձեր ծառայության պետք է դառնաք արժանի քարոզիչն ու մշակը, արժանի սպասավորը մեր Եկեղեցու և Ժողովրդի՝ արժանի կոչվելու իրական առաքյալը: Արդ, որովհետև խոսքս ուղղված է ձեզ, սիրելի նորած չայրեր, և այսօրվա գերահրաշ աղոթքներն էլ ձեզ համար են, որոնց շնորհառատ գործության ներքո նրանց ազդմամբ կոչվեցիք քահանայության, լրջորեն և իմաստությամբ նայեք նախ ինքներդ ձեզ, դիտեք ձեր կյանքը և տեսեք, թե ինչն է պատճառը ձեր կյանքի և կոչումի, թե ինչու բաժանվեցիք մարմնականից սեղանով, զգեստով, կոշիկով, գոտիով և բնակությամբ նմանվեցիք այն ճամփորդներին, ովքեր, հակառակ ճանապարհի երկարությանը, անձրևներին, քամիներին, դժվարություններին, ընթանում են իրենց ուղիով՝ հաղթելու մեծագույն հույսով և ակնկալիքով:

Այսօր ուրք դրեցիք կյանքի մի նոր հանգրվան ու ճանապարհ, որտեղ շատ են խոչընդոտները, որտեղ սաստիկ պատերազմ է աշխարհային կյանքի դժվարությունների և փորձությունների դեմ: Այսպիսի ճանապարհ նախ մեր Տերն անցավ և հաղթության օրինակը պարզեց մեզ, և քանի որ զինվոր կոչվեցիք, քաջությամբ պիտի կռվի ելնեք նախ ինքներդ ձեր դեմ՝ սպանելու ձեր մեջ ամեն տեսակ հեշտություն և ցանկասիրություն, ազահություն և ծուլություն, լուրջության դուռ դնելով ձեր բերաններին և Աստուծո խոսքով միայն բացելով, ապա պայքարելով ձեր հոտին վնաս հասցնող բազմաթիվ երևույթների դեմ: Կոշիկները հանեցեք ձեր ոտքերից, որովհետև այն վայրը, որտեղ դուք կանգնած եք, սուրբ է, որպեսզի չլինի, թե այս աշխարհի վրայի մտածումներով և փոշիներով մտնեք այս սուրբ տեղը և կանգնեք այս սուրբ տեղի վրա, որպեսզի չլինի, թե դառնաք անպիտան մշակներ:

Սիրելի նորած չայրեր, խոսքս տեղին եմ համարում ավարտել խոսքով Անձնացու հետևյալ խրատական տողերով. «Քանզի հովիվ կոչվեցիք, որպեսզի Տիրոջ Ժողովուրդը հովվեք, բանավոր վայրերում արածեցնեք, բանական գառներին խնամեք, որպեսզի միշտ խոսքով վարդապետեք և նույնը գործով կատարեք՝ սեփական անձի մաքրության բոլոր բարիքների օրինակը տալով հոտին և նախանձախնդրությամբ, բարի նախանձով հորդորելով բոլորին, քանզի ում շատ գիտություն տրվեց, նրանից շատ առաքինություններ են պահանջվում, և ում տրվեց բանական հոտի վրա վերակացություն, նրանից առավել ևս կպահանջվի ուղիղ վարք և Ժողովրդի խնամակալություն: Ջանացեք ապրել և ծառայել Տիրոջ օրհնյալ պատվիրաններով և մտածեք միայն աստվածային ճանապարհների մասին, թե որտեղից սկսվեց և որտեղ է ավարտվում: Սկիզբը բարի է, որովհետև Լույս Հորից է, և ավարտն էլ վերստին Նրա մոտ է»:

Թող Բարձրյալն Աստված շնորհով լեցնի մեր Եկեղեցին և նորած մեր քահանա հայրերին այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ

ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՎԱՀՐԱՄ ԲԱԲՈՒՆՈՒ «ՀԱՅՐ ՄԵՐ»-Ի ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեական աստվածախոսության երախայրիքը Տերունական աղոթքն է (Մտթ. 2 9-13, Ղուկ. ԺԱ 2-4): Նրա մեջ առավելագույն խտացումով դրսևորված են Աստված-մարդ, մարդ-Աստված հարաբերության հիմնական պահերը: Նա հոգևոր կենցաղավարության այբուբենն է, որի յուրաքանչյուր տառանիշը հանգամանալից բացատրվել է Եկեղեցու հայրերի ու վարդապետների ջանքերով: «Հայր մեր»-ի բացատրության դասական օրինակը Որոգինեսի (185-253) մեկնաբանությունն է (Peri Euch¹, 18-30), որն աչքի է ընկնում գիտական խորությամբ և համակարգվածությամբ: Բարոյաբանական խստորոշ նկարագիր ունի Որոգինեսի արևմտյան ժամանակակցի՝ Ս. Կիպրիանոսի (201-258) Տերունական աղոթքի մեկնությունը (De oratione Dominica): Հավատացյալների հոգևոր պետքերին գոհացում տալու նպատակով հետազայում ևս շարադրվել են համաբնույթ մեկնություններ (Ս. Գրիգոր Նյուսացի¹, Ս. Հովհան Ոսկեբերան²), որոնք աղոթքը բացատրել են տարբեր կտրվածքներով, տարբեր հայեցակետերից: Առաջնորդվելով հայրախոսական հարուստ փորձառությամբ՝ հայ հեղինակները ևս շարադրել են Տերունական աղոթքի մեկնություններ: Հայտնի են Եղիշեի³, Ստեփաննոս Սյունեցու⁴, Գրիգոր Նարեկացու⁵, Ներսես Լամբրոնացու, Վարդան Արևելցու⁶, Գրիգոր Տաթևացու⁷ մեկնությունները: Այս շարքը համալրում է ԺԳ դարի խոշոր մատենագիր Վահրամ Բաբունու անունը: Ի շարս բազում երկերի⁸ նա ևս հեղինակել է «Հայր մեր»-ի մեկնություն: Շատ մատենագիրների նման պատշաճը հատուցելով՝ Բաբունին ևս պատկառոտ հարգանք է տածում հայրախոսական վաստակի նկատմամբ: Բացատրությունը գրելիս նա աչքի առջև է ունեցել Ս. Հովհան

¹ PG, 44, 1120-1193. հայ թրգմ. «Նորին Գրիգորի ասացեալ ի Հայր մեր, որ յերկինսն», ՄՄ ԸՆԹ. 1500, թ. 712ա-723բ նաև միայն հայերենով հայտնի. «Երանելոյն Գրիգորի Նիսեա եպիսկոպոսի ի բանն տէրունական, որ ասէ, թէ՛ «Այսպէս արժան է կալ յաղալթս», ՄՄ, ԸՆԹ. 1525, թ. 284ա-286ա:

² Տէ՛ս «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս, Գիրք Կրկին», Վենետիկ, 1826, էջ 308-316:

³ Տէ՛ս «Սրբոյ իօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», Վենետիկ, 1859, էջ 199-206, նաև՝ Մատենագիրք Հայոց, Ա, Անթիլիաս, 2003, էջ 955-959. աշխ. թրգմ. Խ. Գրիգորյանի, «Գանձասար», Գ, Եր., 1993, էջ 248-254:

⁴ Ստեփանոս Միսնեցի, Մեկնութիւնն քառատարանի, աշխատ. Գարեգին կաթողիկոս Յովսէփեանի, Եր., 1994, աշխ թրգմ. Վիգեն դպիր (այժմ Տ. Խաղ թի.) Ղազարյանի, Ս. Էջմիածին, 1997, էջ 51-53, Սարգիս Կունդ, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու. աշխատ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 263-265:

⁵ «Մեկնութիւն սրբոց վարդապետաց Եկեղեցոյ արարեալ ի Հայր մեր, որ յերկինսն, գոր ուսոյց Տէր աշակերտացն եւ նոցով՝ ամենայն հաւատացելոց...», ՄՄ. ԸՆԹ. 5753, թ. 37ա-41ա:

⁶ Տէ՛ս Վարդան Արևելցի, Ճառք, ներբողեանք., աշխատ. Նակոր Քյոսեյանի, Եր., 2000, էջ 163-174:

⁷ Տէ՛ս Աբրահամ վրդ. Սկրտչյան, «Հայր մեր»-ի մեկնություններն ըստ Ս. Գրիգոր Տաթևացու, Եր. 1992:

⁸ Այս մասին տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 516, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ե, Եր., 1963, էջ 26, Գ. Հ. Գրիգորյան, Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը, Եր., 1969, էջ 5-41, Ա. Մաղոյան, Միջնադարյան հայկական պոեմը, Եր., 1985, էջ 236-248: Ս. Զաքարյան, «Հայ իմաստասերներ» մատենաշար, Հովհաննես Պլուզ Երզնկացի, Վահրամ Բաբունի, Եր., 1997, էջ 3-47:

Ոսկեբերանի՝ Մատթեոսի Ավետարանի դասական մեկնությունը և Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնության մաս կազմող «Հայր մեր»-ի մեկնությունը⁹: Այդ են ցույց տալիս հետևյալ համադրումները.

Հովհան Ոսկեբերան

Զիա՞րդ վաղվադակի զարթուցանե՞ զլսաւոսն և զբնաւ իսկ գերախտիսն յիշեցուցանե՞ ի սկզբան աղաւթիցն. Զի որ հայրն կոչիցէ ե՛ւ զմեղաց թողութիւն, ե՛ւ զտանջանացն դիրութիւն, ե՛ւ զարդարութիւն, եւ՛ զսրբութիւն, եւ՛ զփրկութիւն, եւ՛ զգորդեգրութիւն, եւ՛ զծառանգութիւն եւ՛ զեղբայրութիւն ընդ Միածնին եւ զՀոգւոյն պարգեւս միով բանիւս այսուիկ միանգամայն խոստովանի: Քանզի չէ հնար Հայր կոչել զԱստուած, եթէ ոչ այսմ ամենայնի բարութեանց հասեալ իցէ: Եւ արդ, կրկին իսկ զարթուցանե՞ զմիտս նոցա, եւ պատուով այնորիկ, զոր կոչեն եւ մեծութեամբ երախտեացն յոլովեաց: Եւ յորժամ յերկինս ասէ. ոչ եթէ զԱստուած անդ միայն յերկինս փակիցէ, այլ զի յերկրաւորացս վերացուցէ զայն, որ յաղաթս կայցէ, եւ ի բարձանց բնակութիւնսն հանցէ հաստատեցէ: Եւ խրատէ եւս, զի հասարակ ի վերայ այլոցն եւս եղբարց առնիցէ աղաւթս: Քանզի ոչ ասէ, թէ Հայր իմ, որ յերկինսդ ես, այլ թէ՛ «Հայր մեր»: Փոխանակ ամենայն մարմնոյն մատուցանե՞ զպաղատանս, եւ ոչ միայն զիւրն ուրեք գիտէ, այլ ամենայն ուրեք եւ զընկերին: Նա եւ զթշնամութիւն իսկ բառնայ այսուիկ եւ զհպարտութիւն ցածուցանե՞ եւ զախտն եւ զհեռ մերժէ եւ զմայրն ամենայն բարութեանց զսերն ի տեղուոջ հաստատէ (էջ 308):

Արժանի զԱստուած Հայր կոչելոյ են աղաւթքն, զի ոչ նախ քան **զՀայրն փառս այլ ինչ խնդրիցէ, այլ զամենայն ինչ երկ-**

Վահրամ Ռաբունի

Զիա՞րդ վաղվադակի զարթուցանե՞ զլսաւոսն, եւ զբնաւին իսկ երախտիսն յիշեցուցանե՞ ի սկզբան աղաւթիցն. զի որ Հայրն կոչիցէ զմեղացն թողութիւն եւ զտանջանացն դիրութիւն եւ զարդարութիւն եւ զսրբութիւն եւ զփրկութիւն եւ զեղբայրութիւն ընդ Միածնին եւ զՀոգւոյն պարգեւս միով բանիւս այսուիկ, քանզի ոչ է հնար հայր կոչել զԱստուած, եթէ ոչ այսմ ամենայն բարութեանց հասեալ իցէ: Իսկ յերկինսն աղաւթելով ոչ թէ զԱստուած անդ յերկինս փակիցէ, այլ զի յերկրաւորացս վերացուցէ զայն, որ յաղաթս կայցէ, եւ ի բարձանց բնակութիւն հանիցէ, հաստատեցէ: Եւ խրատէ եւս, զի հասարակ ի վերայ այլոց եւս եղբարց առնիցէ աղաւթս, քանզի ոչ ասէ, թէ՛ Հայր իմ, որ յերկինս, այլ ասէ՛ Հայր մեր. փոխանակ ամենայն մարմնոյ մատուցանե՞ զպաղատանս: Նա եւ զթշնամութիւն բառնայ այսուիկ եւ զհպարտութիւն ցածուցանե՞ եւ զմայրն ամենայն բարութեանց ի տեղոջն հաստատէ:

Գլուխ ամենայն բարութեանց ասէ, զի ոչ նախ քան զԱստուծոյ **Հայր փառսն**

⁹ Տե՛ս «Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», Վենետիկ, 1847, էջ 451-465, նաև՝ ՄՄ, ձեռ. 1712, թ. 240ա-252բ, 851, թ. 297ա-316բ, 2169, թ. 356բ-366ա:

որոշ Նորա փառացն համարիցի: Զի սուրբն, ասէ, փառաւորեալ է, զի Նա զիւր փառսն միշտ լիով ունի, եւ նոյնպիսի հանապազ կայ մնայ, բայց աղաչել հրամայէ զայն, որ յաղաթսն կայցէ, զի մերովք իսկ կենալքս փառաւորեացի: Եւ զոր յառաջագոյնն ասաց, եթէ «Լուսաւորեացի լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեացն զՀայր ձեր, որ յերկինս է» (Էջ 309):

Եկեսցէ արքայութիւն Քո. Եւ այս դարձեալ մտերիմ եւ բարեբարոյ Որդոյ է՝ չբեւեռել ընդ երեւելիս եւ ոչ ինչ մեծամեծ զանցաւորս համարել, այլ փութալ առ Հայրն, եւ հանդերձելոցն ցանկալ, որ բարւոք կամաց եւ մտաց ազատելոց է յերկրաւոր զբաւսանաց: Որում եւ Պաւղոս հանապազոր ցանկայր, վասն որոյ եւ ասէ իսկ եթէ՝ «Եւ մեք, որ զպտուղ Հոգւոյն ունիմք՝ հեծեմք, զի որդեգրութեան ակն ունիմք, փրկութեան մարմնոյ մերում...»

Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի. Տեսանէ՞ս զգեղեցիկ կարգն, զի ցանկանալ հրամայեաց հանդերձելոցն եւ յայն ճանապարհ փութալ... Զի չիցէ ինչ, որ արգելուլ կարիցէ ի բարձանց զաւրացն ի կարգացն հաստատութիւն հասանել վասն յերկրիս բնակելոյ, այլ մարթի մինչ աստ որ շրջիցի, անդ ի վեր գտանել եւ զամենայն ինչ ըստ այնմ աւրինակի առնել:

Եւ արդ, զոր ասեն, այսպիսի ինչ է, թէ զոր աւրինակ անդ ամենայն ինչ անարգել եւ անխափան գործի, եւ ոչ եթէ զկէսն առնիցեն հրեշտակք եւ զկէսն ստունգանիցեն, այլ ամենայն հրամանացն հնազանդեալք եւ հաւանեալք են, քանզի եւ ասէր իսկ եթէ՝ «Հզարք են զաւրութեամբ՝ առնել զբան Նորա»: Նոյնպէս եւ զմեզ, ասէ, զմարդիկ, ապա արժանի, մի՛ զկէս կամացն միայն առնել, այլ զամենայն ինչ, որպէս եւ կամիս, կա-

այլ ինչ խնդրիցէ, այլ զամենայն ինչ, երկրորդ՝ Նորա փառացն համարիցէ, զի Նա զիւր փառսն լիով ունի, բայց աղաչել հրամայէ զայն, որ յաղաթսն, զի եւ մերովքն իսկ փառաւորեացի, որպէս յառաջն ասաց, թէ՝ «Տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեացն զՀայր ձեր»:

Եկեսցէ արքայութիւն. Եւ այս դարձեալ մտերիմ եւ բարեբարոյ Որդոյ է՝ չբեւեռել ընդ երեւելիսս եւ ոչ ինչ մեծամեծ զանցաւորս համարել, այլ փութալ առ Հայր եւ հանդերձելոցն ցանկալ հասանել, որ է բարւոք կամաց ազատելոց յերկրաւոր զբաւսանաց, որպէս եւ Պաւղոս ասէր, թէ՝ «Անձամբ յանձինս հեծեմք որդեգրութեան ակնկալեալք»...

Եկեսցէ արքայութիւն. Տես ինձ զբարեկարգութիւնս քանզի յետ ի ներքոյ խնամոցն առանց հրաժարման պահելոյ եւս ի բարձրագոյնն մատչի խնդրուածս...: Զի իցէ՞ ինչ, որ արգելուլ կարիցէ ի բարձանց զաւրացն կարգաց հաստատութիւն հասանել, եւ զոր ասեն այսպիսի ինչ է, զոր աւրինակ անդ ամենայն ինչ անարգել եւ անխափան գործի, եւ ոչ եթէ զկէսն առնիցեն հրեշտակք եւ զկէսն՝ ոչ, այլ ամենայն հրամանացն հաւանեալք եւ հնազանդեալք են, քանզի հզարք են զաւրութեամբ եւ առնեն զբան նորա: Նոյնպէս եւ զմեզ՝ զմարդիկս, արաւարժանի. մի՛ զկէս կամացն առնել, այլ զամենայն ինչ, որպէս եւ կամիս, կատարել:

տարել (էջ 310):

Ձիաց մեր հանապազորդ տուր մեզ.

Ձի՞նչ իցե հանապազորդն, զոր ար ըստ արեւն պատրաստե: Եւ քանզի ասաց, թէ՝ **Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի**, զի գմարդկանէ խաւսին, որ գմարմին զգեցեալ են, եւ ընդ հարկաւք բնութեան հնազանդեալք, որոց չէ մարթ՝ մինչդեռ այստեղ ի մարմնի իցեն, զհրեշտակաց անշարժարութիւն կրել յանձին, զհրամանսն զնոյն հրամայե եւ առ ի մենջ կատարել, այլ այլովքն զիջանէ ըստ մերում տկարութեան: Ձի թէ զհրամանսն, ասէ, հաւաստեաւ պահանջեմ, այլ ոչ նոյնպիսի ինչ եւ զանշարժարութիւն, զի ոչ եթէ բռնադատել ինչ կամիցի զբնութիւնն, որ կարաւտ է կերակրոյ պիտոյիւք: Եւ արդ, դու միտ դիր, զհարդ եւ ի մարմնաւորէն բազում ինչ հոգեւոր գտանի: Ձի ոչ վասն ընչից եւ ոչ վասն փափկութեանց եւ ոչ վասն պէսպէս հանդերձից եւ ոչ վասն այլ իրիք սոյնպիսեաց, այլ վասն հացի միայն հրամայե կալ յաղաւթս, եւ զնոյն վասն ար ըստ արեւն հացկան, որպէս զի եւ ոչ ի վաղիւն տայ հոգալ: Քանզի եւ յաւելու իսկ զհանապազորդն, այսինքն՝ զար ըստ արեւն... (էջ 311):

Եւ աստ զմերոյ զնուագութեան զհպարտութիւն խրատե ցածուցանել, հրաժարել ուսուցանե ի պատերազմաց մի՛ մեզէն յանդուգն ի վերայ երթալ անձամբ, զի այնպէս մեր յաղթութիւն լուսաւորագոյն լինիցի, եւ թշնամոյն պարտութիւն ի ծաղր եւ ի կատականս: Բայց յորժամ բռնադատեալ ձգիցիմք, յայնժամ հաստատուն կալ իբրեւ առաքինիս... Իսկ չար աստ զսատանա կոչէ, եւ անհաշտ պատերազմ հրամայե ունել ընդ նմայ: Եւ ցուցանե, թէ ոչ ի բնէ այնպիսի ինչ էր, զի ոչ այնմ, որ ի բնէ, այլ որ ի կամացն լինիցի համարեալ է չարութիւն եւ ըստ յաճախութեան չարեացն կոչէ նմա անուն...

Եւ ցուցանե, թէ ոչ ի բնէ այնպիսի ինչ էր, զի ոչ այնմ, որ ի բնէ, այլ այնմ, որ ի

Ձիաց մեր հանապազորդ. Ձի՞նչ իցե հանապազորդն. զի ի մարդկանէ խաւսի, որ մարմին զգեցեալ են, որոց չէ մարթ մինչ աստէն ի մարմնի են զհրեշտակաց անշարժարութիւնս կրել յանձին, զիջանէ ըստ մերում տկարութեանս: Եւ դու միտ դիր՝ զհարդ եւ ի մարմնաւորս բազում ինչ եւ հոգեւոր գտանի. ո՛չ վասն ընչից, ո՛չ վասն փափկութեանց, եւ ո՛չ վասն այլ իրիք, այլ վասն հացի միայն հրամայե կալ յաղաւթս: Եւ զնոյն վասն ար ըստ արեւն հացկանն, որպէս զի ոչ եւ ի վաղիւն տայ հոգալ, քանզի յարե իսկ ի նոյն հանապազորդն, այսինքն՝ զար ըստ արեւն...

Եւ աստ զմերոյ նուագութեանս զհպարտութիւն խրատե ցածուցանել, հրաժարել ուսուցանե ի պատերազմաց մի՛ մեզ յանդուգն ի վերայ երթալ, այլ յորժամ բռնադատիցիմք ձգեալք յայնժամ հաստատուն կալ իբրեւ զառաքինիս: Իսկ չար աստ զսատանա կոչէ, եւ անհաշտ պատերազմ հրամայե ունել ընդ նմայ: Եւ ցուցանե, թէ ոչ ի բնէ այնպիսի ինչ էր, զի ոչ այնմ, որ ի բնէ, այլ որ ի կամացն լինիցի համարեալ է չարութիւն եւ ըստ յաճախութեան չարեացն կոչէ նմա անուն...

կամացն եկամուտ լինիցի, համարեալ լիցի չարութիւն: Եւ ըստ հաճախութեան չարեացն կոչի նմա անուն չարութեան... (Էջ 314):

Վահրամ Բաբունի

Ներսէս Լամբրոնացի

Ձար արինակ եթէ ոմանք ի գոեհիկ արանց գոլով ի հեռաւոր աշխարհէ՝ անկիրթ հռովմայեցոցն բարբառոյ ազգի եւ սովորութեան, ոչ եւ բնաւ տեսեալ կամ տեղեկացեալ զարքունական պաղատանն բարեկարգութիւն, երթան ի դրունս թագաւորին ողորմութիւն աղերսել... Այսպէս եւ Տէր մեր՝ անհաս ի հրեշտակաց եւ ի մարդկանէ արար զմարմնաւորութեան խորհուրդ, որպէս ասէ Պաւլոս, առ որ մատեան աշակերտքն ոչ իբրեւ Աստուծոյ, այլ որպէս ի Յովհաննէ ուսանել զսահման աղաւթից... Վա՛յ ինձ, եւ ես թողեալ զայս՝ յանկայուն կենցաղս զբաղում, որ եւ թէ կայուն էր, պարտ էր ըստ բնական սովորութեանն ազահել եւ զփոքրս ընդ մեծն փոխանակել, այլ յայտ է, թէ խաբիմ՝ ոչ ունելով զուշ իմաստիցս առ իս ամփոփեալ:

(տպ. էջ 456-458):

Թող մեզ զպարտս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. Տիրապէս խնդրեաց յԱստուծոյ զամենայն ինչ նախակարգեալ համառաւութեան բանիւ, այսուհետեւ յառաջ գայ զանձին կրից խոստովանութիւն սփռել նորին առաջի...

Թող մեզ, ասէ, զպարտիս մեր.

Արդարեւ **պարտք**, քանզի յայսքան շնորհս նորա վայելեալ մարմնով եւ հոգով, զիա՞րդ ոչ գտանիմք պարտական հրամանին Տեառն կալ հպատակ... Արդ, ծանիցուք զերկոսեանս ի մեր աւգուտն լինել մեր թողուլն խաղաղութեան մեզ կենաց լինի տնաւրէն, եւ Աստուծոյ, զոր վասն մեր թողլոյն թողու, անվախճան կենաց կարապետ. եթէ ի սոցանէ վրի-

Ձոր արինակ ոմանք ի գոեհիկ արանց գոլով ի հեռաւոր աշխարհէ անկիրթ հռովմայեցոցն բարբառոյ ազգի եւ բարեկարգութիւն, երթան ի դունս թագաւորին՝ ողորմութիւն աղերսել: Եւ ապա հասեալ անդր տարակուսին յանձինս իւրեանց՝ ոչ գիտելով զորպէսն մտանել առաջի թագաւորին... Սոյնպէս եւ Տէր մեր անհաս ի հրեշտակաց եւ ի մարդկանէ, արար զմարմնաւորութեան զխորհուրդ, որպէս ասէ Պաւլոս. առ որ մատեան աշակերտքն ոչ իբրեւ Աստուծոյ, այլ որպէս ի Յովհաննէ ուսանել զսահման աղաւթից... Վա՛յ ինձ, որ ես թողեալ զայս եւ յանկայունս սբաղնում, որ թէ եւ կայուն էր, պարտ էր ըստ բնական սովորութեանն ազահել եւ զփոքրս ընդ մեծին չափ խաւսել, այլ յայտ է, թէ խաբիմ ոչ ունելով այսու զիմաստս առ իս ամփոփեալ:

Թող զմեզ զպարտիս մեր

Տիրապէս խնդրեաց յԱստուծոյ զամենայն ինչ նախակարգեալ համառաւութեան բանիւ, այսուհետեւ յառաջ գայ զանձին կրից խոստովանութիւն սփռել նորին առաջի...

Թող մեզ զպարտիս մեր.

Արդարեւ **պարտք**, քանզի յայսքան շնորհս նորա վայելեալ հոգով եւ մարմնով զիա՞րդ ոչ գտանիմք պարտապանն հրամանին Տեառն կալ հպատակ... Արդ, ծանիցուք զերկոսեանս ի մեր աւգուտն լինել, մեր թողուլն՝ խաղաղութիւն մեզ եւ կենաց լինի պատճառ եւ տնաւրէն եւ Աստուծոյ, որ վասն մեր թողլոյն թող անվախճան կենաց կարապետ: Եթէ ի սոցանէ վրիպիմք սակս սնոտի ռիսակալութեանդ եւ անձամբ զանձինս դրժեմք:

պիմք սակս սնոտի ոխակալութեանն,
անձամբ զանձինս դրժեմք:
(տպյ. էջ 460-462)

Արդ, համեմատությունը պարզիպարզոց ցույց է տալիս, որ Ոսկեբերանի և Լամբրոնացու երկերից քաղված ընդարձակ բառացի հատվածներով Բաբունին «յարմարեալ զարբոց նախնեացն խաւսս» կազմել է մի խմբագիր մեկնություն, որն, ի տարբերություն Եղիշեի, Ստեփաննոս Սյունեցու և Գրիգոր Նարեկացու մեկնությունների¹⁰, որոնցում գերակշռում է խորհրդապաշտական շեշտը, աչքի է ընկնում բարոյաբանական բնույթով:

«Վահրամ վարդապետի եւ ուղղափառ Կիլիկեցոյ յարմարեալ զարբոց նախնեացն խաւսս ի բանն տէրունական Հայր մեր որ յերկինս» խորագրով այս մեկնությունը¹¹ հրատարակվում է համաձայն Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 644 ձեռագրի, որ ժողովածու է՝ բաղկացած երեք տարբեր ձեռագրերից: Բնագիրն Ա ձեռագրում է, որ Տոնապատճառ է: Այն ընդօրինակվել է ԺԴ-ԺԵ դդ.: **Գրիչ՝** Ներսէս կրօնավոր: **Թերթ՝** 157 (5-51, 56-165): **Պրակ՝** 16(Գ-Դ) x 12 (Գ, Է, Ը, Ծ 11, Կ, Հ չիք, Դ 5): **Նյութ՝** թուղթ: **Մեծություն՝** 18,3 x 13,5: **Գրություն՝** միասյուն: **Գիր՝** նոտրգրանման բոլորգիր: **Տող՝** 26-29 (խառն): **Բնագիր՝** թերթ 40բ-47բ: Ձեռագրում առատորեն օգտագործված է համառոտագիր-զաղափարագրություն (Աւետարան, աշխարհ, առաքեալ, հաստատուն, իշխանութիւն, կամք, հանդերձել, հազարք, յառաջ, յորժամ, յայնժամ, որում, մարդ, խորհուրդ, պատերազմ, սատանա, քաղաք):

¹⁰ Տե՛ս **Պ. Խաչատրյան**, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Գիրք Առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 152:

¹¹ Մաշտոցյան Մատենադարանի թիվ 2111 ձեռագրում (թ. 139ա-144ա, ժամանակ՝ 1652-1679 թթ.) այն ունի հետևյալ խորագիրը. «Մեկնութիւն Հայր մեր որ յերկինս՝ ասացեալ սրբոյն Ներսէսի հայոց կաթողիկոսի»: Համառոտ ձեռագրացուցակը կազմողները այն վերագրել են Ներսէս Լամբրոնացուն (Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Եր., 1965, էջ 722): Մինչդեռ ԺԴ-ԺԵ դդ. հին ձեռագրում այն կրում է Վահրամի անունը:

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՈՒՂ[Ղ]ԱՓԱՌԻ ԿԻԼԻԿԵՑԻՈՅ ՅԱՐՄԱՐԵԱԼ ԶՍՐԲՈՅ ՆԱԽՆԵԱՅՆ ԽԱԻՍՍ Ի ԲԱՆ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ. «ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ»

Զիա՞րդ^ա վաղվադակի զարթուցանե՞լ զլսաւոսն, եւ զբնաւին իսկ երախտիսն յիշեցուցանե՞լ ի սկզբան աղաւթիցն. զի որ **Հայրն** կոչիցէ զմեղացն թողութիւն եւ զտանջանացն դիրութիւն եւ զարդարութիւն եւ զարբութիւն եւ զփրկութիւն եւ զեղբայրութիւն ընդ Միածնին եւ զՀոգւոյն պարգեւս միով բանիւս այսու խաւսի, քանզի ոչ է հնար **Հայր** կոչել զԱստուած, եթէ ոչ այսմ ամենայն բարութեանց հասեալ իցէ: Իսկ **յերկինսն** աղաւթելով ոչ թէ զԱստուած անդ յերկինս փակիցէ. այլ զի յերկրաւորացս վերացուցէ զայն, որ յաղաթս կայցէ, եւ ի բարձանց բնակութիւն հանիցէ, հաստատեցէ: Եւ խրատէ եւս, զի հասարակ ի վերայ այլոց եւս եղբարց առնիցէ աղաւթս, քանզի ոչ ասէ. թէ՛ Հայր իմ, որ յերկինս, այլ ասէ՛ **Հայր մեր**. փոխանակ ամենայն մարմնոյ մատուցանէ զպաղատանս: Նա եւ զթշնամութիւն բառնայ այսուիկ եւ զհպարտութիւն ցածուցանէ եւ զմայրն ամենայն բարութեանց ի տեղոջն հաստատե՞ք:

Հայր⁴ մեր որ յերկինս. Որ Հայր դաւանէ, զի ինքն ի ներքոյ որդիութեան սահմանին գրաւէ: Ի սոցա մէջն ո՞վ եւ թշնամութիւն ոչ արմատանայ, այլ թէ լինին ի ստահակութիւն որդոյն: Հայրն բնական գթովն եւ իմաստութեամբն ներէ, եւ ներողութեամբն զնա ընդ իւրեաւ միշտ նահանջեալ պահէ: Այսմ հայրենի կամացս ընդարձակութեան ծանաւթ է որդոյս: Վասն այսորիկ ոչ զիւրոյն կապ ստամբակելոյն եւ յուսահատութեամբն խզէ. զի՞նչ. որպէս մանուկ մեղանչէ: Եւ դարձեալ ընդդէմ եղեալ **զՀայրն** անուն դաւանէ, եւ Նա ներողութեամբ ի ներքոյ թելոցն ընդ գրկել պարուրէ: Իսկ ի վերայ ծառայի ոչ պահէ զայս սահման սովորութեանս, քանզի ոչ ունելով Տեառն եւ ծառայի զբնական գթոյ շաղկապ ի մի անգամ մեղանչելն, այլ զարհուրի, եւ նա պատուհասէ: Բայց առաքեալս Քրիստոսի Աստուծոյ Հաւր ոչ են ի կարգ ծառայութեան, այլ՝ յորդէզ/(41ա)րութեան, զի Հայր իմ, ասէ, եւ Հայր ձեր: Ուստի եւ ոչ յապստամբելոյն մեղաւք զարհուրին, այլ զբնական գութն յիշեալ աներկեղ պատկառանաւք առ Հայրն դիմեալ ասէ. **Հայր մեր որ յերկինս:** Այսինքն՝ զի թէպէտ փառաւք եւ զաւրութեամբ լի է երկին եւ երկիր. սակայն ինքնութիւն անհասող էութեան սեփական քո Աթոռ ի յերկինսդ բազմի: Այդանաւր, լուր զիմս հառաչանաւք, ուր եւ մարմնակիցն մեր՝ Քո Որդիդ եմուտ, վասն մեր քահանայ եւ բարեխաւս, լուրդ, որ այդ վասն իմ, եւ զիմս, որ վասն դորայ առաջնորդ լինելոյդ առ քեզ կանխել խաւսակցիմ: Եւ զինչ է խնդիրսդ, զոր հայցես յամենաբաւական կամացն Աստուծոյ, զոր եւ Հայր դաւանեցեր: Ո՛վ մարդ յայտ արարեր, թէ զսոսկալիդ հրեշտակաց ընտանի անուամբ ի վերայ քո արժանի գտար անուանել առ ի խնդրուածսդ, մի՛ լինիր կեղակարծ, այլ սփռեայ առաջի նորա համարձակապէս⁵:

Սուրբ⁶ եղիցի անուն Քո.

Գլուխ ամենայն բարութեանց ասէ, զի ոչ նախ քան զԱստուծոյ Հաւր փառսն այլ ինչ խնդրիցէ, այլ զամենայն ինչ, երկրորդ՝ Նորա փառացն համարիցէ. զի Նա զիւր փառսն լիով ունի⁹, բայց աղաչել հրամայէ զայն, որ յաղաթսն, զի եւ մերովքն իսկ

փառաւորեցի. որպէս յառաջն ասաց, թէ՝ «Տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեցեն զՀայր ձեր»¹: **Սուրբ Էղիցի անուն Քն.** Այս ոչ միայն դասիւ է առաջն ի հայցուածս, այլ եւ զաւրութեամբ, այսինքն՝ զի կարգ ընթացից ունի ամենայն բանք աղաթիցս, որպէս հանդերձեալ եմք ուսանել, քանզի խորհուրդ բարեկարգութեան զիս ըդ աստ յիւրն սովորութենէ վրիպէր, ուստի եւ զայս նախ առաջին ուսոյց խնդրել Հաւրէն. **Սուրբ Էղիցի անուն Քն.** Եւ զլուծումն բանիս եւ զգիտութիւն խորհրդոյս ոչ կարեմք ածել այլուստ, բայց եթէ զնորին Տեառն բուռն հարցուք այլուր զվարդապետութենէն՝ թերեւս ընդ միմեանս բախելով զնորին կայծակն իմաստից կարող լիցուք առ մեզ փայլեցուցանել: Յորժամ աղաթէր Քրիստոս առ Հայր վասն առաքելոցն եւ ընդ նոքաւք Աւետարանի յաւել եւ զայս առ Հայրն Իւր. «Որպէս Զիս առաքեցեր յաշխարհ եւ Ես զնոսա առաքեցի, եւ ի վերայ նոցա եւ սուրս առնեմ զանձն իմ, զի Էղիցին եւ նոքա սրբեալք ճշմարտութեամբ»²: Եւ Պաւղոս վասն իւր ասէր առ երից // (41բ) ունս եփեսացւոցն: «Սուրբ եմ եւս այսուիւհետեւ յարենէ ձեր, զի ոչ խորշեցայ ի պատմելոյ զաւգտակարն»³: Եւ ահաւասիկ յայտ եղեւ յառաքելոյ Տեառն սուրբ լինելն ի վերայ աշակերտացն եւ ի Տեառնէ մերմէ խնդրուածս ի Հաւրէ, զի սուրբ լինելն Քրիստոսի ի վերայ աշակերտացն այն էր, զի ուսոյց եւ վարժեաց զնոսա ամենայն իմաստութեամբ, յետ որոյ եւ աղաթեաց նոցին, թէ այնուիւհետեւ յանցանէին անձամբ զանձինս դատապարտէին: Սոյնպէս եւ Պաւղոս քարոզ առաքեցաւ, թէ չէր զեփեսացիսն ուսուցել, չէր սուրբ յարենէ նոցա, քանզի զիտէր յոչ գուշացուցանելն զնոսա զարիւն նոցա ի ձեռաց իւրոց խնդրէր Աստուած, իսկ յետ զգուշացուցանելոյն սրբեցաւ: Սոյնպէս եւ Տէր մեր ուսոյց զմեզ առ Հայրս ասելով, թէ որպէս քահանային հրամայեցեր միշտ զգուշացուցանել զմեղաւորն ի չար ճանապարհէն բանիւն եւ իմաստութեամբն, զոր ունի եւ սրբել զինքն յարենէ, սոյնպէս եւ դու դէտ եւս ի վերայ մեր, եւ միշտ տեսանես զարկածս չարին ամենահայեաց աշաւքդ, զոր սերմանէ ի տկար բնութիւնս, զիտես, եւ վասն այնորիկ զքո պատուհասցիդ որքանութիւն: Իսկ մեք խաւարեալ ի զբաղումն մարմնոյ ո՛չ զիմանալի թշնամւոյն տեսանեմ զարկածս նետիցն եւ ո՛չ զքո պատուհասիցդ չափ: Վասն որոյ աղաչեմք. Սրբեալ զքո անունդ ի ժողովրդեան քում արենէ՝ միշտ զարթուցանելով նախախնամութեամբդ առ քո փառաց սէր եւ պատուհասիդ երկիւղ, իսկ առ թշնամւոյն գաղտնի նետիցն զիտութիւն պատերազմին տալով զաւրութիւն: Եթէ զայստսիկ ունիցիմք հայցուածով մերով յԱստուծոյ՝ սուրբ է անուն նորա յարենէ մեր: Ի պատուհասելն, յորժամ եւ վայելողքս ի նոյնն մեղանչեմք, որպէս եւ Քրիստոս յիւր անցուցեալ աշակերտին վերայ սրբեցաւ ի Յովդայի: Բայց ունելով զյոյսն հաւատարիմ խնդրողաց՝ դժուարաւ պատահէ մեղանչելն, որպէս անձամբ զանձն ի հուր արկանել: **Սուրբ Էղիցի անուն.** Հայր ի մեր պարտեացն զգուշացուցանելով եւ նախախնամելով: Եւ տես զյարակացութիւն խորհրդոյս, զի **Էղիցի** ասէ, այսինքն թէ՝ ոչ այսաւր կամ վաղիւն, այլ՝ միշտ եւ հանապազ: Զայս եւ որդոյ սովորութիւն է առ հայր ասել. Քն խնամքդ՝ հայրաբար // (42ա) լիցի միշտ, այնուիւհետեւ թէ սխալեմ՝ արժանապէս դատապարտեայ: Արդ, զայս ուսոյց Տէրն եւ զբանալիս ձգեաց աղաթիւքս ի վերայ արդարութեան Աստուծոյ, եւ պարտական զնա ողորմութեան եւ

¹ Մտթ. Ե 16:

² Յովհ. ԺԷ 18-19:

³ Գործք Ի 27:

խնամոցն դատել: Թէպէտ եւ մեք անարժան նմին գտանիմք, նա զիրն առանց խնայելոյ հանապազ սփռեցէ զշնորհս⁴:

Եկեցէ՞ արքայութիւն.

Եւ այս դարձեալ մտերիմ եւ բարեբարոյ որդոց է՝ չբեւեռել ընդ երեւելիսս եւ ոչ ինչ մեծամեծ զանցաւորս համարել, այլ փութալ առ Հայր եւ հանդերձելոցն ցանկալ հասանել, որ է բարւոք կամաց ազատելոց յերկրաւոր զբաւսանաց, որպէս եւ Պաւլոս ասէր. թէ՛ «Անձամբ յանձինս հեծեմք որդեգրութեան ակնկալեալք»⁴: **Եկեցէ արքայութիւն.** տե՛ս ինձ զբարեկարգութիւնս, քանզի յետ ի ներքոյ խնամոցն առանց հրաժարման պահելոյ եւս ի բարձրագոյն մատչի խնդրուածս, այսինքն՝ ի վերայ որոյ սրբեցեր զանուն քո ուսուցանելովն տիրեայ եւ դու հանապազորդ: Է նա Տէր ի վերայ ամենայնի նախ քան զմեր խնդրելս, ըստ այնմ. «Տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրի»⁵: Բայց աղերսանաւք զնոյն խնդրելս ոչ է վայրապար: Բայց բազումք ի մարդ ի մարդկանէ տգիտանան զԱստուծոյ տիրելն, կամ զինքեանս տեսանելն: Վասն այնորիկ կամ բնաւ ոչ անուանեն զանուն նորա, կամ ի գիտելն՝ գործովք ուրանան զնա: Ասէ. Եկեցէ հոգի իմաստութեան, եւ հանգոյ յանձն իմ, եւ ուսուցէ զիս գիտել զահաւորութիւն քում թագաւորութեանդ, եւ զսիրոյս առ իս զառատութիւն, զի **եկեցէ** ասէ, այսինքն՝ յիմ միտս արքայութեան՝ գիտել Հոգւովդ Սրբով զՏէրութիւնդ Քո, որպէս պարտն է գիտութեամբ, այսինքն՝ որպէս մարմնական աչաց հայեցուածոց առաջի ունել հանապազ առաջի իմանալի մտացս հայեցողութեան նպատակ զիմանալի Թագաւորդ: Զայս թէ այսպէս ունիցիմք որպէս եւ հայցեմք՝ անհնարին է մեզ կամակար մտաւք զթէլ որպէս եւ ոչ առաջի թագաւորի եւ հանդիսական նորա հրապարակի խայտառակ մերկանալն: Բայց եւ զայս իմասցուք ի նոյն կարգս, զի վայելչապէս // (42բ) նախ զսուրբ լինել անուանն խնդրեաց, քանզի որդայթի բանսարկուն բազում անգամ մեզ եւ յաջակողմ տայ զթէլ, այսինքն՝ զմեղս որպէս զկամս Աստուծոյ կերպարանէ, եւ այնպէս իբր առ ճշմարտութեան եւ ի նոյն պատրել զմարդիկ արկանէ: Իսկ մեք եթէ զԱստուած առաջի աչաց ունիմք՝ ի ներքին մարդս բնակեալ, զաւրութեամբ նորա կարողանամք ընդորդ որոշմամբ առ ի մեքենայիցն գիտութիւն: Վասն այնորիկ ասէ. **Սուրբ եղիցի անուն Քո:** Եւ որպէ՛ս ասէ Աստուած ցիս, լինի սուրբ անուն իմ. պատասխանեմ. յորժամ գիտութիւն քում թագաւորութեանդ եկեալ բնակեցէ յիս եւ միշտ ահարկու արքայութիւն առաջի մտացս աչաց լինի կերպացեալ, ըստ այնմ. «Յառաջագոյն տեսանէի զՏէր [առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմմէ]»⁶: Ուրեմն ապա զկերպարանս սուրբ լինելոյ անունն Աստուծոյ յառաջագոյն խնդրեաց, ինքն ուսուցանէ նմին ըստ կարգի բանիւքս: Եւ նախ զայս, թէ՛ Եկեցէ արքայութիւն գիտութեան Քում տերութեանդ յանձն իմ:

Իսկ երկրորդ՝ **Եղիցին, Տէր, կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի:** Զի իցէ՞ ինչ, որ արգելով կարիցէ ի բարձանց զաւրացն կարգաց հաստատութիւն հասանել, եւ որ ասեն այսպիսի ինչ է, զոր արիւնակ անդ ամենայն ինչ անարգել եւ անխափան գործի, եւ ոչ եթէ զկէսն առնիցեն հրեշտակք եւ զկէսն՝ ոչ, այլ ամենայն հրամանացն հաւանեալք եւ հնազանդեալք են, քանզի հզաւորք են զաւրութեամբ՝ եւ առնեն զբան նորա:

⁴ Հռովմ. Ը 23:

⁵ Սղմ. ԽԶ 3:

⁶ Սղմ. ԺԵ 8:

Նոյնպէս եւ զմեզ՝ զմարդիկս, արա արժանի՝ մի՛ զկէս կամացն առնել, այլ զամենայն ինչ որպէս եւ կամիս կատարել: Եւ չասաց, թէ Եղիցի կամք Քո յիս, կամ եթէ՝ ի մեզ միայն, այլ յամենայնս՝ առ ի քակելոյ մոլութեան եւ տնկելոյ ճշմարտութեան զինամս իմ ի մենջ ի վերայ ամենայն տիեզերաց հրեշտակաց է ունել յանձին: **Եղիցին կամք.** Ո՛վ թէ ընդ ո՞ր սքանչացայց՝ երկուց խորհրդոց զհայեցուած մտաց յինքեանս բաժանելով, այսինքն՝ վայելչական կարգ բանիս եւ մեծանձնութիւն առաջիկայ խորհրդոյս, զի յետ թագաւորելոյն եւ զկամս խնդրէ, որպէս եւ մարդկան մէջ պատահի այս սահման. քանզի նախ տիրէ որ ումէք եւ ապա զկամսն ի վերայ նորայ ի գործ արկանէ. եթէ քաղաք շինէ, եթէ ծառայ կերակրէ, եթէ աշակերտ ուսուցանէ: Սոյնպէս եւ սա. նախ ընդ արքունական տէրութեամբ Իւր զանձն լինել եւ ապա որպէս ի սեփական Տեառնէ զհոգ արկելն զինքն տնաւրէնութեամբ կամացն պահանջէ: Եւ զայս որքա՞ն. եւ որպէս յերկինս, ասէ կամք Քո Եղիցի եւ // (43ա) յերկիրս: Ո՛վ մարդ եւ դու ելէ՞ր յերկինս, եւ անդ զտնաւրէնութիւն կամացն գիտացն՝ ր. զի այնպէս ունելով զնոյն պահանջես: Զի՞նչ են կամք Նորա յերկինս. ո՞յք եւ զո՞ր կամաւքն կառավարէ, որպէ՛ս եւ առ նոսա տնաւրէնութիւն կամացն: Եւ ոչ զիտեմ, ասէ. բայց որ էջն յերկնից նայ ուսոյց ինձ զսոյն աղերսել: Եւ որպէ՛ս ուսոյց: Քանզի մատեան աշակերտքն առ Տէրն. Ուսոյ մեզ՝ քո աշակերտացս, աղաթել որպէս եւ Յովհաննէս ուսոյց իւրոցն: Իսկ նա ուսոյց նոցա որպէս ինքն զիտէր աղաթել: Եւ ոչ ըստ աշխարհի նոքայն խնդրեցին, զոր արինակ ոմանք ի գրեհիկ արանց գոլով ի հեռաւոր աշխարհէ անկիրթ հռովմայեցւոցն բարբառոյ ազգի եւ սովորութեան՝ ոչ բնաւ տեսեալ կամ տեղեկացեալ զարքունական պաղատանն բարեկարգութիւն, երթան ի դուռն թագաւորին՝ ողորմութիւն աղերսել: Եւ ապա հասեալ անդր տարակուսին յանձինս իւրեանց՝ ոչ զիտելով զորպէսն մտանէլ առաջի թագաւորին, եւ կամ թէ զինչից վայելչականին խնդիրք ի նմանէ լինիցին: Եւ մինչ դեռ նոքա յայսմ տարակոյսս կան վարանեալ, պատահեսցէ նոցա որդի թագաւորին, որպէս զմի ի հասարակաց զինուորացն, զոր տեսեալ արագգել յընթացսն առ նա հասանեն՝ ասելով. Ո՛վ եղբայր, ուսոյ մեզ, թէ որպէս մտցուք առաջի արքային: Իսկ նորա զբարեմիտ գոլով ոչ անգոսնէ կամ այպանէ զտմարդութիւն, այլ սիրով ողորմեալ նոցա պատասխանէ. Ես ուսուցանեմ ձեզ. Յորժամ մտանէք առաջի արքայի, երկիր պագանէք. վա՛ շի ասացէք ցնա, տուր մեզ պատիւ սինկղիտոսաց, որք առաջին են ի պաղատ քո: Եւ նոքա ոչ սինկղիտոս անուն զիտեն եւ ոչ զգաւրութիւն նորա, ոչ զպաղատն եւ ոչ զդասակարգութիւն նորին, այլ մտեալ առաջի թագաւորին վաշի, զոր ուսան բան, աղաղակեն: Իսկ դասակարգութիւն ամենայն արքունականն ապարանիցն նաեցեալ ի բարբառ նոցա, զի ւստար է եւ անձն շինական, ի դէմն, զի գրեհիկ է, ի կերպարան զգեստիցն, զի անպաճոյճ է, սքանչանան յինքեանս՝ ուստի՞ զիտեն սոքայ կամ յումմէ՞ ուսան զպատիւ սինկղիտոսութեան ապարանիցն: Սոյնպէս եւ Տէր մեր // (43բ)՝ անհաս ի հրեշտակաց եւ ի մարդկանէ, արար զմարմնաւորութեան զխորհուրդ, որպէս ասէ Պաւղոս, առ որ մատեան աշակերտքն ոչ իբրեւ յԱստուծոյ, այլ որպէս ի Յով[հ]աննէ ուսանել զսահմանս աղաթից: Իսկ նա գթացեալ ի նոսա ամենագութ սիրով ոչ որքան տանէին ուսոյց նոցա, այլ զերկնային անճառ եւ անհաս խոր խաղաղութիւն ուսոյց նոցա աղաթիւք ի Հարէն հայցել. **Եղիցին կամք Քո.** Արդ, զայս խնդրելով մեր յԱստուծոյ, արդարեւ ոչ զիտեմք զգաւրութիւնս հայցուածոցս: Սակայն զերկնայինս զարհուրեցուցանեմք մեծաբնութեամբ աղաթիցս. զի զոր ոչ զիտեմք զպատիւ նոցա տեղեկացեալ մեզ Քրիստոսի խնդրեմք ունել սե-

փական, քանզի **կամս** ասելով զամենայն իջումն շնորհացն Աստուծոյ ընդ բանիւս պարունակեաց ունել հաւասար նոցա, այսինքն՝ զի կամացն այլայլութիւն արգելու ի մէնջ զփառս նոցա, քանզի առ նոսա ունի զկամս իբր առ կամարարարս քաղցր եւ առատ, եւ առ մեզ իբր յանցաւորս, ըստ այնմ. «Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, եւ ամենայն, որ ինչ իմ է, քոյ է»⁷: Արդ, եղեալ սոյնպէս կամացն եւ ի վերայ երկրիս եղեւ մարդկան նորայն ամենայն ինչ, որպէս եւ հրեշտակացն. զի՞նչ տացուք տրիտուր Տեառն, ո՛վ եղբարք զայսպիսի փրկական բաժակ աղաւթիցս մեզ արբուցանողի, զո՞ր տամք հանապազ առաջի Աստուծոյ Հաւր, առաջի բազմութեան ժողովրդոց հրեշտակացն ի գաւիթս վերին Երուսաղէմի, զի՞նչ այլ, բայց եթէ՝ մաժումն երեսաց ի վերայ երկրի գոհութեամբ: Արդարեւ, սուտ տեսանեմ զամենայն կարծիս սնոտիս **սքաղանացս** մարդկան, յորժամ առ որ խաւսիմ՝ նայեցեալ մտաց աչաւք հաւատամ զԱստուած՝ ի վերայ իմ ունել քաղցրապէս ի հրեշտակաց եւ զիս որպէս զնոսին նմին խաւսակից եւ աղաթս ամենաբարի կամացն ախորժ: Վա՛յ ինձ, որ ես թողեալ զայս եւ յանկայունս **սքաղնում**, որ թէ եւ կայուն էր, պարտ էր ըստ բնական սովորութեան ազահել եւ զփոքրս ընդ մեծին չափ խաւսել, այլ յայտ է, թէ խաբիմ՝ ոչ ունելով այսու զիմաստս առ իս ամփոփեալ⁸:

ԶՀացժա հանապազորդ. Զի՞նչ իցե **հանապազորդն**, զի ի մարդկանէ խաւսի, որ մարմին զգեցեալ են, որոց չէ մարթ մինչ աստէն ի մարմնի են զհրեշտակաց անչար՝ չարութիւնս կրել յանձին, զիջանէ ըստ մերում տկարութեանս: Եւ դու միտ դիր՝ զիա՞րդ եւ ի մարմնաւորս բազում ինչ եւ հոգեւոր գտանի. ոչ վասն ընչից, ո՛չ վասն փափկութեանց եւ ո՛չ վասն այլ իրիք, այլ վասն հացի միայն հրամայէ կալ յաղաթս: Եւ զնոյն վասն ար ըստ արեւ հացկանն, որպէս զի ոչ եւ ի վաղիւն տայ հոգալ, քանզի յարէ իսկ ի նոյն **հանապազորդն**, այսինքն՝ զար ըստ արեւն⁹, եւ ոչ զայս բաւական համարի, այլ եւ զայն եւս յաւելու, թէ՛ **Տուր մեզ այսաւր**, զի յառաջ գովութիւնք⁸ ինչ աշխատ չառնիցե զնոսա առ վաղիւն, զորոյ ոչ գիտիցես զերկայնութիւն՝ զիա՞րդ աշխատիս հոգալ վասն նորա:

ԶՀացժա մեր հանապազորդ // (44ա).

Ո՛վ մարդ եւ թէ որպէս ի վերայ հրեշտակացն խնդրեցեր զկամս լինել քեզ յԱստուծոյ, անուն հացի ընդէ՞ր վաշի սմին յարմարես, որ ոչ ի մէջ նոցա իմանի, քանզի նոքա իմանալի են բնութեամբ, եւ գիտութեան կերակրոյն միշտ փափագեալ քաղցին, առ որ ոչ է տեսանել, սերմանել կամ հնձել, խոհարարութիւն, կամ մարմնական ճաշակումն, այլ ուտեն զսէրն Աստուծոյ եւ յագենուն, ըմպեն զհեղումն բիւման Հոգւոյն եւ զմայլեալ զուարճանան: Եւ, ասէ, զիմ կարգ աղաւթիցս ամբողջ պահեմ, քանզի հաց ոչ զդիւրածախելին խնդրեմ, այլ՝ **զհանապազորդն**. Զկամսն վասն այնորիկ խնդրեցի ունել որպէս ի վերայ երկնաւորացն: Հաց ի նմանէ առից յայսաւր կենցաղոյս. ո՛չ լուար զհացն հրեշտակաց կերեալ⁹ մարդկան. զայն կերակուրն ունել աղաթեմ, որ հանապազորդ ի յուտելն ոչ ծախի եւ յըմպելն ոչ նուազի, զկերողն յագեցուցանէ, եւ ինքն յինքեան ամբողջ մնայ: **ԶՀաց մեր.** Քանզի էր երբեմն եւ մեր հրեշտակական իմաստիցն կերակուր, յայնժամ մինչ ի դրախտին փափկութեան զնոյն կրեաք, խան-

⁷ Ղուկ. ԺԵ 31:

⁸ **Բառը՝ լուսանցից:**

⁹ **Բառս կրկնված. կրկնվածը՝ կետագծերում:**

դացաւ չարն եւ զրկեաց ի տէրութենէ կամացն Աստուծոյ եւ ի հացէն՝ զբանջար վայրենի պատրաստեալ մեզ կերակուր այս է՝ մարմնոյս զգայարանացն յաւտար աշխարհիս հեշտութիւն: Իսկ զհացն յԱստուծոյ թերեւս կարացին ոմանք քրտամ[բ]ք երեսաց եւ բխմամբ արտասուաց իւրոց ճաշակել: Արդ, այժմ Հայր եղեալ մեր Աստուած, դարձեալ եւ Թագաւոր քաղցր կամաւք ունել զմեր առաջին հացն աղերսեմք ի նմանէ մինչդեռ յայսար կենցաղոյս պանդխտիմք: **Հացն** զի՞նչ է, բայց եթէ գիտութիւն սիրոյ նորին, որով փափագ Հոգւոյ կերակրի, յայն սեղանոյն, ուր Տէր զիւր աշակերտսն հրաւիրեաց. «Ուտիջիք, ասէ, ի սեղան Իմ յարքայութեան Իմում»¹⁰: Այլ որոց ի պարարումն է կամքն մոլորեալ առանց փափագելոյ թուի այս կերակուր անհաւատալի ի հանապազ ուտելն ոչ լինելն ծախելի. զորս զարթոցանել ւարինակաւ հարկաւորիմք: Ո՞չ հաւատաս անծախ լինել կերակուր. Գիրք սուրբք ո՞չ հանապազ զմեզ կերակրել պէս-պէս գիտութեամբ ի նոյնութեան մնան: Դարձեալ եւ ո՞չ թուի քեզ հեշտ լինել զգիտութիւն ոսկիաձոյլ ապարանիցն, յոսկէթել կերպասուցն, յականակապ բազմականացն. զի՞նչ աւգուտ ի մարմնիս, ընդէ՞ր հեշտանայ ի տեսութիւն նոցին: Ջան ի կերակուրս առաւել երգք եւ եղանակք, ընդէ՞ր զուարճացուցանեն զսա առաւել քան ըմպելի: Տեսութիւն եւ յիշատակ եղբարց եւ որդւոց ո՞չ քաղցրանայ կարաւտելոցն որպէս զգինի: Եւ զի եւս ի թանձրագոյն մի՛ տեսից զպակշտտեալն տոփմամբ, զի՞նչ եւ աւգուտեց/(44բ)ուցանէ համբոյր ողջունին: Այս ամենայն հաց կամ գինի, որովք մարմնոյն լնու թերութիւն, այլ զհոգեկաննեղ՝ քաղցոյն լցուցանել զմայլեցուցանեն զմեզ գիտութեամբ: Սոյնպէս տկարամտաց մերոց առաջի թանձրացուցուք զյիշատակ սիրոյն Աստուծոյ եւ ծանիցուք, զի անտեղեակ ենք նմին, վասն այնորիկ եւ ոչ ըղձանամք, ապա թէ տեղեկանայաք՝ որքան պայծառ է փառքն Աստուծոյ քան զուկոյն, այնքան փափագումն նորին առաւել լինէր քան նիւթոյն: Վասն այնորիկ ի նմանէ մաղթէ ունել զնոյն՝ ասելով. Չհաց մեր զանծախն եւ զհանապազորդն տուր մեզ: Եւ ընդէ՞ր ասէ՝ **Այսաւր**. զբովանդակ մարմնոյս կեանս դնէ, յոր պանդխտելով բազում ունիմք բնութեամբ եւ արտաքուստ ներհակ հոգեւոր կերակրոյն, թէ յայսմանէ արտաքս գնամք՝ անաշխատ ի նոյն վայելեմք: Իսկապէս մինչ դեռ ի պանդխտութեանս ենք կեանք քրտամ[բ]ք արտասուաց եւ աշխատութեամբ աղաւթից հարկաւոր է զնոյն ճաշակել, որպէս եւ հրաման ընկալաք: Բազումք որ առին զսոյն կերակուր՝ զհամեղութիւն աղաղակեն, որպէս այն, որ ասէ. «Քաղցր են ի քիմս իմ բանք Քո քան զմեղր»¹¹: Եւ դարձեալ. «Ցանկալի է քան զականս պատուականս բազումս, եւ քաղցր քան զմեղր»¹²: Եւ Եսայի ասէ. «Դիեցէք եւ յագեսջիք, եւ կշտապինդ վայելեցէք ի ստեանց մխիթարութեան սորա»¹³: Անձնէ եւ իմաստութիւն՝ ասելով. «Եկայք կերայք ի հացէ Իմմէ աստի, եւ արբէք զգինիս, զոր խառնեցի, ուստի զաւրանայք ատել զանգ-զամութիւն, եւ կեալ, խնդրել իմաստութիւն, եւ ապրել»¹⁴ Ժն:

Թող՞ե մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. Տեսանէ՞ս զմարդասիրութեան առաւելութիւն. յետ այնչափ զչարիսն ջնջելոյ եւ այնպիսի

¹⁰ Ղուկ. ԻԲ 30:

¹¹ Սղմ. ՃԺԸ 103:

¹² Սղմ. ԺԸ 11:

¹³ Եսայի ԿԶ 11:

¹⁴ Առակ. Թ 5-6:

պարզեւս մեծամեծս շնորհելոյ դարձեալ զանցուցեալսն թողութեան արժանի առնէ, զի թէ այսպիսի ոչ կամէր նա, եւ դներ ոչ այսպիսի արեւնս աղաւթս մատուցանել, զոր եւ հրաժեշտ ի վերայ դնէ՝ ասելով. Թէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ ձեզ Հայրն երկնաւոր, որպէս զի ի մենջ է սկիզբն եւ մեք եմք տէր դատաստանի մերոյ: Զքեզ իսկ պատժապարտդ, ասէ, արարի տէր եւ դատաւոր՝ տալով վճիռ, զի որպէս դու իսկ կշռեսցես քեզ անձին զդատաստան. նոյնպէս զքեզ դատեցայց եթէ թողուս ծառայակցին, յինէն այսպիսի շնորհաց լիցիս արժանի^{ժԳ}: **Թող՞ զմեզ զպարտիս մեր.** Տիրապէս խնդրեաց յԱստուծոյ զամենայն ինչ նախակարգեալ համառատ բանիւդ, այսուհետեւ յառաջ գայ զանձին կրից խոստովան սփռել նորին առաջ: Բայց դու տես ինձ զամենայբարի ընդարձակութեանցս ուսուցանողի. զի ոչ նախ զմեզս թողուլ ուսոյց խնդրել, եւ ապա ընդ Աստուած խաւսել, որպէս եւ մարդկան է սովորութիւն, քանզի նախ ներումն խնդրեմք ի թագաւորէ եւ ապա զհայցուածս ընդ նմա բարբառիմք: Իսկ սա ոչ այսպէս, այլ զհրաման սորին/(45ա) նախ զպարզեւսն խնդրեաց եւ ապա՝ զներումն ուսուցանելով բաւականապէս, զի թէ ի խորս չարեաց հասանիմք՝ երկրորդէն յանցանք մեր: Խաղաղութիւն եւ գթութիւն, զոր ունի Աստուած ի վերայ մարդկային բնութեան, վասն որոյ նախ զկարեւորն եւ զմեծն ունել աղաւթեաց եւ ապա զայն ունելոյ դիրաւ գտցուք ի բարեկամացն զմարդկապէս գրելոյ զներումն: **Թող մեզ զպարտիս մեր.** Արդարեւ **պարտք.** քանզի յայսքան շնորհս նորա վայելեալ հոգւով եւ մարմնով զիա՞րդ ոչ գտանիմք պարտապանս հրամանին Տեառն կալ հպատակ: Ուստի եւ յանցանելն զնովաւ վայելչապէս եւ ուղեղ խստութեամբ պարտական զանձինս դատել զներումն խնդրեմք ասելով՝ թոյլ արայ պարտուցն, որ ընդ սխալելն ամենատես զհտութեանդ համբերել ամփոփես եւ թողուս: Է՞ր վասն. զի մարմնաւոր եմք, զի դիրապատիր կամաւքս խաբիմք, զի ի խաւար կենցաղոյս շրջիմք, զի արեւնս ունիմ բնականս հակառակ արիւնացս մտաց՝ զերող զիս ակամայ ի յարեւնս մեղացն: Եւ վասն այսորիկ եւ ներելի է քեզ վայելչական, որպէս բարերար՝ տկարի՛, որպէս ողորմած՝ ողորմելոյ, որպէս զթած՝ կարաւորի՛ որպէս եւ ես ներեմ իմում պարտաւորի: Բայց թերեւս ասասցէ որ ընդդէմասացս. ես հողեղէն մարդ, զիա՞րդ կարացից նմանել Աստուծոյ, եւ ոչ միայն նմանել, այլ եւ զանձն ապացոյց նմին ընծայել՝ յասելս, որպէս ես այլոց, եւ դու ինձ արասցես: Սակայն պարտ է գիտել, զի վարդապետն մեր եւ արեւնստույցն Քրիստոս ոչ արտաքոյ բնութեանս, զոր ստեղծ կամ սորին հակառակաւ խրատու զմեզ վարժել կրթեր, ապա թէ արեւնքն ախորժելի բնութեանս՝ ամենայն իրաւք հարկաւոր է եւ կատարել զնոյն: Եւ արդ, ո՞ր է ի մարդկանէ, որ ոչ զսէրն կամի, ո՞վ, որ ընդ թշնամութիւն ոչ դժուարի: Են այլ տեսակք մեղաց, որ յանցանելովն մարմնոյս հեշտութիւն ընձեռեն որպէս պոռնկութիւն եւ որկրամոլութիւն: Բայց այս ախտ թշնամութիւն ոչ բնաւ, զի ի տիրելն ի վերայ մեր ի հոգս եւ ի ծուփս արկանէ յերկիւղ եւ ի տարակուսանս: Եւ ընդէ՞ր ոչ շիջուցանելովն յանկուցանեմք զանձինս եւ շահիմք զեղբարսն, քանզի յամբարտաւանութեան ըմբռնիմք՝ ոչ զիջանելով առ յանցաւորսն սիրով, իսկ ամբարտաւանութիւն հակառակ լինի Աստուծոյ եւ ոչ թէ ի նմանէ զներումն խնդրէ: Աստի տիրեաց ամենայն անկարգութիւն ի յաշխարհ, զորս ոչ ներէ բանս թուելի զպարտսն ունելոյ եւ ո՞չ թողլոյ: Արար զանձաւս բնակութիւնս /(45բ), զքաղաքս ամրութիւն, զգէնս ի սպանութիւն: Վասն այսորիկ ասէ. **Դու թող,** քանզի ես ոչ կարեմ թողուլ զթշնամութիւնդ, զոր դու անձնիշխան կամաւք ըմբռնեալ պահես: Արդ, լոյծ զամբարտաւանութիւն, որ հակառակ է Աստուծոյ եւ զթշնամութիւն, որ

ընդդեմ է բնութեանը, եւ թող ընկերին զպարտան, ապա դու զքո կարելն, որպէս եւ յԱստուծոյ պահանջես զիրն կարելի: Թող դու եղբարն, եւ թողցէ քեզ Հայր երկնաւոր: Կամացդ է աշխատութիւն թողուլն եւ ոչ եթէ մարմնոյդ: Իսկ եթէ զայդ ոչ կամիս, զիա՞րդ զԱստուած յայն ինչ բռնադատես, զոր դու ոչ եթէ տկարանաս այլ ոչ կամիս կատարել: Արդ, ծանիցուք զերկոսեանս ի մեր աւգուտն լինել, մեր թողուլն՝ խաղաղութիւն մեզ եւ կենաց լինի պատճառ եւ տնաւրէն, եւ Աստուծոյ, որ վասն մեր թողլոյն, թող, անվախճան կենաց կարապետ: Եթէ ի սոցանէ վրիպիմք սակս սնոտի ոխակալութեանդ եւ անձամբ զանձինս դրժեմք¹⁵:

Եւ¹⁶ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեալ զմեզ ի չարէն. Եւ աստ զմերոյ նուագութեանս զհպարտութիւն խրատէ ցածուցանել, հրաժարել ուսուցանէ ի պատերազմաց՝ մի՛ մեզ յանդուգն ի վերայ երթալ, այլ յորժամ բռնադատիցիմք ձգեալք յայնժամ հաստատուն կալ իբրեւ զառաքինիս: Իսկ չար աստ զսատանա կոչէ, եւ անհաշտ պատերազմ հրամայէ ունել ընդ նմայ: Եւ ցուցանէ, թէ ոչ ի բնէ այնպիսի ինչ էր, զի ոչ այնմ, որ ի բնէ, այլ որ ի կամացն լինիցի համարեալ է չարութիւն, եւ ըստ յաճախութեան չարեացն կոչէ նմա անուն: Եւ զի խրատեսցէ զմեզ, թէ ոչ առ ընդերսն պարտիմք զայրանալ, այլ զամենայն թշուառութիւնս ի նա ընկենուի՝

Եւ¹⁷ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեալ ի չարէն: Փորձութիւն աստ զներգործութիւն չարին իմանամք, որ հանապազ ընդ մեզ մարտնչի: Բայց ընդէ՞ր ոչ ասաց մարտ կամ պատերազմ, այլ՝ **փորձութիւն**՝ յայտ արարեալ, թէ ոչ ունի իշխանութիւն անձամբ անձին ընդ մեզ մարտնչել: Այլ զին՝ չ. ի մերոց կամացս խորհրդոցս առնու զնիւթ պատերազմին, ըստ այնմ. «Որում պատրաստէք զանձինս ի հնազանդութիւն, ծառայ էք, որում հնազանդիքն. եթէ՛ մեղաց՝ [մահու] եւ եթէ՛ ի հնազանդութիւն՝ արդարութեան»¹⁵: Եւ Յակովբոս գրէ. «Մի՛ որ փորձի յիւրոյ ցանկութեանցն ձգեալ եւ պատրեալ»¹⁶: Ապա յայտ է, եթէ ի մենջ առնու զնիւթ փորձելոյն: Որպէ՛ս. քանզի ցանկութիւն կերակրոցն խորհրդակցի եւ սերմանէ զորկրամոլութիւն, ի ցանկութիւն փառացն Աստուծոյ կցորդի եւ սերմանէ զսնափառութիւն, եւ այնպէս՝ յամենայն կիրս: Մէք զսկիզբն խորհրդոյն բարիորդ դը/(46)նեմք, իսկ նա ընդ նմին զչարն նիւթ, եւ մինչ չեւ է առեալ ի մենջ զնիւթն՝ իւր մեքենայքն անգործ մնան: Որպէս յայտ է յԱւետարանին. զի յորժամ զկերպարանս քաղցելոյն եցոյց Տէրն, ապա մատեաւ առ Նա փորձիչն:

Բայց ընդէ՞ր ասի **ի փորձութիւն**. քանզի ցուցեալ մեզ զհարկաւորութիւն կարաւորութեան զա նա եւ ըստ այնմ մասին շարժեալ փորձէ զմեզ, թէ ե՞մք հաստատուն ի սէրն Աստուծոյ թէ՞ ոչ: Եւ խառնեալ ընդ բնաւորական կրիցն զաւելորդացն զցանկութիւն, զոր արինակ վէմ ինչ ունելով առաջի, որչափ հաստատուն է, անյոյս եմք ի շարժմանէ, ապա թէ դրդի ի յայս կոյս եւ յայն կոյս շարժեալ, նայիմք տեսանել եւ փորձել, թէ կարե՞մք շարժեալն կործանել: Արդ, շարժումն մեզ՝ զցանկութիւն կերակրոց, ցանկութիւն հարկաւոր պիտոյից, ցանկութիւն փառացն Աստուծոյ: Իսկ յորժամ ի մի՛ որ ի սոցանէ շարժեալ զայ փորձել եւ ընդ բարի խորհուրդն զիրն խառնէ մեքենայս, թէ կարեմք ընտրութիւն առնել աւտարին եւ բնականին՝ շնորհաւքն Աստուծոյ փրկիմք, ապա թէ ոչ կարեմք եւ փորձութեան խորհրդոցն իբր բարւոյ հաւանիմք, ի

¹⁵ Հռովմ. Զ 16:

¹⁶ Յակ. Ա 14:

գործոյն կործանէ կատարումն կերակրոցն. ցանկութեամբ՝ ի պոռնկութիւն, հարկաւոր պիտոյիւքն՝ յարծաթսիրութիւն, ցանկութեամբ փառացն Աստուծոյ՝ ի սնափառութիւն: Եւ մեք ըստ մերոց ցանկութեանցն խաբեալ պատրեցաք, որպէս գրեաց Յակովբոս¹⁷՝ ձգեալ զանձինս ի խորխորատ մեղացն, եւ փորձելովն անփորձ գտաք ի մարտ թշնամոյն: Ուստի զգուշացեալ հարկաւորապէս զայս ուսոյց Տէր մեր աղալթել. **Մի՛ տանիր զմեզ.** Ոչ թէ իբր Աստուած տանի, քանզի Աստուած անփորձ ասի չարեաց¹⁸, այլ թէ՛ յոր մեք գնամք խարդաւանութեամբ դաւաճանողին ընդ չարն իբրեւ ընդ բարի: Դու, որ տեսանես զկերպարանացն բնութիւն, որ չար է, եւ մեզ թուի բարի, եւ ոչ է տիրապէս, մի՛ թողուր զմեզ ակամայ կամաւք զանձինս ի նոյն կործանել, զոր արինակ, թէ որ երկնչի յոմանց, թէ ընդ բարիոք կերակուր խառնեալ զմահարար դեղն արբուցանել նմին ի սպանումն. ասէ ցոք ի բժշկաց. Դու որ ճանաչես, միշտ ընդ իս լինիցիս, զի մի՛ վասն հարկաւոր պիտոյիցն պատրաստեալ սպանիցիմ: Սոյնպէս եւ սա ասէ՝ ի հարկաւորսն զաւգտակարութիւն մարմնոյս պահանջէ, դու ամենահայեաց, մի՛ թողուր զիս փորձիլ եւ արտաքոյ նորին սասանեցուցանել: Ընդ այս // (46բ) կիրս անցանելով Յոբ գրէր. «Փորձութիւն են վարք մարդկան ի վերայ երկրի»¹⁹, եւ Տէրն՝ «Հարկ է զալ գայթակղութեան»²⁰. Է՞ր վասն. զի գայթագեղեցուցիչն ընթացակից ունի յամենայն կեանս, բայց ոչ իբր զամենախնամ Աջն Աստուծոյ, յորժամ խնդրեմք ի նմանէ՝ ոչ տալ զմեզ ի փորձութիւն, ըստ այնմ. «Անկցին ի կողմանէ քումմէ հազարք»²¹, բայց մի՛ երկնչիր, ոչ մերձեսցի առ քեզ», քանզի «բիրք են ընդ Աջմէ քումմէ»: **Այլ փրկեա զմեզ ի չարէն.** Ոչ թէ սոսկ ի փորձութենէ, այլ համանգամայն առեալ յամենայն մեքենայից նորա խնդրէր զերծանիլ, քանզի պատահէր բազում անգամ, զի չունել նիւթ զկամս մեր, յարուցանէ ի վերայ մարդկան արկուած վտանգից, ըստ որում առ Յոբն է տեսանել եւ առ վկայսն, զոր ի ձեռն թագաւորաց մատնէր, եւ առ երանելի հարսն: Զի ե՞րբ ունէր զկամսն Անտոնի նիւթ ի չարաչար զնան արկանել: Ներգործէ եւ այժմ զչարութիւն իւր առ բազումս: Սոյնպէս յորս մատնիմք ըստ ներողութեան Աստուծոյ. կամ զի առաքինութիւն սրբոցն նոցին յաղթանակ լիցի անձանց ի փառս եւ թշնամոյն՝ յամաւթ, եւ կամ զի փորձանաւք նորա զղջացեալք ընդ պատուհասելն Աստուծոյ ի չար սովորութենէն ի բարի փորձեցուք: Արդ, յայսցանէ, ասէ, փրկեա զմեզ. Է՞ր վասն. զի եթէ մեղաւորք եմք՝ դու պատուհասեալ ուղղեա եւ մի՛ ի ձեռն թշնամոյն, եւ թէ արդարք՝ որպէս կամիս ընկալ, եւ մի՛ փորձեր, մի՛ գուցէ ըստ տկար բնութեանս անփորձ գտեալք կորիցուք, զի ոչ ամենայն որ ոսկի անփորձ ի բով մտեալ, այլ բազում անգամ փորձելովն եւ առաջի գոյնէն տժգունի: Զայս զիտելով առաքեալ գրէր առ Կորնթացիսն. «Հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեան զելսն, զի համբերել մարթասցուք»²²: Արդ, զայս հաւատարմութիւն պահանջէ յԱստուծոյ ունել ի փորձողէն զփրկութիւն մաղթելով. **Փրկեա, ասէ, զմեզ ի չարէ.** յայտ արարեալ, զի թէպէտ եւ զաւգուտն մեր տնաւրինես փառաւքն եւ զպսակն բազմացուցանես ի մարտին յաղ-

¹⁷ Հմմտ. Յակ. Ա 14-15:

¹⁸ Հմմտ. Յակ. Ա 13:

¹⁹ Յովբ Է 1:

²⁰ Հմմտ. Ղուկ. ԺԷ 1:

²¹ Սղմ. Ղ 7:

²² Ա Կորնթ. Ժ 13:

թութեամբն, այլ */(47ա)* իմ տկար եւ դիրապատիր մարմնոյ վիճակեալ ոչ անձամբ անձին զնոյն պահանջեմ, այլ միշտ զփրկութիւն ունել աղաթեմ: Արդարեւ, էառ զփորձ տկար մարդկութեանս ամենայնիւ Տէր մեր, ըստ նմանութեան մեր առանց մեղաց եղեւ ճշմարտապէս չարչարակից զփորձ առեալ փորձանաւորացս՝: Եւ զի այսմ հաւատամք տիրապէս ի նախակարգեալ աղաթիցս վշտակցութենէ, վասն այսորիկ եւ զաւգնականութիւն առեալ ի ձեռն հաւատոցս միշտ տկարութեան հոգոցս ճաշակ շնորհեմք, որպէս գրեաց առաքեալ. «Հաւատարիմ է Աստուած՝ ոչ տալ զձեզ ի փորձութիւն», այսինքն՝ աւատալի է */(23)* կրիցն չարչարանաց. զի թէ լոյսն ի խաւարէն հալածեցաւ՝ խաւարն զի՞նչ [կր՞]եցէ. իւր ոչ եհաս, զի լոյս էր, այլ զմեզ ծանեաւ, զի հաւանե[աց], քանզի դիրաւ գայթեմք: Նայ ոչ մոլորեցաւ, զի Աստուած էր, այլ զմերն իմացաւ մոլորութիւն, զի մարդիկ եմք: Եղբարցս նմանեաց, զի ողորմած լիցի, եւ հաւատարիմ է յողորմութիւն, զի չարչարակից է, փորձեաց, զի փորձանացն կցորդ լինիցի, եւ կարողապէս աւգնեաց, զի զփրկել մեզ ուսոյց աղաթել. Փրկութիւն դու ես, Յիսուս, եւ առ ու՞մ յենուցումք, փորձակից դու ես եւ առ ո՞ւր այլ ապաւինեսցուք, [ոչ]տալն քո է եւ առ ո՞ւր այլ ապաստանեսցուք, ողորմած դու ես, զու՞մ այլ ոտից քոյին կարաւտեալքս բուռն հարցուք: Նայեա, Տէր, ի փորձեալքս եւ ի կործանեալքս, ի մատնեալքս եւ ի [չար]չարեալքս, ի խոցեալքս եւ ի զիշատեալքս, յարբեալքս եւ յիմարեալքս, Փրկիչ, որ զփրկութիւն ուսուցեր խնդրել, քոյովքս զքեզ թախանձեմք, փրկեա զմեզ յորսողէն^{ԲԲ}, **զի Քոյ է արքայութիւն եւ զաւրութիւն եւ Քեզ փառք յաւիտեանս**^{ԲԳ}: Եւ թէ նորա է արքայութիւն եւ զաւրութիւն, ապա չէ պարտ երկնչել յումեքէ, քանզի չիք ոք, որ նմա կարիցէ կալ հակառակ: Իսկ թէ եւ կայցէ ինչ հակառակ, իմաստջիր թէ յԱստուծոյ թոյլ տալովն առ ժամանակ մի: **Եւ փառք յաւիտեանս**. Ոչ միայն ի շուրջանակի չարեացն ազատէ, այլ եւ փառաւորս կարէ առնել, զի որպէս զաւրութիւն նորա բազում է, նոյնպէս եւ փառքն անչափ է, **զի քոյ է արքայութիւն եւ զաւրութիւն**: Տէր ասէ. Դու ես ի վերայ մեր եւ ի ներքոյ Քո գթութեանդ եմք գրեալք՝ մի՛ տալ իշխանութիւն չարին զծառ*/(47բ)*այքս քում թագաւորութեանդ վտանկել^{ԲԴ}: Բայց տես, թէ որպէս յարմարի ընդ բանք աղաթիցս եւ սորին կատարումն, զի յետ ասելոյն **մի տար ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէն** յաւելու, **զի՞նչ Քոյ է արքայութիւն եւ զաւրութիւնն**, այսինքն՝ թէ փորձէ եւ վտանգէ յոք այն, որ իշխանութիւն ունիցի ի վերայ նոցա, եւ չարչարէ, այն, որ զաւրութիւն ունի չարչարելոյ. մեք Քոյ եմք ստացուածք եւ արարածք ի ներքոյ Քում Տէրութեանդ, եւ ոչ չարին. զաւրութիւն ամենայն քոյ է եւ ոչ նորա: Թէ փորձելոյ գտցուք արժանիք՝ մատնեսցուք ի ձեռն Տեառնդ եւ մի՛ ի ձեռս թշնամոյն, զի թէ Դաւիթ զմարդկանն փորձանսն թողեալ հրաժարեաց ի նմանէ եւ աղաղակեաց. «Անկայց ի ձեռս Տեառն եւ մի՛ ի ձեռս մարդկան»՝ մեզ քանիաւն առաւել հրաժարելի է ի մախացող թշնամոյն անգեղջ փորձանացն մարտն: **Քոյ է արքայութիւն եւ զաւրութիւն** ի վերայ մեր. որպէս խնամես միշտ, յորժամ կամիս՝ դու պատուհասեա Տէրդ զծառայս, եւ Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. Ամէն^{ԲԵ}:

ա-բ Ոսկեբերան, էջ 308:

գ-դ Լամբրոնացի, էջ 451-452:

ե-զ Ոսկեբերան, էջ 309:

²³ 1-2 բառ ջնջված, անընթեռնելի:

է-ը Լամբրոնացի, էջ 452-454:

թ-ժ Լամբրոնացի, էջ 454-458:

ժա-ժբ Ոսկեբերան, էջ 311:

ժգ-ժդ Լամբրոնացի, էջ 458-460:

ժե-ժզ Ոսկեբերան, էջ 313:

ժէ-ժը Լամբրոնացի, էջ 460-462:

ժթ-ի Ոսկեբերան, էջ 314:

իա-իբ Լամբրոնացի, էջ 462-465:

իգ-իդ Ոսկեբերան, էջ 314:

իե-իզ Լամբրոնացի, էջ 467:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՍՏԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՑԱՆԿԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Աստվածաշնչի համաբարբառային կարգավորումը Գևորգ Սկևռացու կողմից հայ իրականության և Սուրբ Գրքի կանոնի պատմության մեջ գնահատվում է որպես կարևոր ներդրում, որի կիրառական նշանակությունն ու անհրաժեշտությունը բացատրվում է արքունական դիրքորոշմամբ:

Գևորգյան համաբարբառը կիլիկյան ձեռագրերում ի հայտ է գալիս 13-րդ դարի վերջին: Կիլիկյան Հայաստանում մինչև Գևորգյան կարգավորումը արդեն մեծ հետաքրքրություն էր առաջացել Սուրբ Գրքի կարգավորման մի այլ տեսակի՝ լատինական Վուլգատայի գլխաբաժանումների նկատմամբ¹:

Արժեքավոր է գևորգյան ցանկերի և նախադրությունների կազմման եղանակը: Այն կազմված է բնագրերի համեմատության սկզբունքով և իր կառուցվածքով տարբերվում է մինչև 13-րդ դարը կազմված սուրբգրային կարգավորումներից: Ցանկերը կազմելիս Գևորգ Սկևռացին յուրաքանչյուր Ավետարանի սկզբում դրել է նույն Ավետարանի հատվածների բաժանված և խորագրված գլուխները՝ «Ցանկ գլխոց», և նրանց կողքին զուգահեռ նշել մյուս Ավետարանների համապատասխան գլուխները²: Այս գլխակարգությունների առանձնահատկությունը նրանում է, որ, ինչպես նկատել է Հ. Անսայանը, «դրանք միաժամանակ համաբարբառային կանոններ են՝ տողերի դիմաց ունենալով չորս բնագրերի փոխադարձ համաձայնությունները ցույց տվող աղյուսակները³»:

Գևորգ Սկևռացու այս ուշագրավ ու հետաքրքիր աշխատությունը զբաղեցրել է հետազոտողների ուշադրությունը: Աստվածաշնչյան նախադրությունների և ցանկերի ծագման և զարգացման, Գևորգ Սկևռացու դրանց կազմման հեղինակության հարցի շուրջ գրվել են մի շարք ուսումնասիրություններ: Մասնագետների մի մասի կարծիքով, 13-րդ դարավերջին գրված հայերեն ձեռագրերում երևան եկած սուրբգրային ցանկերն ու նախադրությունները ինքնուրույն չեն. դրանք կազմվել են կա՛մ հունա-

¹ Հուգոնյան գլխաբաժանումները հայերեն ձեռագրերում առաջինը կիրառել է Հեթում թագավորը՝ լատինական և հայերեն բնագրերի համեմատությունը հեշտացնելու նպատակով: «Ֆոանգաց» գլուխներ և դրանց հետ կապված բազմաթիվ ծանոթագրություններ ունեն հայերեն մի շարք ձեռագրեր, ինչպես ՄՄ թ. 177, 179, 180 և այլ գրչագրեր, որոնց մեծ մասում դրանք համատեղվել են գևորգյան ցանկերով ու նախադրություններով: Այս երկու գործերի համեմատությունը թույլ է տալիս ընդգծելու, որ Գևորգ Սկևռացու գլխակարգությունը զգալիորեն տարբերվում է հուգոնյանից: «Միակ նորությունը, որ հայը կարողացել է մուծել այս գործի մեջ այդ եղանակի շրջանակներում, դա գևորգյան կանոնաձև համաբարբառն էր: Ինքնուրույն զարգացման այս սահմանափակումը մեթոդական տվյալ եղանակի բնույթից էր, որ տեղ չէր թողում ծավալվելու»: Տե՛ս **Հ. Անսայան**, Համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, «Էջմիածին», 1972, էջ 87:

² Գևորգ Սկևռացու մոտ Մատթեոսի Ավետարանն ունի 68 հատված, Մարկոսինը՝ 48, Ղուկասինը՝ 84, Հովհաննեսինը՝ 43:

³ **Անսայան Հ.**, նշվ. աշխ., էջ 21:

կան, կա՛մ ասորական սկզբնագրերի նման, կա՛մ էլ թարգմանված են դեռևս չգտնված հունական կամ ասորական բնագրերից⁴: Ուսումնասիրողների մյուս մասն էլ ապացուցում է, որ այս աշխատությունը Գևորգ Սկևռացու հեղինակային գործն է⁵:

Չենք բացառում, որ Գևորգ Սկևռացին, լինելով ժամանակի ճանաչված գիտնական, իր հեղինակային գործը կազմելիս ծանոթ է եղել հայ մատենագրության մեջ վաղ ժամանակներից եկող նմանօրինակ փորձերին⁶: Սա բոլորովին չի նսեմացնում նրա կատարած աշխատանքի արժեքը: Կարծում ենք, որ ձեռագրական աղբյուրներում հիշատակվող, սակայն Գևորգ Սկևռացու դեռևս անհայտ ինքնագիր օրինակի գլխավոր հիշատակարանը կարող է միայն պարզել այս աշխատանքի հետ կապված վերոհիշյալ տարակարծությունները: Գևորգ Սկևռացու աշխատանքի պատմական, բանասիրական արժեքը ճշտելու համար ամենից առաջ կարևոր են մեզ հասած արժեքավոր սկզբնաղբյուրների վկայությունները, որոնք անտեսվել են հարցի քննության մեջ զբաղվող մի շարք հեղինակների կողմից: Հիշատակություններում օգտագործված «առնուլ», «կարգել», «շինել» բառերը բացատրվում են «ստեղծել, որպես գոյաւորել յոչնչէ, ձևացուցանել, սահմանել, որոշել, կազմել, հորինել» նշանակությամբ⁷: Այս վկայությունները միանշանակ ապացուցում են, որ Գևորգ Սկևռացին, «գոր ի մենջ թախանձեալ եղև», «յինքենէ շարժեալ» կարգավորել է Աստվածաշնչի նախադրություններն ու ցանկերը:

Ժամանակագրական հերթականությամբ ուշագրավ է Մովսես Երզնկացի վարդապետի վկայությունը. «Գծեր և կանոնս կարգաւորս, և բանս խրատականս վասն Խոստովանութեան ... առնէր Համարս գլխոց և Ցանկք և Նախադրութիւնս տառից»⁸: Մովսես Երզնկացու օրինակած մեկ այլ, ՄՄ թ. 177 Աստվածաշնչի հիշատակարանում ասվում է. «Ձի ի մերումս ժամանակն հնոցն արարած ոչ գտաւ գլխահամար Աստուածաշնչից գրենաց և որ մերն էր բաբունապետէ, է գոր յինքենէ շարժեալ և է գոր ի

⁴ **Ջոհրաբյան Հ.**, Աստուածաշունչ մատեն Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի Հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի Հայկական բարբառ, Վենետիկ, 1805, Առաջաբան, էջ 9: **Ջարբխանայան Գ.**, Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 172: **Ջարբխանայան Գ.**, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 701-2: **Նորայր Բիւզանդացի**, Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփլիս, 1900, էջ 422-432: **Սուքրյան Ա.**, Աստուածաշունչք թարգմանութիւն եօթանասնից և հայկականն և ամբողջութիւն Նոր Կտակարանին, «Բազմավէպ», 1897, էջ 202:

⁵ **Կյուլեսերյան Բ.**, Նախադրութիւնք Ս. Գրոց և Գեորգ Լամբրոնացի կամ Սկևռացի, «Հանդէս ամսօրեայ», 1915, էջ 70-76: **Քիպարյան Հ.**, Գևորգ Սկևռացի, «Բազմավէպ», 1972, էջ 177: **Անասյան Հ.**, նշվ. աշխ., էջ 22: **Անասյան Հ.**, Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, «Էջմիածին», 1966, հ. 11-12, էջ 83: **Մարգարյան Բ.**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա., 1914, էջ 49-50: **Տեր- Մովսիսյան Ս.**, Նիւթեր Ս. Գրքի ուսումնասիրութեան, նախադրութիւններ և ցանկեր, «Արարատ», 1904, էջ 206-219: **Խաչատրյան Պ.**, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1996, էջ 300: **Տեր- Պետրոսյան Լ.**, Գիրք ծննդոց, աշխատասիրությամբ Ա. Ջեթունյանի, Երևան, 1985, էջ 13-14:

⁶ «Նախադրությունները» որպես մեկնողական նաև փիլիսոփայական բնույթի երկերի նախադաս մաս, կիրառվել են անտիկ և հելլենիստական շրջաններում, և մեզանում պահպանվելով՝ եկեղեցական մատենագրության մեջ ինքնատիպ զարգացմամբ փոխառվել են թարգմանական գրականության միջոցով: Տե՛ս **Է. Շիրինյան**, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, «Աշտանակ», 2000, էջ 36-64:

⁷ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, Երևան, 1979, հ. Ա, էջ 308-309, 478:

⁸ **Ալիշան Ղ.**, Մխուրան. Համագրություն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 103:

մենք թախանձեալ եղև ... արար...»⁹:

Կարևորագույն աղբյուրներից է Գևորգ վարդապետի վարքագիր Ստեփանոս դպիրի հաղորդածը. «Այլև ճոռում և ճոխ երևեցոյց յեկեղեցիս սուրբ և յստակ տեսութիւնս լի իմաստութեամբ, զի ի բոլոր Աստուածաշունչ գիրս կարգեաց նախադրութիւնս և ցանկս գլխաւք յարիւնեալ և զոր առաջին սրբոցն անփոյթ էր լեալ, զայն սմա պահեաց Աստուած ...»¹⁰:

Առավել ուշագրավ վկայություն է պահպանվել ՄՄ թ. 6273 գրչագրի հիշատակարանում: Ձեռագիրը Աստվածաշունչ մատյան է՝ գրված 1297-ին¹¹: Պատվիրատուն գրչության հայտնի վարպետ, Գևորգ վարդապետի աշակերտ Ստեփանոս Գույներերիցանցն է: Մյուս հիշատակություններից այն կարևորվում է նրանով, որ վկայում է ոչ միայն աստվածաշնչյան նախադրությունների և գլխահամարների Գևորգ Սկևռացու հեղինակությունը, այլև միակ աղբյուրն է, որը հայտնում է, թե նախադրությունները վարդապետը կազմել է Հեթում Արքայորդու խնդրանքով. «Եւ քանզի լուսաւորիչն իմոյ մեծ վարդապետն Գեորգ փարթամացոյց զբովանդակ գիրս, իրք ի խնդրոյ ուրուք, և իրք յինքն յինքենէ շարժեալ: Ձգլխահամարսն ոչ գիտեմ ով է խնդրել, այլ զնախադրութիւնսն պարոն Հեթում խնդրեաց՝ արքայորդին և արարեալ զսա խնդրողքն բանի ըստ պիտոյից ժամանակին զինչ կամիցին՝ դիւրաւ գտանիցեն»¹²:

Ղ. Ալիշանը վկայում է մի աղբյուր ևս, որից երևում է, որ Գևորգ Լամբրոնացին կազմել է ոչ միայն Հին Կտակարանի, այլև Նոր Կտակարանի գրքերի ցանկերն ու նախադրությունները. «Առաջնորդն Սկևռայ, այր փիլիսոփա և կատարեալ իմաստասէր և անուանի: Սա գեղեցկագիր և ամենահարմար յոգնագունակ բայիւք և ճոխական իմաստիւք զարդարեաց զամենայն Աստուածաշունչ, զնուրբ և զընդարձակ, զՀին և զՆոր Կտակարանս Հայոց Եկեղեցւոյն ընդ որս և զԱւետարանն նախադրօք, գլխօք և ցանկօք յորդեաց...»¹³: Վենետիկի մատենադարանի թ. 5 Աստվածաշնչի գրիչ Թորոսը գրում է. «Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, գթա, ողորմեա Գեորգ վարդապետին, որ զնախադրութիւններս և զգլխնիս ամէն Հին Կտակարանացս շինել է... և զՄարտիրոս վարդապետն, որ զօրինակն էտ»¹⁴:

Ձեռագրերում, ցավոք, չեն պահպանվել հիշատակություններ, որոնք հստակեցնեն գևորգյան ցանկերի և նախադրությունների կազմման ստույգ ժամանակը: Բանասիրության մեջ այս աշխատության հորինման ենթադրվող ժամանակը սահմանվում է 1270-1297 թվականների միջև: Մինչև 1270 թվականը գրված ձեռագրերում բացակայում են գլխակարգություններն ու ցանկերը: Հ. Անասյանը, ստուգելով ստույգ թվական ունեցող 49 ձեռագիր, 887-ից մինչև 1269 թթ., եկել է այն եզրակացության, որ գևորգյան համաբարբառը կազմվել է ոչ ուշ, քան 1270 թվականը¹⁵, և առաջին գրչագիրը, որ ունի այդ ցանկերն ու նախադրությունները, ՄՄ թ. 345 Աստվածաշունչ մատյանն է: Ձեռագիրը օրինակել է Բարսեղ գրիչը, իսկ պատվիրատուն Արքաեղ-

⁹ Մաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար, Երևան, 1984, էջ 774:

¹⁰ ՄՄ թ. 8356 ձեռ., թ. 208աբ:

¹¹ Ձեռագիրը գտնվել է Եվդոկիայի Ս. Գևորգ եկեղեցում: 1865-ի հունվարի 25-ին արտագրել է Ղ. Փիր-ղալեմյանը և մուծել իր «Նշխարքում»:

¹² Մաթևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 804:

¹³ Ալիշան Ղ., Միսուան, էջ 532:

¹⁴ Մաթևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 543-544:

¹⁵ Անասյան Հ., նշվ. աշխ., էջ 22:

բայր Հովհաննես եպիսկոպոսն է: Ըստ վերն ասվածի ենթադրվում է, որ Գևորգ Սկևռացին իր աշխատանքը պետք է սկսած լիներ Արևելյան Հայաստանում ուսանելու տարիներին՝ 1264-1265-ից մինչև 1270-1271 թթ.¹⁶: Այս ենթադրությունը այնքան էլ հավանական չէ: Ուսանելու տարիներին, ըստ վարքագրի «սուղ ժամանակս», Գևորգ Սկևռացին օրինակել է «Տոնապատճառ» ժողովածու, որի գլխավոր հիշատակարանը հայտնելով այս շրջանի որոշ մանրամասներ, այս մասին լռում է: Նաև անհավանական է ուսանելու տարիներին ձեռնարկել և ավարտին հասցնել այդպիսի լուրջ աշխատանք: Կասկածելի է նաև նույն ժամանակ այդ ցանկերով և նախադրություններով ձեռագրի օրինակում Կիլիկիայում: Ձեռագրի ուսումնասիրությունը¹⁷ պարզեց, որ աստվածաշնչյան գրքերի ցանկերի ու նախադրությունների գրչությունը տարբերվում է Բարսեղ գրչի գրչությունից¹⁸ և օրինակվել են ազատ թերթերի վրա: Ցանկերից հետո գրված բազմաթիվ հիշատակություններ վկայում են, որ դրանք գրել է Թորոս Ռուբինյանցը՝ պարոն Կոստանդինի պատվերով. «Յիշեսցիք զստացող գրոցս, իմ քաղցր և բարի պարոնն և զիշխանաց իշխանն, զպարոն Կոստանդինն... ընդ նմին և զմեղաւոր իրէցս զգծաւոյ ցանկերոյս զԹորոս Ռուբինեանս»¹⁹: Հր. Աճառյանը ոչ միայն ցանկերի գրող, այլև ձեռագրի լուսանցազարդերի ծաղկող է հիշում Թորոս գրչին²⁰:

Ձեռագրի հիշատակություններում չի նշվում ցանկերի և նախադրությունների ներմուծման թվականը: Ուսումնասիրություններից պարզվեց, որ Թորոս գրիչը աշխատել է Սիսում 14-րդ դարի 60-ական թթ.: Մեզ հայտնի դարձավ գրչի օրինակմամբ «Մեծին Ներսեսի վարուց պատմութիւն» գործը՝ գրված Սսում 1361 թվականին²¹: Հավանաբար Թորոս գրիչը գևորգյան ցանկերն ու նախադրությունները ավելացրել է 14-րդ դարի 60-ական թվականներին²²:

Հովհաննես Արքաեղբայրը և Գևորգ Սկևռացին բազմիցս համագործակցել են. Հովհաննես եպիսկոպոսի պատվերով Սկևռացին 1283-ին գրել է «Ներբող Հովհաննես ավետարանչին» գործը, «Գործք առաքելոց»-ի խմբագիր մեկնությունը: 1263-ին Հովհաննես Արքաեղբայրը պատվիրել է օրինակել Աստվածաշունչ, որը չունի ցանկեր և նախադրություններ, որից կարելի է ենթադրել, որ մինչև 1270 թվականը Գևորգ Սկևռացին չի ավարտել իր կարգավորումը: 1286 թվականին Հովհաննես Արքաեղբայրը սրբագրել է ՄՄ թ. 5525 Ավետարանը, որը նույնպես չունի ցանկեր և նախադրություններ: Իսկ 1287 թվականին օրինակված ՄՄ թ. 197 Ավետարանն ունի ցանկեր և նախադրություններ, որոնք իրենց կառուցվածքով, կազմման եղանակով տարբերվում են գևորգյանից: Հավանաբար այս ցանկերի և նախադրությունների հեղինակը

¹⁶ Բաղդասարյան Է., Գևորգ Սկևռացու «Վարքը», «ԲՄ», 7, էջ 406:

¹⁷ ՄՄ, ձեռգ. թ. 345:

¹⁸ Կասկածելի է միայն չորս Ավետարանների ցանկերի և նախադրությունների գրչությունը:

¹⁹ Գ. Զարբանալյանը, շփոթելով երկու գրիչներին, գրում է. «Ցանկ մատենիս հրամանաւ իշխանաց իշխան Կոստանդինի գրեալ է Բարսեղ Ռուբինեանցէ»: Գ. Զարբանալյան, Մատենադարան Հայկական թարգմանութեան նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 157:

²⁰ Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 35:

²¹ Փիրղալեմյան Ղ., ՄՄ 6273, էջ 156-157 : Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺՂ դար, Երևան, 1950, էջ 451:

²² Մ. Տեր-Մովսիսյանի կարծիքով դրանք ներմուծվել են 1358-1365 թթ. ընթացքում, երբ ձեռագիրը հասել է Կոստանդինի թագավորի ձեռքը: Մ. Տեր-Մովսիսյան, Էջմիածնի հ. 153 ձեռագիրը, «Արարատ», 1915, էջ 130:

Հովհաննես Արքաեղբայրն է:

Սուրբ Գրքի հնագույն օրինակներից ՄՄ թ. 177 գրչագրում ցանկերն ու նախադրությունները նույնպես գրվել են ոչ իրենց համապատասխան տեղերում, ազատ թերթերի վրա: Սա ցույց է տալիս, որ ցանկերն ու նախադրությունները ավելացվել են ձեռագրի օրինակվելուց հետո: Հետաքրքիր է գրչի՝ Մովսեսի²³ 130ա էջի վկայությունը. «Ով եղբարք և ծառայակիծք, որք գուցե զկնի մեր և հանդիպիք մերումս շարագրութեան, այս ձեզ յայտնի լիցի, զի թէ յանցն իւր տեղուց ոչ է եղեալ գլխահամար իւրաքանչիւր գրոց, այս է պատճառն, զի ի մերումս ժամանակի հնոցն արարած ոչ գտաք գլխահամար աստուածաշնչից գրենաց: Եւ որ մերն էր բաբունապետէ, է գոր յինքենէ շարժեալ և է գոր ի մենջ թախանձեալ եղև, և զայսոսիկ յորժամ արար՝ ի գրոցս սուղ ինչ կայր գրելոյ, և որ տեղի գտաք, եղաք, ուր ոչ՝ լուր ժողովեցաք առ ի պետս»: Ձեռագրի սկզբում ավելացված 3-10 թերթերի վրա այլ գրով գրված են ցանկերը, և գրիչը հուշում է այսպես. «Թէ որ կամեսցէ գրել, յառաջ զնախադրութիւնս գրեսցէ, և ապա զգլխահամարսն ի սկզբունս ամենայն գրոց»:

Ձեռագիրը գրվել է բանասերներից շատերի ուշադրությունը: Վատ ընթերցելի գրության թվականի պատճառով մասնագետներից շատերը²⁴ գրչագիրը համարել են Սուրբ Գրքի հայերեն թարգմանության հնագույն օրինակը և ընդունել գրության ոչ ճիշտ թվականը՝ Ո /1151/, որը հետագա ուսումնասիրություններում հերքվել է: Մ. Տեր-Մովսիսյանը, քննելով ձեռագիրը, 1292 թվականն է համարել գրության վերջին ժամանակակետը, իսկ ամենաառաջինը սահմանել մինչև 1270 թվականը: Հեղինակը իր Սուրբ Գրքի ուսումնասիրությանը նվիրված հոդվածում փորձել է հիմնավորել ձեռագրի գրության իր կողմից ենթադրվող ժամանակը և հնագույն օրինակը, որի մեջ առաջին անգամ հանդիպում է գևորգյան ցանկերին և նախադրություններին և համարել 1292-ին Ստեփանոս Գույներերիցանցի օրինակած Աստվածաշունչը, որը ՄՄ թ. 179 գրչագիրն է: Ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը, որոշակի տեսնելով մատյանի գրության թվականի ոչ թե «Ո», այլ «Չ» հարյուրավորը, «Խ» տասնավորը, միավորը չի կարդացվել, սա արդեն 1291 թվականն է, այնուամենայնիվ ձեռագրի գրությունը համարում է 1296 թվականը՝ նկատի ունենալով այն, որ Գևորգ Սկևռացին իր աշխատանքը ամբողջությամբ ավարտել է 1297- ին²⁵:

Ժամանակագրական հերթականությամբ հաջորդ ձեռագիրը, որ ունի գևորգյան ցանկերն ու նախադրությունները, Խաչատուր դպիրի, Ստեփանոս գրչի և Ստեփանոս Գույներերիցանցի՝ Սկևռայում 1288 թվականին ավարտված Աստվածաշունչ մատյանն է²⁶: Ձեռագիրը նկարագրել է Բ. Կյուլեսերյանը և բարձր գնահատել նրա արժեքը. «Ասի շատ հարգի աշխատութիւն մըն է, որում ուշադրութիւն ըրած են նախնիք: Միսիօներական հրատարակութեան մէջ ծայրագոյն մանրամասնութեամբ

²³ Մ. Տեր-Մովսիսյանը իր «Նիւթեր Սուրբ գրքի ուսումնասիրութեան» հոդվածում, էջ 131, ապացուցում է, որ Մովսես գրիչը Գևորգ Սկևռացու այն աշակերտն է, որը ներքոլ է գրել իր ուսուցչի մահվան առիթով: Հմմտ., **Արել քահանա Օղուզեան /Մանուկյան/**, Մովսես վարդապետ Երզնկացի, Մատենագիտական հետազոտություններ, Ս. Էջմիածին, 2001 :

²⁴ **Ջաբրիանայան Գ.**, նշվ. աշխ., էջ 122: **Դանիել վարդապետ**, Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանի Էջմիածնի, էջ 10:

²⁵ **Մաթևոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 780:

²⁶ **Կյուլեսերյան Բ.**, Պոռուսիայի Ս. Աստուածածին եկեղեցու ձեռագիր Աստուածաշունչը 1285-1287 թթ., Կ. Պոլիս, «Լոյս», էջ 1906, 1166-1172, 1191-1196, 1216-1221:

արդիւնատուած այսպիսի աշխատութիւն մը, ուրեմն մասամբ շատ հին է մեր եկեղեցոյ վարդապետներուն համար և կը գտնուի այսչափ հին և ընտիր օրինակի մէջ»²⁷:

Ձեռագրի նկարագրութիւնը ցույց է տալիս, որ այստեղ նույնպէս գլխակարգութիւններէից և նախադրութիւններէից յուրաքանչյուրը իրենց համապատասխան տեղերում չեն. գրչագրում դրանք տրված են խառը: Այս խառնաշփոթը ենթադրում է, որ գլխակարգութիւններն ու նախադրութիւնները ներմուծվել են նույնպէս գրչագիրը գրելուց հետո:

Ձեռագրի հիշատակարանում գրության երկու տարեթիվ է նշվում: Ստեփանոս գրչի հիշատակարանում ասվում է. «Յորոց պնդագոյն փութոյ խորհուրդեամբ՝ քահանա ոմն Աստուածատուր անուն հանդերձ ձեռնասուն իւր հարազատ պատանուով Խաչատրիւ, որ է որդի իւր ... ստացան զայս աստուածախաւս մատենաս Կորոյ Կտակարանաց ի ձեռն իմոյ նուաստութեան Ստեփանոսի ամենամեղ եւ անպիտան գրչի ... ՉԼԴ /1285/ թուականիս Հայոց ... սրբարանս մեծի ուխտի Սկևռայի»²⁸: Իսկ Ստեփանոս Գույներեքիցանցի հիշատակարանը վկայում է. «Այսպիսեաւ երանելի ըղձիւք առ ստացումն Աստուածաշունչ տառիցս վառեալ սրբասնունդ պատանին Խաչատուր, թելադրութեամբ Գեորգեա վարդապետի, առ որում կայր ի վարժ կրթութեան բանի եւ գրոյ ուսումնասէր դպիրն Խաչատուր, ինքնագիր երկաւք ստացաւ զգիրս Ծննդոցն, զԴատաւորացն և զԹագաւորութեանց ... իմաւ ձեռամբ Ստեփանոս Գոյներեքիցանց փցուն գրչի ստացան զաստուածային գիրս սրբոց մարգարէից և զսրբագրաց ոմանց, յեւթն հարիւր երեսուն եւ եւթն /1288/ թուականիս...»²⁹:

Կա մի կարևոր հանգամանք: Ինչպէս արդեն նշեցինք, Գևորգ վարդապետը նախադրութիւնները գրել է Հեթում Արքայորդու խնդրանքով: Իսկ Հեթում Արքայորդին թագավորել է Կիլիկիայում 1289 թվականից: Փաստորեն Գևորգ Սկևռացին իր աշխատանքը սկսել է գրել մինչև Հեթումի թագավոր դառնալը, մինչև 1289 թվականը: Վերոհիշյալ հիշատակութիւնները ավելի են հստակեցնում գևորգյան ցանկերի և նախադրութիւնների կազմման ժամանակը: Հավանական է թվում այն, որ Գևորգ Սկևռացին սկսել է աշխատել ցանկերի և նախադրութիւնների վրա 1285 թվականից, և առաջին գրչագիրը, որ լրացվել է այդ աշխատանքով, ինչպէս նկատել է Ստեփանոս Գույներեքիցանցը «թելադրութեամբ Գևորգ վարդապետի», այսինքն՝ հուշարարությամբ, 1285-1288 թթ. Խաչատուր դպիրի պատվերով օրինակված Աստվածաշունչ մատյանն է:

Այն, որ գրչագրում ցանկերն ու նախադրութիւնները իրենց համապատասխան տեղերում չեն դրված, կարելի է կարծել, որ դեռևս այդ ժամանակ Գևորգ վարդապետը ամբողջովին ավարտած չի եղել իր աշխատանքը, և դրանք ավելացվել են գրչութեան ընթացքում:

Սակայն երբ է ավարտել Գևորգ Սկևռացին իր այս աշխատանքը: Ձեռագրական հիշատակութիւններում պահպանվել են վկայութիւններ Գևորգ Սկևռացու «օրինակի» մասին: Հիշատակարանները փաստում են, որ Գևորգ վարդապետը գրել է մի Աստվածաշունչ մատյան՝ ցանկերով և նախադրութիւններով, որը ժամանակակից-

²⁷ Նույնը, էջ 1221:

²⁸ Մաթևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 617-618:

²⁹ Նույնը, էջ 618:

ների և հետագայի օրինակումներում գնահատվել է որպես «ազնի», «լաւ», «ընտիր» օրինակ: Հավանական է, որ այս օրինակը այն գրչագիրն է, որը նաև նկարագարել է Գևորգ Սկևռացին: Ինչպես վարքագիրն է վկայում, «... զի ի բոլոր Աստուածաշունչ գիրս կարգեաց նախադրութիւնս և ցանգս զգլխաւք յարինեալ... և գեղագարդ շքով նկարեալ, զոր տեսողացն և վայելողացն յայտնի է»³⁰:

Վերն ասվածի ապացույցն է վենետիկյան թ. 1, 1319 թվականին գրված Աստվածաշունչ մատյանի գրիչ Հովհաննեսի հոդվածը. «Ես մեղաւորս Յոյանէս, ըստ կարի զփափաքս իմ լցի յանկ ելանելովս... զի անարժանէս թերևս արժանաւոր այս գործ եղև յանկեալ, և զայս ոչ ասեմ վասն գեղապաճոյճ շարագրութեանցս, այլ վասն ազնիւ արինակիս, զոր սուրբ և երանեալ վարդապետին Գեորգեայ ձեռացն շարահիւսեալք էին...»³¹:

Այս մասին վկայություն կա նաև վենետիկյան թ. 112 ձեռագրի հիշատակարանում: Ավետարանը օրինակվել է 1358 թվականին. «Արդ աստանար յանգ ելեալ կատարեցաւ Սուրբ Աւետարանս ի լաւ և յընտիր արինակէ հոգեկիր և գերիմաստ վարդապետին և քաջ բաբունոյն Գեորգեայ»³²:

1292 թվականին Ստեփանոս Գույներերիցանցը նորից օրինակում է Աստվածաշունչ Գևորգ վարդապետի և Խաչատուրի օրինակներից. «...յիշեսցիք ի Քրիստոս զհոգևոր հայրն իմ և լուսաւորիչ զԳեորգ վարդապետն և զհամակամ աշակերտ նորին զԽաչատուր, յորոց արինակաց և զգիրքս գրեցի, բազում խնամարկութեամբ ի նոցանէ»³³: Գրիչը Հին և Նոր Կտակարանները ավարտելուց հետո 528ա-578բ թերթերում օրինակել է այլ նյութեր: Պատարագամատույցի վերջում նա գրել է. «Ի Գեորգ վարդապետին արինակէն գրեցի զսա»: Ստեփանոսը ակնարկում է այն նյութերը՝ Աղօթամատույց, Տօնացոյց, խրատներ, որոնք օրինակել է Գևորգ վարդապետի օրինակից: Իսկ Խաչատուրի օրինակում Նոր Կտակարանին հաջորդում են «Մաշտոց» ժողովածուից վերցված նյութեր՝ «Կանոն հաղորդութիւն տալոյ», «Կանոն մկրտութեան յորժամ քրիստոնէա առնեն»³⁴:

1297 թվականին գրված Աստվածաշնչում Ստեփանոս Գույներերիցանցը նորից վկայում է Գևորգ վարդապետին որպես «առաջին զօրինակին փարթամացուցիչն և շնորհողն մեզ առատապէս»³⁵:

Այսպիսով, Մ. Տեր-Մովսիսյանը, հիմնվելով իրեն հայտնի օրինակումների վրա, եզրակացրել է, որ Հին Կտակարանի նախադրություններն ու ցանկերը գրվել են ամենաուշը 1292 թվականին, գուցե մի քիչ ավելի առաջ, և որ դրանք ավարտուն ներկայանում են 1292-ին գրված Աստվածաշնչում: Ա. Մաթևոսյանը Գևորգ Սկևռացու կողմից իր աշխատանքի լրիվ ավարտումը թվագրում է 1297 թվականով³⁶:

Մեր ենթադրությամբ Գևորգ Սկևռացու օրինակը ցանկերով և նախադրություններով գրվել է մինչև 1290 թվականը: Սրա ապացույցն է Ստեփանոս Գույներերիցան-

³⁰ ՄՄ թ. 8356 ձեռ. թ. 208բ: Տե՛ս **Բաղայան Հ.**, Գևորգ Սկևռացի մանրանկարիչը, «Էջմիածին», 2002, Ը, էջ 117-123:

³¹ **Սարգիսյան Բ.**, նշվ. աշխ., էջ 19-20 :

³² Նույնը, էջ 500:

³³ ՄՄ թ. 179 ձեռ., թ. 526բ:

³⁴ «Լոյս», 1906, էջ 1217:

³⁵ ՄՄ թ. 6273 ձեռ., թ. 60բ, 61ա:

³⁶ **Մաթևոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 780:

ցի՝ Արմենի անապատում 1290 թվականին «յագնիւ և յամենընտիր» օրինակից գրված Ավետարանը: Գրիչը չի հիշատակում Գևորգ Սկևռացու անունը, բայց կարելի է վստահաբար նկատել, որ օրինակվել է Սկևռացու Աստվածաշունչ ինքնագրից: Հիշատակությունները վկայում են, որ «ագնիւ» և «ամենաընտիր» օրինակ ժամանակակիցների և հետագայի գրիչների կողմից անվանվել է Գևորգ Սկևռացու օրինակը:

«Ագնիւ» օրինակ է գնահատվել ոչ միայն Սկևռացու ինքնագիր օրինակը, այլ նաև այն մատյանները, որոնց վրա աշխատել է Գևորգ վարդապետը: 1329 թվականին Ալներում օրինակված Ավետարանի գրիչ Կարապետը վկայում է. «Գրեցաւ սա ի Կիլիկեցոյ աշխարհ... ի յոյժ ագնիւ օրինակէ, զոր յուղեալ մեծիմաստ և սուրբ վարդապետն Գևորգ Լամբրունացի»³⁷: Հաշվի առնելով վերոգրյալը, ՄՄ թ. 177 ձեռագրի գրության թվականը ենթադրվում է 1285-1290 թթ. միջև ընկած ժամանակահատվածը:

Կարելի է որոշ ճշգրտում մտցնել նաև վենետիկյան թ. 5՝ հավանաբար Սկևռայում օրինակված ձեռագրի գրության թվականի հարցում: Բ. Սարգիսյանը գրում է. «Ժամանակ անյայտ, զի գլխաւոր յիշատակարանն ինկած է, միւսներն ալ առանց թուական են, բայց ձեռագրիս ներքին և արտաքին պարագաներէն դատելով յամի Տեառն 1220-1283 գրուած է հաւանօրէն»³⁸: Քանի որ հիշատակարաններից մեկում Թորոս գրիչը վկայում է Գևորգ Սկևռացու ցանկերի և նախադրությունների հեղինակությունը՝ «...ողորմեա Գևորգ վարդապետին, որ զնախադրութիւններս և զգլխնիս ամեն Հին Կտակարանացս շինել է...», և գրչագրի գրիչներից մեկն էլ Գևորգ Սկևռացին է, որ «Գործքս գրեաց», կարելի է ենթադրել, որ այն գրվել է նույնպես 1285-1290 թթ. ժամանակահատվածում³⁹:

Գրչության թվականի ճշգրտման անհրաժեշտություն ունի նաև կիլիկյան մեկ այլ գրչագիր՝ Հեթում Բ թագավորի Աստվածաշունչ մատյանը՝ գրված 1295 թվականին⁴⁰: Գրիչ Ստեփանոսը 81ա թերթի հիշատակարանում զգուշացնում է. «Ով ոք ընթեռնու կամ օրինակէ զգիրքս զայսն, նա թող յառաջ զնախադրութիւնս գրէ ու ապա զցանկքն, զի յետն շինեցայ նախադրութիւնս, քան զգրոցս գրելն, նա էս այնոր համար յետն դրի: Ապա որ գրէ, նա թող զամեն նախադրութենէն յառաջ գրէ, ինչվի յԱւետարանն, ու այնկից ընդ այն թող հայնց զԿաթողիկէիցն ու զԱռաքելքն զինչցել գրած է, և զիս մեղաւորս զՍտեփանոս յիշեա անմոռաց, զի խիստ աշխատեցայ»: 108բ թերթի հիշատակարանում գրիչը նորից հուշում է. «Ով պատուելի և սրբասնեալ եղբարք մեր և հարք, ով ոք արինակէ զգիրքս զայն, նա թող յառաջ զնախադրութիւնս գրէ ու ապա զցանկքն: Զամեն գրոց իւր հետ դիր, ապա զնախադրութիւնն յառաջ դիր քան զցանկն, և զշոռթայիս նախադրութիւնն ի յիւր տեղն դիր զկնի կատարման Դատաւորացս, և զիս յիշեայ»:

³⁷ Տեր-Ավետիսյան Ս., Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 148:

³⁸ Սարգսյան Բ., նշվ. աշխ., էջ 49:

³⁹ 1297-ին Սկևռայի միաբան Գորգ վարդապետը օրինակել է Աստվածաշունչ: Այս մասին է վկայում Գրիգոր Արևելցի գրիչը: Նա արտագրել է իր մատյանը «ի Գորգ վարդապետին արինակէն»: Գրիչը շարունակում է. «Նա յոյժ աշխատեցաւ ի բովանդակ գիրս և պայծառացոյց նախադրութեամբ և զլխահամարով»: Ձեռագրի շնորհողը Ստեփանոս Գույներեբիցանցն է: Հավանական է, որ այն օրինակված լինի Գևորգ Սկևռացու օրինակից: Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 807-808:

⁴⁰ ՄՄ թ. 180 ձեռն.:

Այս հիշատակություններից հետևում է, որ նախադրությունները կազմել են հետո, «քան զգրոցս գրելն»: Գրության թվականը նշվում է 1295, սակայն, ինչպես պարզվեց արդեն 1290 թվականից Գևորգ Սկևռացու ինքնագիր օրինակից արտագրվել են գրչագրեր: Կարելի է ենթադրել, որ 1295-ին ավարտվել է ձեռագրի օրինակումը, իսկ սկսվել է հավանաբար 1285-ից առաջ, երբ դեռ չէին գրվել նախադրությունները: Հավանական է, որ գրիչ Ստեփանոսը առանց փոփոխությունների օրինակել է իր բնագրի հիշատակարանները⁴¹:

Այսպիսով, ձեռագրական վկայությունների ուսումնասիրությունները արձանագրում են այն փաստը, որ Գևորգ Սկևռացին է Աստվածաշնչի հայերեն բնագրի նշանավոր կարգավորողը՝ «է որ յինքենէ շարժեալ և է որ ի մենջ շարժեալ»: Գևորգ գիտնականը նախադրությունների և ցանկերի վրա սկսել է աշխատել 1285-ից և ավարտել ոչ ուշ քան 1290 թվականը: Առաջին գրչագիրը, որ լրացվել է գևորգյան ցանկերով և նախադրություններով, իր աշակերտ Խաչատուրի Աստվածաշունչ մատյանն է՝ գրված Սկևռայի վանքում:

⁴¹ Մ. Տեր-Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 212-213:

Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

341 Թ. ԱՆՏԻՈՔԻ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ԴՈԳՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրիստոնեության պատմությունը միանգամայն ակնհայտ կերպով ցույց է տալիս, որ դոգմատիկական ցանկացած զարգացում իր կնիքն է դնում ժամանակաշրջանի ներեկեղեցական հարաբերությունների դինամիկայի վրա: Այդ տեսանկյունից մեծ նշանակություն է ձեռք բերում հատկապես կոնկրետ դարաշրջանի «աստվածաբանական գործունեության» վերլուծությունը, քանի որ տարաբնույթ աստվածաբանական դպրոցներն ու հոսանքները կա՛մ նպատակ են հետապնդել պահպանել կանոնական համակարգերը, կա՛մ էլ ձգտել են փոփոխել դրանք: Նմանատիպ գործունեությունը, որպես կանոն, պայմանավորված է որոշակի աստվածաբանական խմբավորման (խմբավորումների) շահերով, պահանջմունքներով և նպատակներով:

Այդպիսին էր իրավիճակը նաև IV դարի 40-ական թվականների սկզբին, երբ հականիկեական ընդդիմությունը ձեռնամուխ եղավ բավականին բարդ մի գործընթացի, որը նպատակ էր հետապնդում եկեղեցական պրակտիկայից դուրս մղել Նիկեական Հանգանակը: Եկեղեցական պատմության մեջ այդ գործընթացը բնութագրվում է իբրև հականիկեական դոգմատիկայի աստիճանական ծավալման և նոր հանգանակների ընդունման դարաշրջան:

Այդ իրավիճակը ձևավորվել էր աստիճանաբար: Դրան նպաստող գործոններից առաջինը կապված է Կոստանդին կայսեր մահվան և նրա կտակի համաձայն՝ աքսորված նիկեականների՝ իրենց նվիրապետական կենտրոնները վերադառնալու հետ¹: Գործնականում դրանով IV դարի 30-ական թվականների հականիկեական ընդդիմության ձեռք բերած հաջողությունները նվազագույնի հասան: Այդ իսկ պատճառով էլ ընդդիմությունը հարկադրված էր ամեն ինչ սկսել սկզբից: Սակայն, ի տարբերություն ներեկեղեցական հարաբերությունների ծավալման նախորդ փուլի, IV դարի 40-ական թվականներին հականիկեական ընդդիմության գործունեությունը նպատակամղվեց դեպի դոգմատիկայի ոլորտ, ուր նրանք առնչվեցին մի շարք հիմնախնդիրների հետ: Մասնավորապես, ընդդիմադիրները հարկադրված էին ընտրություն կատարել ներեկեղեցական կյանքում առանցքային նշանակություն ունեցող դոգմատիկական համակարգերի հավատքային ուղղվածության (ուղղադավան, պահպանողական, հետերոդոքս) միջև: Եվ քանի որ հավատքային հիմնարար

¹ Թեև Կոստանդին կայսեր կտակը չի պահպանվել, սակայն նրանում բովանդակվող հիմնադրույթների առանձին մանրամասներ մեզ են հասել եկեղեցական մատենագրության շնորհիվ: Այդ իսկ պատճառով էլ նշված տեսակետը գիտական շրջանառության մեջ օգտագործվում է՝ հիմք ընդունելով եկեղեցական պատմիչների վկայությունները: Տե՛ս, օրինակ, **Сократ Схоластик**. Церковная история. М., 1996, кн. II, гл. 3, с. 66-67; **Созомен Эрмий Саламинский**. Церковная история. СПб., 1851, кн. III, гл. 2, с. 164-166; **Феодорит еписк. Кирский**. Церковная история. СПб., 1852, кн. II, гл. 1, с. 109-111.

սկզբունքների սահմանները որոշվում էին ոչ թե այս կամ այն աստվածաբան հոգևորականի դոգմատիկ պատկերացումների, այլ հավատքային ընդհանրության (Եկեղեցու) սկզբունքային դիրքորոշումների հիման վրա, ապա ընդդիմությունն անխուսափելիորեն կանգնեց հնի և նորի փոխհարաբերության մեկնության և դրանց միջև ընտրություն կատարելու առջև: Եվ քանի որ նշված գործընթացը կարող էր պայմանավորվել նաև սուբյեկտիվ գործոններով և հանգեցնել ինչպես հարաբերական, այնպես էլ բացարձակ շեղումների, այդ իսկ պատճառով էլ հականիկեական ընդդիմությունն իր իսկ կողմից առաջադրված հավատքային հիմնահարցերը լուծելու համար կարևորեց տեղական ժողովներ հրավիրելու և դրանցում հավատքային հիմնարար սկզբունքների (Հավատամքի) «լիարժեքությունը» ճշգրտելու և վերանայելու գործընթացը:

Սկզբնաղբյուրները թույլ են տալիս պնդել, որ հականիկեական դոգմատիկայի ծավալումը պայմանավորված էր նաև հասարակական-քաղաքական, ինչպես նաև պատմամշակութային գործոններով: Այդ գործոններից առաջին հերթին պետք է առանձնացնել պետական իշխանության կրոնական քաղաքականությունը: Վավերագրերը վկայում են, որ նոր գահ բարձրացած Կոստանցիուս կայսրը, բավարարար չափով ծանոթ լինելով ներեկեղեցական կյանքի դինամիկային, կրոնական քաղաքականության ոլորտում որոշ սրբագրումներով շարունակեց Կոստանդին Մեծի պրակտիկ գործելակերպը: Բայց եթե Կոստանդին Մեծն ի շահ կայսրության միասնության նիկեական և հականիկեական դոգմատիկական հոսանքների նկատմամբ հիմնականում հավասարակշռված մոտեցում էր ցուցաբերում, ապա Կոստանցիուսի իշխանության շրջանում այդ հավասարակշիռ քաղաքականությունը կորցրեց իր նշանակությունը:

Կոստանցիուսը հաստատական կերպով կանգնեց եկեղեցական մեծամասնության, այսինքն՝ հականիկեական ընդդիմության պաշտպանության դիրքերում: Դա ուներ իր պատճառները: IV դարի 30-ական թվականների կեսերից սկսած հավատքային հարցերում քրիստոնեական Արևելքը խառնարան էր հիշեցնում: Համագոյության աստվածաբանության կողմնակիցների և հակառակորդների փոխադարձ մեղադրանքները, շարունակական տեսք ստացող բանադրանքներն ու աքսորները, քրիստոնեական Արևելքի և Արևմուտքի դոգմատիկական տարաձայնությունների խորացումն, աքսորված արիոսականների վերադարձը Եկեղեցի և այլն, նոր թափ հաղորդեցին երրորդաբանական վիճաբանություններին: Եվ Կոստանցիուսը որքան ավելի մոտիկից էր առնչվում արևելյան եպիսկոպոսների հավատքային տրամադրություններին, այնքան նրա մոտ ավելի էր ամրապնդվում այն համոզմունքը, որ քրիստոնեական Արևելքում եկեղեցական խաղաղություն հաստատելը գործնականում անհնարին է: Կայսեր համոզմունքների ամրապնդմանը մեծապես նպաստեց ընդդիմության ներկայացուցիչ Եվսեբիոս Նիկոմեդացին, որը դարձավ Կ. Պոլսի եպիսկոպոս: Իսկ այդ շղթայի վերջին օղակը հանդիսացավ այն, որ քրիստոնեական Արևելքը ոչ միայն ընդգծված զուսպ վերաբերմունք դրսևորեց աքսորից վերադարձած նիկեականների նկատմամբ, այլև բացահայտ պայքար սկսեց նրանց դեմ²:

Եվս մեկ բնորոշ առանձնահատկություն: Ինչպես վկայում են վավերագրերը, IV

² Hilarius. Fragment III, Kigne // Migne J. P. Patrologie cursus completes. Series Latina (այսուհետ՝ PL), Acc. t. X, Paris, 1877, p. 658 sqq.

դարի 30-ական թվականների վերջերին հականիկեական ընդդիմությունն այնքան էր համախմբվել, որ այլևս հարկ չէր համարում պայքար մղել համագոյության աստվածաբանության առանձին ներկայացուցիչների դեմ: Չգտելով ստեղծել դոգմատիկական հակասություններից զերծ մի այնպիսի «հոգևոր իրականություն», որտեղ հավատքային գործոնը կարող էր բնութագրվել իբրև այդ «իրականության» ադեկվատ արտացոլում՝ հականիկեական ընդդիմությունը սեփական կողմնորոշիչների արմատավորման գործընթացում անցել է փոխկապակցված երկու փուլ: Դրանցից առաջինը պայմանականորեն կարելի է անվանել ներեկեղեցական հարաբերությունների հավասարակշռվածության հաղթահարման փուլ, որը նշանավորվեց հականիկեական ընդդիմության կանոնական գործունեությամբ: Այդ իրողության վկայությունն Անտիոքի 339 թ. եպիսկոպոսական ժողովի կանոնական որոշումներն են: Կոստանցիուսի իշխանության առաջին տարիներին աքսորից վերադարձած նիկեական ջատագովների հակազդեցությունը կանխելու միտումով ժողովը հռչակեց հետևյալ կանոնը. «Եպիսկոպոսը, որը դատապարտվել է մի ժողովի կողմից և չի արդարացվել մի այլ ժողովի կողմից, այլ առաջնորդվել է միայն կայսեր բարեհաճությամբ, կորցնում է ամեն ինչ»³: Թեև տպավորությունն այնպիսին է, որ այդ կանոնը նպատակ էր հետապնդում Եկեղեցին զերծ պահել արտաքին միջամտություններից, սակայն իրականում այն բացահայտ կերպով ուղղված էր աքսորից վերադարձած նիկեականների դեմ: Եվ միանգամայն բնական պետք է համարել այն, որ նշված կանոնի հիման վրա 339 թ. վերջերին հերթական անգամ աթոռազրկվեցին Ս. Աթանաս Ալեքսանդրացին, ինչպես նաև՝ Թրակիայի, Կեսարիայի, Փյունիկեի, Պաղեստինի և այլ վայրերի բազմաթիվ նիկեական եպիսկոպոսներ, որոնք հարկադրված էին տեղափոխվել արևմուտք՝ Հռոմ⁴:

Չափազանց բարենպաստ այդ պայմաններում էլ հականիկեական ընդդիմությունն անցում կատարեց գործունեության երկրորդ փուլին, որի առանցքային խնդիրը Նիկեական Հանգանակի վերանայումն էր, ինչպես նաև՝ հականիկեական դոգմատիկական գործունեության ծավալումը: Եվ պետք է նկատել, որ այդ ոլորտում արևելյան պահպանողական դոգմատիկական հոսանքի առաջին խոշոր քայլը հանդիսացավ եկեղեցական պատմությանը «(տաճարի) նորոգման ժողով» անունով հայտնի Անտիոքի 341 թ. ժողովը, որը դարակազմիկ տեղ է գրավում IV դարի 40-60-ական թվականների դոգմատիկական վիճաբանությունների պատմության մեջ:

Այս ժողովը, որին մասնակցում էին քրիստոնեական Արևելքի բոլոր «զլխավոր եպիսկոպոսները», առաջին անգամ պաշտոնապես հայտարարեց դոգմատիկական այն սկզբունքների մասին, որին ջատագովում էր հականիկեական ընդդիմությունը, սկզբունքներ, որոնք նրա հիմնական կռիվան էին ընդդեմ համագոյության աստվա-

³ Այդ, ինչպես նաև Անտիոքի 339 թ. ժողովի դիսցիպլինար այլ որոշումները հետազայում Քաղկեդոնական Եկեղեցու կողմից ներառվեցին Տրուլի կանոնական կոդեքսի մեջ: Քաղկեդոնական աստվածաբանները համարում են, որ այդ կանոններն, ըստ էության, պաշտպանում էին Եկեղեցու ազատությունը և հիմնավորում այն գաղափարը, թե Եկեղեցու ներքին հարցերը պետք է լուծի Եկեղեցին՝ առանց արտաքին, այդ թվում նաև՝ կայսեր (պետության) միջամտության:

⁴ Նիկեական գործիչների դեմ ծավալված նոր հալածանքների մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий**. Апологія против ариан. Творения в четырех томах. Т. III, М., 1994, с. 169-178. Տե՛ս նաև **Свт. Афанасий Великий**. Послание епископа Афанасия къ монахамъ повсюду пребывающимъ о томъ, что сделано аріанами при Констанціи (История ариан). Творения в четырех томах. Т. II, М., 1994, с. 108-115.

ծախանության: Խոսքն ամենից առաջ վերաբերում է 341 թ. Անտիոքի ժողովի կողմից ընդունված հանգանակային չորս բանաձևերին, որոնք էլ դարձան հակաՆիկեական ընդդիմության աստվածաբանական հիմնարար սկզբունքները:

Եկեղեցական պատմագրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ 341 թ. Անտիոքի ժողովի գործունեությունը բավականին տարողունակ է եղել և գործնականում ադերսվել ներեկեղեցական կյանքի բոլոր ոլորտներին: Եվ չնայած դրան, հանրաճանաչ է, որ ժողովական գործունեության առանցքը կազմել են կանոնական և դավանաբանական հարցերը, որոնց վերաբերյալ ժողովն ընդունել է համապատասխան որոշումներ⁵:

Իր բովանդակային ուղղվածությամբ, ներքին տրամաբանությամբ և աշխարհայացքային նպատակամղվածությամբ Անտիոքի 341 թ. ժողովը յուրահատուկ ռեակցիա էր IV դարի 30-ական թվականների դոգմատիկական որոնումների նկատմամբ և այդ առումով այն պետք է համարել իր դարաշրջանի հոգևոր պահանջմունքների օրինաչափ արդյունքը: Այդ համատեքստում անընդունելի պետք է համարել մասնագիտական գրականության մեջ շրջանառվող և փաստական հիմնավորում չունեցող այն տեսակետը, թե Անտիոքի 341 թ. ժողովը հանդիսանում է Նիկեականության դեմ արիոսական հոսանքի բացահայտ ընդվզումը⁶: Ճիշտ է, ժողովի մասնակիցների թվում եղել են նաև նախկին արիոսականներ, իսկ Եվսեբիոս Նիկոմեդացու կողմնակիցները կանգնած են եղել ժողովականների առավել ակտիվ հատվածի շարքերում, սակայն իրականությունն այն է, որ ժողովական գործիչների բացարձակ մեծամասնությունը կազմել են ընդգծված հակաարիոսական դիրքորոշում ունեցող պահպանողական եպիսկոպոսները:

Այդ տեսանկյունից պետք է նշել նաև, որ իրականում Անտիոքի 341 թ. ժողովները պայմանավորված են եղել նաև հետնիկեական դոգմատիկական վիճաբանությունների հարուցած խնդիրներով: Խոսքն ամենից առաջ վերաբերում է Մարկելոսի և մարկելականության ջանքերով հրապարակ իջած առանցքային հիմնահարցի՝ Նիկեական Հավատքային հիմնարար սկզբունքների մեկնությանը (սահմանների ճշգրտմանը): Հայտնի է, որ մարկելականությունն իրենով հավատքային խոր ճգնաժամ նշա-

⁵ Թեև բազմաթիվ աստվածաբաններ և եկեղեցագետներ համարում են, թե Անտիոքի 341 թ. ժողովի կանոնական որոշումներն ուղղված էին Աթանաս Ալեքսանդրացու դեմ և մեծապես նպաստեցին նրա երկրորդ աքսորին, սակայն այդ մոտեցումը զուրկ է փաստական հիմնավորումից և էական ճշգրտումների կարիք ունի:

Այդ տեսակետի չհիմնավորված բնույթի մասին է վկայում և այն փաստը, որ Անտիոքի 341 թ. ժողովի կանոնական որոշումներն ինչպես քրիստոնեական Արևելքում, այնպես էլ՝ Արևմուտքում, անփոփոխ ձևով ներառվել են Քաղկեդոնական Եկեղեցու կանոնական ժողովածուներում և համարվել «Մուրբ Հայրերի» կանոններ: Հատկանշական է և այն, որ Հիլարիոս Պուատիեցին 341 թ. Անտիոքի ժողովը համարում է «Սբերի ժողով» («assembly of Saints» լատ.՝ «synodus sanctorum»): St' u St. **Hilary of Poitiers**. De Synodis. In: **Nicene and Post-Nicene Fathers** (ed. by Philip Schaff and Henry Wace). V. 9 (sec. print.), Peabody, Massachusetts, 1995, 32, p. 13. Հմմտ. **Migne J. P. PL**, s. t. X, p. 504.

⁶ Այս պարագայում հետազոտողների տեսադաշտից դուրս է մնացել և այն իրողությունը, որ Նիկեայի 325 թ. տիեզերական ժողովում դատապարտված արիոսականներ Եվսեբիոս Նիկոմեդացին, Թեոդոսիոս Նիկեացին և ուրիշներ հրապարակավ հրաժարվել և դատապարտել էին իրենց նախկին հայացքները: Այդ իսկ պատճառով էլ արևելյան եպիսկոպոսների մոտ նրանք «ուղղադավանության գիրկը վերադարձաների» համարում ունեին, որն ամրագրվել էր նաև «գլխավոր եպիսկոպոսների» կողմից նրանց Եկեղեցի վերադարձնելու փաստով:

նավորեց, և հակամարկելականությունը, հատկապես՝ արևելյան պահպանողական եպիսկոպոսները, դոգմատիկական այդ հերձվածների հարուցած կնճիռները հաղթահարելու ուղիների որոնումներում անփոփոխ կերպով հայացքն ուղղեցին դեպի Եկեղեցու «հնավանդ դավանանքը»:

Այդ տեսանկյունից Անտիոքի 341 թ. ժողովն արիոսական չէր և չէր կարող արիոսական լինել⁷: Ճիշտ կլինի ասել, որ այն պատկանում է ներկայացուցչական այն ժողովների թվին, որն իր կազմում ընդգրկել էր Արևելքի դոգմատիկական բոլոր հոսանքների ներկայացուցիչներին, այդ թվում նաև՝ նիկեականների⁸: Այս առումով լիովին ընդունելի է ռուս աստվածաբան և եկեղեցագետ Ա. Սպասկու այն տեսակետը, որ հետնիկեական առաջին տասնամյակների եկեղեցական ժողովներն արիոսական կամ ուղղադավան դասակարգելու ավանդական պրակտիկան Անտիոքի 341 թ. ժողովի պարագայում կիրառելի չէ: «Իրապես, այդ կապակցությամբ գրում է նա, այն ամենը, ինչ մեզ հայտնի է այդ ժողովի վերաբերյալ, ցույց է տալիս, որ այն ամենին էլ Եկեղեցուց դուրս գտնվող ինչ-որ կուսակցության գործ չէ, այլ հակառակը՝ ժողովը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի Արևելյան Եկեղեցին, արտահայտում վերջինիս հայացքներն ու հավատալիքները»⁹: Այդ մեկնակետից Անտիոքի 341 թ. ժողովներն իրապես հանդիսանում են քրիստոնեական Արևելքի պահպանողական աստվածաբանության հարազատ ծնունդը, որը գոյավորվել, սնվել ու ոգի էր առել այդ միջավայրում և գործնականում հանդես էր գալիս իբրև պահպանողական աստվածաբանության տրամաբանական ավարտը:

Կարծում ենք, չպետք է աչքաթող անել նաև Անտիոքի նշված ժողովի բնութագրական ևս մեկ առանձնահատկություն: Խոսքն առաջին հերթին վերաբերում է եկեղեցական պատմագրության և մասնագիտական վերլուծական գրականության մեջ շրջանցված այն իրողությանը, որ այդ ժողովի հավատքային գործունեության հիմքում ընկած է եղել նաև ջատագովության գործոնը: Դա թելադրված էր նրանով, որ Մ. Աթանաս Ալեքսանդրացու ազդեցությամբ համագոյության աստվածաբանությունը

⁷ Անտիոքի 341 թ. ժողովն արիոսական որակելն ունի իր նախապատմությունը: Այսպես, Սոզոմենոս պատմիչը պնդում է, թե նշված ժողովն արիոսականների (եվսեփականների) և նրանց համախոհների «ձեռքի գործն էր», որոնք իրականում նպատակ էին հետապնդում «նենգափոխել նիկեական սահմանումները»: Տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. III, гл. 5, с. 170: Քննարկվող հիմնահարցի նկատմամբ լիովին համահունչ է նաև Սոկրատես Սքոլաստիկոսի մոտեցումը: Նկարագրելով Եվսեփոս Նիկիմեդացու և նրա համախոհների գործունեությունը՝ պատմիչը հավաստում է, որ «նրանք թեև «չնախատեցին» նիկեական սահմանումները», այնուհանդերձ, համագոյության հավատքը մեկուսացնելու և փոխելու միտումով «Նիկեական Հանգանակը կերպափոխեցին և հակվեցին դեպի արիոսականություն»: Տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл. 8, с. 69, гл. 10, с. 70-71: Առանց պատշաճ քննական մոտեցման արժեքային այդ կողմնորոշումները հետագայում շրջանառության մեջ դրվեցին աստվածաբանների, եկեղեցագետների ու դոգմատիկայի պատմությամբ զբաղվող հետազոտողների կողմից: Այդ ավանդության ուղղակի շարունակողներից է նաև ռուս ականավոր եկեղեցագետ-աստվածաբան Վ. Վ. Բոլոտովը: Տե՛ս **Болотов В. В.** Лекции по истории древней Церкви. Т. 4, М., 1995, с. 55.

⁸ Սկզբնաղբյուրները վկայում են, որ Անտիոքի 341 թ. ժողովին մասնակցել են նաև «ուղղադավանության պոներ» համարվող Հակոբ Նիզիբիացին, Պողոս Նեոկեսարացին և Դիանոս Կեսարացին:

⁹ Տե՛ս Проф. **А. Спасский**. История догматических движений в эпоху Вселенских Соборов (в связи с философскими учениями того времени). Сергиев Посад, 1914, с. 314-315.

պաշտպանելու միտումով Հուլիանոս քահանայապետի գլխավորած Արևմտյան Եկեղեցին և, մասնավորապես, Հռոմի 340 թ. եպիսկոպոսական ժողովը «երրորդական դատավորի» կեցվածքով արևելյան եպիսկոպոսական դասին մեղադրեց արիոսականության մեջ: Սակայն հավատքային հիմնարար սկզբունքների նկատմամբ արևմտյան աստվածաբանական հայեցակարգերը ոչ միայն խիստ թերի էին (որի վկայությունը Մարկելոսի հերձվածող երրորդաբանության սրբագործումն էր), այլև չհամակարգված: Փոխադարձ մեղադրանքների ու արդարացումների հիման վրա «արևելյան ճգնաժամին» զուգընթաց հրապարակ իջավ նաև քրիստոնեական Արևելքի ու Արևմուտքի հակամարտությունը:

Աշխարհայացքային համակարգերին բնորոշ ճգնաժամային այդ իրավիճակի թելադրանքով էլ առաջին պլան մղվեց «ինքնապաշտպանության» հրամայականը: Իսկ վերջինիս տրամաբանական օրինաչափ արդյունքը հանդիսացան դոգմատիկական նոր փաստարկների որոնումները և, առհասարակ, «նորացման» ձգտումը, որը դիտարկվում էր իբրև հակամարտող դոգմատիկական հոսանքների հաշտեցման միակ ուղի: Եվ քանի որ հոգևոր ու հասարակական պայմանների ազդեցությամբ այդ միտումը ենթադրում էր ջատագովության «տարբեր ձևերի» (պահպանողական, նիկեական, հականիկեական և այլն) համեմատական արժեվորում, արևելյան եպիսկոպոսները պահպանողականության հենքի վրա ձեռնամուխ եղան վիճարկվող դոգմատիկական պատկերացումների քննական արժեվորմանն ու ճշգրտմանը:

Այդ ամենի օրինաչափ արդյունքն էլ հանդիսացան Անտիոքի 341 թ. ժողովի դոգմատիկական չորս բանաձևերը, որոնց տեքստերն ամբողջական տեսքով մեզ են հասել Ս. Աթանաս Ալեքսանդրացու քննական աշխատությունների շնորհիվ¹⁰:

Անտիոքի 341 թ. ժողովի դավանաբանական առաջին բանաձևը բովանդակային առումով բաժանվում է ներածական և բուն հավատքի շարադրման մասերի: Ներածական մասը բովանդակում է արևելյան եպիսկոպոսներին Հռոմի 340 թ. ժողովի կողմից առաջադրված մեղադրանքների պատասխանը, թեև պետք է նկատել նաև, որ այն միաժամանակ հանդիսանում է նաև արիոսականության նկատմամբ ժողովականների ընդհանրական վերաբերմունքի արտահայտությունը: Ներածական այդ մասում արևելյան եպիսկոպոսները հավաստում են հետևյալը. «Մենք Արիոսի հետնորդները չենք եղել, այլապես եպիսկոպոսներ լինելով ինչպե՞ս կհետևենք քահանային: Մենք որևէ այլ հավատ չենք դավանել, բացառությամբ նախապես տրվածից, ավելին, դառնալով նրա (Արիոսի՝ Ա. Ք.) հավատքի քննողն ու ստուգողն, ավելի շուտ նրան մերձեցրեցինք մեզ, քան հետևեցինք նրան, որի մասին կարող էք իմանալ մեր այս խոսքերից»:

Այնուհետև ժողովական Հայրերը շարադրում են բուն հանգանակային հետևյալ հատվածը. «Ի սկզբանե մենք սովորել ենք դավանել ամենակալ մի Աստծու, ամենայ-

¹⁰ St' u **Свт. Афанасий Великий**. Послание о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійском. Творения в четырех томах. Т. III, М., 1994, с. 118-122: Անտիոքի 341 թ. ժողովի դավանաբանական առաջին, երկրորդ և չորրորդ բանաձևերի տեքստերի լրամշակված տարբերակը պահպանվել է նաև Սոկրատես Սքոլաստիկոսի եկեղեցական պատմության մեջ: Իսկ Սոզոմենոս պատմիչի մոտ դրանք ներկայացվում են միայն պատմողական տեսքով: St' u **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл. 10, с. 71-72, гл. 18, с. 78-79; **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. III, гл. 5, с. 171-172.

նի արարչին ու նախախնամությանը և Աստծու Միածին Որդուն, որն էակից է իրեն ծնող Հորը, Որդուն, որով եղավ ամեն ինչ՝ երևելիներն ու աներևոյթները, որը Հայր Աստծու բարեհաճությամբ վերջին օրերին իջավ երկնքից, Կույսից մարմին առավ, կատարեց Հոր Կամքը, տառապեց, հարություն առավ, երկինք համբառնաց և նստեց Հոր աջ կողմում և դարձյալ գալու է դատելու կենդանիներին ու մեռյալներին և հավիտյանս կլինի Աստված ու Թագավոր: Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն: Եվ եթե հարկ է ավելացնել, ապա հավատում ենք նաև մարմնավոր հարությանը և հավիտենական կյանքին»¹¹:

Անտիոքյան առաջին բանաձևի բովանդակության վերլուծությունն ակնհայտ կերպով ցույց է տալիս, որ նրանում օգտագործվում են ավանդական (մինչնիկեական) աստվածաբանական բանաձևումները: Եվ չնայած այդ սահմանափակությանը, չի կարելի աչքաթող անել նաև նրանում տեղ գտած առանցքային երկու հիմնադրություններ: Դրանցից առաջինը «Որդի Աստված էակից է Հայր Աստծուն» բանաձևումն է, որը թե՛ բովանդակությամբ և թե՛ շարադրման ձևով կարելի է որակել և՛ «կատարյալ», և՛ ուղղադավան: Այդ բանաձևումը Նիկեական Հանգանակից գործնականում տարբերվում է միայն շարադրման ձևով, այսինքն՝ «հավատքային առումով մերձենում է համագոյության վարդապետությանը», թեև «չունի շարադրման հստակ տրամաբանություն և մտքի հստակ, սպառիչ տեսք»¹²: Այդ ամենն էլ թույլ են տալիս վստահորեն եզրակացնել, որ դավանաբանական բանաձևը շարադրելու այդ ձևն արևելյան եպիսկոպոսներն ընտրել էին սաբելականության և նրա արևմտյան դրսևորումներին հակադրվելու համար: Եվ երբ անտիոքյան Հայրերը պնդում են, որ «Որդի Աստված հավիտենապես կլինի Աստված և Թագավոր», ապա այդ հավատամքն օբյեկտիվորեն ուղղում էին ոչ միայն Մարկելոսի և մարկելականության, այլև արևմտյան երրորդաբանների դեմ, որոնք Հռոմի 340 թ. եպիսկոպոսական ժողովում Մարկելոսի հերետիկոսական երրորդաբանությունն ուղղադավան էին հռչակել՝ ծնելով այն տպավորությունը, թե «համագոյություն» տերմինն Արևմուտքում օգտագործվում էր սաբելական նշանակությամբ¹³:

Վավերագրերի քննական վերլուծությունը ցույց է տալիս, որ դավանաբանական առաջին բանաձևն իր նկարագրական բնույթով բնավ չի բավարարել ժողովական եպիսկոպոսներին: Այդ իսկ պատճառով էլ նրանք ձեռնամուխ են եղել աստվածաբանական-երրորդաբանական նոր քննարկումների, որի հենքի վրա էլ հրապարակ իջավ «Ղուկիանական Հանգանակ» անվամբ պատմությանը հայտնի Անտիոքի երկրորդ բանաձևը:

Նրանում մասնավորապես հաստատվում է հետևյալը. «Ավետարանական և ա-

¹¹ **Свт. Афанасий Великий.** Послание о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійскомъ, с. 118; **Сократ Схоластик.** Церковная история, кн. II, гл. 10, с. 71.

¹² Տե՛ս **Карташев А. В.** Вселенские соборы. М., 2002, с. 66; Проф. **А. Спасский.** История догматическихъ движений в эпоху Вселенскихъ Соборовъ (в связи с философскими учениями того времени), с. 319.

¹³ Ռուս եկեղեցագետ և աստվածաբան Ս. Կարտաշևն այդ առումով գրում է. «Հոմեոացիները «conessentialis» տերմինը չէին օգտագործում, այդպիսի բառ չունեին, նրանք օգտագործում էին «consubstantialis» (essential-ն = ουσια, substantia-ն՝ բառացի ὑπόστασις): Հետևաբար, արևելյան լողողության համար «conessentialis»-ը հնչում էր իբրև «համադեմ», այսինքն՝ Հոր հետ նույն դեմքն ունեցող, ինչը կատարյալ սաբելականություն էր, մարուր հերետիկոսություն»: Տե՛ս **Карташев А. В.** Вселенские соборы, с. 66.

ռաքելական ավանդությունների համաձայն հավատում ենք մի Հայր Աստծու, Ամենակալին, ամենայնի Ստեղծողին և Արարչին, որով եղավ ամեն ինչ: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծու Որդուն, Միածին Աստծուն, որով եղավ ամենայնը, որը հավիտենականությունից առաջ ծնվել է Հորից, Աստված է՝ Աստծուց, ամբողջություն՝ ամբողջությունից, միակը՝ միակից, Կատարյալը՝ Կատարյալից, Արքա՝ Արքայից, Տեր՝ Տիրոջից, կենաց Բանին, կենաց Իմաստությանը, ճշմարիտ Լույսին, ճանապարհին, ճշմարտությանը, հարությանը, Հովվին, դռանը, անեղին ու անփոփոխին, Հայր Աստծու Աստվածությունից չզանազանվող պատկերին, Հայր Աստծու ուժին, կամքին և փառքին, արարվածների առաջնածնին, որն իբրև գոյ նախապես եղել է Աստծու մոտ, Ավետարանական *և Բանն Աստուած էր* (Հովհ. Ա 1) ասության Աստված-Բանին, *որով ստեղծվեց ամեն բան և որի մեջ էր ամենայնը*, որը վերջին օրերին իջավ երկնքից, ըստ գրության ծնվեց Կույսից, մարդացավ դարձավ Աստծու և մարդկանց միջև միջնորդ, մեր հավատքի առաքյալ, կյանքի ղեկավար (ինչպես Ինքն է ասում՝ *ես իջա երկնքից, որ ոչ թե իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը* (Հովհ. Զ 38), որը հանուն մեզ չարչարվեց, երրորդ օրը հարություն առավ, երկինք համբառնաց և նստեց Հոր աջ կողմում, և փառքով ու ուժով գալու է ապագայում՝ դատելու կենդանիներին ու մեռյալներին: Եվ Սուրբ Հոգուն, որը հավատացյալներին տրվեց կատարյալ դառնալու և օծվելու համար, ինչպես որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը պատվիրեց առաքյալներին, ասելով. *ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով* (Մատթ. ԻԸ 19), այսինքն՝ Հոր՝ ճշմարիտ գոյ Հոր, Որդու՝ ճշմարիտ գոյ Որդու և Սուրբ Հոգու՝ ճշմարիտ գոյ Սուրբ Հոգու, այնպես որ դրանք ունայն անուններ չեն, այլ ճշմարտապես ցույց են տալիս իրենց էությունը (ὁμοούσιος-ը՝ Ա. Ք.), Փառքն ու Կարգը, այնպես որ նրանք էությամբ (ὁμοούσιος-ով) երեքն են և Համաձայնությամբ՝ Մեկը¹⁴:

Դժվար չէ համոզվել այն բանում, որ Անտիոքի 341 թ. ժողովի դավանաբանական երկրորդ բանաձևն իր ամբողջության մեջ ընդգծված հակաարիոսական երանգավորում ունի: Այդ եզրահանգման վկայությունն այն է, որ դավանագրում Հայր և Որդի Աստված բնութագրվում են աստվածաբանական նույնական («Աստված», «կատարյալ», «Արքա», «Տեր» և այլն) տերմիններով: Իսկ դրանից հետևում է, որ «Ղուկիանոսի Հանգանակում» Հայր և Որդի Աստված էական հատկանիշներով մերձեցնում են, այլ ոչ թե տարանջատվում, ինչպես արիոսական հակաերրորդաբանության մեջ: Այդ համատեքստում պետք է կարևորել չափազանց էական մի այլ իրողություն ևս: «Ղուկիանոսի Հանգանակի» երրորդաբանական ուղղվածության բնութագրիչներից պետք է համարել նաև այն բանադրանքները, որոնցով անտիոքյան Հայրերն իրենց տարանջատում են արիոսականությունից և, հիմք ընդունելով դավանագրի աստվածաբանական մասը, հռչակում են. «Ընդունելով այդ հավատքը և սկզբից մինչև վերջ դավանելով Աստծու և Հիսուս Քրիստոսի առջև՝ բանադրում ենք հերետիկոսական ամեն մի չարամտություն: Եվ եթե որևէ մեկն ի հակադրություն Աստվածաշնչի առողջ ու ուղիղ հավատքի սովորեցնում է՝ ասելով, թե Որդու ծնունդից առաջ եղել կամ իրականացել են ժամանակներ կամ դարեր, նգովյալ լինի: Եվ եթե մեկն ասի, որ Որդին արարած է կամ արարվածներից մեկն է, կամ իբրև ծնունդ՝ ծնունդներից մեկն է, կամ

¹⁴ **Свт. Афанасий Великий.** Послание о соборахъ, бывшихъ въ Ариминѣ италійскомъ и въ Селевкіи исаврійскомъ, с. 118: Հմմտ. **Сократ Схоластик.** Церковная история, кн. II, гл. 10, с. 71-72.

ել՝ ստեղծվել է և ոչ այնպես, ինչպես մեզ ավանդվել է աստվածային գրքերով և ինչպես հաջորդաբար նշվել է վերը (Հանգանակում՝ Ա. Ք.), կամ եթե սովորեցնում է կամ ավանդում ի հակադրություն այն ամենի, ինչը մենք ընդունել ենք՝ նգովյալ լինի: Քանի որ այն ամենն, ինչն աստվածային Գրքերում ավանդվել է Մարգարեների և Առաքյալների կողմից, իրական երկյուղածությամբ դավանվում է մեր կողմից, և մենք հետևում ենք դրանց¹⁵:

Բայց պետք է նաև հայտնի վերապահում կատարել այն կապակցությամբ, որ վերջին հաշվով «Ղուկիանոսի Հանգանակը» մեկ ամբողջ քայլ նահանջ է համագոյության աստվածաբանության համեմատությամբ: Այդ տեսանկյունից լիովին անընդունելի պետք է համարել մասնագիտական գրականության մեջ տարածված այն տեսակետը, թե «Ղուկիանոսի Հանգանակը» հանդիսանում է Նիկեական հանգանակի յուրօրինակ «կրկնությունն»՝ այն տարբերությամբ միայն, որ նիկեական «համագոյություն» եզրը փոխարինվում է «համանմանություն (ըստ ամենայնի նման)» եզրով: Իրենց մոտեցումը փաստարկելու միտումով՝ այդ տեսակետի կողմնակիցները վկայակոչում են ընդհանրական Հայրերից մեկի՝ Բարսեղ Կեսարացու այն պնդումը, թե «իբրև Էակ՝ Հայր Աստծու Աստվածությունից չզանազանվող պատկերին» բանաձևումը նշանակում է, որ «Որդի Աստծու էությունն անբաժան է Հայր Աստծու էությունից», և որ այս պարագայում Հայր և Որդի Աստծու էական հատկանիշների վերաբերյալ անտիոքյան վարդապետությունը հանգում է «բացարձակ նույնության» գաղափարին, ինչն էլ հիմնական բնութագրիչների տեսանկյունից մերձեցնում է «համագոյության աստվածաբանությանը»:

Սակայն այդ մոտեցումն ամենին էլ չի կարելի համարել մինչև վերջ հիմնավորված: Բանն այն է, որ «համագոյություն» և «համանմանություն» եզրերի փոխհարաբերության և իմաստային սահմանների մասին ուղղադավան վարդապետությունը հայեցակարգային առումով տարանջատվում է վերը հիշատակված պնդումից: Այդ իրողության վկայությունն է հանդիսանում «համագոյություն» և «համանմանություն» եզրերի ուղղադավան ըմբռնման և մեկնության Ս. Աթանաս Ալեքսանդրացու հայեցակարգը: Այդ վարդապետության օրգանական շարունակությունը համարվող Բարսեղ Կեսարացու երրորդաբանական համակարգում ևս հիմնավորվում է այն տեսակետը, թե «էությամբ նույնական» արտահայտությունը եթե կապված է «անբաժանելի» հասկացության հետ, պետք է համարել այնպիսի արտահայտություն, որը տանում է դեպի «համագոյություն» հասկացությանը¹⁶:

Բայց եթե ելակետային համարվի միայն պարզ նույնության գաղափարը (որն անպայմանորեն ենթադրում է նաև տարբերություն), ապա քննարկվող աստվածաբանական եզրերի մեկնության եկեղեցական Հայրերի ուղղադավան աստվածաբանական լուծումները բովանդակային տեսանկյունից կարող են հակադրվել (որոշ սահմաններում՝ նույնիսկ տրամագծորեն) «Ղուկիանոսի հանգանակին»: Այդ եզրահանգումը հենված է մի շարք ազդեցիկ փաստերի վրա: Նախ հարկ է մատնանշել, որ Նիկեական և Ղուկիանոսի Հանգանակները գոյավորվել են տրամագծորեն հակադիր

¹⁵ **Свт. Афанасий Великий.** Послание о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійскомъ, с. 120:

¹⁶ St' u **Epist.** ad Maximum // **Migne J. P.** Patrologiae cursus completus. Series Graeca (այսուհետ՝ **PG**). T. XXXII, Paris, 1865, cap. 1, p. 269, 272.

աստվածաբանական հենքի վրա: Մասնավորապես Նիկեական հանգանակը հանդիսանում է II-III դարերի հակաերրորդաբանական զանազան հերձվածների և հոսանքների դեմ ուղղադավան աստվածաբանության պայքարի ընդհանրացված արդյունքը: Իսկ «Ղուկիանոսի Հանգանակը» հականիկեական ընդդիմության ջանքերով աստվածաբանական վիճաբանությունների ասպարեզ է ներթափանցել Ընդհանրական Եկեղեցու կողմից մերժված ստորակարգության (սուբորդինատիզմի) վարդապետության հենքի վրա և հետապնդել մեկ հիմնական նպատակ՝ սահմանափակել (կարելիության սահմաններում՝ շրջանառությունից հանել) համագոյության երրորդաբանական աստվածաբանությունը: Եվ երկրորդ, չնայած արտաքին ընդհանրություններին, ակնհայտ է նաև, որ այդ երկու Հանգանակներն սկզբունքորեն տարբեր մոտեցումներ են դրսևորում երրորդաբանության համար հիմնարար նշանակություն ունեցող Հայր և Որդի Աստծո փոխհարաբերության հիմնահարցի աստվածաբանական լուծման շրջանակներում:

Ուղղադավան և դուկիանոսական ըմբռնումների միջև նշված տարբերություններն ակնհայտ կերպով կարող են ի հայտ գալ դրանց բաղդատական վերլուծության պարագայում: Այդ նպատակով անդրադառնանք երկու հանգանակներում առկա առանցքային նշանակություն ունեցող հավատքային հիմնադրույթների համեմատական արժեվորմանը:

Նիկեական Հանգանակ

«Ղուկիանոսի Հանգանակ»

«Հավատում ենք ... մի Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, ծնված Հայր Աստծուց՝ միածին, այսինքն՝ Հոր Էությունից ... ծնունդ և ոչ արարած, նույն ինքը՝ Հոր բնությունից

Հավատում ենք մի Հիսուս Քրիստոսի, Միածին Որդուն (Աստծու) ... որ հավիտենականությունից առաջ ծնվել է Հորից, ... Հայր Աստծու Աստվածությունից չզանազանվող պատկերին «

Ակնհայտ է, որ Նիկեական Հանգանակում շեշտադրվող Հայր և Որդի Աստծու «համագոյությունը» «Ղուկիանոսի Հանգանակում» վերաշարադրվում է իբրև Հայր և Որդի Աստծո «համանմանություն»: Ինչպես արդեն ցույց է տրվել, ուղղադավան աստվածաբանության դիրքերից այդ եզրերի միջև հավասարության նշան կարող է դրվել միայն մեկ դեպքում, երբ «համանմանություն» եզրն օգտագործվում է «անբաժանության» ըմբռնման դիրքերից: «Ղուկիանոսի Հանգանակում» բացակայում է «համանմանության» ուղղադավան ըմբռնումը, քանի որ աստվածաբանական առումով չի մեկնաբանվում, թե Հայր և Որդի Աստծո ո՞ր հատկանիշներն են նման:

Էական ևս մեկ առարկություն: Եթե «Ղուկիանոսի Հանգանակն» իրապես հանդիսանում է Նիկեական Հանգանակի «կրկնությունը», ապա դոգմատիկական ըմբռնման տեսանկյունից միանգամայն անհասկանալի է, թե ինչ նպատակ է հետապնդել Նիկեական Հանգանակի «վերաշարադրումը»: Երրորդաբանական հիմնահարցերի տեսանկյունից չպետք է աչքաթող անել չափազանց բնութագրական մի այլ առանձնահատկություն ևս: Եթե Նիկեական Հանգանակը հռչակում է Աստվածային երրորդության համագոյությունը, ապա «Ղուկիանոսի Հանգանակում» ոչ միայն մոռացութե-

յան է տրվում ուղղադավանության համար առանցքային նշանակություն ունեցող այդ պարագան, այլև փորձ է արվում հավատքային այդ հիմնահարցը «վերաշարադրել» հականիկեական, ավելի ճիշտ կլինի ասել՝ մինչնիկեական երրորդաբանության աստվածաբանական ավանդույթներով¹⁷: Ընդ որում, այդ նպատակին հասնելու համար անտիոքյան Հայրերն օգտագործում են Ուղղադավան Եկեղեցու կողմից արդեն մերժված «երրորդաբանական ստորադասության» մեթոդաբանությունը:

Այդ եզրահանգման իրավագործությունը միանգամայն ակնառու կերպով երևում է երկու Հանգանակներում երրորդաբանական առանցքային նշանակություն ունեցող հետևյալ դրույթների բաղդատականի արդյունքում.

Նիկեական Հանգանակ

«Ղուկիանոսի Հանգանակ»

«Հավատում ենք մի Աստծո՝ Ամենակալ Հորը, ... և մի Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, ... և Սուրբ Հոգուն»

«... Հայրն իրական Հայր է, Որդին՝ իրական Որդի, և Սուրբ Հոգին՝ իրական Սուրբ Հոգի: Դրանք ունայն անուններ չեն, այլ ճշմարտապես ցույց են տալիս իրենց էությունը և հավասարապես՝ Փառքն ու Կարգը»

Ավելի քան ակնհայտ է, որ «Ղուկիանոսի Հանգանակում» երրորդության ուղղադավան աստվածաբանությանը հակադրվում է երրորդության անձերի «փառքի» ու «կարգի» վարդապետությունն, այլ կերպ ասած՝ նիկեական համագոյության աստվածաբանությունն ուղղակի փոխարինվում է մինչնիկեական աստվածաբանական ստորադասության վարդապետությամբ, ինչն անառարկելի վկայությունն է այն բանի, որ անտիոքյան երկրորդ բանաձևը ևս հանդիսանում է մինչնիկեական երրորդաբանության դոգմատիկական նրբին բանաձևումներից մեկը:

¹⁷ Այդ տեսանկյունից լիովին ընդունելի է ռուս աստվածաբան Ա. Սպասկու արժեքային այն մոտեցումը, թե աստվածաբանական լուծումների և ձևակերպումների տեսանկյունից «Ղուկիանոսի Հանգանակը» հանդիսանում է մինչնիկեական երրորդաբանության բարձրակետը: Проф. А. Спасский. История догматических движений в эпоху Вселенских Соборов (в связи с философскими учениями того времени), с. 319.

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ. Իշխանապետությունից թագավորություն

Կիլիկիայի աշխարհագրական դիրքը, բնաշխարհը և բնակիչները

Կիլիկիան գտնվում է Փոքր Ասիայի հարավ-արևելքում, Հայկական լեռնաշխարհի հարևանությամբ: Այն տարածվում է Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափերին՝ Տավրոսի, Անտիտավրոսի և Ամանոսի (կամ Սև) լեռնաշղթաների ծովի հետ կազմած եռանկյունում: Կիլիկիան արևմուտքում սահմանակից էր հռոմեական աշխարհագրական բաժանումներից հայտնի Պամփյուլիային և Պիսիդիային, հյուսիսում՝ Լիկաոնիային և Կապադովկիային, հյուսիս-արևելքում՝ Կատաոնիային, Կոմագենեին, իսկ արևելքում և հարավում՝ Հյուսիսային Ասորիքին: Տավրոսյան լեռնաշղթան իր բազուկներով երկրամասը հյուսիսից տարանջատում էր Կապադովկիայից և Փոքր Հայքից, իսկ Ամանոսը՝ Հյուսիսային Ասորիքից: Երբեմնի Կիլիկիայի հայկական պետության կազմի մեջ են եղել նաև Բսավրիան (Մելնկիա կենտրոնով) և Մերձեփրատյան մարզը (Մարաշով և Հռոմկլայով):

Նախապատմական ժամանակներից Կիլիկիան խաչմերուկի դեր էր կատարում Արևելքը Արևմուտքի հետ կապող ծովային և ցամաքային ճանապարհների կենտրոնում: Երկրամասի մասին պատմում են հունական առասպելները, իսթական, եգիպտական և ասորեստանյան հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունները, հունարեն, լատիներեն, արամեերեն, ասորերեն, արաբերեն, հայերեն, վրացերեն, թուրքալեզու վիմագիր հուշարձանները¹, հունալատինական, ասորական, եբրայական, հայկական, արաբական, պարսկական, օսմանյան մատենագրական երկերը:

Մարաշից արևմուտք սկսվում է կիլիկյան Տավրոսը, որի լեռնաբազուկներն այսօր անվանվում են Բոլկարյան² («բուլղարների» կամ «ցլի»³), Դյուբելեկի⁴ («թմբուկի»), Ալայի («խայտաբղետ») և Բակր («պղնձյա») լեռներ: Այդ լեռնազանգվածների բարձրությունը երբեմն գերազանցում է 3000 մետրը և հյուսիսից պաշտպանում է Միջերկրական ծովի արևելյան ափերը: Մարաշի (հին՝ Գերմանիկե) մոտից, հարավային

¹ Հրապարակվել է միայն երկրամասի հունարեն արձանագրությունների ամբողջական դիվանը (Dagron G. et Feissel D., Inscriptions de Cilicie, Paris, 1987): Մյուս լեզուներով արձանագրությունների հրապարակումները ցրված են զանազան հրատարակություններում: Դրանց մասին քիչ թե շատ ամբողջական պատկերացում կարելի է կազմել Վիեննայի բյուզանդագիտական դպրոցի կողմից հրատարակված Tabula Imperii Byzantini (այսուհետև՝ TIB, 5) շարքի Ե հատորում հրապարակված Hild F. und Hellenkempfer H., Kilikien und Isaurien, Wien 1990, т.1 և 2 հանրագիտարանային երկհատորյակի մատենագիտությունից: Տե՛ս նաև Ա. Բոզոյան, Կիլիկիա երկրամասի հունարեն և լատիներեն արձանագրությունների նորագույն հրատարակություններ. – ՊԲՀ, 1991, 2 (133), էջ 216-220:

² Ամենաբարձր գագաթը՝ 3586 մ:

³ Տավրոսի հունարեն բացատրությունն է:

⁴ Ամենաբարձր գագաթը՝ 3756 մ:

ուղղությամբ Տավրոսից անջատվում է Ամանոսը (Սև լեռներ)⁵, որը միանում է Իսուսի կամ Հայոց ծովածոցի հարավ-արևելյան ափին՝ երբեմն բարձրանալով ավելի քան 2000 մետր: Հիշատակված լեռնային զանգվածները կազմելով Կիլիկիայի բաղկացուցիչ մասը, գիտական գրականության մեջ ստացել է Լեռնային Կիլիկիա անվանումը: Տավրոսի լեռները՝ հյուսիսից և արևմուտքից, Ամանոսը՝ արևելքից, իսկ Միջերկրական ծովը հարավից երիզում են եռանկյունի հիշեցնող մի դաշտավայր՝ Փոքր Ասիա թերակղզու քարտեզի վրա կանաչ ներկված հազվագյուտ տարածքներից մեկը, որ տարբեր հեղինակների մոտ և տարբեր դարաշրջաններում կոչվել է Դաշտային կամ Հարթավայրային (Pedias) Կիլիկիա, Ադանայի կամ Տարսոնի դաշտավայր: Տավրոսի արևմտյան լանջերից սկիզբ է առնում Իսավրիան (Մելնկիա կենտրոնով), որի արևմուտքում գտնվող Անամուռ ամրոցը ժամանակին կազմել է Կիլիկիայի հայկական պետության տարածքի արևմտյան սահմանակետը:

Հայկական Կիլիկիայով հոսում են **Կալիկադոնոս** (Մելնկիոյ գետ), **Կյուդոնոս** (Տարսոնի գետ), **Սարոս** (Սիհուն) և **Պիռամոս** (Ջահան) գետերը, որոնք իրենց բերած տիղմով ապահովում էին երկրամասի արգասաբերությունը: Նրանք սկիզբ են առնում Տավրոսի և Անտիտավրոսի լեռներից և ժամանակի ընթացքում ձևափոխել են ծովափի ուրվագիծը և փոխել գետերի հունը: Կիլիկիայի ջրառատ գետերի վրա այսօր էլ տեսանելի են հին կամուրջների բազմաթիվ հետքեր: Այդ գետերի հովիտներում հնուց ի վեր հաստատվել են բնակատեղիներ: Կիլիկիայի հայկական թագավորության շրջանում այդ գետերն իրենց ստորին հոսանքներում դեռևս նավարկելի էին և նավահանգիստներում հյուրընկալում էին միջին մեծության առևտրական և ռազմական թիանավեր⁶: Գետահովիտներում, մանավանդ ստրատեգիական կարևորություն ունեցող բնակավայրերի մոտակայքում այսօր էլ նկատելի են ամբարտակներ, որոնք կարգավորում էին գետերի ընթացքը և հավանաբար ունեին տնտեսական ու ռազմական նշանակություն:

Կիլիկիա կարելի էր մտնել միայն մի քանի կիրճերով, որոնք ամրացված էին անառիկ բերդերով ու ամրոցներով: **Տավրոսյան** լեռներում ամենանշանավորը **Դրունք Կիլիկիո** (Կուկլակի կամ Լուկուայի կապան) կիրճն էր: Այստեղով էր անցնում ցամաքային նշանավոր ճանապարհներից մեկը դեպի Փոքր Ասիայի խորք և Կոստանդնուպոլիս: Կիլիկիայի հյուսիսում գտնվող Կոկիսոնի կիրճով ճանապարհները տանում էին դեպի Փոքր Հայք, Կապադովկիա և Մեծ Հայք: Իսկ **Ամանոսյան** լեռներում գտնվող Կիլիկիայի հարավ-արևելյան դարպասը երկիրը կապում էր Ասորիքի, Պաղեստինի և Միջագետքի հետ՝ ճանապարհ բաց անելով դեպի Հալեպ (Բերդյա), Անտիոք և Երուսաղեմ: Այս կիրճն անվանվում էր **Դուռն Ասորւոց** կամ **Դրունք Անտիոքայ**: Այն պաշտպանում էր Բադրաս (Պադրաս կամ Գաստոն) ամրոցը: Հին ժամանակներում Կիլիկիայով էին անցնում նաև Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան նավահանգիստներից դեպի Փոքր Ասիա, Կովկաս, Միջագետք, Իրան, Կենտրոնական և Հեռավոր Արևելք, երբեմն նաև Արաբական թերակղզի տանող գլխավոր ցամաքային ճանապարհները:

⁵ Ամենաբարձր գագաթը՝ 2260 մ:

⁶ Դարերների և գաղերների (ղալա) հիշատակություններ կան նաև հայկական միջնադարյան սկզբնաղբյուրներում (տե՛ս Մանր ժամանակագրություններ. ԺԳ-ԺԴ դդ., հտ. Բ / կազմեց Վ. Ա. Հակոբյան, Եր., 1956, էջ 684):

Կիլիկիայի քաղաքական և տնտեսական կյանքում վիթխարի նշանակություն ունեցող Միջերկրական ծովը: Արտաքին աշխարհի հետ կիլիկյան Հայաստանը կապող հիմնական առևտրական ճանապարհները դեպի Ալեքսանդրիա, Կոստանդնուպոլիս, Վենետիկ, Ջենովա ու Պիզա անցնում էին ծովով: Միջերկրական ծովի հյուսիսարևելյան անկյունում գտնվող Իսոսի կամ Ալեքսանդրիայի ծովածոցն ըստ Ղևոնդ Ալիշանի կոչվում էր նաև **Հայոց ծով կամ ծոց**⁷: Նրա ամերին էին գտնվում ԺԲ-ԺԴ դարերի համաշխարհային առևտրի ամենանշանավոր նավահանգիստներից երեքը՝ Այասը⁸, Կոռնիկոսը⁹ և Ալեքսանդրետը¹⁰:

Կիլիկիան, ըստ հին պատմիչների և աշխարհագիրների, հնուց ի վեր բաժանվում էր բնակլիմայական պայմաններով միմյանցից տարբեր երեք գոտիների. **Քարուտ**, **Լեռնային** և **Դաշտային**: Քարուտ (Tracheia) Կիլիկիան հնում անվանվում էր նաև **Իսավրիա**, որի մայրաքաղաքն էր Սելևկիան: **Դաշտային** (Pedias) Կիլիկիան, Տարսուս¹¹ մայրաքաղաքով, գտնվում էր Տավրոսյան լեռների ստորոտին և ձգվում էր մինչև Միջերկրական ծով: Դ դարում, ըստ Կոստանդին Մեծի վարչատարածքային բաժանումների, ստեղծվեցին Առաջին, Երկրորդ և Երրորդ Կիլիկիաները, որոնց մայրաքաղաքներն էին համապատասխանաբար Տարսուսը, Անավարզան¹² և Սելևկիան¹³: Այս քաղաքները հետագայում Անտիոքի բյուզանդական (կամ մելկիտ) պատրիարքությանը ենթակա եպիսկոպոսական նստավայրեր էին: Վարչական այս բաժանումների հետքերը նշմարվում են նաև հայկական թագավորության շրջանում: **Լեռնային** (մասամբ նաև **Դաշտային** Կիլիկիան) ԺԲ դարի նշանավոր մատենագիր, Տարսուսի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին իր կազմած «Պատճառ խնդրոյ Միաբանութեան» ժողովածոյում անվանում է նաև **Գահ Կիլիկիոյ**¹⁴: Տարածաշրջանը դարերի ընթացքում հաճախ ենթարկվել է ահեղ երկրաշարժերի ավերածությանը: Կիլիկյան հայկական իշխանապետությունների և թագավորության գոյության շրջանում դրանցից ամենաաղետալին 1269 թ. երկրաշարժն¹⁵ էր, որը փլատակների վերածեց բազմաթիվ ծաղկուն բնակավայրեր և հոգևոր-եկեղեցական հաստատություններ:

Կիլիկիայի լեռները հարուստ էին բնական հանածոներով: Տավրոսի և Ամանոսի լեռները հանրահայտ էին կապարի, երկաթի ու պղնձի հարուստ հանքավայրերով: Այստեղ հայտնաբերվել է նաև արծաթ և ոսկի: Տավրոսի և Ամանոսի լեռների միջև գտնվող Մարաշի (կամ Գերմանիկեի) հարթավայրը հարուստ էր բուժիչ ջերմուկներով, իսկ Դաշտային Կիլիկիան՝ բարձր որակի աղով:

Կիլիկիայում առկա են կլիմայական գրեթե բոլոր գոտիները՝ մերձարևադարձա-

⁷ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Միսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 1:

⁸ Սկզբնաղբյուրներում նաև Էգեա, Այազցո (տե՛ս TIB, 5, S. 160-164):

⁹ Սկզբնաղբյուրներում նաև Քուրքուս, Գոռիգոս (TIB, 5, S. 315-320):

¹⁰ Սկզբնաղբյուրներում նաև Ալեքսանդրիա, Սկանդերունա (TIB, 5, S. 170-172):

¹¹ Սկզբնաղբյուրներում նաև Տարսուս, Թարսուս (TIB, 5, S. 428-439):

¹² Սկզբնաղբյուրներում քաղաքն անվանվում է նաև Անարզաբա (TIB, 5, S. 178-185):

¹³ Սկզբնաղբյուրներում քաղաքն անվանվում է նաև Սալեֆ (տե՛ս TIB, 5, S. 402-406):

¹⁴ Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, յերուսաղէմ, 1871 (այսուհետև՝ ՊԽՄ), էջ 86:

¹⁵ Այս ահավոր երկրաշարժի գործած ավերածություններին իր հիշատակարանում անդրադառնում է Գրիգոր Գրիչը (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 379):

յինից մինչև ալպիական մարգագետինները: Դաշտային Կիլիկիայում ցրտաշունչ ձմեռ գրեթե չի լինում, մինչդեռ շրջակա լեռները ծածկված են հավերժական ձյունով: Աշնանը, ձմռանը և գարնանը երկրամասում տեղումների քանակն անհամեմատելի է ամառային, հաճախ չորային եղանակի հետ: Ամռանը կիլիկյան Դաշտավայրում անտանելի շոգ է լինում, Ասորիքից և Եգիպտոսից փչում են չոր խորշակներ, իսկ ընդարձակ ճահճային տարածությունները տենդի աղբյուր են դառնում բնակչության համար: Օրվա ջերմաստիճանը բարձրանում է մինչև 45 աստիճան¹⁶: Ճյուղավորված գետերի խիտ ցանցը բնակչությանը հեռու է պահել ջրանցքներ կառուցելու աշխատատար հոգսից: Արարատյան դաշտավայրում և ընդհանրապես հայկական լեռնաշխարհում աճող մրգերից բացի, Կիլիկիայի բարեբեր դաշտավայրերում հասունանում էին նաև մերձարևադարձային պտուղներ՝ արմավ, ձիթապտուղ, թուզ և ցիտրուսներ: Կիլիկիայում պատրաստված խաղողի գինին մեծ պահանջարկ էր վայելում հարևան երկրամասերում: Մեծ համբավ ունեին Կիլիկիայի ցորենն ու գարին, որոնց նշանակալի մասն առաքվում էր Փոքր Ասիա, Ասորիք և Միջերկրականի այլ բնակավայրեր: ԺԸ-ԺԹ դդ. իր հատկություններով հռչակված էր Կիլիկիայում աճող բամբակը:

Երկրամասը հարուստ էր թավ ու սաղարթախիտ անտառներով: Ամանոսյան լեռներից արտահանվող մայրու փայտն օգտագործվում էր նավաշինության մեջ ու դարեր շարունակ մեծ համբավ էր վայելում Ասորիքում, Պաղեստինում և Եգիպտոսում: Կիլիկիան անհիշելի ժամանակներից բնափայտի արտահանման համաշխարհային կարևորագույն կենտրոններից էր:

Որսորդությունը երկրամասի բնակիչների կարևորագույն զբաղմունքներից մեկն է եղել: Միջնադարում այն ազնվականական դասի մենաշնորհն էր: Այսօր էլ Կիլիկիայի անտառներում և լեռներում կարելի է հանդիպել վայրի այծյամի, վիթի, եղնիկի, արջի, աղվեսի, գայլի, առյուծի, ինձի, բորենու, լեռնային արծվի և անգղի: Լեռնային և դաշտային փարթամ բուսականությունը բնակչությանը հնարավորություն էր տալիս զբաղվել անասնաբուծությամբ: Ամռան տապին մանր և խոշոր եղջերավոր կենդանիներին բարձրացրել են լեռնային արոտավայրեր՝ յայլաներ: Անասնապահության այս ձևը հատկապես մեծ տարածում է գտել սելջուկ-թյուրքական ռազմարշավներից հետո: Բնակչությունը ևս ավերիչ ռազմարշավների ժամանակ հաճախ ապաստանել է լեռնային կածանների մուտքում գտնվող ամրոցներում: Բոլոր պատմական ժամանակներում մեծ համբավ են ունեցել Կիլիկիայում բուծված ձիերը: Երկրամասի գետերը և Միջերկրական ծովը հարուստ են բազմատեսակ ջրային կենդանիներով, որը թույլ է տվել ձկնորսության աննախադեպ զարգացումը երկրամասում՝ թարմ ձկնեղենով ապահովելով հարակից գավառները:

Կիլիկիան հայտնի էր եգիպտացիներին, խեթերին, ասորեստանցիներին, փյունիկեցիներին: Այն նվաճվել է Աքեմենյան Իրանի (Պարսկաստան), Ալեքսանդր Մակեդոնացու, Տիգրան Մեծի, Հռոմեական կայսրության կողմից, կազմել է Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության մասը: Մահմանային գոտու (սուլթուր) դեր է կատարել հիշատակված վերջին երկու կայսրությունների համար¹⁷: Կիլիկիա-

¹⁶ Հմմտ. TIB, 5, S. 29.

¹⁷ Տե՛ս **M. Canard**, Cilicie.- Encyclopédie de l'Islam, n.é., t.II, Leyde-Paris, 1965, p. 35-39; **А. Н. Тер-Гевондян**, Первый этап образования арабской пограничной области (ас-сугур).- Кавказ и Византия, вып. 2, Ер. 1980, с. 21-27.

յի հայկական թագավորության կործանումից հետո երկրամասին տիրել է Եգիպտոսի մամլուք սուլթանությունը, ապա՝ Օսմանյան կայսրությունը: Այսօր երկրամասը պատկանում է Թուրքիային¹⁸: Հնում Կիլիկիայի բնակչության զբաղմունքներից է եղել ծովահենությունը, որի դեմ հարյուրամյակներ շարունակ պայքար են մղել Հռոմեական պետությունը և նրան հաջորդող պետական միավորումները: Բոլոր կայսրություններին հայտնի է եղել կիլիկեցիների զինավառ ոգին: Միջերկրական ծովում սարսափ էին տարածում կիլիկյան ծովահենները: Պատմագրության մեջ հաճախ ենք հանդիպում Կիլիկիայից դուրս եկած հմուտ զինվորականների մասին առասպելախառն գրույցների: Երկրամասի պատմության հետ են կապված համաշխարհային մշակույթին հայտնի Կիկերոնի, Անտոնիոսի և Կլեոպատրիայի, Պոդոս առաքյալի, Թեկո կույսի, Հովհան Ոսկեբերանի, Թեոդորիտես Կյուրացու և այլոց անունները: Կիլիկիայի մեծ քաղաքների հելլենիստական դպրոցների համբավը հասել է հեռավոր երկրներ:

Կիլիկիայի բնակչությունը հնուց ի վեր բազմազգ է եղել: Հայկական պետության գոյության շրջանում (ԺԲ-ԺԴ դդ.) այստեղ բնակվում էին հայեր, հույներ, ասորիներ, խաչակրաց բանակների հետ արևելքում հաստատված ֆրանսիացիներ, գերմանացիներ, նորմաններ: Պատկառելի համայնքներ էին կազմում արաբները (մուսուլման, նաև քրիստոնյա) ու սելջուկ թյուրքերը, իսկ հետագայում նաև բնակչություն հաստատեցին թուրքմեն աշիրեթներն ու օսման թյուրքերը: Երկրամասում հնուց ի վեր բնակվում էին հրեաներ, որոնք կարևոր դեր էին խաղում Միջերկրականի և ողջ Մերձավոր Արևելքի առևտրատնտեսական կյանքում: ԺԲ-ԺԳ դարերում այստեղ հաստատվեցին արևմուտքից և արևելքից եկած արհեստավորներ ու առևտրականներ, հատկապես հայտնի են վենետիկյան և ջենովական գաղութներն իրենց ֆակտորիաներով և նոտարական գրասենյակներով¹⁹: Երկրամասում ամրոցներ ու մենաստաններ ունեին կաթոլիկ Եկեղեցու մի շարք վանական և հոգևոր-ասպետական կարգերը (տաճարական-տեմպլիերներ, հիվանդախնամ-հոսպիտալիերներ, տևտոնյան և այլն), վանքեր ու եկեղեցիներ ունեին հայերը, բյուզանդական դավանանքի հույն և հայ (հոռոմ, ծաղ), ասորի (հակոբիկ, նեստորական), արաբ (միջնադարում հայտնի են նաև մեկլիտ անվամբ) համայնքները:

Կարելի է ենթադրել, որ ԺԱ-ԺԴ դդ. ևս երկրամասում բնակվում էին նաև մարոնիտ հույներ, արաբներ և նեստորական ասորիներ, հրեաներ: Մեծ քաղաքներում կային մզկիթներ: Կիլիկիայի բոլոր ազգային-կրոնական համայնքները ստեղծել էին առանձին հոգևոր, կրոնանվիրապետական կառույցներ, որոնք համագործակցում էին հայկական քաղաքական և հոգևոր իշխանությունների հետ: ԺԱ-ԺԵ դդ. դրանց մեջ առաջնակարգ տեղ էր գրավում տարածաշրջանի բնակավայրերով (Հոնի, Քեսուն, Ծով, Հոռմկլա, Սիս) դեգերող Ամենայն Հայոց Կաթողիկոսարանը, որը, բացի իր հոգևոր առաքելությունից, համակարգող լծակի դեր էր ստանձնել տարածաշրջա-

¹⁸ Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, Կիլիկիայի մի շարք գավառներ մինչև 1939 թ. գտնվում էին ֆրանսիական հովանավորության ներքո (տե՛ս **Vahn Tachjian**, *La France en Cilicie et en Haute-Mésopotamie: Aux confins de la Turquie, de la Syrie et de l'Irak* (1919-1933), Paris, 2004):

¹⁹ Տե՛ս **Ա. Բոգդեան**, Կիլիկեան Հայաստանի պատմությունը Միջերկրական ծովի պետությունների արխիվներում. - Հայաստանի պատմության նիւթեր, Երևան, 2001, էջ 11-17:

նում գործող բոլոր հայկական քաղաքական և զինվորական միավորների, հայկական օյկումենեյում սնկի պես տարածվող գաղութների կյանքում:

ԺԱ դարի երկրորդ կեսից հայերն իրենց զինվորական ուժի և Փոքր Ասիայում առաջացած քաղաքական վակուումի պայմաններում տիրապետող դիրք էին գրավում հյուսիս-արևելյան Միջերկրականում: Նրանց իշխանության տակ էին տարածաշրջանում ստրատեգիական և տակտիկական նշանակություն ունեցող հիմնական ամրությունները: Հայկական ռազմական ուժերի համբավը հնուց ի վեր տարածված էր ողջ Մերձավոր Արևելքում, ազատագնդերը ծառայության մեջ էին անկախությունը կորցրած՝ Մեծ Հայքի տարածքում ձևավորված մուսուլմանական պետություններում, Բյուզանդիայում, Վրաստանում, Իկոնիայի սուլթանությունում, Դանիշմանյան և Արտուքյան ամիրայություններում, Հալեպի աթաբեկությունում, Երուսաղեմի, Անտիոքի, Եդեսիայի, Կիպրոսի խաչակրաց պետություններում, Եգիպտոսի սուլթանությունում և այլուր: Կիլիկիայի հայկական պետության տարածքը ծաղկման շրջանում հասնում էր շուրջ 40000 ք/կմ, իսկ բնակչության թիվը՝ ավելի քան մեկ միլիոնի: Երկիրը կարողանում էր պահել շուրջ 30000-անոց բանակ, իսկ պատերազմների ժամանակ հավանաբար դուրս էր բերվում դրա կրկնապատիկը:

Կիլիկյան Հայաստանի կարևորագույն քաղաքներն էին Սիսը²⁰, Տարսոնը, Ադանան²¹, Մամեստիան²² և Անավարզան, որոնք կատալիզատորի դեր էին կատարում երկրի տնտեսական և քաղաքական կյանքում: Երկրի սահմանների երկարությամբ, կարևորագույն կիրճերի և ճանապարհների վրա ստեղծվել էր ամրությունների և բերդերի մի խիտ ու կապակցված ցանց, որն անառիկ էր դարձնում պետությունը²³: Երկրի պաշտպանության գործում անփոխարինելի դեր էին խաղում Լամբրոնը, Պապեռոնը, Լուլուան, Վահկան, Բարձրբերդը, Բերդուրը, Բաղրասը, Դարբասկը իրենց պաշտպանական ամրություններով: Իր անառիկությամբ հատկապես հանրահայտ էր մայրաքաղաք Սիսը, որը Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ողջ ընթացքում գրեթե երբեք չդարձավ թշնամիների ավարը, համենայն դեպս միջնաբերդը միշտ մնաց անառիկ: Երկրի հիմնական քաղաքները և բերդերը գտնվում էին թագավորական իշխանության տնօրինության ներքո, իսկ ամրոցները պատկանում էին իշխող ընտանիքի ազգականներին և ամենահավատարիմ ստորականներին: Կիլիկիայի ամրոցներից շատերը կառուցվել են դեռ նախապատմական ժամանակներում: Այդ բերդերի և ամրոցների հնագիտական շերտերում տեսանելի են խեթական, հուրափոխական, բյուզանդական, արաբական, հայկական և խաչակրաց ռազմաշինարարական արվեստի հետքերը:

Կիլիկիան ուներ շուրջ 500 կմ երկարությամբ ծովափ, որի ափերին այսօր էլ դեռ տեսանելի են Կոռիկոս և Այաս (հնում՝ Էգեա) ամրոց-նավահանգիստների ծովային ու ցամաքային, ճարտարապետության և ռազմական տեսանկյունից անառիկ ամրությունները, որոնք բացի ռազմական նշանակությունից ունեին նաև կարևոր

²⁰ Լատին սկզբնաղբյուրներում նաև՝ Assisium կամ Ousis (տե՛ս TIB, 5, S. 413-416):

²¹ Լատին սկզբնաղբյուրներում նաև՝ Athena կամ Azara (տե՛ս TIB, 5, S. 154-158):

²² Հայտնի է նաև Մոպսուեստիա, Մամիստրա և Մասիստա անուններով (տե՛ս TIB, 5, S. 351-359):

²³ Այդ ամրոցների մասին տե՛ս **Հովհաննիսյան Մ.**, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1988, Edwards R.S., The fortifications of the Armenian Cilicia, Washington, 1987: Վերջին գրքի գրախոսությունը տե՛ս ՊԲՀ, 1987, N 4 (119), էջ 204-206.

տնտեսական դեր միջերկրածովյան ողջ ավազանի համար: Այդ են վկայում միջնադարյան եվրոպական առևտրի և տնտեսության ուղեցույցները, քարտեզները, խաչակրաց ռազմարշավների պլաններն ու ծրագրերը (Բալդույնի Պեգալոտի, Մարինո Սանուտո և այլոք), բազմալեզու և տարածանք մատենագրական երկերը: Բացի իր բնական հարստություններից, ստրատեգիական անառիկ դիրքից, Կիլիկիան գտնվում էր համաշխարհային առևտրական քարավանային ճանապարհների խաչմերուկներից մեկի վրա, որը կապում էր արևելքի և արևմուտքի, հյուսիսի ու հարավի առևտրատնտեսական կենտրոնները: Այստեղով էր անցնում Աքեմենյան Պարսկաստանում մեծ համբավ վայելող Արքայական ճանապարհի մի կարևոր հատվածը:

Հայերը Կիլիկիայում մինչև Ռուբինյան իշխանության հաստատումը

Հայերը Կիլիկիայում բնակություն էին հաստատել հնագույն ժամանակներից: Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55) օրոք Կիլիկիան գտնվել է Մեծ Հայքի թագավորության կազմում: Անտիկ և վաղ միջնադարյան պատմագրության մեջ պահպանվել են երկրամասում բնակվող հայկական ազգաբնակչությանը վերաբերող հատուկ նշանակություններ²⁴: Բյուզանդաարաբական հակամարտության ժամանակաշրջանում (Է-Ը դդ.) և դրանից հետո ևս նկատվում է հայ բնակչության ու զինվորականության տեղաշարժ Մեծ Հայքից դեպի Կիլիկիա և հարակից շրջաններ: Նման բնակեցման առաջին լուրջ ահազանգներից մեկը հնչեցրել է Թ դարի հակոբիկ ասորիների պատրիարք Դիոնիսիոս Թեղ-Մահրացին²⁵, խոսելով Ը դարի առաջին կեսին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների մասին: Այդ բնակեցումը, բացի հայկական լեռնաշխարհում տեղի ունեցող բնական աղետներից ու սովից, պայմանավորված էր նաև Ը-Ժ դդ. Բյուզանդական կայսրության և Բաղդադի խալիֆայության միջև բռնկվող անընդհատ պատերազմներով, ավելի ուշ՝ Մակեդոնյան դինաստիայի բյուզանդական կայսրերի օրոք ծրագրավորված Հյուսիսային Ասորիքի վերանվաճումով և այդ ռազմարշավներին հայկական զինվորական ուժերի գրեթե պարտադիր մասնակցությամբ: Պատմությունը մեզ է ավանդել Ժ-ԺԱ դդ. մի շարք բյուզանդական, երբեմն էլ ծագումով հայազգի զորահրամանատարների անուններ (Հովհաննես Կուրկուաս²⁶, Նիկեփոր Փոկաս²⁷, Հովհաննես Չմշկիկ²⁸, Մլեհ²⁹, Ասպիետ³⁰ և այլոք), որոնք արա-

²⁴ Այս տեսանկյունից հատկանշական են Հովհան Ոսկեբերանի նամակները (տե՛ս **Otto Bardenhewer**, *Geschichte der Altkirchlichen Literatur*, Dritter Band, Freiburg im Breisgau, 1912, p. 327-328, 349-350, **G. Dndnyan**, *Le peuple Arménien aux frontières de Cilicie aux IVe-Ve siècles*.- **D. Kouymjian**(dir.), *Armenian Studies in memoriam Haug Berbnrian*, Lisboa, 1986, p. 221-225):

²⁵ **Denys de Tell-Mahrn**, *Chronique*, 4e partie, trad. J.-B. Chabot, Paris, 1895, p. 54: Այդ իրադարձությունների մասին տե՛ս նաև *Chronicon Anonymum Pseudo-Dionysianum vulgo dictum*, II, gallice vertit Robert Hespel, Lovanii, 1989 (CSCO, v. 507, Script. Syri, t. 213), p. 159: Այս երկրորդ ժամանակագրության ասորերեն բնագիրը հրապարակվել է երկու հատորով, ասորագետ Ի.-Բ. Շարոյի կողմից. *Chronicon Pseudo-Dionysianum vulgo dictum* / edidit I. B. Chabot, I (CSCO, v. 91, Script. Syri, t. 43), Parisiis 1927; II (CSCO, v. 104; Scriptores Syri, t. 53), Parisiis, 1933.

²⁶ Ի՞նչ **G. Dedeyan**, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisades*, vol. 1, Lisbonne 2003, p. 92; vol. 2, p. 952; 997; 1107.

²⁷ **G. Dedeyan**, *Les Arméniens...*, v. 1, p. 370-372.

²⁸ **G. Dedeyan**, *Les Arméniens...*, v. 1, p. 9-10.

բական խալիֆայության դեմ պատերազմել են Կիլիկիան Բյուզանդական կայսրությանը վերադարձնելու համար՝ իրենց հրամանատարության տակ ունենալով հայկական մեծաթիվ զորաջոկատներ³¹:

Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում հայերի բնակեցումը Հովհան Օմեցի Կաթողիկոսի հովվապետության տարիներին Հայաստանում տեղի ունեցած բնական աղետներով է պայմանավորում ԺԲ դարի հակոբիկ մատենագիր, Մարաշի (Գերմանիկե) եպիսկոպոս Դիոնիսիոս Բար Սալիբին³²: ԺԲ դարի ասորի հեղինակ, հակոբիկ Եկեղեցու պատրիարք Միքայել Ասորին հայերի բնակեցումը Կապադովկիայում, Կիլիկիայում, Ասորիքում թվագրում է Ժ դարով³³: Հիշատակված երկու ասորագիր-հակոբիկ հեղինակներն էլ սրտի կսկիծով են գրում Կապադովկիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հայ ազգաբնակչության բնակեցման մասին՝ մեղադրելով հայերին իրենց եկեղեցիների և վանքերի բռնագրավման, ասորի բնակչության ու Եկեղեցու նկատմամբ բռնած ոչ հոգատար վերաբերմունքի համար³⁴: Տարսոնում և նրա շրջակայքում հայ ազգաբնակչության խաղաղացած կարևոր դերի մասին խոսում է նաև ԺԳ դ. արաբ աշխարհագրագիր Յակուտ ալ-Համավին³⁵: Հայկական զինվորական ջոկատները Է-Ժ դդ. կարևոր դեր էին խաղում բյուզանդաարաբական սահմանային գոտու (սուղուր) պաշտպանության գործում: Այդ գոտին ձգվում էր Տարսոն-Մելիտինե-Կարին-Տրապիզոն գծով³⁶: Ժ դարի կեսերին, Կոստանդին Է Օիրանածին (913-959) բյուզանդական կայսեր կառավարման տարիներին, Լիկանդոսի³⁷ շրջանում բավական ամուր բանակաթեմ (կատեպանություն) ստեղծեց բյուզանդական դուքս, հայագրի Սլեիը և կայսեր կողմից ճանաչվեց մագիստրոսի տիտղոսով³⁸:

²⁹ G. Dedeyan, Mleh le Grand, stratège de Lykandos, REArm, NS, t. XV, 1981, p. 73-102.

³⁰ N. Adontz, Notes arméno-byzantines VI, L'aïeul des Roubéniens.- Byzantion, t. X, 1935, pp. 185-203; G. Dedeyan, Les Arméniens..., v. 2, p. 1102-1105.

³¹ G. Dedeyan, Le rôle des Arméniens en Syrie du Nord pendant la Reconquête byzantine (vers 945-1031).- Byzance et l'Asie, p. 249-284.

³² Բոգոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 43-44: Հմտ. Դիոնիսիոս Բարսալիբիի հակաճառությունը Հայոց դեմ / թարգմանեց ասորի բնագրէ հ. Պ. Հսապալեան, Վիեննա 1938, էջ 87-88 (Ազգ. Մատ. ՃԽԵ):

³³ Chronique de Michel le Syrien, patriarche Jacobite d'Antioche (1166-1199) / iditn pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris 1963, p. 133 (այսուհետև՝ M. S.); Միքայել Ասորու միջնադարյան հայերեն թարգմանության մեջ այդ մասին վկայություն չի պահպանվել:

³⁴ Սակայն դա չէր խանգարում, որ ԺԲ-ԺԳ դդ. հակոբիկ ասորական Եկեղեցու ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն ունենան Կիլիկիայի հոգևորականության կյանքում, իսկ պատրիարքական Աթոռը առ ժամանակ փոխադրվի կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք: ԺԳ դարում հակոբիկ ասորական Եկեղեցու սերտ փոխհարաբերությունների մասին տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դարերում, Վենետիկ, Ս. Ղազար, 1989 (Հայագիտական մատենաշար, 77777 Բազմավեպ 88888, թիւ 28), էջ 8-15:

³⁵ Հմտ. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադադ) / կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Եր. 1965, էջ 92:

³⁶ **Տեր-Ղևոնդյան Ա. Ն.**, Արաբական սահմանային ամրությունների գոտին (սուղուր), ՊԲՀ, 2 (93), Եր. 1981, էջ 134-149, մասնավորապես՝ 140-144:

³⁷ Տե՛ս Կոստանդին Օիրանածին / թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի (Բյուզանդական աղբյուրներ. Բ), Եր. 1970, էջ 26-27, 171-172: Այս տեղանունը սկզբնաղբյուրներում երբեմն հիշատակվում է Լիկանդոն գրությամբ:

³⁸ Տե՛ս **Dedeyan G.**, Mleh le Grand, stratège de Lykandos.- REArm, n.s., t. XV, 1981, pp. 73-102.

Ժ-ԺԱ դարերի ընթացքում Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում վերաբնակեցված հայ ազգաբնակչությունը հետզհետե դառնում էր բյուզանդական բանակը զինվորականներով համալրող ազգաբնակչություն: Ժ դարում Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում, Կապադովկիայում վերաբնակվող հայ բնակչության վերաբերյալ կարևոր տեղեկություններ է պատմում ԺԱ դ. արաբագիր մելկիտ պատմիչ Յահյա Անտիոքացին³⁹: Հայ զինվորականները ծառայության փոխարեն ստանում էին հողային տարածություններ ու մեծ նվիրվածությամբ ծառայում էին կայսրությանը տարբեր զինվորական պաշտոններում: Հայազգի ստրատիոտների (զինվորականների) համար բյուզանդական կայսր Նիկեփոր Բ Փոկասը (963-969) հրապարակել է հատուկ հրովարտակ⁴⁰: Տարածաշրջանում հայ ազգաբնակչությունը այնքան էր շատացել, որ Հայոց Եկեղեցին արդեն Ժ դարում Կիլիկիայում ուներ եպիսկոպոսական Աթոռներ: Ըստ Ասողիկ պատմագրի, Խաչիկ Ա Արշարունի (973 - 992) Կաթողիկոսը Ժ դարի վերջին Տարսոնի, Անտիոքի, Սուլնդայի (որոշ ձեռագրերում՝ Լուլընդա) եպիսկոպոսական Աթոռներին նստեցրել է հայ եպիսկոպոսներ⁴¹:

ԺԱ դարի կեսերին Կապադովկիայի և Հյուսիսային Ասորիքի հայ ազգաբնակչությունն ավելի ստվար դարձավ շնորհիվ Վասպուրականի, Անիի և Կարսի հայոց թագավորական ընտանիքների, նախարարական տոհմերի և ենթակա ազգաբնակչության գաղթի, որը տեղի էր ունենում Բյուզանդական կայսրության ակտիվ միջամտությամբ: Այդ ազգաբնակչության մի մասը հայկական գորաջոկատների հետ հետզհետե հաստատվեցին Իսավրիայի, Կիլիկիայի, Հյուսիսային Ասորիքի (հատկապես՝ Եփրատյան մարզի) տարածքների վրա: Կիլիկիայում հայերի բնակեցումը ավելի մեծ չափեր ընդունեց ԺԱ դարի երկրորդ կեսին, հայկական թագավորությունների անկումից հետո: Այդ վերաբնակեցումը տեղի էր ունենում սելջուկ-թյուրքերի ռազմարշավների ժամանակաշրջանում: Հայկական ազնվականական զինված ջոկատներն, օգտվելով Կիլիկիայում հաստատված քաղաքական վակուումից (անիշխանական վիճակից), այդ տարածաշրջան էին հոսում բուն Հայաստանից, Կապադովկիայից, Հյուսիսային Ասորիքից՝ վերացնելով բյուզանդական նախկին տարածքների վարչակառավարական անիշխանական վիճակը, իրենցով լցնելով այդ երկրամասերի քաղաքական դատարկությունը:

Հայկական զինված ջոկատների և ազգաբնակչության արտագաղթը դեպի Կիլիկիա աննախադեպ չափերի հասավ ԺԲ դարի 80-90-ական թթ.: Արտագաղթը պայմանավորված էր նաև սելջուկ-թյուրքական տիրապետության սարսափներով⁴²: Բյուզանդիայի անհեռատես արտաքին քաղաքականությունը և սելջուկ-թյուրքերի հաս-

³⁹ Ի»ѣ Император Василий Болгаровица. Извлечения из Летописи Яхъи Антиохийскаго / уздал, перевел и объяснил Барон В. Р. Розен, СПб. 1883, с. 4-5, 15-16, 25, прим.169, 26, 32-33, 40, 54 (приложение к XLIV-му тому Записок имп. Академии Наук):

⁴⁰ Այդ կայսերական նովելլան հրատարակված է. Leonis Diaconi calounsis, *Historiae, Libri decem et de velitatione bellica Nicephori Augusti / e recensione Caroli Benedicti Hasii*, Bonnae, 1828, p. 318-320 հաւոտքում: Կարծես նմանատիպ մեկ այլ հրովարտակի մասին էլ խոսվում է Ֆ. Դյուլգերի մոտ (տե՛ս Regesten der Kaiserurkunden des Oströmischen Reiches von 565-1453 / bearbeitet von Fr. Dölger 1. Teil: Regesten von 565-1025, München u. Berlin, 1924, S. 92-93):

⁴¹ Ստեփանոսի Տաթևեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 258:

⁴² Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 217 և հետև., հմմտ. Մմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 86 և հետև.:

տատած անտանելի տնտեսական ռեժիմը պայմաններ ստեղծեցին հայերի արտագաղթի համար դեպի Կիլիկիա ու Մերձեփրատյան տարածքներ և հող նախապատրաստեցին այդ տարածքներում հայկական իշխանապետությունների և թագավորության վերականգնման համար:

Հայ ավատատեր իշխաններն ու թագավորները, կայսրությանը հանձնելով իրենց հայրենական կավածքները, նոր տարածքներում կառավարելու համար ստանում էին բյուզանդական տիտղոսներ և դառնում կայսրության վարչաավատատիրական վերնախավի անքակտելի մասը: Հաստատվելով Բյուզանդական կայսրությանը ենթակա տարածքներում, հայկական իշխանական տների առանձին անդամների շնորհիվում էին հողակտորներ, քաղաքներ, բերդեր և ամրոցներ⁴³: Դառնալով բյուզանդական վարչաավատատիրական կարգի կրողներ, իրենց ենթակա իշխանություններում նրանք ձեռք էին բերում համապատասխան իշխանություն, որը բյուզանդական տիրապետության թուլացմանը զուգընթաց հետզհետե ձգտում էր ինքնուրույնության:

ԺԲ դարի սկզբին Կիլիկիայում և հարակից շրջաններում ձևավորված պետական միավորները

Մելջոուկ-թյուրքական ռազմարշավների դարաշրջանում (ԺԱ դար), Անիի թագավորության կործանման հետ միասին Բագրատունիների և հայկական նախարարական տների զինվորական ուժերը Բյուզանդական կայսրության անհեռատես քաղաքականության հետևանքով դուրս բերվեցին Մեծ Հայքի տարածքներից, նոր ավատներ ստացան և տեղաբաշխվեցին Կապադոկիայում ու Հյուսիսային Ասորիքում: Դրանով ստրատեգիապես թուլացան Փոքր Ասիայից դեպի Բյուզանդիա ձգվող ճանապարհները, որոնք օտար նվաճողներին հրապուրում էին դեպի Արևելահռոմեական կայսրության ներքին գավառները:

Բյուզանդական կայսրությունը մի կողմից թուլացնում էր իրեն սահմանակից Հայաստանը, մյուս կողմից՝ նրա զինվորական ուժերով փորձում էր ամրապնդել սեփական սահմանները: Այդ քաղաքականությունն էր, որ իր կոնկրետ դրսևորումների մեջ ձախողման պատճառ դարձավ ԺԱ դարի բյուզանդական արևելյան քաղաքականության համար: Հայտնի են այդ ժամանակաշրջանում բյուզանդացիների կողմից Անտիոքում (Խաչատուր)⁴⁴, Կիլիկիայում (Ապլղարիբ)⁴⁵ և Եդեսիայում (Վասիլ⁴⁶, Թորոս⁴⁷) նշանակված հայ բարձրաստիճան զինվորական ղեկավարները (ստրատեգ, դուքս և այլ բյուզանդական տիտղոսներով), որոնց հանձնված էր նաև հիշատակված տարածաշրջանների կառավարումը բյուզանդական կայսրերի անունից:

⁴³ Այդ մասին տե՛ս **А. П. Каждан**, Армяне в составе господствующего класса византийской империи в X-XII вв., Ереван, 1975; **P. Charanis**, The Armenians in the Byzantine Empire, - Byzantinoslavica, 2/ XXII. p. 196-240 և հատկապես G. Dédéyan, L'immigration arménienne en Cappadoce au XIe siècle.- Byzantion, t. XLV, 1975, p. 41-117.

⁴⁴ **G. Dedeyan**, Les Arméniens..., v.1, p. 38-47.

⁴⁵ **G. Dedeyan**, Les Arméniens..., v. 1, p. 308-309.

⁴⁶ **G. Dedeyan**, Les Arméniens..., v. 1, p. 97-98; 195-197.

⁴⁷ **G. Dedeyan**, Les Arméniens..., v. 2, p. 1007-1040.

Մակայն քիչ անց Բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսը սելջուկ-թյուրքերից Մանազկերտի դաշտում ճակատագրական պարտություն կրեց (1071 թ.) և գերի ընկավ⁴⁸։ Բյուզանդական կայսերական իշխանությունն այլևս ի գործու չէր վերահսկել ողջ Փոքր Ասիայի քաղաքացիական իշխանությունների գործունեությանը։ Միաժամանակ Մեծ Հայքից, Կապադովկիայից և Հյուսիսային Ասորիքից շարունակում էին Կիլիկիա թափանցել մեծ քանակությամբ հայկական զինվորական ջոկատներ, որոնք հետզհետե իրենց ձեռքն են վերցնում տարածաշրջանի պաշտպանությունը և քաղաքական կառավարումը։

Մինչև ԺԱ դարի 70-ական թվականները Կիլիկիայի ողջ տարածքը *de jure* ենթարկվում էր Բյուզանդական կայսրությանը։ Արաբների ձեռքից այն Ժ դարում ամբողջությամբ խլելուց հետո, կայսրությունն այս տարածքի վրա նշանակում էր իր գորահրամանատար-կառավարիչներին։ ԺԱ դարում բյուզանդական կայսրերը բռնությամբ և խաբեությամբ հայ բնակչության մի զգալի հատված Մեծ Հայքից տեղահան են անում և բնակեցնում Կիլիկիային հարևան Կապադովկիայում ու Հյուսիսային Ասորիքում։

Դեպի Կիլիկիա արտագաղթը հատկապես մեծ չափեր ընդունեց ԺԱ դ. 70-ական թվականներին, Մանազկերտի ճակատամարտից (1071) հետո։ Հայագգի իշխանները թողնում էին իրենց պապենական ավատները և հաստատվում էին Կիլիկիայում ու նրա հարակից գավառներում։ Նման բնորոշ արտագաղթերից մեկն էլ Օշին իշխանի արտագաղթն էր այսրկովկասյան Գանձակ գավառի Մայրեաց Ջուր բնակավայրից։ Ի դեպ, այդ բնակավայրի անունը, որը մինչ այժմ հայտնի էր միայն Սամուել Անեցու Ժամանակագրությունից, այսօր վկայված է նաև վիմագիր արձանագրությամբ⁴⁹։ Օշին իշխանը Կիլիկիա եկավ ԺԱ դարի 70-ական թվականներին, ամուսնացավ Աբլղարիի Արծրունու դստեր հետ և որպես օժիտ ստացավ **Պապլեռոն** ու **Լամբրոն** ամրոցները։ Նա սկիզբ դրեց Օշինյան (կամ Հեթումյան) իշխանական տոհմին⁵⁰, որը հետագայում նշանակալի դեր խաղաց կիլիկյան Հայաստանի պատմամշակութային կյանքում։

Մանազկերտի ճակատամարտում թյուրք-սելջուկներից բյուզանդացիների կրած պարտությունից հետո, Կապադովկիայի բյուզանդական Ռոմանոս Դ Դիոգենես կայսեր գորահրամանատար (ստրատեգ) իշխան **Փիլարտոս Վարաժնունին** Կապադովկիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի տարածքների վրա ինքնուրույն իշխանապետություն հիմնեց⁵¹։ Այդ իշխանապետությունը մեկ տասնամյակ շարունակ միայ-

⁴⁸ Այս պարտության և դրա հետևանքների մասին տե՛ս **J.-Cl. Cheynet**, *Manzikert: un désastre militaire ?* – Byzantion, t. L, fasc. 2, 1980, pp. 410-438.

⁴⁹ Օշին իշխանի հայրենիք է համարվում Մայրեաց Ջուր կավվածքը. 77777 հանդեպ Գանձակայ88888, որի մասին հիշատակում է Սամուել Անեցու Ժամանակագրությունը (էջ 117)։ Մի քանի տարի առաջ Բերձորի (Լաչին) շրջանի Աղբրաձոր հնագիտական արգելավայրում հայտնաբերվել է այդ տեղանունը հիշատակող վիմագիր արձանագրություն (տե՛ս **Ա. Հակոբեան**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, ՀԱ, ՃԺԲ տարի, 1998, էջ 301-303)։

⁵⁰ Օշինյանների տոհմաձառը տե՛ս **հ. Ն. Ակինյան**, Ներսէս Լամբրոնացի Արքեպիսկոպոս Տաքունի. Կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանությամբ Պահլավունեաց եւ Լամբրոնի Հեթումեանց, Վիեննա, 1956 (Ազգ. Մատ., ՃՀԹ), էջ 408 և հտւ., հմտ. նաև **W. H. Rüdiger-Collenberg**, *The Rupenides, Hetumides and Lusignans: The structure of the Armeno-Cilician dynasties*, Lisbon, 1963, tables III.

⁵¹ Փիլարտոս Վարաժնունու ստեղծած իշխանապետության պատմությունը տե՛ս **Կոմնագենացի**,

նակ դիմագրավում էր սելջուկ-թյուրքերի արշավանքներին: Նրա շուրջն էին հավաքվել տարածաշրջանում հաստատված հայ ավատատերերից շատերը: Սակայն ԺԱ դարի 80-ական թվականներին Փիլարտոսի ստեղծած իշխանապետությունը փլուզվեց: Այն բաժանվեց մի շարք հայկական իշխանությունների:

Կիլիկիայում և նրա մերձակայքում հաստատված հայկական իշխանություններից հարկ է նշել նաև Եդեսիայի բյուզանդական կառավարիչ (դուքս) **Թորոսին**, որը ևս ԺԱ դ. վերջին և ԺԲ դ. սկզբին տարածաշրջանում քաղաքական մեծ հեղինակություն էր վայելում⁵²: Հիշատակված իշխանությունների անկումից հետո դրանց տեղում հաճախ առաջանում էին նոր հայկական ավատական տիրույթ-իշխանություններ:

ԺԱ դարի վերջում, ըստ սկզբնաղբյուրների վկայության, Կիլիկիայում էին հաստատվել հավանաբար նաև **Բագունի**, **Հայկագունի** և **Նաթանայեյան** իշխանական տները, որոնց մասին սկզբնաղբյուրները բավարարվում են հատուկենտ վկայակոչումներով⁵³:

ԺԱ դարի 80-ական թվականներից Կիլիկիայում հաստատվեց **Ռուբեն**⁵⁴ իշխանը՝ հիմք դնելով **Ռուբինյանների** իշխանապետությանը: Նա Բագրատունյաց թագավորության վերջին տիրակալ Գագիկ Կարսեցուն ենթակա իշխաններից⁵⁵ էր, որը հավանաբար ծառայել էր նաև Փիլարտոս Վարաժնունու բանակում:

Փիլարտոս Վարաժնունու ստորականներից էր նաև Գոդ Վասիլ իշխանը (1082-1112), որը ԺԱ դ. 80-ական թթ. ստեղծեց իր իշխանապետությունը եփրատամերձ Քեսուն կենտրոնով⁵⁶: Նրան էին պատկանում նաև Ռաբան, Հռոմկլա, Մարաշ բնակավայրերը: Նա մեծ հեղինակություն էր վայելում Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայ ազնվականների շրջանում: ԺԲ դ. սկզբին Գոդ Վասիլն իր շուրջը համախմբեց տարածաշրջանում հայտնված հայկական ազատագնդերը, կարողացավ դանիշմանյան գերությունից ազատել Բոհեմունդ Անտիոքացուն⁵⁷: 1112 թ., նրա մահից հետո, այդ իշխանապետությունը, ավելի ճիշտ՝ դրա մի մասը, ժառանգեց նրա հոգեզավակ, Կամսարական Տղա Վասիլը, որը երկարատև համառ պայքարի մեջ մտավ Եդեսիայի կոմս Պադուխի (Բալդուին) դեմ, սակայն անհաջողության մատնվելով՝ հեռացավ Կոստանդնուպոլիս⁵⁸:

Փիլարտոս Հայր. Կիլիկեայ ճոխութեան բուն հիմնադիրը, Հալեպ, 1930: **G. Dedeyan**, *Les Armeniens...*, v. 1, p. 5-357.

⁵² **G. Dedeyan**, *Les Armeniens...*, v. 2, p. 986-1036.

⁵³ Հիշատակված իշխանական տների պատմությանը հայագիտության մեջ դեռևս լուրջ անդրադարձ չի կատարված:

⁵⁴ Ժ. Դեդեյանը մի քանի նոր ենթադրություններ է կատարում նրա ծագման վերաբերյալ (տե՛ս **G. Dedeyan**, *Les Armeniens...*, v. 1, p. 365-374).

⁵⁵ Հմմտ. Սիսուան. համագրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ / հաւաքեալ ի հ. Ղեւոնդեայ վ. Ալիշան, Վենետիկ, 1885, էջ 42-44: Այսօր կարելի է հաստատապես ասել, որ այդ հատվածը հետսամուտ է Սամուել Անեցու ժամանակագրության մեջ (**Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հտ. Ա, Եր., 2005, էջ 472, հմմտ. **Կ. Մաթևոսյան**, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը. - Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, խմբ. Պ. Մ. Մուրադյան, Եր. 2005, էջ 37-48):

⁵⁶ Գոդ Վասիլի ստեղծած իշխանապետության մասին տե՛ս **G. Dedeyan**, *Les Armeniens...*, v. 2, p. 1058-1155.

⁵⁷ **G. Dedeyan**, *Les Armeniens...*, v. 2, p. 1113.

⁵⁸ **G. Dedeyan**, *Les Armeniens...*, v. 2, p. 1162-1168.

Տարածաշրջանում խոր արմատներ էին գցել նաև Պահլավունիները: Անիի անկումից հետո Հյուսիսային Ասորիքում հաստատվեց Գրիգոր Մագիստրոսը, որի սերունդները հսկայական դեր կատարեցին Կիլիկիայում հոգևոր և աշխարհիկ կառույցների ձևավորման գործում: Ապլոարիբը, որը որդին էր 1078 թ. բյուզանդացիների կողմից սպանված Անտիոքի կառավարիչ Վասակի, մինչև 1117 թ. կարողացավ պահել մերձեփրատյան Պիր ամրոցը: Այդ ամրոցն էլ Տղա Վասիլի տիրույթների հետ հետագայում նվաճվեց Եդեսիայի կոմս Պադուխինի կողմից⁵⁹:

ԺԱ դարի վերջին քառորդում և ԺԲ դարում աշխարհագրական դիրքի և երկրամասում հաստատված հայոց հզոր ռազմական ուժի շնորհիվ բարձրանում էր Կիլիկիայի նշանակությունը: Մելջուկյան ռազմարշավներից հետո Բյուզանդական կայսրությունը զգալիորեն կորցրեց իր տիրույթները Փոքր Ասիայում, որի հետևանքով, Մեծ Մելջուկների կայսրության փլուզումից հետո, ձևավորվեցին Կիլիկիայի հարևան՝ **Իկոնիայի** սուլթանությունը⁶⁰ և **Դանիշմանյան** ամիրայությունը (Կապադովկիայում և Փոքր Հայքում)⁶¹, ինչպես նաև Մեծ Հայքի հարավում՝ **Շահ-Արմենների** (Խլաթ կենտրոնով)⁶² և **Արտուքյանների** (Աղձնիքում՝ Ամիդ-Դիարբեքի կենտրոնով)⁶³ ամիրայությունները:

Սակայն Բյուզանդական կայսրությունը Մերձավոր Արևելքում դեռևս չէր կորցրել իր բոլոր տիրույթները: Ըստ միջազգային պայմանագրերի, նրան էին պատկանում ռազմական խոշոր նշանակություն ունեցող Փոքր Ասիայի միջերկրածովյան ափամերձ գոտին և Կիպրոս կղզին⁶⁴: Բյուզանդական կայսրությունը Կիլիկիան և Հյուսիսային Ասորիքը վերանվաճելու լուրջ մտադրություններ ուներ:

Բյուզանդիան ԺԱ դարի վերջերից, ելնելով իր սեփական շահերից, օգնում էր խաչակրաց բանակներին՝ նրանց դեպի Երուսաղեմ ձեռնարկած արշավանքների ժամանակ՝ հույսեր փայփայելով վերադարձնել Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի կորցրած տարածքները:

Բյուզանդիայի հետ կնքված պայմանագրերի համաձայն⁶⁵, խաչակրաց բանակին ուղեկցում էին բյուզանդական զինվորականները: Ուղեկցողների թվում եղել են նաև հայեր: Հայտնի է Գող Վասիլի եղբայր **Բագրատ** (Pancracio) անունով հայ իշխա-

⁵⁹ G. Dedeyan, Les Armeniens..., v. 2, p. 1164.

⁶⁰ Այդ պետության պատմությունը տե՛ս **Cl. Cah en**, Turquie pré-ottoman, Istanbul-Paris, 1988.

⁶¹ Դանիշմանյանների պատմությանն անդրադարձ են կատարել Կլոդ Կահենը, Իբեն Մելիքովը. տե՛ս **Melikoff I.** Danismendides.- Encyclopedie de l'Islam, n. n., t.II, pp. 112-114: Տե՛ս նաև **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի..., էջ 59-98:

⁶² Հայագիտության մեջ այս պետության վերաբերյալ գրվել է լոկ մեկ հոդված, տե՛ս **Հ. Գ. Թուրքյան**, Շահ-ի-Արմեններ, ՊԲՀ, 1964, 4, էջ 117-134:

⁶³ Արտուքյանների պատմության մասին տե՛ս **Cl. Cahen**, Artukides, Enciclopedie de l'Islam, n. n., t. I, pp. 683-688:

⁶⁴ Այդ փաստը հաստատագրված է նաև Ալեքսիոս Ա Կոմնենոսի և Միցիլիայի նորմանների առաջնորդ Բոհեմունդի միջև 1108 թ. կնքված Դեաբոլի հաշտության պայմանագրում, որի բնագիրը բերված է բյուզանդական մատենագիր Աննա Կոմնենեի «Ալեքսիադա» երկում (**Я. Н. Люварский, М. М. Фрейденберг**, Девольский договор 1108 г. между Алексеем Комнином и Боэмундом, ВВ, т. 21, 1962, с. 260-265): Այդ մասին տե՛ս **Ա. Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի..., էջ 71-75:

⁶⁵ **Dölger Fr.**, Regesten der Kaiserurkunden des Oströmischen Reiches. 2. Teil / Zweite, erweiterte und verbesserte Auflage bearbeitet von P. Wirth, München, 1995, N 1188-1203, S. 143-148.

նը⁶⁶, որն ուղեկցել է խաչակրաց բանակներին Փոքր Ասիայում, ցույց է տվել Կիլիկիա մտնելու և այնտեղից Եդեսիա ու Անտիոք անցնելու ամենակարճ ճանապարհները⁶⁷: Այդ ծառայությունների համար նա Հյուսիսային Ասորիքի մերձեփրատյան շրջանում ամրոցներ է ստացել խաչակիրներից:

Մերձավոր Արևելքի հայկական իշխանապետությունները սկզբում վստահում էին խաչակրաց բանակներին, օգնում նրանց սելջուկների դեմ պայքարում: Սակայն խաչակիրները խաբեությամբ տեր դարձան Եդեսիայի հայկական իշխանությանը՝ սպանելով բյուզանդական դուքս Թորոսին, որի շուրջ էին հավաքվել հայկական ազատագնդերը: Այդ իրադարձությունը տարածաշրջանի հայ ազգաբնակչությանն ու զինվորականությանը հուշեցին ավելի զգույշ լինել խաչակիրների հետ փոխհարաբերություններում: Այս պահից երկարատև պայքար սկսվեց Ռուբինյան իշխանապետության և Անտիոքի խաչակրաց դքսության միջև՝ Դաշտային Կիլիկիային տիրանալու համար:

ԺԱ դարի վերջում և ԺԲ դարի սկզբին ձևավորվեցին Եդեսիայի խաչակրաց կոմսությունը, Անտիոքի լատինական իշխանապետությունը (դքսությունը), Երուսաղեմի թագավորությունը և Տրիպոլիի կոմսությունը⁶⁸, որոնց պատմությունը հաճախ է խաչաձևվում Կիլիկիայում ստեղծված հայկական իշխանապետությունների գոյապայքարի հետ: Միջդինաստիական ամուսնական կապերի շնորհիվ խաչակիրները դաշնակիցներ էին ձեռք բերում Մերձավոր Արևելքի հայ ազգաբնակչության շրջանում, որն օգնում էր նրանց ավելի ամուր դիրքեր գրավել նվաճված տարածքներում, իսկ հայկական իշխանական տները փորձում էին ընդլայնել իրենց քաղաքական ազդեցությունը տարածաշրջանում:

Խաչակրաց այս իշխանությունների, Բյուզանդական կայսրության, Իկոնիայի սուլթանության, Դանիշմանյան ամիրայության, իսկ հետագայում՝ Հալեպի աթաբեկության, Անտիոքի լատին իշխանության հարձակումների պայմաններում ԺԱ դարի վերջից ձևավորվում է Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանապետությունը:

Ռուբինյանների իշխանապետությունը և նրա պայքարը երկրամասի անկախության համար

Հյուսիս-արևելյան Միջերկրականի շրջակայքում բնակություն հաստատած հայ ազգաբնակչության և զինվորական ջոկատների օգնությամբ **Ռուբեն Ա** (1080-1095) իշխանին հաջողվում է հաստատվել կենտրոնական Տավրոսի գոտում և հայոց անկախ պետականության հիմքը դնել Կիլիկիայում: Հայ պատմագրական ավանդույթը, որին հետևում է Սամուել Անեցու շարունակողը, Ռուբենին համարում է Գագիկ

⁶⁶ Guillaume de Tyr, Chronique / Édition critique par R. B. C. Huygens. Identification des sources historiques et détermination des dates par H. E. Mayer et G. Rösch, Tvrnholti, 1986, p. 348.

⁶⁷ Նույն տեղում, էջ 233, 283: Հմմտ. **J. Richard**, Histoire des croisades, Librairie Arthème Fayard, 1996, p. 71-72:

⁶⁸ Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունների մասին ստեղծվել է հսկայածավալ գրականություն: Հղում ենք դրանցից մի քանի կարևորագույնները. **Cl. Cahen**, La Syrie du Nord à l'époque des Croisades et la Principauté franque d'Antioch, Paris, 1940; **J. Richard**, Histoire des croisades, Paris, 1996; **L. Տեր-Պետրոսյան**, Հայերը և խաչակիրները, հտ. Ա, Երևան, 2005:

Բագրատունու ստորականներից մեկը, որը բյուզանդացիների դեմ երկարատև պայքարի ընթացքում տիրել է Կոստանտ (թե՞ Կոստանտ) բերդին և Կոլիմոզոլ անունը կրող բնակավայրին⁶⁹: Ըստ պատմագրական վկայության, այս իշխանի մարմինը թաղված է Կաստաղոն մենաստանում⁷⁰: Որքան էլ սակավ են Ռուբեն Ա իշխանին վերաբերող վկայությունները հայ միջնադարյան պատմագրության մեջ, այնուամենայնիվ նրա անունը հիմք է տվել մերօրյա պատմագրությանը Կիլիկիայում հիմնադրված քաղաքական միավորումը և հաստատած հարստությունը կոչել նրա անունով:

Կիլիկիայի հայկական իշխանությունն ավելի ամրապնդվեց Ռուբենի որդու՝ Կոստանտին Ա-ի (1095-1100) օրոք: 1098 թ. Կոստանտինը գրավեց Լեոնային Կիլիկիայի կարևորագույն հենակետերից մեկը՝ Վահկա ամրոցը, որը և դարձավ Ռուբինյան իշխանական տան անառիկ կենտրոնը: Կոստանտինն ավելի ընդարձակեց իր իշխանության սահմանները ոչ միայն ի հաշիվ սելջուկների, այլ նաև բյուզանդացիների⁷¹: Նրա իշխանության տարիներին Մերձավոր Արևելքում հայտնվեցին խաչակրաց Առաջին ռազմարշավի բանակները, որոնք Կիլիկիայի հարևանությամբ ստեղծեցին իրենց իշխանությունները: Ռուբինյան իշխանները տարածաշրջանում հաստատված մյուս հայկական իշխանությունների հետ համագործակցում էին խաչակիրներին, Մերձավոր Արևելքի մուսուլմանական պետությունների դեմ մղած նրանց պայքարում: Պայքարի այս փուլում իրենց համարելով Բյուզանդական կայսրության անմիջական ժառանգորդներ, Կիլիկիայի գրեթե ողջ դաշտային հատվածի վրա իրենց իշխանությունը փորձեցին տարածել Անտիոքում հաստատված նորման խաչակիրները, որոնք ձեռնոց նետեցին Բյուզանդական կայսրությանը՝ այդ տարածքների *de jure* տերերին: Այս երկու ուժերի միջև Դաշտային Կիլիկիայի համար ծավալված պայքարին տասնամյակներ շարունակ ուշի ուշով հետևում էր Ռուբինյան իշխանությունը: Ռուբինյան իշխան **Թորոս Ա**-ը (1100-1129) շարունակելով իր հոր՝ Կոստանտինի քաղաքականությունը, 1104 թ. իր տիրություններին միացրեց Սիս և Անավարզա քաղաքները՝ փորձելով իր իշխանության սահմանների մեջ ընդգրկել Լեոնային Կիլիկիայի բոլոր ամրությունները:

1108 թ. Դեաբոլի պայմանագրով, որը կնքվել է Բյուզանդական կայսրության և Միցիլիայի նորմանական թագավոր Բոհեմունդի (նաև Անտիոքի խաչակրաց առաջին իշխան) միջև, հիմք դրվեց հյուսիս-արևելյան Միջերկրականում ձևավորված քաղաքական միավորների կողմից միջպետական փոխհարաբերությունների դաշտին: Ըստ այդ փաստաթղթի, Բյուզանդական կայսրությանը պետք է վերադարձվեր Կիդնոս և Հերմոն (Պիրամիս) գետերի միջև ընկած ողջ Դաշտային Կիլիկիան: Համաձայնագրում հիշատակվում են Թորոս Ա և Լևոն Ա Ռուբինյան իշխանները, իբրև Բյուզանդական կայսրության ստորականներ⁷²: Այս տրամադրությանը հետևում է նաև արաբ միջնադարյան պատմագրությունը: Անտիոքում Բոհեմունդին հաջորդած

⁶⁹ Մամուլե, էջ 116: Տե՛ս ծան. 54:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Սմբատ, 1856, էջ 74:

⁷² Տե՛ս Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը..., էջ 72-79: Հմմտ. **Анна Комнина**, *Алексиада / Вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского*, М. 1965, с. 364-372, прим. 1356-1397.

Տանկրեդը ստիպված էր ճանաչել Բյուզանդական կայսրության գերիշխանությունը տարածաշրջանում և հատկապես Դաշտային Կիլիկիայում:

Ռուբինյան իշխանները Կիլիկիայի լեռնային հատվածի անկախությունը պահպանելու համար երկարատև ու ծանր պայքար մղեցին սելջուկյան պետությունների (Բկոնիայի սուլթանություն, Դանիշմանյան ամիրայություն, Խարբերդի Արտուքյան ամիրայություն), խաչակրաց իշխանությունների (Անտիոք ու Եդեսիա) և Բյուզանդական կայսրության դեմ: Այսպես՝ 1107 թ. Բկոնիայի սելջուկները Տավրոսյան լեռների կիրճերով ներխուժեցին Կիլիկիա, կողոպտեցին ու շարժվեցին դեպի արևելք՝ Գող Վասիլի երկիրը: Թորոս իշխանը, դաշնակցելով վերջինիս հետ, **Բերդուսի** մոտ տեղի ունեցած ճակատամարտում զլիսովին ջախջախեց թշնամուն ու ետ շարժեց երկրից⁷³: Ռուբինյանները դարձան Կիլիկիայի լեռնային շրջանների ժառանգական տերերը: 1110/11 թ. Բկոնիայի սուլթանությունը նոր ռազմարշավ ձեռնարկեց դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք՝ համաձայնեցնելով իր գործողությունները Մոսուլում նստող Սելջուկյան Մեծ սուլթանության հետ: Ռուբինյանները կարողացան խաչակիրների հետ դաշնակցած հակահարված տալ այդ ներխուժմանը և նույնիսկ ամրապնդեցին իրենց իշխանությունը՝ Մանդալե եղբայրներից գրավելով Կիզիստրա ամրոցը⁷⁴: 1126/27 թ. Ռուբինյան Թորոսը դաշնակցում է Բկոնիայի և Դանիշմանյան ամիրայության դեմ պատերազմող Արապին⁷⁵:

Իրերի վիճակը փոխվում է 1129 թ. Թորոս Ա-ի և նրա մանկահասակ որդի Կոստանդինի մահից հետո, երբ Կիլիկիայի իշխանապետության կառավարման լծակները իր ձեռքն է վերցնում Լևոն Ա Ռուբինյանը (1129-1137), որն ըստ Դեաբոլյան պայմանագրի արդեն տիրում էր Լեռնային Կիլիկիայի որոշ շրջանների և համարվում էր Բյուզանդական կայսրության ստորական⁷⁶: 1129 թ. հետո բարձրացող Ռուբինյան իշխանությունը պայքար է սկսում Դաշտային Կիլիկիայի համար: Այդ պայքարում Ռուբինյան իշխանությունը թշնամացավ ոչ միայն Անտիոքի լատին դքսությանը, այլ նաև Բյուզանդական կայսրությանը՝ հետզհետե հրաժարվելով վերջինիս գերակայությունից: Կիլիկիայի հայկական իշխանության փոխհարաբերությունները բարեկամական չէին նաև հյուսիսային հարևանի՝ Դանիշմանյան ամիրայության հետ: Միքայել Ասորիս և Վիլիելմ Սուրացին, ներկայացնելով Թորոս Ա-ի մահից հետո Կիլիկիայում ստեղծված իրավիճակը, Դաշտային Կիլիկիայի համար պայքարող կողմերի մեջ հիշատակում են Բոհեմունդ Բ Անտիոքացուն, որը 1129/30 թ. Կիլիկիայում հետապնդում էր Հալեպի տեր Ռիդվանին, երբ պատահաբար հանդիպում է միմյանց դեմ պատերազմի ելած Լևոն Ա-ին և Դանիշմանյան տիրակալ Էմիր Ղազուն: Թորոս Ա-ի մահից հետո, հավանաբար, խախտվել էր ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Հիշատակված սկզբնաղբյուրների վկայությունների մեջ հետաքրքիր է այն փաստը, որ հիմնական բախումը տեղի է ունենում Դանիշմանյան թյուրքերի և Անտիոքի ֆրանկների միջև, իսկ Լևոն Ա-ը հետապնդում է ոչ թե հաղթանակ տարած

⁷³ Մառթեոս Ուռհայեցի, էջ 306, հմմտ. G. Dédéyan, Les arméniens..., p. 504-505.

⁷⁴ G. Dédéyan, Les arméniens..., p.505-507.

⁷⁵ Այս պատերազմի մասին տե՛ս Ս. Բոգոյան, Բյուզանդիայի..., էջ 62-63; G. Dndnyan, Les arméniens..., p. 508-509.

⁷⁶ Ս. Բոգոյան, Բյուզանդիայի..., էջ 80:

Ղազի Դանիշմանյանի գորաջոկատներին, այլ ֆրանկներին⁷⁷: Խաչակրաց Արևելքի պատմիչ Վիլհելմ Սուրացին Բոհեմունդ Բ Անտիոքացու և մահմեդական զորքերի բախման վայրն անվանում է Portus Pallorum (հին ֆրանս. Prn des Pailles), իսկ Միքայել Ասորին Ղազի Դանիշմանյանի զորքերի և Անտիոքի իշխանի գլխավորած բանակի առճակատման վայրը կոչում է Անավարզայի դաշտ: Կարելի է նաև ենթադրել, որ Ղազի Դանիշմանյանը ռազմական դաշինք է կնքել Հալեպի տիրոջ հետ, որի բանակը Ռիդվանի (հավանաբար Հալեպի աթաբեկության գորավարներից) գլխավորությամբ հարձակվել է Անտիոքի դքսության վրա և արշավել մինչև Դաշտային Կիլիկիա⁷⁸:

Չնայած այս դեպքերից մի քանի տարի առաջ Ռուբինյան իշխանությունը Թորոս Ա-ի գլխավորությամբ մասնակցում էր Արապի ստեղծած հակադանիշմանյան զինակցությանը (1125-1127), այժմ, երևում է, որ Լևոն Ա Ռուբինյանը, Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի դքսության հավակնություններին հակահարված տալու միտումով և երկրի դաշտային հատվածը գրավելու մտադրությամբ, ավելի է հակվում դեպի Դանիշմանյան ամիրայությունը⁷⁹: Եթե այս դեպքերի առիթով վերհիշենք այդ տարիներին Փոքր Ասիայում տիրող քաղաքական կացությունը, երբ Բյուզանդական կայսրությունը բոլոր ճիգերն էր գործադրում վերսկսելու սևծովյան ափերի գրավումը, ապա ակնհայտ կդառնա, որ Լևոն Ա իշխանը իր գործողություններով օգնելով Ղազի Դանիշմանյանին՝ Բյուզանդական կայսրության այդ տարիների ամենաոխերիմ հակառակորդին, փաստորեն քայլ էր կատարում Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից դուրս գալու և Դանիշմանյան ամիրայության կողմն անցնելու համար: Արդյո՞ք այս փաստը նկատի չունի բյուզանդական մատենագիր Միքայել Իտալիկոսը, որն ուղղակիորեն վկայում է, որ Լևոն Ա Ռուբինյան իշխանը, մերժելով բյուզանդական գերակայությունը, իրեն թագավոր է օծել⁸⁰: Արդյո՞ք Անտիոքի իշխան Բոհեմունդ Բ-ն համաձայնեցրել էր իր գործողությունները Բյուզանդական կայսրության հետ և հիշատակված իրադարձություններում հանդես էր գալիս նրա դաշնակցի դերում:

Անտիոքի երիտասարդ իշխանի անհեռատես գործողությունները և նրա մահը (1129/30) բացասական հետևանքներ ունեցան Անտիոքի խաչակրաց իշխանության հետագա պատմության վրա: Դաշտային Կիլիկիայում տեղի ունեցած հիշյալ բախման հետևանքով Անտիոքը կորցրեց իր իշխանին և մինչև 1136 թ. ենթարկվելով մերթ Երուսաղեմի թագավորներ Բալդուին (Պաղտին) Բ-ի, ապա (1131 թ. հետո)՝ Ֆուլք Անժուացու, երբեմն էլ Եդեսիայի կոմս Ջոսլին Բ-ի իշխանությանը, զրկվեց ինքնուրույն գործելու հնարավորությունից՝ ժամանակավորապես մոռացության մատնելով Դաշտային Կիլիկիային տիրելու խնդիրը⁸¹: Բոհեմունդ Բ Անտիոքացու մահվան իրադարձությունից մեկ տարի անց՝ 1130/1 թ., ըստ Միքայել Ասորու, Դանիշմանյան Ղազին կրկին արշավում է դեպի կիլիկյան հայկական իշխանություն: Այս անգամ Ղազին նպատակադրվել էր խափանել Բյուզանդական կայսրության հետ Ռուբինյան

⁷⁷ M. S., t.III, p. 227:

⁷⁸ Տե՛ս **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի..., էջ 81-82:

⁷⁹ **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի..., էջ 83:

⁸⁰ **Հ. Մ. Բաթթիկյան**, Միքայել Իտալիկոսի 77777Ներբողյանը88888 և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորի խնդիրը, ՊԲՀ, 1984, 4, էջ 218: Այս մասին տե՛ս նաև **G. Dndnyan**, Les arméniens..., p. 531-532:

⁸¹ **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի..., էջ 84:

իշխանության համատեղ գործողությունները, հակաբյուզանդական և հակալատին դաշինքի մեջ ներգրավել Լևոն Ա Ռուբինյան իշխանին: Ռուբինյանների և Դանիշմանյանների միջև հաստատված հաշտությունը բավական լուրջ դաշինք էր ընդդեմ Բյուզանդական կայսրության⁸²: Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանությունը դրանով ազդարարում էր, որ այլևս Բյուզանդական կայսրության ստորական չէ: Այս պահվածքի անուղղակի վկայություն կարելի է համարել նաև այն, որ Լևոն Ա իշխանը Դաշտային Կիլիկիայում տարածքներ է շնորհում Հովհաննես Բ Կոմնենոսի դեմ ապստամբած և Բյուզանդական կայսրության սահմանները լքած Իսահակ Կոմնենոսին⁸³:

Լևոն Ա Ռուբինյանը 1132 թ. փորձում է օգտվել Դանիշմանյան Ղազիի հետ կնքած հաշտության պայմանագրից և ներխուժում է Դաշտային Կիլիկիա: Այդ իրադարձությունները գրանցող ժամանակագիր Սամուել Անեցին և տարեգիր Սմբատ Սպարապետը միմյանց հակասում են ժամանակագրության խնդրում: Այս դեպքերի թվագրման համար հակված ենք ընդունել Սմբատ Սպարապետի առաջարկած 1132 թ., որովհետև ենթադրում ենք, թե այս իրադարձությունները կապված են Իսահակ Կոմնենոսին Կիլիկիայից վտարելու անցուղարձերի և Ռուբինյան հայկական իշխանությունն ինքնանկախ հայտարարելու փաստի հետ: Այս ժամանակով կարելի է թվագրել Դաշտային Կիլիկիայի Մսիս (Մոպսուեստիա), Ադանա և Տարսոն քաղաքների վերջնական անցումը Ռուբինյան իշխանության ենթակայության տակ, որով սրվում են նաև փոխհարաբերությունները Անտիոքի լատին իշխանության հետ: Անտիոքի իշխանության դեմ պայքարում Եդեսիայի կոմսությունը դառնում է Լևոն Ա-ի ժամանակավոր դաշնակիցը⁸⁴:

Կիլիկյան իշխանապետությունը 1129-1136 թթ. կենաց և մահու պայքար էր մղում Բկոնիայի սուլթանության, Դանիշմանյան ամիրայության և Անտիոքի լատին դքսության, Բյուզանդական կայսրության և նրա դրածոների դեմ: Բախման հիմնական պատճառը և թատերաբեմը Դաշտային Կիլիկիան էր⁸⁵: Այս թվականների ընթացքում Լևոն Ա Ռուբինյան իշխանն առաջին անգամ բացահայտորեն արտահայտեց իր նպատակը՝ տիրել Դաշտային Կիլիկիային: Այդ պայքարի ընթացքում նա փորձում է թոթափել բյուզանդական ստորակայությունը և, հավանաբար, իրեն անկախ է հռչակում, ինչն էլ պատճառ է դարձել բյուզանդական մատենագիր Միքայել Իտալիկոսի համար, բնութագրել Լևոն Ա-ին իբրև ինքնակոչ⁸⁶: 1135/6 թ. Անտիոքի նորակոչ իշխան Ռայմոնդ Պուատիեն, տեսնելով, որ անկարող է զենքի ուժով ընկճել Լևոն Ա Ռուբինյան իշխանին⁸⁷, դիմում է խորամանկության, և նրան գերի է վերցնում⁸⁸: Տարածաշրջանի քաղաքական հաշվեկշիռը պահպանելու մտահոգությամբ Բյուզանդական կայսրությունը, որը չէր հրաժարվել Կիլիկիայի նկատմամբ հավակ-

⁸² Տե՛ս **Ա. Բոգոյան**, Բյուզանդիայի..., էջ 85-86:

⁸³ Նույն տեղում, էջ 66, 86:

⁸⁴ Նույն տեղում, էջ 86-91:

⁸⁵ Տե՛ս **Ա. Բոգոյան**, Բյուզանդիայի..., էջ 61-70, 81-94:

⁸⁶ **P. Lamma**, La spedizione di Giovanni Comneno in Cilicia ed in Siria in un panegirico inedito di Michele Italo, Estratto dal vol. IV Serie V delle Memorie della Accademia delle Scienze di Bologna, Classe di Scienze Morali, Bologna, 1952, p. 3-28; հմմտ. **Հր. Բաթթիկյան**, Միքայել Իտալիկոսի..., էջ 216-220:

⁸⁷ Լևոնը Թորոս Ա-ի եղբայրն էր՝ Կոստանդին Ա-ի կրտսեր որդին:

⁸⁸ Տե՛ս **Ա. Բոգոյան**, Բյուզանդիայի..., էջ 80, 95-97:

յան տիրապետության տակ, Կիլիկիան նվաճելուց հետո նոր ճեղքվածքներ առաջացան Իկոնիայի սուլթանության և Բյուզանդական կայսրության դիվանագիտական փոխհարաբերություններում⁹⁵։ Քաղաքական այս փոփոխական իրադրությամբ պետք է բացատրել Հովհաննես Բ Կոմնենոսի երկրորդ կիլիկյան ռազմարշավի (1143 թ.) կազմակերպումը։ Հովհաննես Բ-ին փոխարինած Մանուել Ա կայսրը ևս իր արևելյան քաղաքականության մեջ շարունակում էր կարևոր տեղ հատկացնել Կիլիկիային։

1140-ական թթ. Կոստանդնուպոլսում գերության մեջ մահանում են Լևոն Ա իշխանը և նրա ավագ որդին, իսկ մյուս որդուն՝ **Թորոսին**, Բ խաչակրաց ռազմարշավի (1148 թ.) նախօրյակին (կամ ընթացքում) հաջողվում է փախչել և կրկին հայտնվել Կիլիկիայում՝ օգտագործելով բարենպաստ քաղաքական իրադրությունը⁹⁶։

Թորոս Բ իշխանը (1148/51-1169) իր եղբայրների՝ Ստեփաննի և Մլեհի օգնությամբ կարողանում է կրկին տիրանալ հայրենական գրեթե բոլոր տիրույթներին։ Իկոնիայի սուլթանության և Բյուզանդական կայսրության դեմ վարած երկարատև պատերազմներից հետո նա իր իշխանությունը հաստատում է նաև Դաշտային Կիլիկիայում, որի նկատմամբ հավակնություններ ունեին Բյուզանդական կայսրությունը և Անտիոքի իշխանապետությունը։ Պիտի ընդգծել, որ տարածաշրջանում բավական հզոր իշխանություն էր հետզհետե ձեռք բերել Հալեպի աթաբեկ Զանգին, որը ԺԲ դարի 40-ական թթ. տեր դարձավ Եդեսիայի կոմսության գրեթե բոլոր տիրույթներին։

1148-1151 թթ. ընթացքում Կիլիկիայում կրկին վերածնվեց Ռուբինյան հայկական իշխանությունը վերականգնելու գաղափարը։ Խաչակրաց ռազմարշավն ավելի ակտիվացրեց քաղաքական պայքարը Հյուսիսային Ասորիքում և կարևոր խթան դարձավ այդ տարածաշրջանի քրիստոնյա ժողովուրդների քաղաքական ուժերի աշխուժացման համար։ Կարելի է նկատել, որ Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը վերականգնելու համար ամենահարմար պահը Երկրորդ խաչակրաց ռազմարշավի հետևանքով Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում ստեղծված բարդ քաղաքական իրադրությունն էր⁹⁷։ Այս անգամ արդեն, իրոք, հող էր նախապատրաստվել Լևոնի որդիների Կիլիկիա վերադառնալու համար։ Ռուբինյան իշխանության վերականգնման գործին լծվեց Լևոն Ա իշխանի ավագ որդին՝ Թորոս Բ-ն, և օգտագործելով քաղաքական նպաստավոր իրադրությունը մեծ հաջողությամբ իրականացրեց այդ հանձնառությունը⁹⁸։

Կիլիկիայում Ռուբինյան իշխանության վերականգնումը մի քանի տարում բարդ քաղաքական խնդիր էր, մանավանդ, որ բյուզանդական իշխանություններն ամեն գնով խոչընդոտում էին այդ քայլերին։ Թորոս Բ Ռուբինյանը պետք է կարողանար շահել Կիլիկիայի բազմազգ բնակչության համակրանքը, օգտագործեր նրանց քաղաքական և տնտեսական հզորությունը։ Այդ առումով հետաքրքիր է Միքայել Ասորու վկայությունը, թե Թորոս Բ Ռուբինյանի իշխանությունը վերականգնելու գործում աջակցել է Անավարզայի հակոբիկ Եկեղեցու մետրոպոլիտ Աթանասը։ Ռուբինյան իշ-

⁹⁵ Ա. Բոգոյան, Բյուզանդիայի..., էջ 123։

⁹⁶ Տե՛ս Ա. Բոգոյան, Բյուզանդիայի..., էջ 164-190։

⁹⁷ Ա. Բոգոյան, Բյուզանդիայի..., էջ 181։

⁹⁸ Տե՛ս նաև **Բաբգեն Աթոռակից Կաթողիկոս**, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլաս 1961, սյուն 205։

խանին են միանում նաև Լեոնային Կիլիկիայի «բազմաթիվ հայեր և ֆրանկներ»: ԺԲ դարի երկրորդ կեսին Կիլիկիայում կողք-կողքի բնակվում էին հույներ, հայեր, ասորիներ, լատիններ, տեղ-տեղ նույնիսկ՝ սելջուկ թյուրքեր: Այդ իսկ պատճառով Ռուբինյան հայկական իշխանությունը, որը տարածքային առումով կտրված էր Մեծ Հայքի ազգային-մշակութային հողից ու չունեի Կիլիկիայում պետականություն ստեղծելու և վարչական ապարատ կազմակերպելու երկարատև ավանդներ, միայն հայկական համայնքի մեջ պարփակված չէր կարող պետականություն հաստատել և իր իշխանությունը պարտադրել հարևան ժողովուրդներին: Հարկավոր էր համաձայնության գալ տարածքը բնակեցնող հիմնական կրոնական համայնքների, ժողովուրդների և հարևան պետությունների հետ:

Կիլիկիայի տարածքում բնակվող ասորիների (ավելի ճիշտ՝ հակոբիկ ասորական Եկեղեցու ներկայացուցիչների) համար Կիլիկյան իշխանության հզորացումը մի գործոն էր, որն առողջ պտուղներ էր խոստանում: Միքայել Ասորու պատմածից պիտի ենթադրել, որ Ռուբինյանները Կիլիկիայի իշխանության սահմաններում անձեռնմխելի են հայտարարել հակոբիկ Եկեղեցու ունեցվածքը և Հայոց Եկեղեցուն համահավասար իրավունքներ են ընձեռել: Ռուբինյանները փորձում էին տարբեր կրոնական և եկեղեցական ավանդություններ ունեցող ժողովուրդների հետ փոխհարաբերություններ մշակելիս հաշտության եզրեր գտնել: Չնայած երկրամասում հայերն սկսել էին մեծամասնություն կազմել՝ իրենց ձեռքը վերցնելով քաղաքական իշխանությունը, սակայն նրանք շարունակում էին իրենց դեռևս համարել տարագրվածներ⁹⁹: Այդ է պատճառը, որ Թորոս Բ Ռուբինյանը, բացի հակոբիկ ասորիներից, փորձում է շահել նաև խաչակիրների համակրանքը, և ամուսնանում է Ռապանի տեր ֆրանկ Սիմոնի դստեր հետ¹⁰⁰: Եդեսիայի կոմս Ջոսլին Բ-ի և նրա ստորականների համար Թորոս Բ Ռուբինյանը բնական դաշնակից էր, որովհետև այդ ժամանակ վերջինիս թշնամիների մեջ էր Իկոնիայի սուլթանությունը, որը տեր էր դարձել (Ջահանի շրջանի հետ միասին) Լեոնային Կիլիկիայի մի շարք կարևոր ամրոցների, իսկ արևմտաեփրատյան շրջանում փորձում էր Եդեսիայի իշխանությունից գրավել Մարաշը և հարակա շրջանները¹⁰¹: Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինին ևս ձեռնադրել էր Իկոնիայի հզորացումը վերոհիշյալ տարածքում և հատկանշական է, որ նա 1148 թ., Ինաբի ճակատամարտից առաջ, դաշինք է կնքում Ջոսլին Բ-ի հետ¹⁰²: Գ խաչակրաց ռազմարշավի ընթացքում ստեղծված քաղաքական իրադրությունը նպաստավոր էր Կիլիկիայում հայկական իշխանությունը վերականգնելու համար:

Ռուբինյան իշխանության հզորացմանն ամեն գնով խանգարում էին բյուզանդական կողմնորոշում ունեցող Հեթումյանների, Հայկազունիների և Նաթանայելյանների

⁹⁹ Նույնիսկ ԺԳ դարում հայերն իրենց Կիլիկիայի իսկական բնիկ տեր չէին համարում: Այդ մասին հետաքրքիր տեղեկության ենք հանդիպում Գևորգ Սկևռացու վարքում, տե՛ս **Է. Բաղդասարյան**, Գևորգ Սկևռացու 7777-Վարքը 8888, Բանբեր Մատենադարանի, 7, էջ 412:

¹⁰⁰ Ժամանակաշրջանի պատմությունը հարուստ է հայ և լատին ազնվականական տների ամուսնական կապերով, տե՛ս **R.Sdt-Collenberg W.H.** The Rupenides, Hethumides and Lusignans. The Structure of the Armeno-Cilician Dynasties, Paris, 1963:

¹⁰¹ **Սաաթեոս Ուռհայեցի**, էջ 396, **Գ. Յովսեփեան**, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 359:

¹⁰² M. S., t. III, p. 282: Միքայել Ասորին ընդգծում է, որ Եդեսիայի կոմսության և Հալեպի աթաբեկության միջև հաստատված դաշինքը հարվածում էր նաև Անտիոքի իշխանության կենսական շահերին:

իշխանական տները: Կարծես Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը վերածվել էր մի երկրի, որին Բյուզանդական կայսրությունը ամեն կերպ փորձում էր պահել իր սատելիտների ծիրում և թույլ չէր տալիս դուրս գալ Մերձավոր Արևելքում բորբոքվող քաղաքական խմորումների ոլորտ: Երկրի փաստացի իշխանությունը վերականգնելու համար Թորոս Բ-ին հարկավոր էր դիմել ռազմական հակամարտության:

1151-1152 թթ. Թորոս Բ իշխանը ջախջախիչ պարտության ենթարկեց երկրամասի բյուզանդական զորամիավորումներին, գերեվարեց Կիլիկիայի բյուզանդամետ իշխաններին, որոնց մեջ յուրահատուկ դիրք էր գրավում Լամբրոնի տեր Օշին Հեթումյանը, իսկ բյուզանդական զորքերի հրամանատարներն էին Կիլիկիայի դուքս Թումասը, ապա՝ Անդրոնիկոս Կոմնենոսը¹⁰³: Բյուզանդամետ իշխաններն Օշին Լամբրոնացու գլխավորությամբ ստիպված էին փրկագին վճարել և ճանաչել Թորոս Բ-ի գերագահությունը: Այս անհաջողություններից մեկ տարի անց Բյուզանդիան դրդեց Իկոնիայի սուլթանությանը հարձակվել Կիլիկիայի վրա: Իկոնիայի զորքերը ներխուժեցին Կիլիկիա, սակայն Թորոս Բ-ը կարողացավ բանակցությունների միջոցով խուսափել ռազմական խոշոր բախումից: Այնուամենայնիվ, երկիշխանությունը Կիլիկիայում շարունակվում էր: Թորոս Ռուբինյանը մի կողմից ստանում էր բյուզանդական տիտղոսներ, մյուս կողմից՝ նրա իշխանությանը զուգահեռ կայսրությունը նշանակում էր իր կառավարիչներին: 1154-1156 թթ. Մանուել Ա Կոմնենոսը փորձում է ընկճել Թորոս Բ Ռուբինյանին՝ նրա դեմ հրահրելով մերթ Իկոնիայի սուլթանությանը, մերթ Անտիոքի լատին իշխանությանը: Սակայն երբ ձախողվեց նաև այս մտահղացումը, և հիշյալ քաղաքական միավորումները դաշինք կնքեցին ընդդեմ Բյուզանդիայի, ավելին՝ Կիլիկիայի և Անտիոքի տերերը 1156 թ. ռազմարշավ ձեռնարկեցին դեպի Կիպրոս, Մանուել Ա-ը որոշեց կրկին ներխուժել Կիլիկիա և Անտիոք: Անշուշտ, Բյուզանդական կայսրությունը չէր կարող համակերպվել ո՛չ Դաշտային Կիլիկիայի և առավել ևս՝ ո՛չ էլ Կիպրոսի կորստի հետ:

1158 թ. Բյուզանդական կայսր **Մանուել Ա** Կոմնենոսը ներխուժեց Կիլիկիա: Այս անգամ ևս իր դիվանագիտական հմտությամբ փայլեց Թորոս Բ իշխանը: Նա սկզբում քաշվեց լեռները, ապա Անտիոքի դքսի հետ միացավ Մանուել Ա Կոմնենոսի ստեղծած հակահալեպյան դաշինքին: Ընդունելով Բյուզանդական կայսրության գերակայությունը, նա փրկեց երկիրը նոր ավերածություններից: Թորոս Բ-ն իր մասնակցությունը բերեց Մանուել Ա Կոմնենոսի հալեպյան ռազմարշավին, իսկ հետագայում մասնակցեց 1164 թ. տեղի ունեցած Հարիմի ճակատամարտին: Իհարկե այս ճակատամարտում բյուզանդական բանակի պարտությունից հետո, կայսրության դիրքերը տարածաշրջանում բավական թուլացան: Ուշագրավ է, որ Թորոս Բ-ն ճակատամարտի վճռական պահին իր զորքով հեռացել է բախման վայրից¹⁰⁴:

Բուն Կիլիկիայում հասունանում էր բյուզանդամետ իշխանների դեմ պայքարը: Նման բախումներ թույլ չտալու միտումով տարածաշրջանի գործերին միջամտում է Հռոմկլայի Հայոց Կաթողիկոսարանը: Հայոց Հայրապետի եղբայր Ներսես Շնորհալին 1165 թ. հանձն է առնում երկու կողմերի միջև հաշտարար դատավորի դերը: Այս շրջանակներում Բյուզանդական կայսրության հետ սկսվում են երկարատև բանակցություններ հայկական և բյուզանդական Եկեղեցիների միության խնդրի շուրջ:

¹⁰³ Ս. Բոգոյան, Բյուզանդիայի..., էջ 196-202:

¹⁰⁴ Տե՛ս Ս. Բոգոյան, Բյուզանդիայի..., էջ 206-207:

Սկսված երկխոսությունը շարունակվեց մինչև 1178 թ., այնուհետև երկար դադարից հետո վերսկսվեց ԺԲ դարի վերջին:

Կիլիկիայի իշխանության արևելքում հետզհետե հզորանում էր Հալեպի աթաբեկությունը, որը Բյուզանդական կայսրության դեմ պայքարում փորձում էր օգտագործել կիլիկյան գործունը: Ուշագրավ է, որ աթաբեկ Նուր ադ-Դինի ստորական էր դարձել Թորոսի եղբայր Սլեհը, երբ նրանց եղբայր Ստեփանեն 1162 թ. զոհվել էր բյուզանդական զորահրամանատար Անդրոնիկոս Կոմնենոսի լարած որոգայթում¹⁰⁵:

Հավանաբար 1170 թ., բյուզանդական տիրապետության վերջին մնացորդները մաքրելու միտումով, Թորոս Բ-ի մահից հետո, Կիլիկիայում տեղի է ունում հեղաշրջում, որի զոհն է դառնում Թորոս Բ իշխանի մանկահասակ որդի Ռուբեն Բ-ն (1169-1170): Իր եղբորը փոխարինելու համար, Նուր ադ-Դինի զորամիավորներով տարածաշրջան է շտապում Սլեհ իշխանը: Հայկական սկզբնաղբյուրները Թորոս Բ-ի ժառանգի սպանության մեջ մեղադրում են Սլեհին՝ ակնարկելով նրա հակաբյուզանդական կամ մուսուլմանամետ դիրքորոշումը: Հավանաբար այդ դիրքորոշման դրսևորման փաստերից մեկն էլ Թորոսի մանկահասակ որդու անժամանակ մահն էր¹⁰⁶: Այդ իրադարձությունը տեղի ունեցավ Հռոմկլայում, ուր իր խնամակալի հետ ապաստան էր գտել մանկահասակ իշխանագունը:

Թորոս Բ-ի եղբոր՝ **Սլեհի**¹⁰⁷ գահակալության (1170-1175) տարիներին ուժեղացավ պայքարը Բյուզանդական կայսրությունից Կիլիկիայի կախումը վերացնելու համար: Սլեհը 1173 թ. բյուզանդացիներից ազատագրեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը: Մյուս կողմից նա բախվեց Անտիոքի դքսության հետ: Շարունակելով իր երբայր Թորոսի քաղաքականությունը, Սլեհը պաշարեց Լամբրոնը՝ բյուզանդամետ կողմնորոշման արծվաբույնը՝ ստիպելով իշխան Հեթումին ճանաչել Ռուբինյանների գերագահությունը¹⁰⁸: Խաչակրաց պետությունների և բյուզանդացիների դեմ ուղղված թշնամական քաղաքականությունը չհամախմբեց երկրի առանց այդ էլ ջլատված ուժերը, իսկ դեպի Հալեպի աթաբեկություն միտված դաշինքի քաղաքականությունն ավարտվեց նոր հեղաշրջումով: 1175 թ. Սլեհը դավադրաբար սպանվեց: Կիլիկիան միավորելու նրա կարևորագույն վաստակներից կարելի է համարել Միս քաղաքը իշխանապետության կենտրոնի վերածելու նրա ձեռնարկած քայլերը¹⁰⁹, թեպետ Տարսուսի հետ մրցակցությունը դեռևս երկար շարունակվեց:

Հերթական հեղաշրջման հետևանքով, Կիլիկիայում իշխանությունն անցավ Ստեփանեի որդի Ռուբենին (1175-1187), որը Կիլիկիայի հայկական իշխանությունը հզոր, ինքնանկախ պետություն դարձնելու կողմնակից էր: Հիշարժան է նաև այն փաստը, որ նրա քեռին Պապեռոնի Հեթումյան իշխանն էր: Այս հանգամանքը թույլ էր տալիս թուլացնել Ռուբինյան և Հեթումյան տոհմերի միջև բոլորովին հակամարտությունը: Ռուբեն Գ-ի ողջ գործունեությունը կենտրոնացավ Լեոնային և Դաշտային Կիլիկիաների օրգանական միացմանը նպաստող քաղաքական կուրս վարելու գաղափարի

¹⁰⁵ Տե՛ս **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի..., էջ 204:

¹⁰⁶ Այս մասին տե՛ս **Սմբատ**, 1859, էջ 101:

¹⁰⁷ Դեռևս Թորոս Բ Ռուբինյանի իշխանության տարիներին, մտնելով Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինի մոտ ծառայության, նա ստացել էր Գուրա (Կուրիս) քաղաքն իր շրջակայքով (տե՛ս **Սմբատ**, 1856, էջ 88):

¹⁰⁸ Տե՛ս **Սմբատ**, 1859, էջ 101:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 102:

շուրջ, որի իրագործման համար էլ նա ընդդեմ Անտիոքի իշխանապետության դաշնակիցներ էր փնտրում տարածաշրջանում: Պատմական թատերաբեմում Ռուբենին կարելի է համարել հորեղբոր գործի շարունակող, քանի որ նա չփորձեց կտրուկ քայլերով իր դեմ թշնամացնել շրջակայքի մուսուլմանական իշխողներին: Ռուբենն ուշիուշով հետևում էր տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններին: Նա փորձեց հաշտության եզրեր գտնել Կիլիկիայի բյուզանդամետ իշխանների հետ, որոնք Բյուզանդական կայսրության թուլացմանը զուգընթաց կորցնում էին տարածաշրջանում իրենց հեղինակությունը: Այդ իշխանություններն իր հովանու տակ ներգրավելու Ռուբեն Գ իշխանի քաղաքականությունն ավելի իրատեսական էր, քանի որ նրա մայրը Պապեռոնի Հեթումյան իշխանական ընտանիքի դուստրն էր:

1176 թ. **Միրիոկեֆալեի** ճակատամարտում բյուզանդական բանակը ջախջախիչ պարտություն կրեց Իկոնիայի սուլթանությունից: Դրանից հետո Բյուզանդական կայսրությունն ամբողջովին զիջեց իր դիրքերը Փոքր Ասիայում: Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը կարող էր ամբողջովին ձերբագատվել կայսրության ստորակայի կարգավիճակից: Այդ ճակատամարտից հետո Ռուբինյանները թոթափելով բյուզանդական ենթակայությունը, փաստացի անկախություն ձեռք բերեցին, իսկ երկու տասնամյակ անց նաև հարևան երկրների կողմից ճանաչվեցին իբրև թագավորական հարստություն:

Օգտվելով բարենպաստ հանգամանքից, Մլեհին հաջորդած **Ռուբեն Գ** իշխանն¹¹⁰ ազատագրեց բյուզանդացիների տիրապետության տակ գտնվող Դաշտային Կիլիկիայի **Ադանա** և **Տաքսոն** քաղաքները՝ միաժամանակ ստիպված լինելով հակահարված տալ 1180 թ. Կիլիկիա ներխուժած Սալահ ադ-Դինի հրոսակներին: **Ռուբեն Գ**-ն նաև շարունակեց պայքարը Հեթումյաններին իրեն հպատակեցնելու համար, սակայն Լամբրոնի իշխան Օշինն այս անգամ դաշինք կնքեց Անտիոքի դքսության հետ: Ռուբեն Գ-ն ևս փորձեց դաշնակիցներ գտնել խաչակիրների շրջանում և ամուսնացավ Երուսաղեմի թագավորության ստորակա, Կրակի (Քարաք) իշխան Օնֆրուա Գ Տորոնացու դստեր՝ Իզաբելի հետ¹¹¹: Հույս չունենալով զենքի ուժով Ռուբինյաններից խլել Դաշտային Կիլիկիան, Անտիոքի դուքս Բոհեմունդ Գ-ն դիմեց խորամանկության: 1185 թ. նա Ռուբեն Գ-ին հրավիրեց Անտիոք և դավադրաբար ձերբակալեց, ապա ներխուժեց Կիլիկիա¹¹²: Սակայն այստեղ զավթիչների դեմ ելավ Ռուբենի կրտսեր եղբայր Լևոն Բ իշխանը և նրանց երկրից դուրս վռնդեց: Լևոնն, այնուամենայնիվ, ստիպված էր մոծել մեծ փրկագին, տալ Ադանա և Մսիս քաղաքները, որպեսզի եղբորն ազատի գերությունից: Այս իրադարձությունից հետո Ռուբեն Գ-ն հավանաբար հրաժարվեց իշխանական գահից հոգուտ կրտսեր եղբոր¹¹³:

ԺԲ դարի ընթացքում մղված երկարատև պայքարից հետո Ռուբինյան իշխանությունն ամրապնդեց իր դիրքերը Կիլիկիայում: Ներքին և արտաքին հմուտ քաղաքականության շնորհիվ Ռուբինյան իշխանական տունը կարողացավ իր շուրջը հա-

¹¹⁰ Ռուբենը Մլեհի եղբոր՝ Ստեփաննի ավագ որդին էր:

¹¹¹ Տե՛ս **Մմբաստ**, 1859, էջ 282, հմմտ. **R. Grousset**, Histoire des Croisades..., t. III, p. 684.

¹¹² Հստ Միքայել Ասորի պատմիչի, Անտիոքի դուքս Բոհեմունդ Գ-ը այդ քայլը կատարել է՝ այն համաձայնեցնելով Սալահ ադ-Դինի հետ (հմմտ. **Ալիշան**, Սիսուան, էջ 454 ծան. 2):

¹¹³ Հմմտ. **Մմբաստ**, 1859, էջ 104:

մախմբել Կիլիկիայի հիմնական ռազմական ուժերը և ստեղծել հզոր պետություն: Այդ էր պատճառը, որ Լևոն իշխանը, դեռևս թագավորական թագը չստացած, սկզբնաղբյուրներում անվանվում էր նաև ինքնակալ¹¹⁴:

Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը

Իր գահակալության առաջին՝ իշխանական շրջանում (1187-1198) Լևոն Ռուբինյանն ընդարձակեց և ամրապնդեց սեփական պետության սահմանները, որոնք ընդգրկում էին Իսապրիայից մինչև «Դրունք Ասորուց» անվանվող կիրճը: Դա նպաստեց երկրի միջազգային հեղինակության բարձրացմանը: Միջազգային առևտրում մեծ կշիռ սկսեցին ձեռք բերել կիլիկյան նավահանգիստները, ուր ձեռնտու պայմաններով իրենց առևտուրն էին անում իտալական քաղաք-պետություններ Վենետիկը, Ջենովան և Պիզան: Այդ նշանակում էր, որ տարածաշրջանը թոթափել էր Բյուզանդական կայսրության առևտրատնտեսական վերահսկողությունը: Հատկանշական է, որ մինչև ԺԳ դարի սկիզբը կիլիկյան ափերում կատարվող առևտուրը կարգավորվում էր Բյուզանդական կայսրության հետ կնքված պայմանագրերով: Կիլիկիան հետզհետե դարձավ Միջերկրական ծովի արևելյան ափի ամենագործող պետություններից մեկը, որին անկարելի էր շրջանցել արևելք-արևմուտք քաղաքական և տնտեսական փոխհարաբերություններում: Եվրոպական միջնադարյան պատմագրության մեջ այն անվանվում է Հայոց թագավորություն, Փոքր Հայք կամ Արմենիա: Հայկական սկզբնաղբյուրներում այն անվանվում է Կիլիկյան աշխարհ կամ Հայոց աշխարհ:

ԺԲ դարի 80-ական թվականներին Հյուսիսային Ասորիքում տեղի ունեցած քաղաքական կարևոր փոփոխություններ: Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դինը իր պետությանը միավորեց Հալեպի աթաբեկությունը և սկսեց մեկը մյուսի ետևից նվաճել Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունները: 1187 թ. ընկավ Երուսաղեմը: Եվրոպայում նոր խաչակրաց ռազմարշավ կազմակերպելու կոչեր հնչեցին: Քաղաքական այս համաշխարհային խաղի մեջ ներգրավված էր նաև Կիլիկիայի հայկական իշխանությունը, որը 1184/5 թ. դեսպանագնացություններ էր ուղարկել Հռոմի Պապերին և Գերմանական կայսրերին: Այդ դեսպանագնացությունների հիմնական նպատակն էր համոզել Եվրոպային և պապական կուրիային, օգնության ձեռք մեկնել խաչակրաց Արևելքի քրիստոնյաներին: Ակնհայտ էր նաև Արևմտահռոմեական կայսրության և Հռոմի պապության կողմից Ռուբինյանների՝ իբրև թագավորական տան ճանաչումը:

Այս նույն ժամանակին (1184/5) է վերաբերում պատմիչների այն տեղեկությունը, ըստ որի Լևոն Բ իշխանը իր եղբայր Ռուբենի դուստրերին ամուսնացնում է Գրիգոր Դ Տղայի ազգական, Սասունի իշխան Չորսվանելի երկու որդիների հետ, իսկ մի քանի տարի անց, կաթողիկոսի մահից (1193 թ.) հետո, սպանել է տալիս նրանց ամուսիններին: Այս ամուսնությունների թվագրումով կարելի է ճշտել նաև Լևոն Բ-ի իշխան դառնալու թվականը¹¹⁵: «Յետ ամսեան ժամանակի՝ յորում վաղճանեալ էր կա-

¹¹⁴ Տե՛ս Ներսես Լամբրոնացու առ Լևոն թողթը:

¹¹⁵ 77777 Առաջին գործ Լեւոնի ի դէպ էր լինել՝ և եղել իսկ, ճանաչել և հատուցումն առնել երախտեաց եղբոր իւրոյ ... Այլ թէ եւ Փիլիպէ, հազիւ թէ հնգամեայ եւ վեցամեայ... (ամուսնացնում է) Հեթում և Շահնշահ, որդիք Չորստուանելի մեծատոհմ իշխանի Սասնոյ, և քեռ կաթողիկոսին Հայոց (Գր. Տղայոյ)... որոց

թողիկոսն Գր. Տղայ (ի 16 մայիսի), մեռան և երկոքին սոքա եղբարք, ոչ յայտնի ինչ բռնորէն մահուամբ...»¹¹⁶: Հատկանշական է, որ դինաստիական այս ամուսնություններով Լևոն Բ իշխանը փորձում էր կայունացնել երկրի ներքին վիճակը: Պատմության առեղծվածներից է, թե ի՞նչ կապի մեջ է Գրիգոր Դ Տղայի և Չորտվանելի երկու որդիների անժամանակ մահը: Չորտվանելի որդի Հեթումի խաղացած դերը Լևոնի իշխանության տարիներին բավական նշանակալի է եղել: Այդ է վկայում 1194 թ. Անտիոքի գրավման ռազմարշավին նրա մասնակցությունը¹¹⁷:

Ռուբեն Գ իշխանի այրիացած դստերին Լևոն Բ իշխանը հետագայում ևս օգտագործեց իր արտաքին քաղաքականության որոշակի խնդիրներ լուծելու մտահոգությամբ: Նրանցից երեցին՝ Ալիսին, 1194/5 թ. Լևոնը երկրորդ անգամ ամուսնացնում է Անտիոքի իշխանի անդրանիկ որդի Ռայմոնդի հետ՝ պայմանով, որ այդ միությունից ծնված զավակը ժառանգեր Անտիոքի և Կիլիկիայի իշխանական գահերը: Լևոնի ողջ նպատակը այս երկու պետական միավորների միացումն էր: Հատկանշական է, որ Լևոնն էլ 1189 թ. ամուսնացել է Անտիոքի դքսի աներձագի դուստր Զապլունի կամ Իզաբելի հետ¹¹⁸: Առաջին կնոջ մահից հետո, 1210 թ., Լևոնն ամուսնացավ Կիպրոսի թագավոր Ամորի Լուսինյանի դուստր Սիբիլի հետ: Ռուբեն Գ-ի մյուս դստերը Լևոնն ամուսնացրեց ավելի ուշ (1213 թ.) Նիկիայի բյուզանդական կայսր Թեոդորոս Լասկարիսի հետ¹¹⁹: Այս ամուսնությունները խոսում են այն մասին, թե որքան կարևոր տեղ էին զբաղեցնում միջդինաստիական կապերը Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքական կյանքում:

Լևոն Բ իշխանը, երրորդ խաչակրաց ռազմարշավի նախօրյակին, քայլեր ձեռնարկեց Բյոնիայի սուլթանության հարձակումներից իր երկրի հյուսիսային սահմանների պաշտպանությունը անխոցելի դարձնելու համար: Այս ճակատում Լևոն իշխանի հաջողությունները նկատելի էին: Նա կարողացավ Բյոնիայի սուլթանության զորքերին ետ մղել մինչև Սարվանդիքար, իսկ 1188 թ. սելջուկներից խլեց Պրականա ամրոցը: Այսպիսով, Գ խաչակրության նախօրյակին Լևոն Բ իշխանը իր հսկողության տակ է առնում Կալիկադոնոս գետի հովիտը:

Այլ էր վիճակը երկրի հարավային սահմաններում: 1188-1190 թթ. Սալահ ադ-Դինը բավական նեղ իրավիճակի մեջ դրեց Լևոն Բ իշխանին¹²⁰, երկարատև պատերազմների ընթացքում իրեն ենթարկելով գրեթե ողջ Խաչակրաց Արևելքը: Այնուամենայնիվ, Գ Խաչակրաց ռազմարշավի թողած ազդեցության շնորհիվ, Լևոն իշխանի ստորակա Ֆուկ Բուլոյնացին կարողացավ գրավել և տեր դառնալ Գաստոն (Պաղրաս)

անդրանկան՝ ետ Լևոն գանդրանիկն Ռուբինի՝ Ալիծ, և պաշտատական նմա զքաղաքն զգաւառ Մսսայ. իսկ կրտսերոյն՝ Շահնշահի՝ ետ կալուած Սելեկիայ վիճակն...88888 (Ալիշան, Սիսուան, էջ 441, սյ.1): Բիարկե Սմբատ պատմիչի այս վկայությունը (Սմբատ, 1859, էջ) ակնհայտորեն խոսում է Կիլիկիայի քաղաքական մոտեցումների լուրջ շրջադարձի մասին:

¹¹⁶ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 441, սյ. 1:

¹¹⁷ Տե՛ս R. Grousset, Les Croisades..., t.III, p. 130-131.

¹¹⁸ Նույն տեղում, էջ 441, սյ.2:

¹¹⁹ Ամուսնական այս պայմանագրի հունարեն բնագիրը հրապարակվել է ԺԺ դարի երկրորդ կեսին, տե՛ս А. Павлов, Синодальная грамота 1213 года о браке греческого императора с дочерью армянского князя.- Византийский Временник, т. 4, 1-2, СПб. 1897, с. 160-166, հմմտ. Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական նոթեր, ՀՍՍՀ Գ Ս Տեղեկագիր, հասարակական գիտություններ, 1960, 7-8, էջ 51-55:

¹²⁰ Ալիշան, էջ 443-445.

ամրոցին:

Մեծ աղմուկ հանած Գ խաչակրաց ռազմարշավի ցամաքային ուժերը 1190 թ. կազմալուծվեցին, երբ Գերմանական կայսր Ֆրեդերիկ Ա Բարբարոսան (Շիկամորուս) խեղդվեց (հունիսի 10) Կալիկադոս գետում: Այս ռազմարշավի հետևանքները Մերձավոր Արևելքում նշանակալի չէին: Երուսաղեմի կորստից հետո խաչակիրների միակ սփոփանքը Ռիչարդ Առյուծասրտի կողմից Աքքա ամրոցի գրավումն էր 1191 թ.: Խաչակրաց Արևելքի կենսունակությանը մեծ լիցք հաղորդեց նաև Կիպրոս կղզու նվաճումը բյուզանդական ինքնահռչակ կառավարիչ Իսահակ Անգելոսից: Այս իրադարձությունները մուսուլմանական աշխարհին ստիպեցին միավորվել Այուբյանների դրոշի ներքո:

Գ Խաչակրաց ռազմարշավի անհաջողությունից հետո (1191 թ.) Լևոն Բ Ռուբինյան իշխանը կրկին մեն-մենակ, առանց դաշնակցի, հայտնվեց Սալահ ադ-Դինի կողմից միավորված մահմեդական Արևելքի դեմ-դիմաց: Ծնկի բերելով Անտիոքի լատինական իշխանությանը, Այուբյան սուլթանն իր կյանքի վերջին տարում կրկին հայտնվում է Կիլիկիայի սահմանների առջև՝ սպառնալով նվաճել երկիրը: Լևոն Բ իշխանը կենտրոնացնում է իր բոլոր ուժերը, սակայն գործը չի հասնում ռազմական բախման: Երկիրը կործանումից փրկում է Սալահ ադ-Դինի հանկարծահաս մահը: Այդ իրադարձությունից (1193) հետո երկպառակտչական պատերազմներ են սկսվում Եգիպտոսի, Պաղեստինի, Ասորիքի և Միջագետքի տարածությունների վրա հիմնված հսկայածավալ Այուբյան պետության ներսում, և խախտվում է Սալահ ադ-Դինի ստեղծած կայսրության թվացյալ ամբողջականությունը: Մուսուլմանական աշխարհում սկիզբ առած ճգնաժամի հետևանքով, մասնատվում է նաև Բյուզնդիայի սուլթանությունը, և Խլիճ Արսլանի մահից հետո նրա տասը որդիների մեջ է բաժանվում երկիրը¹²¹:

Լևոն Բ իշխանը Սալահ ադ-Դինի մահից հետո փորձում է իր օգտին պտտեցնել պատմության անիվը և կենտրոնացնում է իր ռազմական ուժերը Անտիոքի իշխան Բոհեմունդ Գ-ին պատժելու համար, որը Եգիպտոսի սուլթանի հզորության օրերին գործիք էր դարձել նրա ձեռքին և նրա օժանդակությամբ գործողություններ էր ձեռնարկել Դաշտային Կիլիկիան նվաճելու համար:

1194 թ. Անտիոքի Բոհեմունդ Գ և Կիլիկիայի Լևոն Բ իշխանները տարաձայնությունները հարթելու համար հանդիպում են սահմանային Գաստոն ամրոցում: Լևոն Բ-ը խաբեությամբ գերում է Անտիոքի իշխանին և Երուսաղեմի թագավոր Հենրի Շամպայնցու միջնորդությամբ ստիպում՝ իր հետ պայմանագիր կնքել, որով վերջինս հրաժարվում էր Գաստոնից մինչև Այաս ձգվող Դաշտային Կիլիկիայի հարավային մասերի նկատմամբ ունեցած հավակնություններից, պարտավորվում էր Կիլիկիային վերադարձնել Ռուբեն Գ-ի գերության ժամանակ Անտիոքի իշխանության կողմից զավթված սահմանամերձ մի շարք բնակավայրեր ու ամրոցներ, այդ թվում նաև Պորտելլան ամրոցը (Դրունք Ասորոց)¹²²: Ըստ այդ պայմանագրի, Բոհեմունդ Գ-ի որդի Ռայմոնդը ամուսնանալու էր, ինչպես վերևում ասացինք, Լևոն Բ-ի եղբոր դուստր Ալիսի հետ, որոնց զավակն էլ ժառանգելու էր թե՛ Անտիոքի և թե՛ Կիլիկիայի իշխանական գահը: ԺԲ դարավերջի և ԺԳ դարի սկզբի Կիլիկիայի հայկական իշխանության

¹²¹ Ալիշան, Միսուան, էջ 450:

¹²² Ալիշան, Միսուան, էջ 455, 456:

արտաքին քաղաքականությունը միտված էր Ռուբինյանների հիմնած հայկական իշխանությունը միավորել Անտիոքի լատին իշխանության հետ և հետագայում ստեղծել միացյալ թագավորություն: Լևոն Բ իշխանն այս շրջանում կարողացավ տարածքներ նվաճել նաև Իկոնիայի սուլթանությունից:

Իր իշխանապետական կառավարման շրջանում Լևոն Բ-ն (1187-1198) ընդարձակեց պետության սահմանները: Նուրբ դիվանագիտական հոստառության և արտաքին թշնամիների դեմ տարած հաղթանակների շնորհիվ բարձրացավ Կիլիկիայի հայկական իշխանության միջազգային հեղինակությունը¹²³: Կիլիկիայի Դաշտային և Լեոնային հատվածների միավորումը, մեկդարյա քաղաքական փորձը նախադրյալներ ստեղծեցին Կիլիկիայի հայկական իշխանությունը թագավորություն հռչակելու համար: Ինչպես պատմում է Կիրակոս Գանձակեցին, «Եւ իբրեւ ետես, եթէ յաջողեցաւ նմա տէրութիւնն առաւել քան գնախնիս իւր, խորհեցաւ այնուհետև ընդ իշխանսն իւր եւ ընդ մեծամեծս՝ թագաւորել»¹²⁴: Լևոնը կրկին դեսպանագնացներ է ուղարկում Հռոմի Պապի և արևմտահռոմեական կայսր Հենրի Զ-ի մոտ. «զի տացեն նմա հրաման և թագ թագաւորական, զի ոչ կամեցաւ նա, թէ այլում ումէք երևեսցի նա հնազանդ վասն թագի, բայց թէ ազգին ֆռանկաց»¹²⁵: Այդ բանակցությունների նախնական փուլ կարելի է համարել Գ խաչակրաց ռազմարշավի նախօրյակը¹²⁶:

Կղեմես Գ Պապը (1187-1191) Կիլիկյան Հայաստանը դիտում էր Հռոմի և խաչակրության հիմնական դաշնակիցը Մերձավոր Արևելքում: Հռոմի հետ փոխհարաբերությունները թևակոխում են մի այնպիսի դարաշրջան, երբ մասնատված խաչակրաց իշխանությունները թուլանում էին՝ կորցնելով տարածքներ, իսկ Ռուբինյան իշխանությունն օրավուր հզորանում էր: 1184 թ. հուլիսի 4-ին Սալահ ադ-Դինը Հատի-նի ճակատամարտում պարտության մատնեց Երուսաղեմի թագավորությանը և նվաճեց Արևելքում խաչակրաց պետությունների տարածքների մեծ մասը: Հռոմի պապության աչքում մուսուլմանական աշխարհի դեմ պայքարի առաջամարտիկը դարձավ Կիլիկիայի հայկական իշխանությունը և հայոց բանակը, որի ռազմական հաջողությունների մասին հարգանքով էին խոսում դարաշրջանի լատինական սկզբնաղբյուրները¹²⁷: Այս առումով ուշագրավ են Լուկիոս Գ (1181-1185) և Կղեմես Գ Պապերի՝ Հայոց Կաթողիկոսներ Գրիգոր Դ Տղա, Գրիգոր Ե Ապիրատ Կաթողիկոսներին և Լևոն Բ իշխանին հասցեագրված նամակները, որոնց մեջ Պապերը կոչ էին անում աջակցել Գ խաչակրաց ռազմարշավին: Լատին պատմագրության մեջ վկայություններ են պահպանվել առ այն, որ Լևոն Ռուբինյանը մասնակցել է Ֆիլիպ Գեղեցիկի և Ռիչարդ Առյուծասրտի հետ Պտղոմայիս քաղաքի պաշարմանը (1191 թ.), Կիպրոսում հաստատված Երուսաղեմի թագավոր Գի Լուսինյանի ամուսնության հանդեսին¹²⁸: Կիլիկյան Հայաստանի համար խաչակրաց Արևելքի իշխանությունների և ա-

¹²³ Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 689 (այսուհետև՝ ՀԺՊ):

¹²⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 155-156:

¹²⁵ Նույն տեղում, էջ 156:

¹²⁶ **Ա. Բոգոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178), Երևան, 1995, էջ 206-221, **Ա. Բոգոյան**, Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում, Եղջմիածին, 1996, ԺԲ, էջ 121:

¹²⁷ Wilhelm Tyrensis Chronicon (=Corpus Christianorum. Continuatio Medievalis, Bd. LXIII), 12, 18, S. 568, twx 11:

¹²⁸ **Ալիշան**, Միսուան, էջ 449.

ընտանեկան պետությունների հետ դաշնակցաբարեկամական փոխհարաբերությունները հետզհետե ձեռք էին բերում առաջնակարգ նշանակություն:

Լևոն Բ Կիլիկիայի իշխանը՝ Լևոն Ա Հայոց թագավոր

Կղեմես Գ-ի խաչակրաց նախաձեռնությունները բազմակողմանի էին, սակայն պապական կուրիայի հետաքրքրությունը Հայոց Եկեղեցու նկատմամբ ավելի է ուժեղանում Բնոկենտիոս Գ Պապի իշխանության տարիներին (1198-1216): Մեզ է հասել այս Պապի թղթակցությունը Լևոն Ա թագավորի, Գրիգոր Զ Ապիրատի և Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսի հետ: 1198 թ. Հռոմի Պապ Բնոկենտիոս Գ-ն և Գերմանական կամ Արևմտահռոմեական Սրբազան կայսրության միապետ Հենրի Զ-ն Լևոնի մոտ դեսպանագնաց են ուղարկում Մայնցի արքեպիսկոպոս, գերմանական կայսրության դիվանապետ Կոնրադ Վիտելսբախի գլխավորությամբ, որը 1197 թ. Հենրի Զ-ի անունից հանդիսավոր արարողությամբ, արքայական տիտղոս էր շնորհել Կիպրոսի արքա Ամորի Լուսինյանին: Այս դեսպանագնացությունն ուներ երկու հիմնական նպատակ. իրար հաշտեցնել Անտիոքի խաչակրաց և Կիլիկիայի հայկական իշխանությունները և Գերմանական կայսեր և Հռոմի Պապի անունից թագադրել Լևոն Ռուբինյանին: Այս քայլերի նպատակն էր, ամրացնելով Կիլիկիայի պետությունը՝ խաչակիրների համար Երուսաղեմը վերագրավելու հենակետ ստեղծել: Մերօրյա պատմագիտության մեջ հետզհետե ամրապնդվում է այն պնդումը, որ Կոնրադ Վիտելսբախը Լևոն Ա-ին թագավոր է օծել ոչ թե Հռոմի Պապի, այլ գերմանական կայսրության անունից: Քննելով այդ վավերագրերը, Պիտեր Հալֆտերը եկել է այն եզրակացության, որ պապության և Կիլիկիայի թագավորության միջև չէին կարող լինել վասալական փոխհարաբերություններ: Կիլիկիայի թագավորն իր օժմամբ դառնում էր Գերմանական կայսեր ստորական¹²⁹: Այդ կախումն ուներ նոմինալ բնույթ և ճշտում էր կիլիկյան Հայաստանի տեղը խաչակրաց Արևելքի միապետների ընտանիքում: Կիլիկիային թագ ուղարկելու ցանկությամբ հանդես էին եկել նաև Բյուզանդական կայսրությունը և Հռոմի Պապը: Լևոն Բ Ռուբինյան իշխանը Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ դեսպանագնացություն էր ուղարկել նաև Կոստանդնուպոլիս (1196/7 թ.): Ե՛վ կաթոլիկ կողմը, և՛ բյուզանդականը փորձում էին բավարարել իրենց եկեղեցադաբական նկրտումները, այսինքն՝ Հայոց Եկեղեցուն ստիպել ճանաչել իրենց Եկեղեցիների առաջնորդների գերիշխանությունը և կատարել ծիսադավանաբանական համապատասխան գիջումներ: Լևոն իշխանը երկու կողմերին էլ փորձեց սիրաշահել խոստումներով:

Կիլիկիայի հայկական թագավորությունը ճանաչեցին Բյուզանդական կայսրությունը, Գերմանական կայսրությունը, Հռոմի պապությունը, Արևելքի խաչակրաց պետություններն ու մուսուլմանական տերությունները: Լևոնն օծվեց 1198 (կամ 1199)¹³⁰ թ. հունվարի 6-ին, Աստվածահայտության և Ս. Ծննդի օրը կազմակերպվեց թագադրության հանդիսավոր արարողություն, որը տեղի ունեցավ Տարսոնում, Ներսես

¹²⁹ P. Halfter, Das Papstum und die Armenier im fruehen und hohen Mittelalter, Koeln; Weimar; Wien 1996, S. 265-269: Տե՛ս մեր գրախոսությունը. «Էջմիածին», 1996, ԺԲ, էջ 124-125:

¹³⁰ Պատմական սկզբնաղբյուրներում հանդիպում է նաև 1197 թ. և 1199 թ., տե՛ս Ղ. Ալիշան, Միսուն, էջ 470, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. Ա, Եր., 2005, էջ 399:

Լամբրոնացու նախագահությամբ¹³¹: Ծեսը կատարվեց ըստ թագավորի օրհնության հռոմեական կարգի, որը Ներսես Լամբրոնացին վաղօրոք հայերեն էր թարգմանել¹³²: Հանդեսին ներկա էին բազմաթիվ իշխաններ¹³³, հոգևորականներ, հարևան պետությունների դեսպաններ, բարձրաստիճան պետական գործիչներ, Բաղդադի խալիֆի ներկայացուցիչը¹³⁴: Արարողություններին մասնակցած իշխանների ցանկից, որը բերվում է Սմբատ Գունդստաբլի Տարեգրության մեջ, կարելի է արտածել Կիլիկիայի հայկական պետության աշխարհագրական սահմանները, որոնք տարածվում էին Պամփյուլիայի, Իսավրիայի, Լիկաոնիայի, Կատաոնիայի և Գերմանիկեի վրա¹³⁵: Լևոն Ռուբինյանի թագադրումը խորհրդանշում էր Հայոց թագավորության վերականգնումը: Լևոնն իր ստորագրած վավերագրերի և կտրված դրամների վրա անվանվում էր **Հայոց թագավոր**, կիլիկյան պաշտոնական ժամանակագրություններում՝ Լևոն Ա թագավոր:

Կիլիկիայի հայկական իշխանության հեռավոր սահմանագլխին էր գտնվում Հայոց Կաթողիկոսների նստավայր Հռոմկլան, որը միշտ փորձում էր դուրս լինել Կիլիկիայի հայկական պետության իշխանության սահմաններից՝ նախընտրելով լինել տարածաշրջանի հզոր պետությունների վասալը (Հալեպի աթաբեկություն, Եգիպտոսի սուլթանություն և այլն)¹³⁶: Այս վիճակը շարունակվել է մինչև մոնղոլական ռազմարշավների սկիզբը, երբ Հալեպի աթաբեկությանը ենթակա Հայոց Կաթողիկոսարանը դարձել է Կիլիկիայի հայկական պետության վարչատարածքային միավոր: Այս առումով նշանակալի է Լևոն Ա-ի և Հռոմկլայի որոշ կաթողիկոսների հակամարտությունը, որը երբեմն վերաճում էր ռազմական բախման¹³⁷:

Լևոնը թագադրվելով, ստորակայական երդում է տվել Ֆրեդերիկ Ա Բարբարոսայի որդի Հենրի Զ-ին: Թագադրության արարողությունը կատարել է կայսեր դիվանապետ Կոնրադ Էպիսկոպոսը, որը նույն առաքելությամբ արդեն այցելել էր Կիպրոս՝ թագադրելով Ամորիին¹³⁸: Ըստ Ղ. Ալիշանի, Կիպրոսի թագավորին ձեռնադրել են Հռոմի կայսրության, իսկ Հայոց թագավորին՝ նաև Հռոմի Պապի անունից¹³⁹: Լևոնի թագադրումով Եվրոպայի կաթոլիկ պետությունները, խաչակրաց իշխանությունները, Բյուզանդական կայսրությունը և Արևելքի մուսուլմանական պետությունները ճանաչեցին Հայոց թագավորության քաղաքական հեղինակությունը: Արդեն ԺԲ դարի ընթացքում Հայոց և Կաթոլիկ Եկեղեցիների միջև փոխհարաբերությունները վերաճեցին դավանական և ծիսական ընդդիմության առաջին դրսևորումներին, որոնք

¹³¹ Տե՛ս Ղ. Ալիշան. Սիսուան, էջ 469:

¹³² Բնագրի հրատ. տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 472-476:

¹³³ Ղ. Ալիշանը արարողությանը ներկա և Լևոնին ստորակայության երդում տված իշխանների թիվը համարում է 72 (Սիսուան, էջ 440, սյ. 2):

¹³⁴ ՀԺՊ, Գ, էջ 691, տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 470-471:

¹³⁵ Հմմտ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 460: Սմբատի ընդարձակ ժամանակագրության մեջ պահպանված իշխանների ցանկին բավական հանգամանորեն անդրադարձել է Ժ. Դեդեյանը, այդ ժամանակագրության ֆրանսերեն թարգմանության ծանոթագրություններում:

¹³⁶ Տե՛ս Ա. Բոգոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը..., էջ 219-220:

¹³⁷ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 461, հմմտ. Հ. Պեղպեքեան, Անանիա հակաթոռ կաթողիկոս. - Սիսուան, 38 (1964), թ. 10, 39 (1965), թ. 9:

¹³⁸ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 464:

¹³⁹ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 469, 477-478:

պահանջ-գլուխների տեսք են ստացել Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութիւն»-ում¹⁴⁰։ Այստեղ պետք է արձանագրել, որ Լևոն իշխանը 1197 թ. դեսպանագնացություն ուղարկեց նաև Կոստանդնուպոլիս՝ թագադրման իրավունք ստանալով նաև Բյուզանդական կայսրից¹⁴¹։ Այս ճանաչումը թույլ էր տալիս ավելի սերտացնել փոխաբարությունները տարածաշրջանի քաղկեդոնամետ եկեղեցական համայնքների հետ։

Որակական զարգացման նոր փուլ մտավ կիլիկյան պետությունը։ Այս որակական անցումը արձանագրված է ԺԳ-ԺԴ դդ. հայ ժամանակագիրների երկերում, որոնք Ռուբինյան Լևոն Բ իշխանին անվանակոչում են Լևոն Ա թագավոր և նրանով սկսում Կիլիկիայի հայկական թագավորների անվանացանկը¹⁴²։

Թագավորության հռչակման շրջանից Կիլիկիայի հայկական պետությունը երկարատև պայքար է սկսում Անտիոքի իշխանությունը իրեն ենթարկելու մտառագոյությամբ։ Թեպետ այս հակամարտությունը սկսվել էր 1193 թ., այն նոր թափ առավ 1201 թ., երբ Անտիոքի իշխանության կառավարման լծակներն իր ձեռքն առավ Բոհեմունդ Դ Միակնանին։

Լևոն Ա թագավորի ներքին և արտաքին քաղաքականությունը

1198 թ., Անտիոքի իշխանության ժառանգորդ Ռայմունդի մահից հետո, նրա որդի Ռուբեն-Ռայմունդի ժառանգական իրավունքների պաշտպանությամբ սկսեց հանդես գալ Լևոն Ա թագավորը։ Անտիոքի իշխանության բռնազավթման ուղի էր ընտրել Ռուբեն-Ռայմունդի հորեղբայր՝ Տրիպոլիի կոմս Բոհեմունդ Դ Միակնանին։ Նրա և Անտիոքի լատին Պատրիարքի դեմ 1199 թ. ծավալած եռամսյա պատերազմներից հետո, Լևոնը Ա-ը Հռոմի Պապի աջակցությամբ փորձ է կատարում նրան վրնդել Անտիոքից¹⁴³։ Այդ պատերազմի ընթացքում Լևոն Ա Ռուբինյանը ռազմական բախումներ է ունենում նաև Հալեպի Այուբյան սուլթան Մելիք ալ-Զահիրի հետ, որը Բոհեմունդ Դ Միակնանու դաշնակիցն էր դարձել։ Անտիոքի իշխանության համար պայքարը Լևոնը փոփոխական հաջողություններով շարունակում է մինչև 1216 թ.¹⁴⁴, նույնիսկ մի քանի անգամ տիրում է քաղաքին, ինչպես, օրինակ, 1208 թ.։

Լևոն Ա թագավորն ուժեղացրեց պայքարը Անտիոքի դքսության տարածքներին տիրանալու, այդ դքսությունը կիլիկյան թագավորությանը միացնելու համար։ Անտիոքի լատին իշխանության բազմաթիվ պաշտոնյաներ ապաստան էին գտնում Լևոն Ա-ի արքունիքում¹⁴⁵։ Անտիոքի նվաճման ծրագրերը իրականացնելու համար Լևոն Ա-ը իր երկրի սահմաններում որոշակի արտոնություններ տվեց Տաճարական և Հիվանդախնամ ասպետներին¹⁴⁶։ 1216 թ. Լևոնին հաջողվեց ժամանակավորապես գրավել Անտիոքը՝ Ռայմունդ-Ռուբենին (1216-1219) դարձնելով խաչակրաց այդ պե-

¹⁴⁰ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 468, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 156-157։

¹⁴¹ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 465-466։

¹⁴² Տե՛ս Մ. Ժ., հտ. Բ, էջ 103 նն.։

¹⁴³ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 490-492։

¹⁴⁴ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 492-503։

¹⁴⁵ Տե՛ս R. Grousset, Les Croisades..., t. III, p. 257։

¹⁴⁶ Տես նույն տեղում, էջ 259-260։

տության իշխան: Այնուամենայնիվ երկարատև այս պայքարը անպտուղ վախճան ունեցավ, որովհետև Լևոն Ա-ը Ռուբեն-Ռայմոնդին չցանկացավ ճանաչել իբրև Կիլիկյան Հայաստանի գահի վրա իր հետնորդ, իսկ Բոհեմունդ Դ Միակնանին նրանից հետո կրկին զավթեց իշխանությունն Անտիոքում՝ հաշվեհարդար տեսնելով իր հակառակորդների հետ:

Լևոն Ա-ի իշխանության տարիներին մի քանի անգամ Կիլիկիայի տարածքների վրա հարձակումներ ձեռնարկեց Բկոնիայի սուլթանությունը: Դեռևս 1206 թ. սելջուկները ներխուժեցին Կիլիկիա, սակայն պարտություն կրելով՝ նահանջեցին: 1208 թ. Կիլիկյան Հայաստանը դիմակայեց Բկոնիայի սուլթան Քեյ-Խոսրովի և Հալեպի սուլթան ալ-Ջահիրի ռազմարշավին՝ ունենալով որոշակի տարածքային կորուստներ: 1211 թ. Լևոն Ա-ը Էրզրումի էմիրի հետ կնքած դաշինքի շնորհիվ Բկոնիայի սուլթան Իզգեդին Քեյ-Քաուս Ա-ից իլեց Լարանդա քաղաքը: 1216 թ. Բկոնիայի սուլթանը կրկին ներխուժեց Կիլիկիա: Կապան ամրոցի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Հայոց բանակը պարտություն կրեց, գերի ընկան Կոստանդին սպարապետը և Կոստանդին Լամբրոնացին: Լևոն Ա-ը ստիպված էր ընդունել սուլթանի առաջադրած ծանր պայմանները: Նա գերի իշխաններին ազատելու համար զիջեց **Լուլուս և Լաբանդա** ամրոցները, պարտավորվեց հարկ վճարել և ցույց տալ ռազմական օգնություն: Այս շրջանին են պատկանում Բկոնիայի սուլթանության հետ համատեղ հատված դրամները: Բկոնիայի սուլթանությունից այս կախումը շարունակվեց մինչև մոնղոլների արշավանքները¹⁴⁷:

Լևոն Ա թագավորի կարևորագույն ձեռնարկումներից էր Կիլիկիայում ինքնուրույն իշխանական տների, այդ թվում նաև Լամբրոնի իշխանության ենթարկումն ու միացումն իր թագավորությանը: Լևոն Ա-ը մեծ ուշադրություն դարձրեց երկրի տնտեսական կյանքի, հատկապես առևտրի զարգացմանը: Կարգի բերվեցին նավահանգիստները, կամուրջները, առևտրական ու ռազմական ճանապարհներն ու դրանք հսկող ամրոցները, կառուցվեցին իջևանատներ, պանդոկներ: Նրա իշխանության տարիներին ստեղծվեց ռազմական նավատորմ, հատվեցին ոսկե, արծաթե և պղնձե դրամներ, որոնք շրջանառության մեջ էին նաև հարևան երկրներում¹⁴⁸:

Լևոն Ա թագավորի արտաքին-քաղաքական ձեռնարկներում ուրույն տեղ ունեն միջդինաստիական փոխհարաբերություններն ու ամուսնական կապերը: Կիլիկիայի հայկական արքունիքը ամուսնական կապերով Լևոն Ա-ի ժամանակ կապվել էր Անտիոքի իշխանության, Կիպրոսի թագավորության, Բյուզանդական կայսրության հետ: Ամուսնական նմանատիպ կապերով հարուստ է Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի գրեթե բոլոր հայկական իշխանությունների պատմությունը ԺԱ-ԺԴ դարերում¹⁴⁹: Կիլիկիայի հայկական պետության պատմության համար հատկանշական են նաև լատին Եկեղեցու Տաճարական և Հիվանդախնամ կարգերին տրված արտոնագրերը, որոնցով հատկապես աչքի է ընկնում Լևոն Ա-ի թագավորության շրջանը¹⁵⁰: Լևոն Ա-ի արքունիքում ընդգրկված ազնվականների մեջ բավական պատկա-

¹⁴⁷ P. Bedoukian, *Coinage of Cilician Armenia*, Danbury, 1979, p. 10.

¹⁴⁸ P. Bedoukian, *Coinage...*, p. 76-82.

¹⁴⁹ St' u Rüd't-Collenberg, *The Rupenides, Hetumides and Lusignans. The Structure of the Armeno-Cilician Dynasties*, Paris, 1963.

¹⁵⁰ Ալիշան, Միսուան, էջ 457-458:

ռելի թիվ էին կազմում խաչակիրները, բյուզանդացիները և կամ քաղկեդոնական հայերը¹⁵¹:

Լևոն Ա-ի ժամանակներում սկիզբ դրվեցին Կիլիկյան Հայաստանի առևտրական կապերին Միջերկրական ծովի զանազան քաղաք-պետությունների հետ, որոնք մեծ ներդրում են ունեցել միջազգային հարաբերություններում կիլիկյան պետության դերի և նշանակության բարձրացման գործում: Լևոն Ա-ը մահացավ 1219 թ. մայիսի 2-ին՝ Կիլիկյան Հայաստանի թագը ժառանգելով իր մանկահասակ դստերը՝ Զաբելին:

¹⁵¹ Ալիշան, Մխուման, էջ 459:



ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Pseudo-Zeno. *Anonymous Philosophical Treatise*. M.E. Stone and M.E. Shirinian. Translated with the collaboration of J. Mansfeld and D.T. Runia. Brill: Leiden-Boston-Köln, 2000, 255+XIV p.

Այս աշխատանքով Է. Մ. Շիրինյանը և Մ. Սթոունը հետազոտողներին են ներկայացնում անտիկ ուշ դասական ժամանակաշրջանից մեզ հասած փիլիսոփայական մի բնագիր, որը պահպանվել է միայն հայերենով: Այս երկը առաջին անգամ հրատարակած և այն գիտական շրջանառության մեջ դրած Լևոն Խաչիկյանը՝ առանց այս բնագրի հեղինակային պատկանելության վերաբերյալ վերջնական խոսք ասել հավակնելու, ենթադրել էր, թե այն կարող էր լինել ստոիկյան փիլիսոփայական դպրոցի հիմնադիր Ջենոնը¹: Սրանից ելնելով՝ Շիրինյանը և Սթոունը պահպանել են Ջենոնի անունը («Կեղծ» մականվան ավելացումով) գրքի վերնագրում, չնայած որ այս հրատարակության «Ներածությունում» հիմնավոր կովաններով լիովին մերժում են Ջենոնի այս գործի հեղինակը լինելու հարցը:

Շիրինյանը և Սթոունը ոչ միայն հիշյալ երկը անգլերեն են թարգմանել, այլև մեծ աշխատանք են տարել Կեղծ-Ջենոնի գործը առավել համակողմանի ձևով գիտական շրջանառության մեջ դնելու համար: Այսպես, հայերեն բնագրից և գիտա-քննական ցանկերից բացի, գրքում զետեղված է հրատարակվող բնագրի անգլերեն թարգմանությունը, և քննությունը, ինչպես նաև թարգմանության վերաբերյալ բացատրություններ, բնագրում առկա բառերի համաբարբառը, փիլիսոփայական և այլ եզրերի ցանկեր երեք լեզվով՝ հայերեն, հունարեն, անգլերեն: Սա նշանակում է, որ Կեղծ-Ջենոնի փիլիսոփայական գործը կարող է ծառայել բազմազան ոլորտների հետազոտողների, ներառյալ հայագիտության, հունաբան դպրոցի թարգմանությունների, ուշ

¹ Տե՛ս Լ. Խաչիկյան, Ջենոնի «Յաղագս բնութեան» երկի հայկական թարգմանությունը, «Գիտական նյութերի ժողովածու», N 2, Երևան, 1950, էջ 65-98:

դասական շրջանի փիլիսոփայության ուսումնասիրմանը, ինչպես նաև մաս կազմել ուսումնական հաստատություններում դասավանդվող անտիկ փիլիսոփայության դասընթացների:

Աշխատասիրողները, բանասիրական, պատմական և բնագրային խնդիրներին անդրադառնալուց բացի, ամփոփել են դրանց վերաբերյալ նախկին հետազոտությունների արդյունքները: Այսպիսով՝ այն ընթերցողները, ովքեր դասական փիլիսոփայության մասնագետներ են, բայց քաջատեղյակ չեն հունարենից հայերեն կատարված փիլիսոփայական երկերի թարգմանություններին, կարող են այդ մասին մանրամասն տեղեկություններ ստանալ այս հրատարակության ներածական բաժնում ներկայացվող համապատասխան գրականության քննությունից և մատենագրությունից: Ավելին, քանի որ հունաբան դպրոցի թարգմանություններին բնորոշ էր լիովին հավատարիմ մնալ հունարեն բնագրին, հաճախ ի վնաս գրաբարի առանձնահատկությունների, նման գործերի հրատարակումը գրեթե հավասարագոր է հունարեն բնագրի լույսընծայմանը: Տվյալ դեպքում հետազոտողների աշխատանքն ավելի դյուրին կլինի եռալեզու ցանկերի շնորհիվ, որոնք հնարավորություն են տալիս գտնել Կեղծ-Ջենոնի տրակտատում գործածված տեխնիկական եզրերը կամ փիլիսոփայական բառերը:

Շիրինյանը և Սթոունը ներկայացնում են նաև այս բնագիրը պարունակող չորս ձեռագրերի և դրանց հարաբերակցության վերաբերյալ իրենց հետազոտությունները, ինչպես նաև այդ հարաբերակցությունը արտահայտող երկու գծագրեր: Ինչ վերաբերվում է գործի հնարավոր հեղինակին կամ նպատակներին, Շիրինյանը և Սթոունը եզրակացնում են, որ *Անանուն Տրակտատը* բազմազան և բազմաբնույթ փիլիսոփայական երկերից ծաղկաքաղ արված մի գործ է, որն ամենայն հավանականությամբ կազմվել է ուսուցողական նպատակներով:

Այստեղ ներկայացված են անտիկ և վաղ քրիստոնեական շրջանի բնագիտական ամենատարբեր ըմբռնումները, որոնք վերաբերվում են երկրի կազմությանը, լուսատուների ընթացքին, մարդակազմությանը, թվերի խորհրդաբանությանը և մի շարք համանման այլ հարցերի:

Շիրինյանը և Սթոունը ճշտել են հայերեն թարգմանության ժամանակը՝ վեցերորդ դարի վերջ և յոթերորդ դարի սկիզբ, ըստ որի՝ հունարեն բնագիրն ավելի վաղ պետք է գրված լինի: Այսպիսով, այս գործը մեզ հնարավորություն է տալիս տեղեկանալ, թե ինչ բնույթի փիլիսոփայական գաղափարներ էին հետաքրքրում վեցերորդ դարից առաջ գործող հունալեզու կրթական օջախներում, ինչպես նաև Հայաստանում՝ վեցերորդ-յոթերորդ դարերում և ավելի ուշ:

Տրակտատի հույն հեղինակի կամ խմբագրի քրիստոնյա լինելու հարցը չի կարելի լիովին լուծված համարել: Խաչիկյանը և Արևշատյանը (որն այն թարգմանել է ռուսերեն լեզվով) հակված էին եզրակացնելու, որ տեքստի քրիստոնեական մասերը ավելի ուշ հավելումներ են: Իրոք, հետևելով Շիրինյանի և Սթոունի մանրակրկիտ վկայակոչումներին, թվում է, որ քրիստոնեական բնույթի հատվածները և նախադասությունները կարծես թե հավելվել են արդեն վերջացրած մտքերի, նախադասություններ-

րի և հատվածների: Բացի դրանից, բացարձակապես քրիստոնեական մտքեր արտահայտող մասը այս երկի ամենավերջին գլուխն է: Հենց իրենք՝ խմբագիրներն ընդունում են, որ սա մի հարց է, որը դեռ քննարկման առարկա է:

Այս տրակտատի վերջում գտնվող հիշյալ բաժինը վերնագրված է «Յաղագս Անբաւ»-ի, և այն ըստ էության Սուրբ Երրորդության փառաբանմանն է նվիրված: Ինչպես բնագրում է ասվում. «Նոյնպէս եւ ըստ հրեշտակաց փառաւորեալ Երիս Անձինս՝ զԱրարիչ եւ զՀաստիչ եւ զԿազմիչ, որում ասեն Սուրբ, Սուրբ, Սուրբ միանգամայն՝ Տէր զաւրութեանց»:

Աշխատասիրողները նշում են, որ այս հարցերի ավելի խորն ուսումնասիրությանը կնպաստի մի շարք, ինչպես օրինակ, *Անանուն Տրակտատի* փիլիսոփայական աղբյուրների վերհանմանը: Նման հետազոտությունները կարող են հետաքրքրական արդյունքների հանգեցնել՝ ուշ դասական ժամանակաշրջանում, կամ գուցե նաև ավելի վաղ, կախված տեքստի հունարեն բնագրի թվագրությունից, որն է ձևով գոյություն ունեցող փիլիսոփայական տեքստերի և դրանց հետագա վերախմբագրումների ընթացքի վերաբերյալ: Հետևաբար, հունարեն բնագրի թվագրման հարցը նույնպես ապագա հետազոտողների կողմից կարիք ունի ճշգրտման:

Շիրինյանը և Սթոունը բազմակողմանի և լիարժեք աշխատանք են ներկայացրել տեքստի հայերեն բնագրի վերաբերյալ՝ թե ինչ միջավայրում է այն թարգմանվել և կամ թե՝ այս բնույթի բնագրերը ինչ դեր են խաղացել հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Նմանատիպ աշխատանք պետք է կատարվի նաև մեզ չհասած, բայց հայերենի շնորհիվ գոնե տեսականորեն վերականգնվելիք, հունարեն բնագրի վերաբերյալ: Այս երկի հրատարակությունը նաև կխրախուսի նմանատիպ հունարեն կամ այլ լեզուներով գոյություն ունեցող փիլիսոփայական երկերի լույսընծայմանը: Սա նշանակում է նաև, որ ուշ դասական շրջանի փիլիսոփայության ավելի խորը ըմբռնում ձեռք կբերվի ժամանակակից գիտնականների կողմից:

ԶԱՐՈՒՀԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ՆԿԱՐՉՈՒՀՈՒ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԱՇԽԱՐՀ

2006 թ. նոյեմբերի 10-ին Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի «Ալբերտ և Թովե Բոյաջյան» պատկերասրահում բացվեց երիտասարդ և խոստումնալից նկարչուհի Մինա Անանյանի 5-րդ անհատական ցուցահանդեսը:

1993 թ. նա գերազանցության դիպլոմով ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան Գեղարվեստի ուսումնարանի գեղանկարչության բաժինը, այնուհետև Երևանի Գեղարվեստի պետական ինստիտուտի նույնանուն բաժինը՝ դարձյալ գերազանցության դիպլոմով:

2001 թ. Հայաստանի նկարիչների միության անդամ է:

Մասնակցել է քսանից ավելի խմբակային և հինգ անհատական ցուցահանդեսների:

Այս 5-րդ ցուցահանդեսի բացմանը ելույթ ունեցան Երևանի Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը, նույն ինստիտուտի գեղարվեստի ֆակուլտետի դեկան Էդիկ Վարդանյանը, ՀՀ Ազգային Ժողովի Գիտության, կրթության և մշակույթի հարցերի հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանը, Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, Ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն Սարո Սարուխանյանը, Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, նկարչուհու հայրը՝ Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը:

Բոլոր բանախոսները շեշտեցին, որ ցուցահանդեսից ցուցահանդես առավել ակնառու են դառնում նկարչուհու ստեղծագործական նվաճումները: Ընդգծելով այս իրողությունը՝ Ա. Իսաբեկյանը ասաց. «Այս ցուցահանդեսը անպայմանորեն նվաճում է Մինայի համար»: Համանման ձևով Փ. Միրզոյանը, ով եղել է նաև նկարչուհու դիպլոմային դեկավարը, նշեց. «Շենց մուտքից նկատեցի այն նոր շունչը, որ հայտնվել է Մինայի նկարչության մեջ»: Է. Վարդանյանն էլ ընդգծեց. «Ցուցահանդեսից ցուցահանդես Մինան գեղարվեստական նոր աշխարհ է բացում մեր առջև»:

Բավականին խոսուն է նախորդ ցուցահանդեսների առիթով մեր ազգային բանաստեղծուհու՝ Միլվա Կապուտիկյանի գնահատանքի խոսքը. «Բազմազան ու բազմերանգ է լինում երջանկությունը... Մինա Անանյանը ունի այդ երջանկությունը: Նա գտել է մարդկանց հոգիների հետ խոսելու ձևը, այդ ձևի գույնը, չափը, կշռույթը, որոնք թրթռում են բարությանը, համապարփակ սիրով դեպ աշխարհը, գեղեցիկը»:

Անհաժեշտ է նշել, որ նկարչուհու ստեղծագործություններին բնորոշ է թեմատիկ մեծ բազմազանությունը՝ բնանկարներ, նատյուրմորտներ, հոգեբանական և ներանձնական բնույթի կտավներ, հոգևոր-կրոնական թեմայով գործեր: Բնանկարներում նկարչուհին գույների ճիշտ ընտրությամբ և գծավորմամբ կարողանում է հասնել պատկերվող տեսարանի գեղարվեստական վերացարկմանը, պատկերին զուգընթաց ներկայացնել նրա էությունը: Ստեղծագործական նույն ընդհանրացմամբ էլ վերացական բնույթի նկարներում ամեն ինչ մի նոր իմաստ է ստանում, երբ արդեն աբստրակտ ընդհանրացումներով որևէ հասկացություն և զգացում է ներկայացվում:

Բնանկարների և աբստրակտ գործերի միջև միջանկյալ տեղ են գրավում Մինայի նատյուրմորտները: «Գեղանկարչական նատյուրմորտ» գործում ի մի են հավաքված այն ամենը, որոնց համադրմամբ և միջոցով ստեղծվում է նկարը, և այստեղ գունային

միասնության մեջ են նկարակալը, փայտյա շրջանակը, կտավի կտորը, վրձնի ներկերը, և այս ամենը ոչ թե նկարի ստեղծման աշխատանքային միջավայրն է ներկայացնում, այլ գունային մի շքեղ հրավառություն:

Առանձին մի ուրույն խումբ են կազմում հոգեբանական բնույթի կտավները, որոնք կարելի է անվանել երկխոսություն մարդու և իր ստեղծագործող **ես**-ի միջև: Ասվածը հավաստվում է նման գործերից մի քանիսի վերնագրերով իսկ՝ «Մենախոսություն», «Երկվություն», «Արտացոլանք»: Թե՛ այս և թե՛ մնացյալ համաբնույթ գործերում նկարչուհու ստեղծագործական **ես**-ը գնում է դեպի կտավի աշխարհը:

«Երկվություն» գործում այն արտահայտվել է ոչ միայն ստեղծագործական, այլև տեխնիկական միջոցների կիրառմամբ: Նկարի մի մասը մնացյալից կտրված է կարմիր մի ժապավենով, և գունային բաժանարար մի շեշտ է գծված, որի երկու կողմերում էլ նկարչուհին է՝ մի կողմում որպես ստեղծագործող՝ խոհուն և մտասույզ հայացքով, իսկ մյուս կողմում՝ թեթև ժպիտով՝ մարդկանցով շրջապատված: Այս երկու ֆիգուրների միջև եղած բաժանարար գունային շերտը հեղինակը ընդգծել է ոչ միայն վերից վար իջնող կարմիր ժապավենով, այլև երկու **ես**-երն ընդգրկող այդ տարածությունը կարել է թելով՝ շեշտելով, որ այս երկու **ես**-երը մի միասնություն են կազմում կյանքում և արվեստում: Ինչպես նշում է Մ. Անանյանը՝ «Մա մարդու մեջ հանդիպող երկու բնույթն է, դա նաև ես եմ: Երբ արվեստի հետ եմ, մարդկանց մեջ ինձ ուժեղ եմ զգում, իսկ արվեստից դուրս թույլ եմ»:

Ասվածը վերաբերվում է և «Արտացոլանք» կտավին, որը ոչ թե նկարչուհու պարզ անդրադարձն է հայելու մեջ, այլ նրա ստեղծագործական **ես**-ի արտացոլանքը:

Թեև մի փոքր այլ կոմպոզիցիոն լուծմամբ, նույն այս գաղափարը, սակայն, արտահայտված է և «Նախախնամություն» կտավում, ուր նկարակալին ոչ թե ամրացված պատկերն է գտնվում, այլ վրձնով գամված նկարչուհին, և վրձիններից բացված վերքերից ծորում են... կտավի գույները: Ամեն ճշմարիտ մտավորականի համար իր ստեղծագործական կյանքի ճանապարհը վերածվում է իր խաչի ճանապարհին, ուր բանաստեղծի չարչարանքի գործիքներն են գրիչը և թուղթը, իսկ նկարչի համար՝ վրձինը և կտավը: Այս գործի համար էլ Մինան ասում է. «Այս կտավից այն հարցն է հնչում, թե դո՞ւ ես ընտրել արվեստը, թե ճակատագիրն է քեզ ընտրել արվեստի համար: Իսկ գուցե երկուսն էլ միասին»:

Թեմատիկ ներքին մեծ բազմազանություն ունեն հոգևոր-կրոնական բնույթի կտավները: Նրանց շարքում առանձնանում է հատկապես «Գրիգոր Նարեկացի» կտավը, որից միաժամանակ մեզ է նայում թե՛ հայոց միջնադարի մեծ սուրբը և թե՛ բանաստեղծը, թե՛ ճգնակյաց վանականը և թե՛ ստեղծագործողը: Կտավի վերին մասում գրված «Ի խորոց սրտի խոսք Աստծո հետ» խոսքերը միաձուլվում են այս նկարի ընդհանուր գունային համանվագին, դառնում նաև նկարչուհու առ Աստված ուղղված հայցվածը:

Մ. Անանյանի լավագույն գործերից է «Հավատ» կտավը, ուր Հայոց աշխարհի ընդհանուր համապատկերի վրա տարածվող Տիրամոր լուսեղեն գծագրումն է, մի կողմում Տիրամոր բարեխոսությանն ապավինած մայրը զավակի հետ, իսկ կտավի մյուս կողմում «Հավատի» քարեղեն արտահայտություն հայոց եկեղեցին է՝ վեղարավոր գմբեթներով:

Հոգևոր ապրումները և զգացումները նկարչուհին վարպետորեն արտահայտել է նաև գծանկարների և հաստոցային գրաֆիկայի միջոցով:

«Աղոթք» նկարում դեպ վեր՝ եկեղեցու գմբեթը, խաչը, ապա և երկինք ձգվող կետագծերի ընթացքը առ Աստված ուղղված աղոթքի զգացողություն է առաջ բերում:

Մինան ստեղծագործում է նաև նկարչական շարքերով, որոնցում իր կարևոր

տեղն ունի «Երկու ֆիգուր» շարքը, որը տարբեր իրավիճակներ ու հոգեվիճակներ է ներկայացնում: Այս շարքի շրջանակում նկարչուհին երկու ֆիգուրների միջոցով ներկայացրել է Ավետման ընդունված պատկերագրությունը՝ դեպի Մարիամը ձեռքն առաջ պարզած հրեշտակի միջոցով:

Մ. Անանյանի գործերը առանձնանում են ոչ միայն թեմատիկ, այլև կատարողական բազմազանությամբ՝ կտավ, գծանկար, գրաֆիկա, հաստոցային գրաֆիկա, ինչպես նաև համադրական արվեստ, ուր կտավը այն պահող զամերի, թելերի, շրջանակի հետ մասն է դառնում բուն նկարի, վերջինիս մեջ պատկերվածի արտաքին շարունակությունը և արտահայտությունը:


Համադրական արվեստի նման ինքնատիպ գործ է հինգ կտորից բաղկացած «Հյուղավորումներ սրտից» նկարը: Բուն մեծ նկարը քառակուսի է, որի չորս կողմերում առավել փոքր ուղղանկյուն պատկերներ են: Խճանկարի տպավորություն թողնող այս պատկերը հետաքրքիր է նաև նրանով, որ բուն նկարի շուրջը գտնվող մյուս չորս փոքր նկարների տեղերը երբ փոխում ես ցանկացած դասավորությամբ, ամեն անգամ մի նոր նկար է ստեղծվում շնորհիվ բուն նկարի սրտից ելնող հյուղավորումների, որոնք ցանկացած տեղաշարժի ժամանակ կապակցվում են փոքր նկարներով շարունակվող հյուղավորումների հետ: Հեղինակի բնորոշմամբ՝ «Հյուղավորումներ սրտից» նկարում սրտից ելնող, սրտից բխած տարբեր իրավիճակներ են՝ սեր, հույս, վիշտ, սպասում և այլն:

Նույն թեմայով և ոչ ավանդական արտահայտչամիջոցներով է պատկերված և նկարչուհու լավագույն գործերից մեկը եղող «Միրտը ներկապնակի վրա, Արշիլ Գորկի» աշխատանքը: Բուն նկարից բանաստեղծի սիրտը դուրս է գալիս, ասես չի տեղավորվում նրա մեջ և պատկերի թելով կախված երկրորդ հատվածից տարածվում աշխարհով մեկ:

Այս թեմայով ստեղծված գործերի և, ի մասնավորի, Արշիլ Գորկու հիշյալ դիմանկարի մասին Մինան գրում է. «Ճիշտ է, ցանկացած ստեղծագործություն պետք է սրտից բխի, բայց իմ դեպքում սիրտը ոչ միայն սիմվոլիկ-զգայական, այլև իրականֆիզիկական զգացողություն է... Այս նկարում նկարչի սիրտն է՝ կիսված, զոհաբերված ներկապնակի, իր հետ և միաժամանակ՝ իրենից դուրս»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ նկարչուհի Մինա Անանյանը իր ուրույն լուծումները, խոսքը և պատկերն է բերում արդի հայ նկարչության աշխարհ, և որ նրա ստեղծագործական որոնումները վստահաբար պսակվելու են նորանոր հաջողություններով:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ



ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

Դեկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Թեզը ներկայացրել էր Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Արեն աբեղա Շահինյանը՝ «Պատմական ակնարկ Արևազալի ժամերգության մասին ըստ առկա մատենագրական աղբյուրների» թեմայով:

Հանձնաժողովը, որի կազմում էին Շիրակի թեմի առաջնորդ Ս. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը՝ որպես նախագահ, Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը և ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու տեսուչ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, քննելով ներկայացված թեզը, արտոնել էր այն բանավոր պաշտպանության:

Հոգեշնորհ Հայր Սուրբը դեկտեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, վարդապետական տվչության արարողության ժամանակ, ձեռամբ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի, արժանացավ մասնավոր վարդապետության չորս աստիճաններին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Գերաշնորհ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Քահանայից լսարանի շրջանավարտ չորս սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն: Ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Նվեր սրկ. Մելքումյանը կոչվեց Ս. Ահարոն, Արկադի սրկ. Օրդոյանը՝ Ս. Արարատ, Ներսես սրկ. Սարգսյանը՝ Ս. Մարկոս, և Սևակ սրկ. Գալստյանը՝ Ս. Փառեն:

Ձեռնադրությունից հետո Անուշավան Սրբազանը նախ գոհություն հայտնեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր դասը համալրելու են գալիս չորս նորընծա քահանաներ, ապա դիմելով վերջիններին՝ անդրադարձավ հոգևոր հովվի առաքելությանը. «Միբեյի նորած Հայրեր, աստվածային Խոսքի մշակներ լինելը սոսկ բառերով չի սահմանափակվում. այն իր մեջ որքան քաղցրություն և ուրախություն ունի, այնքան էլ՝ դառնություն և դժվարություն: Քրիստոսի առաքյալ դառնալը միայն այս պահով չի սահմանափակվում և միայն օծում ստանալով չի որոշվում: Դուք ձեր ողջ կյանքի ու ծառայության ընթացքում պետք է դառնաք արժանի քարոզիչն ու մշակը, արժանի առաքյալն ու սպասավորը մեր Եկեղեցու և ժողովրդի» (տե՛ս էջ 27):

Ս. Պատարագի ընթացքին խորան բարձրացան և նորընծա քահանաներին շնորհավորեցին նաև Մայր Աթոռի միաբանները:

Մայր Աթոռում իրենց քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ քահանա Հայրերը հովվական ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր թեմերում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Տ. ԱՀԱՐՈՆ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

(Ավագանի անունը՝ Նվեր)

Ծնվել է 1974 թ. հունվարի 8-ին Սիսիան քաղաքում:

1981-1991 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1999-2002 թթ. Սիսիանում և շրջակա գյուղերում դասավանդել է կրոնի պատմություն:

2002-2004 թթ. սովորել և ավարտել է քահանայից լսարանի ամբողջական դասընթացը:

2004 թվականից ծառայում է Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. դեկտեմբերի 4-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՕՐԴՈՅԱՆ

(Ավագանի անունը՝ Արկադի)

Ծնվել է 1981 թ. նոյեմբերի 20-ին Մասիս քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է տեղի թիվ 5 միջնակարգ դպրոցում:

1998-2004 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004 թ. օգոստոսի 16-ին նշանակվել է ՔԴԿ-ում որպես գործավար քարտուղար:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. հոկտեմբերից գործավար-քարտուղար է նշանակվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կադրերի բաժնում:

2006 թ. ապրիլից աշխատում է տնտեսական բաժնում:

2006 թ. դեկտեմբերի 4-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՄԱՐԿՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ

(Ավագանի անունը՝ Ներսես)

Ծնվել է 1982 թ. փետրվարի 24-ին Մասիս քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է տեղի թիվ 6 միջնակարգ դպրոցում:

1999-2003 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2005 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերից վերակացու է նշանակվել Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. մարտի 15-ին ավարտաճառ է պաշտպանել «Հոգևորականությունը XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազատագրական պայքարի քառուղիներում» թեմայով:

2006 թ. ապրիլին գորակոչվել և ծառայում է ՀՀ Զինված ուժերում:

2006 թ. դեկտեմբերի 4-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՓԱՌԵՆ ՔԱՀԱՆԱ ԳԱԼՍՅԱՆ

(Ավագանի անունը՝ Սևակ)

Ծնվել է 1979 թ. սեպտեմբերի 3-ին Վեդի քաղաքում:

1986-1996 թթ. սովորել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1996-1997 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1997-2000 թթ. ուսանել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2000-2006 թթ. ուսումնառությունը շարունակել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. փետրվարի 23-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի:

2006 թ. սեպտեմբերի 28-ին ավարտաճառ է պաշտպանել «Հայոց նախաքրիստոնեական հավատալիքները, կրոնն ու պաշտամունքը քրիստոնեության ընդունման նախօրեին և դրանց վերապրուկները ժողովրդի մեջ» թեմայով:

2006 թ. մարտից աշխատում է Վեհարանում որպես գործավար քարտուղար:

2006 թ. դեկտեմբերի 4-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՎԵՑԻՆ 36 ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Ս. Ստեփաննոս Նախավկայի և առաջին մարտիրոսի տոնը: Տոնի օրը Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ:

Ս. Ստեփաննոս Նախավկայի հիշատակության օրը Հայոց Եկեղեցում համարվում է սարկավագների տոն, և ձևավորված ավանդույթով կատարվում է սարկավագական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանորեից տեսուչ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի, սարկավագական աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 36 սաներ, ովքեր հաջողությամբ հանձնել էին սարկավագական քննությունները:

«...Սիրելի սարկավագ եղբայրներ, այսօր տոն է, ցնծություն և մեծ ուրախություն մեզ բոլորիս համար, որովհետև դուք, որպես երիտասարդներ, այսօր ստանում եք սարկավագական ձեռնադրություն, և այդ ձեռնադրությամբ նոր ավիշ է հաղորդվում Հայաստանյայց Եկեղեցուն, որպեսզի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին առավել ևս երիտասարդանա և երիտասարդ ավյունով, երիտասարդ ուժով և կորովով շարունակի ծառայել իր ժողովրդին, ինչպես որ ծառայել է 1700 տարիներ ի վեր», - նորընծա սարկավագներին ուղղված իր պատգամում ասաց Սրբազան Հայրը՝ հորդորելով լավագույնս արժեվորել այն մեծագույն առաքելությունը, որ ստանձնում են նրանք՝ դառնալով Քրիստոսի լուծի կրողներ:

Ս. Պատարագից հետո Վեհաբանում նորընծա սարկավագներին իր հայրական օրհնությունն ու պատգամը տվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, շնորհավորելով սարկավագներին տոնի առիթով, իր ուրախությունը հայտնեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սարկավագաց դասը համալրվեց ևս 36 հոգով, և հորդորեց՝ առավել նախանձախնդրությամբ ու ջանասիրությամբ լծվել իրենց պարտականությունների իրականացմանը՝ աչքի առաջ միշտ ունենալով Ս. Ստեփաննոսի հավատքի ամրությունն ու արիասիրտ ոգին:

Եսայի սարկավագ Ղաբաղյան

Ծնվել է 1979 թ. հուլիսի 20-ին Էջմիածին քաղաքում:

1985-1996 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

1996-1999 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

1999-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Տարոն սարկավագ Առաքելյան

Ծնվել է 1980 թ. հունիսի 6-ին Կոտայքի մարզի Արգել գյուղում:

1986-1997 թթ. սովորել է տեղի Վախթանգ Անանյանի անվան միջնակարգ դպրոցում:

1997-2001 թթ. սովորել է Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

2001-2003 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2003 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Գլխարան:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Ռուդիկ սարկավագ Հայրապետյան

Ծնվել է 1980 թ. դեկտեմբերի 25-ին Էջմիածնի շրջանի Պտղունք գյուղում:

1988-1998 թթ. սովորել է տեղի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոցում:

2000-2002 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Գարուշ սարկավագ Ասատրյան

Ծնվել է 1981 թ. հունվարի 31-ին Էջմիածնի շրջանի Խորոնք գյուղում:

1988-1998 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1999-2001 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Էդգար սարկավագ Ամիրյան

Ծնվել է 1982 թ. հունիսի 1-ին Էջմիածին քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

1998-1999 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի Գրիգոր Լուսավորիչ համալսարանի հենակետային վարժարանի 10-րդ դասարանում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004-2006 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2006 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթազյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Վազգեն սարկավագ Մովսիսյան

Ծնվել է 1983 թ. օգոստոսի 13-ին Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ գյուղում:

1989-2000 թթ. սովորել է տեղի Եսայի Ասատրյանի անվան միջնակարգ դպրոցում:

2001 թ. ընդունվել է Գյումրիի Հոգևոր Ընծայարան:

2004 թ. ուսումը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Դ լսարանում:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթազյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Թորոս սարկավագ Երանյան

Ծնվել է 1983 թ. սեպտեմբերի 1-ին Էջմիածնի շրջանի Առատաշեն գյուղում:

1991-2001 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթազյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Արման սարկավագ Պողոսյան

Ծնվել է 1983 թ. սեպտեմբերի 20-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1990-2001 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2001 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Վիզեն սարկավագ Բաղումյան

Ծնվել է 1983 թ. դեկտեմբերի 20-ին Էջմիածին քաղաքում:

1990-2001 թթ. սովորել է Էջմիածնի Վահան Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2001 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Արմեն սարկավագ Խաչատրյան

Ծնվել է 1984 թ. ապրիլի 11-ին Երևան քաղաքում:

1991-2001 թթ. սովորել է մայրաքաղաքի թիվ 179 միջնակարգ դպրոցում:

2001-2005 թթ. սովորել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում:

2005 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Արամ սարկավագ Ծատուրյան

Ծնվել է 1984 թ. հուլիսի 1-ին Աշտարակ քաղաքում:

1992-2001 թթ. սովորել է տեղի Ներսես Աշտարակեցու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Սամվել սարկավագ Զաքարյան

Ծնվել է 1984 թ. հուլիսի 2-ին Երևան քաղաքում:

1991-2001 թթ. սովորել է մայրաքաղաքի Ղազարոս Աղայանի անվան թիվ 63 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Միհրան սարկավագ Հովհաննիսյան

Ծնվել է 1984 թ. հուլիսի 31-ին Գերմանիայում:

1990-2001 թթ. սովորել է Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսումնառությունը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Կարեն սարկավագ Անանյան

Ծնվել է 1984 թ. սեպտեմբերի 17-ին Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում:

1990-2000 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Ցոլակ սարկավագ Հարությունյան

Ծնվել է 1984 թ. սեպտեմբերի 25-ին Գյումրի քաղաքում:

1991-2001 թթ. սովորել է քաղաքի Վ. Տերյանի անվան թիվ 15 միջնակարգ դպրոցում:

2002-2003 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2004-2005 թթ. ուսումը շարունակել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Հայկ սարկավագ Թադևոսյան

Ծնվել է 1984 թ. հոկտեմբերի 18-ին Արտաշատի շրջանի Մրգավան գյուղում:

1990-2001 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Մհեր սարկավագ Մուրադյան

Ծնվել է 1984 թ. նոյեմբերի 4-ին Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում:

1990-2001 թթ. սովորել է տեղի Մարգար Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Էդգար սարկավագ Հովհաննիսյան

Ծնվել է 1985 թ. մարտի 11-ին Գյումրի քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Գյումրիի Մ. Մազմանյանի անվան թիվ 35 միջնակարգ դպրոցում:

2002-2004 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2004-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսումնառությունը շարունակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Դավիթ սարկավագ Մարգսյան

Ծնվել է 1985 թ. մարտի 18-ին Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է տեղի Ազարիա Աղեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Զավեն սարկավագ Խաչիկյան

Ծնվել է 1985 թ. մայիսի 12-ին Արարատի մարզի Սուրենավան գյուղում:
1992-2002 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:
2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:
Այժմ սովորում է Ե լսարանում:
2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Հայկ սարկավագ Մկրտչյան

Ծնվել է 1985 թ. հունիսի 4-ին Երևան քաղաքում:
1992-2002 թթ. սովորել է մայրաքաղաքի Մխիթար Մեքաստացու անվան կրթահամալիրում:
2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:
Այժմ սովորում է Ե լսարանում:
2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Վահե սարկավագ Ենգիբարյան

Ծնվել է 1985 թ. հունիսի 15-ին Էջմիածին քաղաքում:
1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:
2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:
Այժմ սովորում է Ե լսարանում:
2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Նորայր սարկավագ Ազարյան

Ծնվել է 1985 թ. հունիսի 27-ին Երևան քաղաքում:
1992-1999 թթ. սովորել է մայրաքաղաքի թիվ 163 միջնակարգ դպրոցում:
1999- 2002 թթ. սովորել է «Ալգորիթմ» վարժարանում:
2002-2005 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:
2006 թ. ուսումնառությունը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:
Այժմ սովորում է Ե լսարանում:
2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Պետրոս սարկավագ Գումբալյան

Ծնվել է 1985 թ. հունիսի 28-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Արմեն սարկավագ Սարգսյան

Ծնվել է 1985 թ. սեպտեմբերի 19-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Էդգար սարկավագ Երանյան

Ծնվել է 1985 թ. հոկտեմբերի 1-ին Արմավիրի մարզի Դաշտ գյուղում:

1992-2002 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-2001 թթ. սովորել է Արմավիրի մարզի Շահումյան գյուղի երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժնում:

1998 թ. մասնակցել է «Իզաբել» բարեգործական կենտրոնի կազմակերպած բանաստեղծ-ասմունքողների փառատոնին և գրավել 1-ին տեղը:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Սերոբ սարկավագ Հովհաննիսյան

Ծնվել է 1985 թ. հոկտեմբերի 9-ին Էջմիածին քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Հովհաննես սարկավազ Ազնավուրյան

Ծնվել է 1985 թ. նոյեմբերի 10-ին Սյունիքի մարզի Դաստակերտ քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Սիսիան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթազյանի ձեռնադրվել է սարկավազ:

Ցուլակ սարկավազ Հարությունյան

Ծնվել է 1985 թ. դեկտեմբերի 7-ին Ռուսաստանի Դաշնության Ագրեստ քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթազյանի, ձեռնադրվել է սարկավազ:

Արարատ սարկավազ Սարգսյան

Ծնվել է 1985 թ. դեկտեմբերի 11-ին Գյումրի քաղաքում:

1992-1999 թթ. սովորել է Գյումրիի թիվ 37 միջնակարգ դպրոցում:

1999-2002 թթ. սովորել է Գյումրիի թիվ 43 Գեղարվեստի ուսումնարանում:

2002-2003 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2004-2005 թթ. ուսումը շարունակել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2006 թ. ուսանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթազյանի, ձեռնադրվել է սարկավազ:

Արտակ սարկավազ Նուրիջանյան

Ծնվել է 1985 թ. դեկտեմբերի 21-ին Արարատի մարզի Մխչյան գյուղում:

1992-2002 թթ. սովորել է տեղի Քրիստափոր Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Թաթուլ սարկավագ Համբարձումյան

Ծնվել է 1986 թ. փետրվարի 14-ին Կապան քաղաքում:

1992-1994 թթ. սովորել է Մոսկվայի թիվ 249 միջնակարգ դպրոցում:

1995-2002 թթ. սովորել է Երևանի թիվ 11 ավագ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Գևորգ սարկավագ Խաչատրյան

Ծնվել է 1986 թ. մարտի 29-ին Երևան քաղաքում:

1992-2002 թթ. սովորել է Երևանի Լեոյի անվան թիվ 65 միջնակարգ դպրոցում:

2002 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ե լսարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

*ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 2-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը:

Հայաստան աշխարհի լուսավորիչ առաքյալների հիշատակին էր նվիրված նաև դեկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցած հանդիսությունը: «Հայոց Հայրապետներ» թեմայով բանախոսություն կարդաց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանը՝ ունկնդիրներին ներկայացնելով մերօրյա պատմագիտության տվյալները Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզության վերաբերյալ:

Հանդիսությանը գեղարվեստական կատարումներով հանդես եկավ Ս. Գեղարդ վանքի երգչախումբը (խմբավար՝ Անահիտ Պապայան): Հանդիսության ավարտին խոսք ասաց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վարդապետ Նանյանը՝ անդրադառնալով օրվա հոգևոր խորհրդին:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանի ուսանողությունը և հյուրեր:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻՑ

ՎԱՆԱԶՈՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 18-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Դեկտեմբերի 7-ին, Սպիտակի ավերիչ երկրաշարժի 18-րդ տարելիցի կապակցությամբ, բազմամարդ էր Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու բակը: Հավաքվել էին մարգային, քաղաքային իշխանությունների պաշտոնատար այրեր, մշակույթի և արվեստի գործիչներ, մեծ թվով ուսանողներ և ընդհանրապես բոլոր նրանք, ովքեր իրենց հոգու պարտքն էին համարել այդ օրը նվիրել երկրաշարժի զոհերի հիշատակին:

Վանաձորցիները եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու և աղոթակիցը լինելու ահավոր երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին նվիրված Ս. Պատարագին և հոգեհանգստյան արարողությանը:

Հավարտ Ս. Պատարագի Նահատակաց պուրակում տեղադրված երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարի մոտ, Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ եպս. Չուլջյանի հանդիսապետությամբ, կատարվեց հոգեհանգստյան արարողություն, որին ներկա էին մարգային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ: Հոգեհանգստյան կարգից հետո մեկ րոպե լռությամբ հարգվեց երկրաշարժի զոհերի հիշատակը: Այնուհետև, ըստ կարգուպատշաճի, խաչքարի մոտ զետեղվեցին ծաղիկներ և ծաղկեպսակներ: Հիշատակման համանման արարողություններ կատարվեցին նաև Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում:

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱԶՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ և Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու արական և Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի մանկական երգչախմբերի զեղարվեստական ղեկավար Սերժիկ Հարությունյանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 12-ին Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու ներքնահարկ սրահում կայացավ համերգ-հանդիսություն՝ նվիրված մեծանուն երգահան Մակար Եկմայանի ծննդյան 150-ամյակին:

Մակար Եկմայանն առաջիններից էր, ով դրեց դասական հայ ժողովրդական-հայրենասիրական երգերի պահպանման, վեր հանման և աշխարհին ծանոթացնելու անգնահատելի գործի հիմքերը: Բազմաձայն Պատարագի մշակումը պատկանում է

Եկմայանին: Նա հեղինակն է նաև երգչախմբային և մեներգային մեծաթիվ մշակումների՝ «Հով արեք», «Կեցցե Զեյթուն», «Կիլիկիա», «Ով Հայոց աշխարհ», «Պլպուլն Ավարայրի» ու ժողովրդական դարձած բազում այլ ստեղծագործությունների:

Այս գեղեցիկ ու հոգեպարար ստեղծագործություններն էին վանաձորցի երաժշտասեր հասարակությանը բերել Մայր եկեղեցու սրահ, ուր նրանց ներկայացվեց երգահանի բազմոլորտ ստեղծագործություններից ընտրված մի գեղեցիկ փունջ՝ Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու արական երգչախմբի, Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի մանկական երգչախմբի (գեղ. ղեկ.՝ Ս. Հարությունյան), Ս. Սարգիս եկեղեցու երգչախմբի (գեղ. ղեկ.՝ Ա. Ճուղուրյան), Բոգդան Հովհաննիսյանի, Մհեր Մելիքյանի, դաշնակահար Կարինե Երիցյանի և ՎՊՄԻ ուսանողների կատարմամբ: Երաժշտական կատարումներին զուգընթաց հանդիսականները ծանոթացան նաև Մակար Եկմայանի կյանքին ու գործունեությանը, որը ներկայացվեց ՎՊՄԻ-ի դասախոս, երաժշտության տեսաբան Հայկուհի Հակոբյանի կողմից:

Հանդիսականներին օրհնության իր խոսքը ուղղեց թեմակալ առաջնորդ Ս. Մեպուհ եպս. Չուլջյանը՝ կոչ անելով պահպանել մեր ազգային մշակույթը, չտրվել օտարածին ու օտարամուտ վարք ու բարքին: «Մակար Եկմայանն այն բացառիկ հայ երգահաններից է, ովքեր հայ ժողովրդական ու հայրենասիրական, հոգևոր երգերի մշակումներով աշխարհին են ներկայացրել հայոց արվեստն ու մշակույթը: Նրա բազմաձայն Պատարագը, որ ամեն կիրակի կատարվում է Հայոց եկեղեցիներում, սնում է հավատավոր հայորդու հոգին, դարերի լիցքը հաղորդում մեր ժողովրդին: Միրով պատրաստ ենք աջակցելու մշակույթի բոլոր գործիչներին, ովքեր ցանկություն ունեն հոգևոր և ազգային երգն ու երաժշտությունը ներկայացնելու հայ հանդիսականին, և տրամադրվում Ս. Գրիգոր Նարեկացի սրահը, որ նախատեսված է այսպիսի հանդիսությունների համար», - այսպես ավարտեց իր խոսքը Սրբազան Հայրը:

Համերգ-հանդիսությանը ներկա էին մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, արվեստագետներ:

ԼՈՌՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԵՏ

Նորաստեղծ Լոռու Ուսանողների Միության անդամներն իրենց առաջին հանդիպումը նախատեսել էին Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ եպս. Չուլջյանի հետ՝ ստանալու համար Սրբազան Հոր օրհնությունը և իրենց առաջիկա ծրագրերը, խնդիրներն ու մտահոգությունները կիսելու թեմակալ առաջնորդի հետ:

Օրհնության և ողջույնի խոսքով դիմելով ուսանողներին՝ Սրբազան Հայրն իր պատրաստակամությունը հայտնեց օգնական ու սատար լինել երիտասարդներին իրենց առաջիկա ծրագրերի իրականացման ճանապարհին, որոնք ուղղված կլինեն Հայրենին կառուցելու նվիրական գործին:

Ներկայացնելով կառույցի ստեղծման նպատակն ու հետագա անելիքները՝ ուսանողները Սրբազան Հորը հարցեր տվեցին՝ կապված Եկեղեցու ծիսակարգի ու դավանանքի, Եկեղեցի - պետություն փոխհարաբերությունների, ներկայումս Հայաստանում գործող աղանդների ու դրանց առաջացման պատճառների մասին, զրոբալիզացիայի և հայ ժողովրդի ու Եկեղեցու վրա վերջինիս ունեցած հետևանքների վերաբերյալ:

Խնդիրները և դրանցից բխող մտահոգությունները բազում էին: Սակայն առաջնայինը և կարևորագույնը ուսանողության համար, որ պետք է ուրախությամբ փաստել, ազգային գիտակցության ու գաղափարախոսության սերմանումն է երիտասարդության մեջ, հայ մարդու՝ իր Հայրենիքին, կրոնին ու Մայր Եկեղեցուն տեր կանգնելը, որին և ուղղված կլինի ուսանողական կազմակերպության հետագա գործունեությունը:

Քաջալերելով ուսանողների նմանօրինակ ձեռնարկումները և պատասխանելով առաջադրված հարցերին՝ Սրբազան Հայրն ի մասնավորի նշեց. «Այսօր ստեղծում ենք նորանոր կառույցներ ու կազմակերպություններ, որոնք իրենց նպաստը պիտի ունենան հանրային կյանքից ներս: Մինչ օրս երիտասարդներն ունեցել են կրավորական կեցվածք, հանդես են եկել դիտորդի դերում՝ առանց բարձրաձայնելու իրենց մտահոգություններն ու խնդիրները պետական և հոգևոր այրերի առջև: Ժամանակ է ճշտելու, թե ինչ խնդիրներ ու ծրագրեր ունի այսօրվա երիտասարդությունը՝ ի դեմս ձեզ, ինչպես է բացահայտելու իրեն և պատրաստ լինելու ապագայում ստանձնելու պատասխանատվությունը Հայրենիքի ու ժողովրդի առջև, որպեսզի այն չհակասի մեր պետական ու ազգային շահերին»:

Ընդառաջելով ուսանողների ցանկությանը՝ Սեպուհ սրբազանն ուսանողներին առաջարկեց գրավոր ներկայացնել տարբեր ուսումնական հաստատություններում և երիտասարդական կառույցներում առաջիկա հանդիպում-դասընթացների ծրագիրը, որոնք նվիրված կլինեն Հայոց Եկեղեցու պատմությանն ու դավանանքին, ծեսին ու ազգային-եկեղեցական տոներին:

Ստանալով առաջնորդ Սրբազան Հոր օրհնությունը և հանդիպման ընթացքում մշակելով ապագայի նոր ծրագրեր՝ ուսանողները առաջին այս հանդիպումը սկիզբը համարեցին նոր հանդիպումների ու ազգային-հոգևոր դաշտում իրենց առաջիկա գործունեության:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի՝ Վիրահայոց թեմի Զավախքի և Բաթումի հայոց եկեղեցիներում դողանջեցին զանգերն ու կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Այդ օրը մարդաշատ էր նաև Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին, ուր հոգեհանգստյան արարողությունն անցավ հանդիսապետությամբ թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և մասնակցությամբ քահանայից դասի: Հավարտ արարողության Սրբազան Հայրն իր խոսքն ուղղեց հավաքվածներին՝ իր օրհնությունը բերելով բարեգութ այն ժողովուրդներին, ովքեր դառնադաժան այդ օրերին սատար կանգնեցին հայ ժողովրդին ու օգնեցին, որպեսզի տառապյալ Հայոց աշխարհին անսասան մնար: Առաջնորդն իր երախտագիտությունը հայտնեց հատկապես աղետյալ գոտուն առաջին օգնությունը ցուցաբերած եղբայր վրաց ժողովրդին: Խոսելով վերածնվող աղետի գոտուց, Սրբազան Հայրն ուրախությամբ շեշտեց, որ նրանում ընթացող դրական տեղաշարժերը առհավատյան են օրեցօր բարգավաճող Հայաստանի, որին «...բարեխոս են ասես Երկնային արքայության մեջ թևածող անմեղ զոհերի հրեշտակացած հոգիները»:

Ի թիվս խոռոներամ հավատավոր ժողովրդի, Վիրահայոց սուրբ տաճարում իրենց ներկայությամբ ու աղոթքով զոհերի խնկաբույր հիշատակը ոգեկոչեցին Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Միրզանյանը, Վրաստանի Հայերի Միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի հայ խորհրդարանականները: Այստեղ էր նաև 1980-ականների վերջերին Վրաստանի կենտկոմի առաջին քարտուղար Զումբեր Պատիաշվիլին, ով 1988-ի չարագույժ օրերին անձամբ էր օգնում աղետյալ գոտուն: Այդ օրերից սկսած յուրաքանչյուր տարի, դեկտեմբերի 7-ին, վրաց ժողովրդի այս մեծ հայասերը հայոց տաճար է այցելում և իր խոնարհումը բերում հազարավոր զոհերի անմար հիշատակի առջև:

Եկեղեցական արարողությանը հաջորդեց Թբիլիսիի Արամ Խաչատրյանի անվան թիվ 10 երաժշտական դպրոցի համերգասրահում երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշ-երեկոն, որը կազմակերպվել էր Վիրահայոց թեմի Առաջնորդարանին առընթեր Մշակույթի հանձնախմբի, Վրաստանում ՀՀ դեսպանատան և Վրաստանի Հայերի Միության համատեղ նախաձեռնությամբ: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակների հիշատակը, որից հետո արտասանեցին Տերունական աղոթքը: Այնուհետև խոսք ասացին ՀՀ դեսպան պարոն Միրզանյանը, ՎՀՄ նախագահ պարոն Մուրադյանը, ՎՀԳ «Վերնատան» նախագահ Գևորգ Մնխչյանը: Հուշ-երեկոյի ընթացքում տարբեր կատարումներով հանդես եկավ Սուրբ Գևորգ եկեղեցու երգչախումբը, դաշնակահար Եսայի Աբովյանը, Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան դրամատիկական թատրոնի դերասաններ, հայ և վրաց արվեստի գործիչներ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ՂԻՎԱՆ

ԿԱԼ ԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՍԱՅԴԱԲԱՂԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ Ս. ՄԱՐԻԱՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 5-ը նշանակալից օր էր ողջ հնդկահայ գաղութի համար, քանզի հավատացյալների առջև կրկին իր հյուրընկալ դոները բացեց հիմնովին վերանորոգված Սայդաբադի Ս. Մարիամ հայկական եկեղեցին:

1758 թ. ջուղայեցի նշանավոր վաճառական Խոջա Պետրոսի ջանքերով կառուցված եկեղեցին գրեթե կես դար չէր գործում: Բնական աղետների պատճառով զգալիորեն տուժել էր եկեղեցու քարեղեն շինությունը: Սակայն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և Կալկաթայի եկեղեցական վարչության անմիջական ջանքերի շնորհիվ այսօր Ս. Մարիամ եկեղեցին հիմնովին վերանորոգվել է, բարեկարգվել է տարածքը, կառուցվել է նոր զանգակատուն, Հայոց Եկեղեցուն են վերադարձվել նախկինում բռնագավթված տարածքները:

Հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան սրկ. Բաղումյանը կատարեցին Դոնբացեքի արարողությունը, որից հետո եկեղեցու վերջին խնամակալ տիկին Մերի Կարապետյանի գերեզմանի մոտ կատարվեց հոգեհանգիստ՝ եկեղեցու հիմնադիրների և եկեղեցու տարածքում թաղված հայորդիների հոգիների հանգստության համար: Մասնավոր աղոթք հնչեց Կարապետյան գերդաստանի ննջեցյալների հոգիների խաղաղության համար:

Հոգեհանգստից հետո Օշական վարդապետը շնորհավորեց ամենքին բարեբաստիկ օրվա կապակցությամբ՝ ընդգծելով հայ քրիստոնյայի մշտական ներկայության կարևորությունը երբեմնի հայաշունչ Սայդաբադ քաղաքում: Հայր Սուրբն իր գնահատանքը հայտնեց նաև Կալկաթայի եկեղեցական վարչության անդամներին՝ կատարված աշխատանքի համար:

Ամբողջ օրվա ընթացքում չէր դադարում շրջակա թաղամասերի բնակիչների հոսքը եկեղեցի, որոնցից շատերը բազմաթիվ հետաքրքիր դրվագներ էին ներկայացնում եկեղեցու անցյալի մասին:

Արարողությանը ներկա էին եկեղեցական վարչության անդամներ, հնդկահայեր, ԱՄՆ-ից և Հունաստանից այս առիթով ժամանած Սայդաբադի հայկական եկեղեցու վերջին խնամակալներ՝ Մատթեոս և Մերի Կարապետյանների թոռնուհիներ՝ տիկին Հեղինե և Սիլվա Կարապետյանները, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:

Արարողության ավարտից հետո կազմակերպվեց հյուրասիրություն:

ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ ՏԱՐԿԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ ՃԱՆԱԶՎԵՑ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԳ- ՉԱԽՈՒՄԲԸ

Դեկտեմբերի 16-ին Կալկաթայի Ս. Մարիամ կաթոլիկ դպրոցում տեղի ունեցավ Ս. Ծննդյան տոնին նվիրված հոգևոր երգերի մրցույթ քաղաքի շուրջ 10 քրիստոնեական դպրոցների երգչախմբերի միջև: Միջոցառմանը մասնակցում էր նաև հայոց Մարդասիրական ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության ուսուցիչ տիար Վաչագան Թադևոսյանի:

Մրցույթ-հանդիսությունն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո Ս. Մարիամ կաթոլիկ դպրոցի հոգևոր հովիվը բարի գալուստ մաղթեց ներկաներին՝ անդրադառնալով քրիստոնյաների համար Ս. Ծննդյան խորհրդի կարևորությանը: Այնուհետև երգչախմբերից յուրաքանչյուրը անգլերենով կատարեց օրվա խորհրդին նվիրված երկուական երգ:

Արդյունքների ամփոփումից հետո տարվա լավագույն երգչախումբ ճանաչվեց Մարդասիրական ճեմարանին՝ արժանանալով պատվավոր առաջին մրցանակին:

Լուրեր ԱՄՆ հայոց Արեւելեան թեմէն

«Ս. ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ՏՈՔԹ. ԶԱՐԵՀ ՏԷՄԻՐՃԵԱՆԻՆ

Կիրակի Դեկտեմբեր 3-ին Ուոթըրթաունի (Մասսաչուսեց) Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ երեկոյեան ժամերգութիւնէն ետք Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան՝ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիէ Բ. Կաթողիկոսի կողմէ շնորհուած «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով զարդարեց պոսթոնաբնակ ազգային հասարակական գործիչ տոքթ. Զարեհ Տէմիրճեանի կուրծքը:

Այս արարողութեան ներկայ էին շրջանի հոգեւոր Հայրեր, մեծարեալի ընտանիքին անդամներ, բարեկամներ եւ համակիրներ: Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Մագսուտեան կարդաց Հայրապետական Կոնդակը, որ առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ յանձնուեցաւ տոքթ. Զարեհ Տէմիրճեանի:

Վեհափառ Հայրապետը կը գրէր. «Ուրախ եւ Հայրապետիս հոգին, որ հաւատաւոր մեր հայորդիները հետեւում են իրենց սիրելի ծնողաց եկեղեցասէր ու ազգանուէր ընթացքին: ...Նշանակալի են երկարամեայ Ձեր քաջեռանդն ջանքերը Պոսթոն քաղաքի հայ համայնքում: Դուք արդիւնալի ծառայութիւն եք իրականացրել ՀԲԸ Միութեան կազմում եւ տարիներ շարունակ լծուած եք Հայ Դատի հետապնդման նուիրական գործին: Գնահատարժան է նաեւ Ձեր մշակութային գործունէութիւնը:

...Յարգելի տոքթ. Տէմիրճեան, արժանաւոր հայորդւոյ հոգու անկեղծ սէրն ու նուիրումը հանդէպ մեր ժողովուրդն ու հայրենին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը արդարօրէն ապահովել են հայորդեաց սէրն ու յարգանքը դէպի Ձեր անձը»:

Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր խօսքին մէջ ըսաւ. «Անցնող քառասուն տարիներու ընթացքին, որպէս հասարակական գործիչ, տոքթ. Տէմիրճեան իր ժողովուրդին ընծայաբերած է թէ՛ բարոյական եւ թէ՛ մշակութային բարիքներ՝ գլխաւորաբար Պոսթոն քաղաքի մէջ: Ծառայասիրութեան իր նուիրեալ ոգին ան ստացած է իր ծնողներէն եւ ընտանիքէն: Որպէս հանրածանօթ բժիշկ՝ ան անսակարկ կերպով օգտակար հանդիսացած է թագաւորներէն սկսեալ մինչեւ պարզ ու համեստ անձը:

...Ան եղած է հայ ընտանիքի տիպար հայրը: Իր ազգային գործունէութեան գլխաւոր աջակից ու գործակից ունեցած է իր ազնիւ տիկինը՝ Մարկոն, որուն հետ Ամերիկայի այս պայմաններուն մէջ կրցած է կատարեալ հայեցի դաստիարակութիւն ջամբել իր որդւոյն՝ վիրաբոյժ տոքթ. Արամին եւ դուստրին՝ տնտեսագէտ Թալինի»:

Եկեղեցական արարողութենէն ետք՝ ներկաները հրաւիրուեցան Ս. Յակոբ եկեղեցւոյ սրահը, ուր գործադրուեցաւ յայտագիր մը՝ հանդիսավարութեամբ Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Մագսուտեանի:

Տոքթ. Տեմիրճեանի դասընկեր տոքթ. Մարգալետ Մարկոսեան ըսաւ որ Պոսթոնի հայ համայնքին մշակութային կեանքին բերած անոր մասնակցութիւնը օրինակելի է, եւ անդրադարձաւ ուսումնառութեան կեանքի օրերուն:

Տիար Նուպար Տօրեան ծանրացաւ տոքթ. Տեմիրճեանի կեանքի ընթացքին կատարած իրագործումներուն:

Իսկ մեծարեալի որդին՝ տոքթ. Արամ Տեմիրճեան, մօր՝ Մարկոյի եւ քրոջ՝ Թալինի անունով արտայայտուեցաւ եւ ըսաւ որ իր հայրը իրենց համար «մեծ եւ օրինակելի տիպար» հանդիսացած է:

Հանդիսութիւնը վերջ գտաւ առաջնորդ Սրբազան Հօր աղօթքով:

ՂԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

12-13 դեկտեմբեր, 2006 թ.

Սույն թվականի դեկտեմբերի 12-13-ը Բրյուսելում (Բելգիա) տեղի ունեցավ «Արժեքներ, կրոն, ինքնություն» խորագիրը կրող կոնֆերանսը, որն ի մի էր բերել ավելի քան 60 եկեղեցական առաջնորդների Եվրոպայի 30 երկրներից: Կոնֆերանսը կազմակերպել էր Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբը: Սա նման առաջին հավաքն էր, որ կազմակերպվել էր Մեծ Բրիտանիայի Միացյալ Բարենորոգչական Եկեղեցու և Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու հետ համագործակցաբար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այդ կոնֆերանսին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացրեց Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարզն արքեպս. Մարտիրոսյանը:

Առաջին նիստի թեման էր «Եվրոպական արժեքներ. Եկեղեցիները երկխոսության մեջ եվրոպական քաղաքական հաստատությունների հետ», որի վերաբերյալ զեկույցներով հանդես եկան ԵԵԿ նախագահ Ժան Առնոլդ դե Կլերմոնը, արքեպիսկոպոս Յուկկա Պաարման՝ Ֆինլանդիայի Ավետարանական Լութերական Եկեղեցու պետը և ԵՄ ֆիննական նախագահությունից խորհրդական Հարի Միլասալմին:

Երկրորդ նիստը նվիրված էր հետևյալ թեմային. «Ի՞նչ արժեքների վրա է կառուցված Եվրոպան. Եկեղեցիների ներդրումը»: Թեմայի վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Քրիստոֆ Մետրոպոլիտը, Իտալիայի Բապտիստական Միության նախագահ Աննա Մաֆեյը, Իլարիոն եպս. Ալֆենը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցուց և Եվրոպայի Բողոքական Եկեղեցիների Միության նախագահ Թոմաս Վիլֆրդ: Քրիստոֆ Մետրոպոլիտը նշեց, որ Եկեղեցիները կարող են օգնել հաղթահարելու արժեքային ճգնաժամը՝ վերագտնելով և կյանքի կոչելով քրիստոնեական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են համերաշխությունը, կարեկցանքը և համեստ կյանքը:

Ներկայացնելով երրորդ նիստի թեման՝ «Եվրոպական ծրագրի ապագան», Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու նախագահ Վոլֆգանգ եպս. Հյուբերը նշեց, որ քրիստոնեական արժեքներն ու համոզմունքները հենց սկզբից էլ ազդեցություն են գործել Եվրամիության կազմավորման վրա՝ ավելացնելով, որ Եվրամիության պատմությունը հաշտության և խաղաղության պատմություն է: Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Արքեպիսկոպոս Անաստասիոսը ընդգծեց Եվրոպայի տարբեր հոգևոր ապականների միջև շարունակական փոխհարաբերությունների կարևորությունը: «Հին հունական մտածողությունը տվեց ժողովրդավարության, ազատության և զեղեցկության գաղափարը, հռոմեական ավանդությունը՝ կազմակերպելու, ղեկավարելու

և արդարության սկզբունքները, իսկ քրիստոնեությունը՝ հավատքի, ներման և սիրո գործությունը: Եվրոպայի Եկեղեցիները կարող են օգնել՝ ամրապնդելու հիմնական հոգևոր արժեքները, շեշտելու յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը, հասարակական ոլորտում իր հավատքն արտահայտելու իրավունքը, ամուսնության և ընտանիքի նկատմամբ սուրբգրային հավատքը և ճգնակեցությունը՝ որպես խոչընդոտ սպառնալիցանությանը: Բայց «քրիստոնեական հավատքի ամենամեծ նպաստը կա և կլինի սիրո և ներման սկզբունքը», - ասաց Անաստասիոս արքեպիսկոպոսը:

Քննարկվեցին նաև գաղթականների, փախստականների և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը, միջկրոնական երկխոսությանը և եվրոպական ծրագրին Եկեղեցիների մասնակցությանը վերաբերվող հարցեր:

Եվրոպայի ապագայի հետ կապված Եկեղեցիների մտահոգություններն ու հույսերը ամփոփվեցին եկեղեցական առաջնորդների բաց նամակում՝ ուղղված Եվրոպայի քաղաքական առաջնորդներին, որը միաձայն ընդունվեց բոլոր մասնակիցների կողմից:

Հանդիպումը փակվեց Եվրամիության պաշտոնյա Յան Ֆիգելի խոսքով. «Մեկին գումարած մեկ կարող է լինել ավելին, քան երկուս. սա մաթեմատիկա չէ, այլ էթիկա», - ասաց նա՝ արտահայտելով այն միտքը, որ Եվրամիությունը պարզապես պետությունների միություն չէ, այլ այն պետք է միավորի եվրոպական ազգություններին, որի համար եվրոպական հաստատությունները պետք է մշտական երկխոսության մեջ լինեն Եկեղեցիների, կրոնական համայնքների և քաղաքացիական հասարակության հետ: Միասին նրանք կարող են մշակել Եվրոպայի ժողովուրդներին ծառայելու նոր ուղիներ, որոնք բխում են սովորական համագործակցությունից կամ պարզ մաթեմատիկայից: Նա խրախուսեց Եվրոպայի Եկեղեցիներին և եկեղեցական առաջնորդներին շարունակել և զորացնել իրենց համագործակցությունը եվրոպական կառույցների հետ:

Ընդհանուր արժեքների և հույսի վրա հիմնված Եվրոպայի համար

Եկեղեցական առաջնորդների բաց նամակը՝ ուղղված Եվրոպայի քաղաքական առաջնորդներին

«Քրիստոնեական հոգևոր ժառանգությունը հանդիսանում է ներշնչման և հարստացման գործակալ աղբյուր Եվրոպայի համար: Կրոնը կենդանի և կառուցողական գործոն է հասարակության կյանքում»: Այսպես արտահայտվեցին Եվրոպայի Եկեղեցական առաջնորդները իրենց բաց նամակում՝ վերնագրված «Եկեղեցական առաջնորդների բաց նամակը՝ ուղղված Եվրոպայի քաղաքական առաջնորդներին»:

Նամակը հաստատվեց կոնֆերանսի փակման ժամանակ, 2006 թ. դեկտեմբերի 13-ին, Բրյուսելում: Ժողովը տեղի ունեցավ Մեծ Ութնյակի գազաթաժողովի և Եվրամիության գերմանական նախագահության (German Presidency) նախօրյակին, որը կարևոր նշանակություն կունենա գլոբալ համատեքստում Եվրոպայի ապագային վերաբերող շարունակական քննարկման համար:

Եկեղեցիների առաջնորդների բաց նամակը կնպաստի «Բեռլինի հայտարարությանը», որը Եվրամիության անդամ երկրների նախագահներն ու վարչապետները պետք է ընդունեն 2007 թ. մարտի 25-ին, ինչպես նաև Եվրամիության Սահմանադրության ապագայի վերաբերյալ քննարկումներին:

Եկեղեցական առաջնորդները, Համաեկրոպական Երրորդ Էկումենիկ Համագումարի (որ տեղի է ունենալու 2007 թ. սեպտեմբերի 4-9-ը Ռումինիայի Սիբիու քաղաքում) ճանապարհին հաստատեցին. «Մենք հավատում ենք, որ հավատքը Հիսուս Քրիստոսի միջոցով վստահություն է առաջացնում Աստծո նկատմամբ՝ որպես ակտիվ միջնորդի ամենօրյա իրականության մեջ... Մենք ցանկանում ենք Եվրոպայի քաղաքական առաջնորդներից հետ կիսել մեր մտավախություններն ու հույսերը Եվրոպայի ապագայի և այնտեղ մեր ունեցած դերի վերաբերյալ: Մասնավորապես, մեր համոզումն է, որ եվրոպական ինտեգրացման գործընթացը պետք է շարունակվի՝ հիմնված ընդհանուր արժեքների և տեսիլքի վրա»:

Բաց նամակում կարևորում են երեք գլխավոր կետեր. առաջինը տեսիլքն է այն մասին, որ Եվրոպան լինի «բազմազանության մեջ միավորված մայրցամաք»: Մշակույթների, ավանդությունների ու կրոնների բազմազանությունը «Եվրոպայի ինքնության հատկանիշներից է» և «պետք է հարգվի», և ըստ այդմ պետք է նկատի ունենալ, որ «Եվրոպան հոմանիշ չէ Եվրամիությանը»:

Երկրորդը՝ վերնագրված «Եվրոպան ընդհանուր արժեքների մայրցամաք», վերաբերում էր հետևյալ հարցերին. խաղաղություն և հաշտություն, եվրոպական ինտեգրացիան՝ որպես «զարգացող հարաբերություններ» քաղաքական և տնտեսական սահմաններից դուրս, գլոբալիզացիան և աղքատության դեմ պայքարը Եվրոպայում և դրա սահմաններից դուրս, «Եվրոպան մարդկանց համար»՝ կոչ անելով որդեգրել «առավել արդյունավետ և թափանցիկ որոշում կայացնելու գործընթաց» և Եվրամիության մեջ աջակցություն «այն անհրաժեշտ համաձայնությանը, որ հիմնված է արդար, հաստատուն և միավորված Եվրոպայի տեսիլքի վրա»:

Վերջին՝ «Եվրոպա - հույս և խոստում» կետով եկեղեցական առաջնորդներն իրենց պատրաստակամությունը հայտնեցին «պաշտպանել հիմնարար արժեքները ցանկացած տեսակի ոտնձգություններից և դիմակայել քաղաքական նպատակներով կրոնի շահարկման փորձերին»՝ իրենց նպաստը բերելով Եվրոպական ընդհանուր տան կառուցմանը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ Հ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԸ

Հ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանը (ավագանի անվամբ՝ Արտաշես) ծնվել է Բեռլինում 1920 թ. նոյեմբերի 16-ին:

Հայրը՝ Տ. Բաբկենը, և մեծ հայրը՝ Տ. Ներսեսը, եղել են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու քահանաներ:

Նա երկու տարեկան էր, երբ մահանում է մայրը, և ինքը տարվում է Ռումինիա ու հանձնվում իր մեծ հոր խնամքին:

Սկզբնական կրթությունը ստանում է Բուխարեստի Միսաքյան վարժարանում 1926-1931 թթ.:

Այս տարիներին ապագա հոգևորականի ուսուցիչն էր Լևոն-Կարապետ Պալճյանը՝ ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը: Երջանկահիշատակ Հայրապետի համար տասնամյակներ անց էլ Հ. Ներսեսը մնաց որպես իր սիրելի աշակերտը:

1931-33 թթ. ուսանում է Սոֆիայի Մեսրոպյան վարժարանում՝ ուսուցիչ ունենալով ժամանակի ճանաչված մտավորականներից Գևորգ Մեսրոպին:

1933 թ. հոկտեմբերի 3-ին Հ. Մկրտիչ Պոտուրյանի առաջարկով ուսանելու է մեկնում Ս. Ղազարի Մխիթարյան վարժարան:

1939 թ. սեպտեմբերի 17-ին դառնում է Մխիթարյան միաբանության նորընծա անդամ, իսկ 1940 թ. հոկտեմբերի 24-ին հոգևորական ձեռնադրությամբ ստանում է իր մեծ հոր՝ Տ. Ներսեսի անունը:

1941-1947 թթ. ուսանում է Հռոմի Գրիգորյան համալսարանի իմաստասիրության և աստվածաբանության ֆակուլտետներում:

1946 թ. սեպտեմբերի 8-ին՝ Ս. Աստվածածնի տոնին, Ս. Ղազարում կուսակրոն աբեղա է ձեռնադրվում՝ ձեռամբ Սարգիս արքեպ. Տեր-Աբրահամյանի:

Հռոմում ուսումնառությունն ավարտելուց հետո վերադառնում է Ս. Ղազար և նվիրվում գիտամանկավարժական և խմբագրական գործունեության՝ Ս. Ղազարի և Մուրադ-Ռաֆայելյանի սաների համար մնալով որպես «Հայր վարժապետ»:

Իր դասավանդած գլխավոր առարկաներն էին գրաբար, արևմտահայերեն, իմաստասիրության պատմություն, հայ հին գրականություն, հունական և լատինական գրականությունների պատմություն և եկեղեցական երաժշտություն: Որպես շարականագետ երկար տարիներ վարում է Ս. Ղազարի դասապետի, ինչպես նաև լուսարարապետի պաշտոնները:

1948-52 թթ. խմբագրում է «Մխիթարյան ընտանիք» ամսաթերթը, 1948-1957 թթ. միաժամանակ լինելով օգնականը «Բազմավեպ»-ի խմբագրի, ապա 1957-64 թթ, 1967-68 և 1974-79 թթ. ստանձնելով ամսագրի խմբագրի պաշտոնը:

Թե՛ «Բազմավեպ»-ին աշխատակցելու և թե՛ մնացյալ տասնամյակներին մի քանի հարյուր հոդված է հրատարակել ամսագրի էջերում՝ նվիրված Մխիթարյան միաբանության, Սփյուռքի և Հայաստանի գիտա-մշակութային կյանքին ու տարբեր իրադարձություններին, կրոնա-աստվածաբանական և հայագիտական ամենաբազմազան հարցերին, կատարել թարգմանություններ եվրոպական լեզուներից և փոխադրություններ՝ գրաբարից, ինչպես նաև տպագրել գրախոսականներ, հրապարակումներ ամենատարբեր հոբելյանների առիթով և հիշատակի մահագրական խոսքեր:

1964-76 թթ. դառնում է ընդհանուր քարտուղարը Մխիթարյան միաբանության:

1976-82 թթ. եղել է Ս. Ղազարի ձեռագրատան պատասխանատուն:

1986-91 թթ. դարձել է Ընդհանուր մեծավորը Մխիթարյան միաբանության:

1991 թ. Հովհաննես-Պողոս Բ Պապի կողմից նշանակվում է կաթողիկե առաջնորդ Հայաստանի, Վրաստանի ու Արևելյան Եվրոպայի:

1992 թ. նոյեմբերի 17-ին Պապի կողմից օծվում է տիտղոսավոր արքեպիսկոպոս՝ առաջնորդական Աթոռը հաստատելով Գյումրիում:

2005 թ., բոլորելով 75 տարին, առաջնորդական պաշտոնից իր հրաժարականն է ներկայացնում Հովհաննես-Պողոս Բ Պապին:

Կարճատև հիվանդությունից հետո ի Տեր հանգյալ 2006 թ. դեկտեմբերի 24-ին Աշոցքի իտալական հիվանդանոցում:

Թաղման կարգը կատարվեց 2006 թ. դեկտեմբերի 29-ին Փանիկում:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

Ցավով տեղեկացնում ենք, որ դեկտեմբերի 9-ին Երևանում, ուղեղի կաթվածից, ի Տեր հանգյալ Իրաքի հայոց թեմի սպասավոր Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանը: Դեկտեմբերի 14-ին, ժամը 10.30-ին, Ս. Շողակաթ վանքում հընթացս Ս. Պատարագի կատարվեցին հանգուցյալ Տեր Հոր վերջին օծման և հուղարկավորության արարողությունները: Հոգելույս Տեր Գարեգինի մարմինը կամփոփվի միաբանական գերեզմանատանը:

* * *

Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանը (ավագանի անունով՝ Հովսեփ) ծնվել է 1928 թ. Իրաքի հյուսիսային շրջանի քրդական Զախո սահմանամերձ գյուղաքաղաքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա 1944 թ. տեղափոխվել է Մուսուլ և կրթությունը շարունակել տեղի Ազգային վարժարանում՝ միաժամանակ ծառայելով Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցում: 1970 թ. ընտանիքով տեղափոխվել է Բաղդադ, ուր 1970 թ. սկսած սպասավորել է առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: 1978 թ. Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանի կողմից ձեռնադրվել է սարկավագ: 1984 թ., Երևանի Ս. Իսաչի տոնին, ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի, ձեռնադրվել է քահանա: 1985 թ. սպասավորել է Բասրայի Ս. Աստվածածին եկեղեցում, իսկ 1986 թ. սկսած մինչև իր վախճանը եղել է Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվը: Իր բազմամյա հովվության ընթացքում Արժանապատիվ Տեր Հայրը վայելել է ինչպես իր հոգևոր հոտի և լծակից հոգևոր եղբայրների սերն ու հարգանքը, այնպես էլ քույր Եկեղեցիների հոգևորականության համակրանքը: Նվիրյալ և վաստակաշատ ծառայության համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տ. Գարեգին ավագ քահանա Հովսեփյանին 2000 թ. շնորհել է ծաղկյա փիլոն կրելու իրավունք, իսկ 2004 թ.՝ ավագության պատիվ:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 2-ին, շաբաթ. - Տոն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թաղեոսի եւ Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եվ երբ գնաք, քարոզեցեք և ասացեք. «Երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Ժ 7) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

Դեկտեմբերի 3-ին, կիրակի. - Բ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Լոյծ գկոշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ելք Գ 5) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

Դեկտեմբերի 9-ին, շաբաթ. - Յդուրիւն Սուրբ Աստուածածնի յԱննայէ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եփրեմ արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 10-ին, կիրակի. - Գ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ» (Ղուկ. ԺԴ 15) բնաբանով քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 17-ին, կիրակի. - Դ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 24-ին, կիրակի. - Ե. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մովսիս վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի. - Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 31-ին, կիրակի. - Զ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նա-
րեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ ես ուխ-
տեմ ձեզ՝ որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն» (Ղուկ. ԻԲ 29) բնաբանով
քարոզ խոսեց:

ՑԱՆԿ
«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սեդա Թիրաքյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ա 12:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Վազգեն Գալթաթյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Դ 15:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գեղամ Գրիգորյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Դ 17:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին արքայության պատիվ շնորհելու մասին, Ե 10:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանին արքայության պատիվ շնորհելու մասին, Ե 12:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Տ. Արամ եպիսկոպոս Աթեշյանին արքայության պատիվ շնորհելու մասին, Զ 40:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Հայկ Արսլանյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Զ 42:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սեդրակ Թոքատին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Զ 44:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Պետրոս Շիրինողլուին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Զ 46:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գուրգեն Սարգսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Զ 48:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տեր և տիկին Պետրոս և Աննա Օրունջաքճիելներին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Թ 27:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Լևոն Ահարոնյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Թ 29:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Տ. Վիգեն եպիսկոպոս Այթազյանին արքայության պատիվ շնորհելու մասին, Ժ-ԺԱ 11:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Յուրի Քաջոյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ-ԺԱ 17:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սարո և Դաֆֆի Մարուքյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ-ԺԱ 19:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Զերբլդ Թրփանճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ-ԺԱ 21:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Մահմուդ Ստեփանոսին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ-ԺԱ 23:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Սրբատառ Կոնդակը Ֆրանսիայի հայոց թեմի կազմավորման մասին, ԺԲ 3:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գերաշնորհ Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանին արքայության պատիվ շնորհելու մասին, ԺԲ 6:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գերաշնորհ Տ. Սևան եպիսկոպոս Ղարիբյանին արքայության պատիվ շնորհելու մասին, ԺԲ 8:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին, Ա 3:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով, Ա 6:

Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առիթով **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի** և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը, Ա 8:

Հայրապետական գնահատություն, Ա 14:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը ՀՀ Բանակի օրվա առիթով, Ա 15:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սիմոնի՝ Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Միտրոպոլիտ Նիկոլայի վախճանման առիթով, Ա 16:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալուծ է հռչակված Տ. Գարեգին աբեղա Հարությունյանը, Ա 17:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը ՀԲԸՄ-ի 100-ամյակի առիթով, Բ-Գ 3:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Մանուկյան-Տեմիրճյան վարժարանի հիմնադրման 30-ամյակի առիթով, Բ-Գ 5:

Հայրապետական գնահատություն, Բ-Գ 7:

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առիթով, Բ-Գ 8:
- Նոր նշանակումներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցներում և թեմերում, Բ-Գ 35:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զատկական պատգամը Քրիստոսի Սուրբ Յարութեան տոնի առիթով, Դ 3:
- Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը, Դ 6:
- Հայրապետական գնահատություն, Դ 19:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով, Դ 20:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը մանուկներին Ծաղկազարդի տոնի առիթով, Դ 21:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Երևան-Սոչի ուղերթի օդանավային աղետի առիթով, Ե 14:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հաղթանակի տոնի և Շուշիի ազատագրման օրվա առիթով, Ե 15:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով, Ե 16:
- Հայրապետական գնահատություն, Զ 50:
- Հայրապետական գնահատություն, Է-Ը 11:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Միլվա Կապուտիկյանի հուղարկավորության ժամանակ, Է-Ը 13:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Հայաստան-Միյուռ» երրորդ համաժողովին, Թ 23:
- Հայրապետական գնահատություն, Թ 31:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը նոր ուսումնական տարվա առիթով, Թ 34:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Տ. Հակոբ Եպիսկոպոս Գըլընճյանին քահանայական ձեռնադրության երեսունամյակի առիթով, Ժ-ԺԱ 13:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանին Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ ընտրվելու քսանհինգամյակի առիթով, Ժ-ԺԱ 15:
- Հայրապետական գնահատություն, Ժ-ԺԱ 25:
- Հայրապետական տնօրինություն, Ժ-ԺԱ 26:
- Հայրապետական գնահատություն, ԺԲ 10:

Բ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծաղկազարդին Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Նոր Խարբերդի մանկատուն, Դ 13:

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Կ. Պոլիս, Զ 3:

Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ - Հայոց Հայրապետի Հովուապետական այցը Կ. Պոլիս, Զ 51:

Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Երևանի Էրեբունի համայնքի եկեղեցու հիմնարկեքը, Է-Ը 167:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Աբովյան քաղաքի եկեղեցու հիմնարկեքը, Է-Ը 168:

ԷՂՈՒԱՐԴ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Ամենայն Հայոց Հայրապետի այցը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ, Թ 7:

Հանրապետական մաղթանք Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Թ 25:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Ֆրանսիա, ԺԲ 11:

Գ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բ-Գ 9:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ղեկույցը Մայր Աթոռի մեկամյա՝ 2005 թվականի գործունեության վերաբերյալ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստում, Բ-Գ 10:

Հաղորդագրություններ (Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի օրակարգի մասին), Բ-Գ 31:

Համատեղ Հաղորդագրություն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունների ժողովի, Բ-Գ 32:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովը, Ժ-ԺԱ 10:

Դ. ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Վախճանվեց Հնդիկ Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Մար Թոմա Մատթեոս Բ-ն, Ա 18:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Հնդիկ Մալաբար Եկեղեցու գահակալ Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Բ-ի վախճանման առիթով, Ա 20:

Հնդկահայոց հոգևոր հովիվ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանն Ամենայն Հայոց Հայրապետության անունից մասնակցեց Հնդիկ Մալաբար Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Բ-ի հուղարկավորությանը, Ա 21:

Ե. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ա 7:

Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ա 133:

Ս. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանի ուխտի Ս. Պատարագը Մայր Տաճարում, Ա 141:

Ս. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի ուխտի Ս. Պատարագը Մայր Տաճարում, Ա 141:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի Արտաքին գործոց նախարարին, Ա 154:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպանին, Ա 155:

Եկեղեցական բեմ. լուրեր, Ա 156, Բ-Գ 178, Դ 158, Ե 161, Զ 159, Է-Ը 182, Թ 157, Ժ-ԺԱ 183, ԺԲ 132:

ՀՀ թեմակալ առաջնորդների, մարզպետների ու քաղաքապետների հանդիպումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բ-Գ 34:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բ-Գ 147:

Ղևոնդյանց տոներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Բ-Գ 151:

Վարդանանց տոներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Բ-Գ 152:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լյուքսեմբուրգի կառավարող՝ քրիստոնեա-սոցիալիստական կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավարին, Բ-Գ 174:

Հայաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչի այցը Մայր Աթոռ, Բ-Գ 174:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պետական Էրմիտաժի տնօրենին, Բ-Գ 175:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀԱՊԿ անդամ պետությունների՝ թմրամիջոցների շրջանառությանը հակազդելու ուղղությամբ իրավասու մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի անդամներին, Բ-Գ 176:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Դորտմունդյան կոնֆերանսի՝ Լեռնային Ղարաբաղի հարցով աշխատանքային խմբի համանախագահներին, Բ-Գ 176:

Ծաղկազարդը և Ավագ Շաբաթը Մայր Աթոռում, Դ 10:

Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումը Ծիծեռնակաբերդում, Դ 14:

Ապրիլի քսանչորսը Մայր Աթոռում, Դ 14:

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշաններ հանձնվեցին Զիմ Թորոսյանին և Գեղամ Գրիգորյանին, Դ 22:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Հանրապետության նախագահին, Դ 24:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Միջազգային Հաբիթաթի» միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր, Դ 25:

ՕԳՍԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԻՐԶՈՅԱՆ - Մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն, Դ 113:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վան-Վասպուրական Հայրենակցական միության անդամներին, Դ 152:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմներին, Դ 152:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Հունգարիայի դեսպանին, Դ 153:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վիտենբերգի կոնֆերանսի մասնակիցներին, Դ 154:

Հոգեհանգստյան արարողություն Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Ե 17:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց Սուրբ Վարդան և Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատռան հիմնարկեքը, Ե 20:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԱԿ պատվիրակությանը, Ե 159:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ֆրանսահայ ուխտավորներին, Ե 160:

Արքության պատիվ Տ. Եզնիկ և Տ. Նավասարդ Սրբազաններին, Զ 151:

Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ աղետյալ օդանավի զոհերի, Զ 152:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցչին, Զ 158:

Հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի ծննդյան տարեդարձի առիթով, Է-Ը 3:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեց ՌԴ հասարակական բարձրագույն շքանշան, Է-Ը 5:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց խաղաղության մաղթանք, Է-Ը 12:

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան Թոմ Սամուելյանին, Է-Ը 15:

Միաբանական համագումար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Է-Ը 160:

Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Է-Ը 164:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական կրթական համաժողովի մասնակիցներին, Է-Ը 166:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի Արտաքին գործերի և Սփյուռքի նախարար Ֆաուզի Սալլուխին, Է-Ը 180:

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի ուխտավորներին, Է-Ը 181:
- Սիրիայի Արաբական Հանրապետության Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Թ 3:
- «Հրաշափառ»-ի արարողություն Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Թ 19:
- Ռուսաստանի Դաշնության «Բարեկամության շքանշանը» Վեհափառ Հայրապետին, Թ 21:
- «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան տեր և տիկին Պետրոս և Աննա Օրունջաքճիկներին, Թ 32:
- «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրվեցին Լևոն և Բելլա Ահարոնյանները, Թ 33:
- «Հայկական Հաբիթաթ»-ի կամավորները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Թ 140:
- Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Թ 142:
- Հայաստանյան Կլոր Սեղանի տարեկան ժողովը Մայր Աթոռում, Թ 148:
- Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց կաթոլիկ ուխտավորներին և կարդինալ Սիլվեստրինիի աջակից համայնքի անդամներին, Թ 155:
- Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության 7-րդ տարեդարձը, Ժ-ԺԱ 3:
- Ֆրանսիայի Հանրապետության նախագահը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ժ-ԺԱ 6:
- Ռումինիայի Հանրապետության նախագահը Մայր Աթոռում, Ժ-ԺԱ 8:
- Բելառուսի վարչապետը Մայր Աթոռում, Ժ-ԺԱ 9:
- Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մրցանակաբաշխությունը, Ժ-ԺԱ 27:
- Հայ հնագրության ալբոմի շնորհանդեսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ժ-ԺԱ 29:
- Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի մեծարման երեկոն Մայր Աթոռում, Ժ-ԺԱ 31:
- Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ժ-ԺԱ 111:
- Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ժ-ԺԱ 120:
- Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ժ-ԺԱ 130:
- Քննարկում՝ նվիրված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնախնդիրներին, Ժ-ԺԱ 137:
- Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ և Բալթյան երկրների Երկաթուղային Տրանսպորտի Խորհրդի անդամներին, Ժ-ԺԱ 175:
